3605 Հ.1/2 504-ԱԿ

ԳԻՐՔ

# ՍԱՂՄՈՍԱՑ

*Եբրայական բնագրէ ՚ի հասարակ լեզու հայոց թարգմանեալ ։*

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎՈՒԻԼԻԸՄՍ ԿՐԻՖԻԹԻ

1843

243

.2004

1192-52

# ՍԱՂՄՈՍ
# ԴԱՒԹԻ

## ՍԱՂՄՈՍ. Ա.

Երանելի՛ է էն մարդն՝ որ ամբարիշտների խորհրդին մէջ չի՛ գնում, և մեղաւորների ճանապարհին վերայ չի կանգնում, և չար ծաղրածողների աթոռին վերայ չի նստում:

2 Այլ նորա կամքն Տէրի օրէնքի միջումն է՝ և ցերեկ և գիշեր նորա օրէնքին վերայ է մտածում,

3 Եւ նա՛ է ինչպէս ջրերի գնացքումն տնկած ծառ՝ որ իրան պտուղըն տալիս է իրան ժամանակումն և նորա տերևն չի՛ վէրթափվում, և ամէն ինչ որ անում է, յաջողվումէ նորան:

4 Այսպէս չեն ամբարիշտներն, այլ ինչպէս դարմանի մղեղ՝ որ քամին ցրիւ է տալիս նորան:

5 Սորա համար ամբարիշտներն չեն վերկենալ դատաստանի մէջն՝ և ոչ մեղաւորներն արդարների ժողովրդի մէջն:

6 Պատճառն որ՝ Տէրն ճանաչումէ ար-
դարների ճանապարհըն ։ Բայց ամբա-
րիշտների ճանապարհն կըկորչի ։

## ՍԱՂՄՈՍ. Բ։

եթանոսներն ինչո՞ւ համար են խռո-
վութիւն անում և ազգերն ունայն
բան են մտածում ։
2 Երկրի թագաւորներն վեր են կե-
նում՝ և իշխաններն իրար հետ խորհուրդ
են անում Տէրին դէմ և նորա օծեալին
դէմ ։
3 Թո՛ղ նորանց կապանքներըն կըտրա-
տենք . և դէն քցենք նորանց չուաններըն
մեզանից ։
4 Նա որ երկնքումն բնակւած է ծի-
ծաղումէ նորանց վերայ՝ և Տէրն անար-
գումէ նորանց ։
5 Այն ժամանակն կըխօսի նորանց հետ
իրան բարկութենովն՝ և իրան սրտմտու-
թենովն կըշփոթացնէ նորանց ։
6 Ես օծեցի իմ թագաւորըս իմ սուրբ
Սիօն սարի վերայ ։
7 Կըպատմեմ Տէրէ հրամանըն . նա
ասաց ինձ . դո՛ւ ես իմ որդին՝ ես էսօր ծնայ
քեզ ։
8 Խնդրի՛ր ինձանից , և հեթանոսներըն
կըտամ քեզ ժառանգութիւն՝ և երկրի
ծայրերըն քեզ իշխանութիւն ։

9 Երկաթի գաւազանով կըջարդես նո-
րանց . և բրուտի ամանին պէս կըփշրես
նորանց ։
10 Ապա հիմիկ ո՛վ թագաւորք իմացօ՛ղ
էլէք . և խրատվեցէ՛ք ո՛վ երկրի դատաւոր-
ներ ։
11 Տէրին ծառայեցէ՛ք վախով՝ և ցնծա-
ցէ՛ք դողալով ։
12 Համբուրեցէ՛ք որդոյն՝ որ չըբարկա-
նայ . և դուք չըկորչիք ճանապարհումն՝
ինչու որ՝ նորա բարկութիւնն շուտով կը
վառուի ։
13 Երանի՛ են ամէնին , որ նորան յու-
սացած են ։

## ՍԱՂՄՈՍ . Գ ։

Դաւթին սաղմոս՝ երբոր նա փախչելու էր իրեն
Աբիսողոմ որդւոյ երեսէն ։

Տէ՛ր ո՛րքան շատացան իմ նեղացնողներս .
շատերն վերեն կենում ինձ վերայ ։
2 Շատ են որ իմ անձիս համար ասու-
մեն՝ թէ փրկութիւն չըկայ սորա համար
Աստուծոյ մօտն սէլա* ։
3 Բայց դու Տէ՛ր պաշտպան ես իմ

* Այս բառս նշան է երգելոյ համար՝ որ
ցուցնէ դադրիլ , ըստ յոյնին դադար է հանգիստ
առնել՝ ձայն փոխելու և ձայն բարձրանալու ։

չորս կողմիցն՝ իմ փառքս և իմ գլուխ
բարձրացնողն դու ես ։
4 Իմ ձայնովս կանչում եմ դէպի Տէրն՝
և Նա լսում է ինձ իւր սուրբ սարիցն ·
սելա ·
5 Ես պառկած եմ և քուն եմ լինում
և վերկենում · ինչու որ՝ Տէրն պահում է
ինձ ։
6 Չեմ վախենում ես հազար հազա-
րաւոր ժողովրդից՝ որ չորս կողմից պա-
տում են ինձ ։
7 Վե՛ր կաց Տէր՝ փրկի՛ր ինձ իմ Աս-
տուած, պատճառնոր՝ դու իմ ամէն թշնա-
միներին թուշերին խփում ես, և ամբարիշտ-
ների ատամներին փշրում ես ։
8 Տէրինն է փրկութիւնն · քո ժողովրդի
վերայ լինի՛ քո օրհնութիւնն · սելա ։

## ՍԱՂՄՈՍ · Դ ։

Երգեցիկներին գլխաւորին · նուագով (սազով ·)
Դաւթին սաղմոս ։

Երբոր կանչեմ, լսի՛ր ինձ իմ արդարու-
թեան Աստուած · դու՛ որ նեղու-
թեան մէջն ազատեցիր ինձ՝ ողորմի՛ր ինձ և
լսի՛ր իմ աղօթքըս ։
2 Ո՛վ մարդկանց որդիք · մինչև ե՞րբ իմ
փառքս ամօթ պիտի դառնայ · մինչև ե՞րբ

ունայն բան կըսիրէք և ստութիւն կըխնդրէք · սէլա ։

3 Բայց ճանաչեցէ՛ք՝ որ Տէրն փառաւոր կերպով պահումէ իրան սրբին՝ Տէրն լսումէ՝ երբոր կանչումեմ դէպի նա ։

4 Եթէ բարկանաք, մի՛ մեղանչէ՛ք · խօսեցէ՛ք ձեր սրտերին հետ ձեր տեղուբարձերումն և լո՛ւռ կացէք ։ սէլա ։

5 Արդարութեան պատարագներ ընծայ բերէք, և Տէրին յուսացէ՛ք ։

6 Շատ կան՝ որ ասումեն, թէ բարին ո՞վ ցոյց կըտայ մեզ · Բայց Տէ՛ր բարձրացրո՛ւ մեզ վերայ քո երեսի լոյսը ։

7 Դու ուրախութիւն ես տալիս իմ սրտիս՝ աւելի քան թէ նորանց ցորենոյ և գինոյ շատանա՛լոյ ժամանակին ։

8 Իսպառ խաղաղութենով պառկած եմ և քուն եմ լինում · պատճառնոր՝ դու Տէ՛ր մենակ տալիս ես ինձ, որ յուսով բնակվիմ ։

## ՍԱՂՄՈՍ · Ե ։

Երգողներին գլխաւորին · Նեխելոթ (սրինգ) · Դաւթի սաղմոս ։

Տէ՛ր ականջ դիր իմ խօսքերիս՝ և մի՛տքդ առ իմ հառաչանքըս ։

2 Մի՛տք դիր իմ աղաղակի կանչելոյ

ձայնին, իմ թա՛գաւոր և իմ Աստուած.
ինչու որ՝ քո առաջիդ աղաչանք կանեմ:
3 Տէ՛ր առաւօտուն լսի՛ր իմ ձայնիս.
առաւօտուն աղօթք կանեմ քեզ և մտիկ
կըտամ:
4 Պատճառնոր՝ դու ո՛վ Աստուած չես
կամենում անօրէնութիւն. Եւ չարն չի
բնակվիլ քեզ մօտ:
5 Անօրէններն չեն կենալ քո աչաց ա-
ռաջին. դու ատումես էն ամէնին՝ որ անօ-
րէնութիւն են գործում:
6 Դու կըկորցնես նորանց որ սուտ են
խօսում. Տէրն գարշելի է համարում ա-
րիւն թափօղ և նենգաւոր մարդոյն:
7 Բայց ես քո շատ ողորմութենովդ
կըմտնեմ քո տունդ՝ և քո սուրբ տաճարի
դիմացն երկրպագութիւն կանեմ քո եր-
կիւղովդ:
8 Տէ՛ր առաջնորդի՛ր ինձ քո արդարու-
թենովդ իմ թշնամեաց պատճառովն. շի-
տակ արա քո ճանապարհըդ իմ առաջիս:
9 Պատճառնոր՝ նորանց բերանումն
ճշմարտութիւն չըկայ. նորանց սրտերն չա-
րութենով լցված են նորանց կոկորդն
(ղօղանքը) բաց գերեզման է, և իրանց լե-
զուներովն նենգաւորութիւն են անում:
10 Պատժի՛ր նորանց ո՛վ Աստուած՝ թո՛ղ
վէր ընկնին իրանց խորհուրդներից. ի-
րանց շատ ամբարշտութիւններին համար

դէնքցի՛ր նորանց · պատճառով՝ խռովու-
թիւն են անում քեզ դէմ :
11 Թո՛ղ ուրախ լինին էն ամէնքն , որ
քեզ յուսացած են · թո՛ղ յաւիտեան ցըն-
ծան որ դու պաշտպանումես նորանց · թո՛ղ
քեզանով պարծենան նորանք որ քո անու-
նըդ սիրումեն :
12 Պատճառով՝ դու Տէ՛ր օրհնումես
արդարին · շնորհքով պատումես նորանց՝
ինչպէս վահանով (ղալխանով) :

## ՍԱՂՄՈՍ · Զ. :

Երգօղներին գլխաւորին · Նէյինօթը (լարով.)
ութներորդին վերայ · Դաւիթի սաղմոս :

Տէ՛ր մի՛ յանդիմաներ ինձ քո բարկու-
թենովդ և մի՛ խրատեր ինձ քո սըրտ-
մտութենովդ :
2 Ողորմի՛ր ինձ Տէ՛ր՝ ինչու որ՝ տկարա-
ցած եմ ես · բժշկի՛ր ինձ Տէ՛ր · ինչու որ՝
իմ ոսկերքս շփոթված են :
3 Եւ իմ անձս շատ շփոթված է · և դու
ո՞վ Տէր մինչև ե՞րբ :
4 Դարձի՛ր Տէ՛ր փրկի՛ր իմ անձըս ·
ապրեցրու ինձ քո ողորմութեան համար :
5 Պատճառով՝ մահի մէջն քեզ ոչ ով
չի՛ յիշում · և գերեզմանումն ո՞վ կըգո-
հանայ քեզանից :

6 Ես վաստակած եմ իմ յոգոց հանե-
լովս․ բոլոր գիշերն լուանումեմ իմ տե-
ղաշորըս․ և արտասունքներովս թրջումեմ
իմ անկողինըս (դէօշէկըս)։
7 Տրտմութենով մաշվեցաւ իմ աչքս․
ծե՛րացայ իմ ամէն նեղացնողներիս պատ-
ճառովն։
8 Հեռու կացէք ինձանից ամէնքդ՝ որ
անօրէնութիւն էք գործում․ ինչու որ՝
Տէրն իմ լաց լինելոյ ձայնին լսումէ։
9 Տէրն լսումէ իմ աղաչանքիս․ Տէրն
ընդունումէ իմ աղօթքըս։
10 Պէտք է ամաչեն և շատ շփոթվին իմ
ամէն թշնամիներս․ յետ պիտի դառնան և
ամաչեն շուտով։

## ՍԱՂՄՈՍ․ Է։

Դաւիթի օգտալից երգ՝ որ Տէրին առաջին եր-
գեց Բենիամինեան Քուշի խօսքերի համար։

Տէ՛ր իմ Աստուած, քեզ իմ յուսացած․
փրկի՛ր ինձ իմ ամէն հալածողներիցն,
և ապրեցրու ինձ․
2 Որ չըլինի թէ առիւծի պէս իմ անձըս
յափշտակէ և պատառէ․ և ոչ ով չըլինի,
որ ապրեցնէ։
3 Տէ՛ր իմ Աստուած եթէ արի էս, և-
թէ անիրաւութիւն կայ իմ ձեռումս․

4 Եթէ չար արի նորան՝ որ խաղաղու-
թեննով էր ինձ հետ՝ եթէ կողոպտեցի նո-
րանց՝ որ ին զուրտեղն նեղացնումէին ·
5 Ապա թո՛ղ թշնամին հալածէ իմ
անձըս և հասնէ նորան . և իմ կեանքըս
կոխ տայ գետնի վերայ և իմ փառքըս հո-
ղի մէջ բնակացնէ ։ սելա ։
6 Վե՛ր կաց ով Տէր քո բարկութե-
նովդ՝ բարձրացրու քո անձըդ իմ նեղաց-
նողների սրտմտութեան համար , և զարթ-
նացի՛ր ինձ օգնելու համար՝ դու որ ի-
րաւունք պատուիրեցիր ·
7 Եւ ազգերի ժողովքն թո՛ղ չորս կող-
մովդ պատէ քեզ , և նորանց վերայ դառ-
նաս դէպի բարձր տեղերն ։
8 Տէրն դատաստանէ անում ազգերին
վերայ · դատի՛ր ինձ Տէ՛ր իմ արդարու-
թեան պէս և իմ անմեղութեան պէս որ
ինձանում կայ ։
9 Թո՛ղ կորչի ամբարիշտների չարու-
թիւնն և հաստատի՛ր արդարին · ինչու որ՝
դու ես քննում սրտերըն և երիկամունքնե-
րըն (պուճիկներըն) ո՛վ արդար Աստուած ։
10 Իմ պաշտպանն Աստուած է՝ որ
փրկումէ նորանց որ ուղիղ են սրտով ։
11 Աստուած է արդար դատաւոր , և
Աստուած ամէն օր բարկանումէ ամբարիշտ-
ների վերայ ։
12 Եթէ նա յետ չըդառնայ՝ իրան սու-

րըն կըսրէ · իրան աղեղն լարեց և պատրաստ արաւ :

13 Եւ նորանում՝ պատրաստեց մահու գործիքներ (հաճախնէր) · և իրան նետերըն կրակով բորբոքված արաւ :

14 Ահա՛ նա ջանք է անում որ անօրէնութիւն հնարէ՝ յղացած է չարութենով և ծնումէ խաբէութիւն :

15 Հոր փորեց և խորացրուց · բայց ինքըն կընկնի էն խոր հորի մէջ՝ որ գործեց :

16 Նորա չարութիւնն կըդառնայ նորա գլխին վերայ · և նորա անիրաւութիւնն վէր կըգայ նորա գագաթին (գլխուն) վերայ :

17 Կըգոհանամ ես Տէրիցն իրան արդարութեան համար՝ և սաղմոս կասեմ բարձրեալ Տէրի անունին :

## ՍԱՂՄՈՍ · Ը :

Երգօղներին գլխաւորին · Գիթիթ (սազով) Դաւթի սաղմոս :

Տէ՛ր Տէ՛ր մեր որքան հրաշալի է քո անունդ ամէն երկրի վերայ · դու՝ որ քո մեծ փառաւորութիւնըդ բարձրացնումես երկնքի վերայ :

2 Երեխաների և կաթնակերների բե-

րանիցն զօրութիւն պատրաստեցիր քո թշնամիներին հակառակ. որ կործանես թշնամուն և նորան որ վրէժխնդրութիւն է անում :

3 Ինչու որ՝ ես կըտեսնեմ քո երկինքըն, քո մատների գործըն՝ լուսինըն և աստղներըն որ դու պատրաստեցիր :

4 Ի՞նչ է մարդն՝ որ դու յիշումես նորան՝ և մարդոյ որդին՝ որ դու խնամք ես տանում նորահամար :

5 Պատճառնոր՝ մին քիչ ծո՛անով հրեշտակներիցն ցածացրիր նորան՝ բայց փառքով և պատուով պսակեցիր նորան :

6 Դու իշխան կարգեցիր նորան քո ձեռաց գործքերին վերայ. ամէն բան դրիր նորա ոտաց տակն.

7 Ամէն ոչխարներըն և եզներըն և էլ վայրի գազաններըն :

8 Երկնքի թռչուններըն և ծովի ձրկներըն, որ ծովի ճանապարհներումն մանեն գալիս :

9 Տէր Տէր մեր՝ ո՜րքան հրաշալի է քո անունդ ամէն երկրի վերայ :

## ՍԱՂՄՈՍ · Թ:

Երգողներուն գլխաւորին · Մութլապպէնի (աս-ղով) · Դաւթին սաղմոս :

Կը գոհանամ քեզանից Տէ՛ր իմ բոլոր սրտովս · կը պատմեմ քո ամէն հրաշքներըն :

2 Ուրախ կըլլիմ և կըցնծամ քեզանով՝ սաղմոս կասեմ քո անունիդ ով բարձրեալ :

3 Իմ թշնամիներս յետ դարձան կործանվեցան , և քո երեսիցդ կորան :

4 Պատճառոր՝ դու ինձ դատաստան և իրաւունք արիր · դու արդար դատաւոր՝ նստեցիր աթոռի վերայ :

5 Դու սաստեցիր հեթանոսներին և կորցրիր ամպարըշտին · նորանց անունըն ջնջեցիր յաւիտեանս յաւիտենից :

6 Թշնամոյ սրերն պակասվեցան 'ի սպառ · և նորանց քաղաքներըն քանդեցիր · նորանց յիշատակն նորանց հետ կորաւ :

7 Բայց Տէրն յաւիտեան կայ · նա իրան աթոռըն պատրաստեց որ դատաստան անէ :

8 Եւ նա աշխարհքըս արդարութենով կըդատէ և ազգերին ուղղութենով իրաւունք կանէ :

9 Եւ Տէրն ապաւէն է աղքատին . ա-
պաւէն նեղութեան ժամանակումն :
10 Սրահամար քեզ կըյուսան նորանք ,
որ քո անունդ ճանաչումեն . ինչու որ
դու չես թողում նորանց՝ որ քեզ խնդրու-
մեն , ո՛վ Տէր :
11 Սաղմոս ասացէ՛ք Տէրին՝ որ Սիօնի
մէջն բնակվումէ . պատմեցէ՛ք նորա գործ-
քերըն ժողովուրդների մէջըն :
12 Պատճառն որ՝ նա որ արիւնըն խընդ-
րումէ՝ յիշեց նորանց . նա չի մոռանում
խեղճերի աղաղակելըն :
13 Ողորմի՛ր ինձ Տէ՛ր և տե՛ս իմ խըղ-
ճութիւնըս որ իմ ատողներիցն է . դու՛
որ մահի դըռներիցն բարձրացնումես ինձ .
14 Որ քո ամէն օրհնութիւններըն պատ-
մեմ Սիօն դըստրի դըռներումն՝ և քո փըր-
կութենովն ցնծամ :
15 Հեթանոսներըն կուլ գնացին էն հո-
րի մէջն որ շինեցին . և նորանց ոտներըն
բռնըվեցան էն որոգայթի (ծուղակի) մէջըն՝
որ թագցրին :
16 Տէրն յայտնի էղաւ՝ նա դատաստան
արաւ . ամպարիշտն իրան ձեռաց գործքե-
րումն բռնըվեցաւ : Հիգգայօն . Սելա . *
17 Ամպարիշտներըն դժոխքի մէջ պիտի
դառնան . ամէն հեթանոսներըն՝ որ Աստու-
ծոյն մոռանումեն :

* Ձայնի փոփոխութեան :

18 Պատճառնոր՝ աղքատն իսպառ չի մոռացվիլ. և խեղճի յոյսն յաւիտեան չի կորչիլ :

19 Վե՛ր կաց ով Տէր, որ մարդն չը զօրանայ, թո՛ղ հեթանոսներն դատվին քո առաջին :

20 Տէ՛ր ահու վախ դի՛ր նորանց վերայ. թո՛ղ հեթանոսներն իմանան որ մարդիք են : Սէլա :

21 Ո՛վ Տէր ի՞նչու ես հեռու կենում՝ և թագցնում քեզ նեղութեան ժամանակում ;

22 Ամպարըշտի ամբարտաւանութենովն նեղանում է աղքատն. թո՛ղ բռնվին էն չար խորհուրդներովն՝ որ հնարեցին :

23 Պատճառնոր՝ ամպարիշտն պարծենում է իրան սրտի ցանկութենովն. և օրհնում է զրկողին և անարգում է Տէրին :

24 Ամպարիշտն իրան երեսի բարձրութենովն իսկի Աստուծոյն չի խնդրում. Աստուած իսկի չըկայ նորա ամէն խորհուրդներումն :

25 Նորա ճանապարհներն պինդ են ամէն ժամանակ. քո դատաստաններն հեռու են նորա երեսիցն. իրան ամէն թշնամիներին փչելով ցրվում է :

26 Նա իրան սրտումն ասում է. Ես ազգից ազգ իսկի չեմ շարժվիլ և չար բան իսկի չի գալ ինձ վերայ :

27 Նորա բերանն լցված է անէծքով
նենգաւորութենով և խարէութենով.
նորա լեզուի տակն ցաւ և անօրէնութիւն
կայ:
28 Նա նստումէ գիւղերի ծածուկ տե֊
ղումն որ թագուն մտիկ տայ. նա սպանու֊
մէ անմեղին ծածուկ տեղում. նորա աչ֊
քերն ծածուկ նայումեն խեղճի վերայ:
29 Թագուն մտիկ է տալիս ծածուկ տե֊
ղումն. ինչպէս առիւծ իրան բընի մէջն.
թագուն մտիկ է տալիս՝ որ աղքատին
յափշտակէ. և կըյափշտակէ աղքատին՝
նորան իրան որոգայթի (Բոլաղէ) մէջն
քցելով:
30 Ինքն իրան խոնարհացնումէ և քա֊
շացնումէ. և խեղճերն ընկնումեն նորա
զօրաւոր ատամների տակն:
31 Նա իրան սրտումն ասումէ. Թէ
Աստուած մոռացաւ՝ իրան երեսըն թագ֊
ցրուց. նա խակի չի տեսնիլ:
32 Վե՛ր կաց Տէ՛ր. ո՜վ Աստուած
բարձրացրո՛ւ քո ձեռըդ. մի՛ մոռանար աղ֊
քատներին:
33 Ամպարիշտն Աստուծոյն ինչո՞ւ պի֊
տի հայհոյէ և իրան սրտումն ասէ՝ թէ դու
չես խնդրում:
34 Դու տեսնումես. ինչու որ՝ դու մտիկ
ես անում էն ցաւին և նեղութեանն, որ
քո ձեռքի մէջ դրես. աղքատն իրան քեզ է
յանձնում. դու ես որբի օգնականն:

35 Ամպարիշտ և չար մարդոց բազուկըն (կոտրէ) ջարդէ՛ր՝ որ նորա չարութիւնըն խնդրես և էլ չըգտնես :

36 Տէրն է թագաւոր յաւիտեան · հեթանոսներն պիտի կորչին նորա երկրիցն :

37 Տէ՛ր դու լսումես աղքատների ցանկութիւնըն հաստատի՛ր նորանց սիրտըն · բա՛ց արա քո ականջըդ ·

38 Որ իրաւունք անես որբին և խեղճին · որ մարդըյն էլ աւելի երկրիցն չըհալածեն :

## ՍԱՂՄՈՍ · Ժ :

Երգեցողներու գլխաւորին · Դաւթին (սաղմոս :)

Տէրին յուսացայ · էլ ի՞նչպէս էք ասում իմ անձիս՝ փախի՛ր սարերն ինչպէս թռչուն :

2 Պատճառնոր՝ ահա՛ ամպարիշտներն լարումեն նետը աղեղըն և պատրաստումեն իրանց նետերըն չուանի վերայ · որ թագուն ձգեն նորանց՝ որ ուղիղ են սըրտով :

3 Թէ որ հիմունքն քանդվի՝ ապա արդարն ի՞նչ պիտի անէ :

4 Տէրն իրան սուրբ տաճարումն է · Տէրի աթոռն երկնքումն է · նորա աչքերն

տեսնումեն, նորա թերթեւանունքներն քննումեն մարդկանց որդիքներին:

5 Տէրն քննումէ արդարին · բայց նորա անձն ատումէ ամպարըշտին և նորան՝ որ անիրաւութիւն է սիրում:

6 Նա ամպարիշտներին վերայ անձրևի պէս կայծակ, կրակ և ծըծումբ (գուգուրդ) վէր կածէ · և նորանց բաժակի (ջամի) բաժինն այրող քամի կըլինի:

7 Պատճառնոր՝ Տէրն արդար է և արդարութիւն է սիրում · նորա երեսն նայումէ նորա վերայ՝ որ ուղիղ է:

1192-5

## ՍԱՂՄՈՍ · ԺԲ:

Երգօղներին գլխաւորին · շեմինիթ (ութլար) · Դաւիթի սաղմոս:

Ապրեցրու ինձ ով Տէր · ինչու որ՝ սըրբերն պակասվեցան · հաւատացեալներն քըչացան մարդկանց որդիքների մէջն:

2 Ամէն մէկն սուտ բան է խօսում իրան ընկերին հետ · նենգաւոր պռօշներով և կեղծաւոր սրտով խօսումեն:

3 Տէրն կըստակէ ամէն նենգաւոր պռօշներըն՝ և էն լեզուն, որ մեծ մեծ բաներ է խօսում:

4 Որ նորանք ասումեն՝ թէ մեր լեզուներըն զօրաւոր շինենք, և մեր պռօշներն մեզ հետ են · ով է մեր Տէրն:

5 Աղքատների նեղութեան համար և
խեղճերի հառաչելոյն համար հիմիկ վեր կը
կենամ · ասում է Տէրն · փրկութեան մէջ
կը դնեմ նորան · որ անարգանքով դէն են
քցում նորան :
6 Տէրի խօսքերն յստակ խօսքեր են ·
ինչպէս արծաթ՝ որ բովի (հո–րոյէ) կրա-
կումն երկրիցն սրբուած և եօթն անգամ
պարզուած փորձուած է :
7 Դու Տէ՛ր կը պահես մեզ և կապրեց-
նես մեզ էս ազգից մինչև յաւիտեան :
8 Ամպարիշտներն ամէն կողմով մանեն
գալիս՝ երբոր անպիտաններն բարձրանու-
մեն մարդկանց որդոց միջումն :

## ՍԱՂՄՈՍ · ԺԲ :

Երգեցողների գլխաւորին · Դաւթի սաղմոս :

Ո՛վ Տէր մինչև ե՞րբ կը մոռանաս ինձ
իսպառ մինչև ե՞րբ կը թագցնես քո երե-
սըդ ինձանից :
2 Մինչև ե՞րբ պիտի հոգս քաշեմ իմ
անձնումս, և տրտմութիւն ունենամ իմ
սրտումս · մինչև ե՞րբ իմ թշնամին պիտի
բարձրանայ ինձ վերայ :
3 Նայի՛ր և լսի՛ր ինձ ով Տէր իմ Աս-
տուած, լուսաւորի՛ր իմ աչքերս որ մա-
հու մէջ չննջիմ :

4 Որ իմ թշնամին չի ասէ՝ Թէ ես յաղթեցի նորան. և իմ նեղացնողներս չըցնծան նորա համար՝ որ տեղիցս շարժվեցայ:

5 Բայց ես յուսացած եմ քո ողորմութեանն: Թող իմ սիրտս ցնծայ քո փրկութենովդ. Թող ես Տէրին օրհնեմ, որ բարի արաւ ինձ:

## ՍԱՂՄՈՍ. ԺԴ.:

Երգողներէ գլխաւորին. Դաւթէ Սաղմոս:

Անզգամ մարդը ասաց իրան սրտումն Թէ Աստուած չըկայ. նորանք ապականվեցան և գարշելի եղան իրանց գործքերումն, ոչ ով չըկայ որ բարի անէ:

2 Տէրն երկնքիցն մտիկ տըւաւ մարդկանց որդիքներին որ տեսնէ, թէ կըլինի մին իմաստուն՝ որ Աստուծոյն խնդրէ:

3 Ամէնքն ճանապարհիցն դուրս գնացին. և իրար հետ անպիտան եղան. ոչ ով չըկայ որ բարի անէ՝ մինչև մինն էլ չըկայ:

4 Մ՞ի թէ չե՞ն իմանում էն ամէնքն որ անօրէնութիւն են գործում՝ որ իմ ժողովուրդըս ուտումեն ինչպէս հաց. և Տէրին չեն կանչում:

5 Էնտեղ են վախենում վախով. էնտեղ որ վախ չըկայ. ինչու որ՝ Տէրն արդարների ցեղի միջումն է:

6 Խեղճի խորհուրդը ամօթ էք անում․
որ Տէրն նորա յոյսն է :
7 Ո՞վ կը տայ սիօնիցն իսրայէլի փրկու-
թիւնը․ երբոր Տէրն իրան ժողովրդի
գերութիւնը կը դարձնէ՝ ապա յակօբն
կը ցնծայ և իսրայէլն ուրախ կը լինի :

## ՍԱՂՄՈՍ․ ԺԴ․

Դաւթի սաղմոս :

Տէ՛ր՝ քո խորանումդ ո՞վ կը կենայ․ և քո
սուրբ սարումդ ո՞վ կը բնակվի :
2 Նա, որ ուղիղ է գնում․ և արդա-
րութիւն է գործում, և ճշմարտութիւն է
խօսում իրան սրտումն :
3 Որ իրան լեզուովն չի բամբասում,
և իրան ընկերին չար չի անում, և իրան
մօտաւորին վերայ նախատինք չի քցում :
4 Որ նորա աչքերի առաջին անարգված
է չարագործն՝ բայց Տէրից վախեցողներին
պատիւ է տալիս․ որ ընկերին երդում է
ուտում և չի փոփոխում :
5 Որ իրան արծաթը շահով չի տալիս
և անմեղի դէմ կաշառք չի առնում․ ով որ
էս անէ․ յաւիտեան տեղիցն չի շարժվիլ :

# ՍԱՂՄՈՍ . ԺԶ :

## Դաւթի Գիր :

Պահի՛ր ինձ ո՛վ Աստուած . ինչու որ՝ քեզ եմ յուսացած :
2 Ես Տէրին ասացի . Թէ դու ես իմ
Տէրն . բարի բան չըկայ եթէ ոչ քեզանից :
3 Սրբերին վերայ , որ երկրումն են՝ և
փառաւորներին վերայ է իմ ամէն հաւանութիւնս :
4 Բայց կըշատանան նորանց ցաւերն՝
որ օտար Աստուծոյ ետևէն վազումեն .
նորանց ընծայքըն որ արիւնից են՝ ես չեմ
մատուցանիլ՝ և նորանց անուններըն իմ
պռօշներիս մէջ չեմ առնիլ :
5 Տէրն է իմ ժառանգութեան և իմ
բաժակի (Թասի) բաժինն . դու ես հաստատում իմ ժառանգութիւնըս :
6 Վիճակ ընկաւ ինձ ցանկալի տեղերն
և ժառանգութիւնս հաճոյ է ինձ :
7 Ես կօրհնեմ Տէրին որ ինձ իմաստուն
է անում . և գիշերումն էլ իմ պոլոջիկներս
խրատումեն ինձ :
8 Տէրին իմ առաջիս եմ՝ դրած ամէն
ժամանակ . ինչու որ՝ նա իմ աջ կողմն է .
ես տեղիցս չեմ շարժվիլ :
9 Սրահամար իմ սիրտս ուրախ է և իմ

փառքս ցընծումէ · և իմ մարմինս էլ յու-
սով կըբնակվի :
10 Պատճառոր՝ իմ անձըս չես թողել
դժոխքի մէջն, և քո սրբոյն չես տալ ապա-
կանութիւն տեսնիլ :
11 Դու ինձ ճանաչացնումես կենաց ճա-
նապարհներըն քո երեսիդ առաջին ուրա-
խութեանց լիութիւն կայ՝ և քո աջ կողմն
քաղցրութիւն յաւիտեան :

## ՍԱՂՄՈՍ ԺԷ:

### Դաւթի աղօթք :

Տէ՛ր՝ լսի՛ր իմ արդարութեանն · մտի՛կ
տուր իմ աղաղակիս և ակա՛նջ դիր իմ
աղօթքիս, որ սուտ պռօշներից չէ գա-
լիս :
2 Թո՛ղ քո երեսիցն իմ իրաւունքս
դուրս գայ · թո՛ղ քո աչքերդ նային ուղ-
ղութեան վերայ :
3 Դու փորձումես իմ սիրտըս և գիշե-
րումն քննումես · դու փորձումես ինձ և ա-
նիրաւութիւն չես գտնում ինձանում :
4 Իմ բերանս հաւան չի կենում մարդ-
կանց որդոց գործքերին · քո պռօշների
խօսքի պէս զգոյշ եմ կենում բռնաւոր
մարդոյ ճանապարհներիցն :
5 Հաստատի՛ր իմ գնացքըս քո ճանա-
պարհումն, որ իմ ոտներս չը գլորվին :

6 Ես կանչում եմ դէպի քեզ՝ որ դու լսես ինձ ով Աստուած. քո ականջդ ինձ մօտ դարձրու, լսի՛ր իմ խօսքերս:

7 Փառաւոր արա՛ քո ողորմութիւնդ՝ դու որ փրկում ես քեզ յուսացածներին՝ նորանցից որ քո աջ ձեռիդ հակառակ են կենում:

8 Պահի՛ր ինձ ինչպէս աչքի բիբ. և քո թևերի շուքի տակն ծածկի՛ր ինձ.

9 Այն ամպարիշտներիցն՝ որ նեղացնում են ինձ. իմ անձիս թշնամիներիցն, որ չորս կողմից պատում են ինձ:

10 Նորանք փակում են իրանց սիրտը՝ և իրանց բերանովը ամբարտաւանութիւն են խօսում:

11 Հիմիկ մեր ամէն գնացքի չորս կողմովը պատում են մեզ. և իրանց աչքերը դրած են, որ մեզ գետնի վերայ վէր քցեն:

12 Նորանք նման են առիւծի որ ցանկանում է յափշտակել՝ և առիւծի ձագին՝ որ ծածուկ տեղերումը նստած է:

13 Վե՛ր կաց ով Տէր, հասի՛ր նորանց վերայ՝ նորանց գետինն քցի՛ր և իմ անձըս քո սրովը ապրեցրու ամպարիշտների ձեռքիցն.

14 Քո ձեռքովդ ով Տէր՝ ապրեցրու — Էս մարդկանցից. էս աշխարհքիս մարդկանցիցն՝ որ նորանց բաժինն էս կեանքումս է. և լցնում ես նորանց փորը քո բարիքնե-

րովդ. որ նորանց որդիքներըն էլ կըշտացած են և մնացածըն թողումըն իրանց երեխաներին :

15 Բայց ես արդարութենով կըտեսնեմ քո երեսըդ և կըկըշտանամ երբոր կըզարթնանամ քո նմանութենովդ :

## ՍԱՂՄՈՍ. ԺԸ :

Երգօղներէ գլխաւորին. Տէրէ ծառայ, Դաւթէ (սաղմոս). որ Տէրին տուաց էս Երգէն խօսքերըն էն օրուան՝ որ Տէրն զուրան փրկէց իր իրան ամէն թշնամիներէ ձեռուըցն. և Սաւուղէ ձեռուըցն : Ըս տուաց :

Բոլոր սրտով կըսիրեմ քեզ Տէր իմ զօրութիւն :

2 Տէր, իմ վէմ. և իմ բերդ և իմ ազատիչ. իմ Աստուած, իմ ամրութիւն որ նորան յուսացած եմ. իմ պաշտպան և իմ փրկութեան եղջիւր, իմ բարձրութիւն :

3 Օրհնելով կըկանչեմ Տէրին՝ և իմ թշնամիներից կըփրկվիմ :

4 Մահի ցաւերըն չորս կողմովս պատեցին ինձ և բելիարի վտակներըն (հեղեղներըն) վախացրին ինձ :

5 Դժոխքի ցաւերըն պատեցին ինձ. մահի որոգայթներըն (թակարդներըն) հասին ինձ վերայ :

6 Իմ նեղութենումս կանչեցի դէպի
Տէրն՝ դէպի իմ Աստուածն աղաղակեցի՝ նա
լսեց իմ ձայնիս իրան տաճարիցն · և իմ
աղաղակս նորա առաջին հասաւ նորա ա-
կանջներին :
7 Երկիրն դողաց և շարժվեցաւ և սա-
րերի հիմունքներն սարսափվեցան և դո-
ղացին · պատճառոր՝ նա բարկացաւ :
8 Ծուխ դուրս եկաւ նորա բարկութե-
նիցն և փչացնող կրակ նորա բերանիցն ·
կայծակներ դուրս եկին նորանից :
9 Նա խոնարհացրուց երկինքըն և վէր
եկաւ՝ և խաւար կար նորա ոտների տակն :
10 Նա հեծաւ քրոբէի վերայ և թռաւ ·
և սաստիկ թռաւ քամոյ թեւերին վերայ :
11 Խաւարըն ծածկոց դրաւ իրան վերայ ·
խաւար ջրեր և մթին ամպեր խորան էլան
նորա չորս կողմանը :
12 Այն փայլող լուսիցն որ նորա առաջին
կար՝ նորա ամպերն անցկացան դառան
կարկուտ և կրակի կայծակներ :
13 Եւ Տէրն որոտաց երկնքումն · և
բարձրեալն իրան ձայնըն տուաւ կարկը-
տով և կրակի կայծակներով :
14 Եւ իրան նետերըն ուղարկեց և ցրվեց
նորանց · և կայծակներըն ձգեց և շփո-
թացրուց նորանց :
15 Ապա երևեցան ջրերի անդունդքն , և
երկրի հիմունքն յայտնըվեցան քո սաս-

տելումն ով Տէր, քո բարկութեան հոգւոյ
փչելումն :
16 Նա վերևից ուղարկեց և բռնեց
ինձ. նա շատ ջրերից հանեց ինձ :
17 Նա ազատեց ինձ իմ զօրաւոր թշնա-
մուցն՝ և իմ ատողներիցն՝ որ ինձանից զօ-
րաւոր էլան :
18 Նորանք հասին ինձ վերայ իմ նե-
ղութեան օրումն. բայց Տէրն հաստատու-
թիւն էլաւ ինձ համար :
19 Եւ ինձ հանեց տարաւ լայնարձակ
տեղ՝ և ինձ ապրեցրուց. ինչու որ հաւան
կացաւ ինձ :
20 Տէրն բարի է անում ինձ իմ արդա-
րութեան պէս՝ և ինձ հատուցանումէ իմ
ձեռքիս անմեղութեան պէս :
21 Պատճառնոր՝ ես պահեցի Տէրի ճա-
նապարհներըն և իմ Աստուածանիցն ամ-
պարշտութենով չըհեռացայ :
22 Ինչու որ՝ նորա ամէն իրաւունքներըն
իմ առաջիս կան. և նորա պատուիրանքնե-
րըն ինձանից դէն չեմ քցում :
23 Բայց ես անարատ եմ նորա առա-
ջին, և զգոյշ եմ կենում իմ անօրէնութե-
նիցն :
24 Արահամար Տէրն հատուցանումէ
ինձ իմ արդարութեան պէս. իմ ձեռքիս
անմեղութեան պէս իրան աչաց առաջին :
25 Սրբոյն հետ սուրբ ես. և անարատ
մարդոյ հետ անարատ ես :

26 Յիստակին հետ յիստակ ես. և ծուռ մարդոյ հետ ծուռ ես:

27 Վասնզի՝ դու աղքատ ժողովըր-դին ազատեցընումես. և բարձր աչքերըն խոնարհացընումես:

28 Ինչու որ՝ դու լուսաւորումես իմ ճրագըս. Տէր Աստուածն լուսաւոր է ա-նում իմ խաւարըս:

29 Ինչու որ՝ քեզանով զօրքի վերայ վա-զումեմ. և իմ աստուծովս պարսպի վերայ անց եմ կենում:

30 Աստուծոյ ճանապարհը կատարեալ է. Տէրի խօսքն պարզուած է. նա է պահա-պան էն ամէնին համար որ նորան յուսա-ցած են:

31 Վասնզի՝ ո՞վ է Աստուած, եթէ ոչ Տէրն. և ո՞վ է վէմ, եթէ ո՛չ մեր Աստուածն:

32 Աստուած է, որ զօրութիւն է հագ-ցընում ինձ. և իմ ճանապարհըս անարատ է անում:

33 Նա իմ ոտներըս շինումէ եղներին (ջէյրանաց) նըման. և ինձ կանգնացնումէ բարձր տեղերումն:

34 Նա իմ ձեռքըս վարժացնումէ պա-տերազմ անել, որ իմ բազուկներս բիլէկս պղնձի աղեղըն էլ կարենան քաշել:

35 Եւ տալիս ես ինձ քո փրկութեան վահանըն (ղալխանըն) և քո աջդ հաստա-

տումէ ինձ . և քո քաղցրութիւնդ մեծաց-
նումէ ինձ :
36 Դու լայնարձակ ես անում իմ գնաց-
քըս իմ տակս , և իմ ոտներս չեն դողում :
37 Իմ թշնամիներըս կըհալածեմ և
նորանց կըհասնեմ . և յետ չեմ դառնալ
մինչև որ փչացնեմ նորանց :
38 Կըջարդեմ նորանց որ չըկարենան
վեր կենալ . նորանք իմ ոտներիս տակն
կընկնին :
39 Դու հագցնումես ինձ զօրութիւն
պատերազմի համար . և ինձ դէմ վեր կա-
ցածներին իմ տակն ես քցում :
40 Դու իմ թշնամիներըն փախցնու-
մես , և ինձ ատողներըն կըսատակեմ :
41 Նորանք կանչումեն և ոչ ով չըկայ
որ փրկէ . դէպի Տէրն՝ և նա ականջ չի
դնում նորանց :
42 Ես կըփշրեմ նորանց ինչպէս փոշի՝
քամոյ առաջին . և դուրս կըհանեմ նորանց՝
ինչպէս փողոցի ցեխըն :
43 Դու ազատումես ինձ ժողովըրդի հա-
կառակութենից և ինձ հեթանոսներին
վերայ գլուխ ես դընում . էն ժողովուրդն
որ ես նորան չէի ճանաչում՝ ծառայումէ
ինձ :
44 Երբոր հենց ականջով լսումեն՝ հնա-
զանդվումեն ինձ . օտարների որդիքըն կեղ-
ծաւորութենով հնազանդվումեն ինձ :

45 Օտարների որդիքն մաշվեցան · և սարսափելով · դուրս-եկան իրանց ծածուկ տեղերից :

46 Կենդանի է Տէրն · և օրհնեալ լինի՛ իմ վէմն · և բարձրացած լինի՛ իմ փրկութեան Աստուածն :

47 Այն Աստուածն որ վրէժխնդրութիւն է տալիս ինձ · և ժողովուրդներըն իմ ներքևն հնազանդացնումէ :

48 Որ փրկումէ ինձ իմ թշնամիներից և բարձրացնումէ ինձ նորանից՝ որ ինձ դէմ վերկացան · դու ազատումես ինձ անիրաւ մարդուցն :

49 Սրա համար հեթանոսների միջումն կըգոհանամ քեզանից ով Տէր · և քո անունիդ սաղմոս կասեմ :

50 Նա մեծացնումէ իրան փրկութիւնըն իրան թագաւորին համար · և ողորմութիւն է անում իրան օծեալ Դաւթին , և նորա զաւակին մինչև յաւիտեան :

## ՍԱՂՄՈՍ · ԺԹ :

Երգեցողների գլխաւորին · Դաւիթի սաղմոս :

Երկինքներն պատմումեն Աստուծոյ փառքըն և հաստատութիւնն ճանաչացնումէ նորա ձեռաց գործքերըն :

2 Օրն խօսք է բղխում օրին · և գիշերն գիտութիւն է ցոյց տալիս գիշերին :

3 Իսկի լեզու և խօսք չըկայ՝ որ նորանց ձայնն չըլսվի նորանցում :

4 Նորանց ձայնն դուրս է գալիս ամէն երկիրն՝ և նորանց խօսքն մինչև աշխարհքի ծայրերն · արեգական համար խորան (չադր) դրաւ նորանց միջումն :

5 Եւ նա դուրս է գալիս ինչպէս փեսայ իրան առագաստիցն (օթաղիցն) և ցնծումէ ինչպէս հսկայ մարդ իրան ճանապարհն գնալոյ համար :

6 Նա ծագումէ երկնքի մին ծայրիցն և վազելով գնումէ մինչև նորա մէկէլ ծայրն · և իսկի բան չի ծածկվում նորա տաքութենիցն :

7 Տէրի օրէնքն անարատ է և հանգստացնումէ հոգին , Տէրի վկայութիւնն ճշմարիտ է և իմաստուն է անում պարզամիտներին :

8 Տէրի պատուիրանքներն ուղիղ են և ուրախացնումեն սիրտըն · Տէրի հրամաններըն մաքուր են և լուսաւորումեն աչքերըն :

9 Տէրի վախն սուրբ է և մնումէ յաւիտեան · Տէրի դատաստաններն ճշմարիտ են և ամէն կողմանէ արդար :

10 Նորանք աւելի ցանկալի են քան թէ ոսկի և էլ թանգագին քարեր · և աւելի քաղցր են քան թէ մեղր և մեղրի հացն : (Բէլէրն) :

11 Քո ծառան էլ լուսաւորվում է նո-
րանցով · և նորանց պահպանութենումն
շատ հատուցումն կայ ։
12 Ո՞վ կարող է իմանալ իրան ամէն
սխալմունքերն · ծածուկ սխալմունքներից
էլ սուրբ արա՛ ինձ ։
13 Եւ պահի՛ր քո ծառայիդ ամբար-
տաւաններից, որ իշխանութիւն չանեն
ինձ վերայ · էն ժամանակն անարատ կըլի-
նիմ, և սուրբ կըլինիմ մեծ անօրէնութե-
նից ։
14 Թո՛ղ հաճոյ լինին քեզ իմ բերանիս
խօսքերն · և իմ սրտիս խորհուրդն քո ա-
ռաջիդ՝ ո՛վ Տէր, իմ վէմ և իմ փրկիչ ։

## ՍԱՂՄՈՍ · ԺԹ ։

Երգեցողների գլխաւորին · Դաւթի սաղմոս ։

Թո՛ղ Տէրն լսէ քեզ նեղութեան օ-
րումն, և յակոբայ Աստուծոյն ա-
նունն բարձրացնէ քեզ ։
2 Նա՛ թո՛ղ օգնութիւն ուղարկէ քեզ
սուրբ տեղից՝ և զօրացնէ քեզ սիօնի մի-
ջից ։
3 Նա՛ յիշէ քո ամէն պատարագնե-
րըն · և քո ողջակէզներըն ընդունելի անէ ։
Սէլա ։
4 Նա՛ տայ քեզ քո սրտի ուզածին պէս՝
և կատարէ՛ քո ամէն խորհուրդներըն ։

5 Մե՛զ ցնծանք քո փրկութենովդ և մեր
Աստուծոյ անունովն պարծենանք․ Տէրն
կատարէ՛ քո ամէն խնդրուածներըն ։
6 Հիմիկ իմանումեմ, որ Տէրն փրկումէ
իրան օծելըյն, և լսումէ նորան իրան սուրբ
երկնքիցն․ նորա աջն զօրութենով փրկու-
մէ նորան ։
7 Նորանք կառքերով (կառքերով)
և ձիանքով էն պարծենում․ բայց մենք մեր
Տէր Աստուծոյ անունըն ենք յիշում ։
8 Նորանք թեքվեցան և վէր ընկան․
բայց մենք վեր կացանք և կանգնեցինք
9 Տէ՛ր ազատեցրու թագաւորին․ և լսի՛ր
մեզ էն օրումն՝ որ դէպի քեզ կըկանչենք ։

## ՍԱՂՄՈՍ․ Ի ։

Երգեցիներին գլխաւորին․ Դաւթի սաղմոս ։

Տէ՛ր քո զօրութենովդ ուրախ է թագա-
ւորն․ և շա՛տ ցնծումէ նա քո փրկութե-
նովդ ։
2 Դու նորան տուիր իրան սրտի ցան-
կութիւնըն․ և իրան պռօշների խնդիրքըն
չի արգելեցիր նորանից․ սելա ։
3 Պատճառնոր՝ դու նորան լցնումես
բարի օրհնութենով․ և ազնիւ ոսկոյ պսակ
ես դնում նորա գլխին վերայ ։
4 Նա կեանք խնդրեց քեզանից․ և նո-

քան երկար օրեր տուիր յաւիտեանս յա-
ւիտենից :
5 Մ՚եծ է նորա փառքն քո փրկութեան
մէջն · մեծ պատիւ և փառաւորութիւն ես
դնում նորա վերայ :
6 Պատճառնոր՝ դու կաշգումես նորան
օրհնութիւն յաւիտեան · դու ուրախաց-
նումես նորան քո երեսի ուրախութենովը :
7 Պատճառնոր՝ թագաւորն Տէրին է
յուսացած՝ և բարձրելոյ ողորմութենովը
չաստատ կըմնայ :
8 Քո ձեռքդ կըգտնէ քո ամէն թշնամի-
ներին · և քո աջդ կըգտնէ քեզ ատողնե-
րին :
9 Դու վառված փռան նման կանես
նորանց · երբոր քո երեսդ կըդարձնես նո-
րանց վերայ · Տէրն իրան բարկութենովը
կըկորցնէ նորանց և կրակ կուտէ նորանց :
10 Նորանց պտուղըն կըկորցնես երկ-
րիցն · և նորանց զաւակըն մարդկանց որ-
դոց միջիցն :
11 Ինչուոր՝ նորանք չար պատրաստեցին
քեզ վերայ · խորհուրդ հնարեցին ու չըկա-
րացին կատարել :
12 Ինչուոր՝ դու կանես նորանց էնպէս
որ թիկունք դարձնեն · և քո աղեղի լա-
րովը (չուանովը) կըձգես նորանց երեսին
վերայ :
13 Տէ՛ր բարձրացի՛ր քո զօրութենովդ ·

և կօրհնենք և սաղմոս կասենք քո կարողու-թեանդ :

## ՍԱՂՄՈՍ · ԻԲ :

Երգողներին գլխաւորին · առաւօտեան եղջերու-նոյն ձայնակցութեամբ Դաւիթի սաղմոս :

Իմ Աստուած՝ իմ Աստուած · ինչո՞ւ թողիր ինձ ; ինչո՞ւ հեռու ես կենում իմ փրկութենիցս և իմ հառաչանքիս խօսքերիցն :
2 Իմ Աստուած՝ ես կանչումեմ ցերեկն · բայց դու չես լսում · և գիշերն էլ · բայց հանգիստ չըկայ ինձ :
3 Բայց դու սուրբ ես՝ որ բնակվումես իսրայէլի գովութիւնների մէջն :
4 Քեզ յուսացան մեր հարքն · յուսացան և փրկեցիր նորանց :
5 Դէպի քեզ աղաղակեցին և ազատվեցան · քեզ յուսացան և չի ամաչեցին :
6 Բայց ես որդն եմ և մարդ չեմ · մարդկանց նախատինք և ժողովըրդի անարգանք :
7 Ամէնքն որ ինձ տեսնումեն՝ ծաղր են անում ինձ · պռօշներըն լայնացնումեն և գլուխըն շարժումեն :
8 Նա Տէրին յուսացաւ · թո՛ղ նա ազատէ դորան՝ թո՛ղ փրկէ դորան՝ թէ հաւան կենայ դորան :

9 Իրաւի՛ դու ես՝ որ հանեցիր ինձ իմ
մօր փորիցն . դու էլար իմ յոյսս . հենց իմ
մօր ծիծըն ուտելոյ ժամանակումն :
10 Մօրս արգանդից քեզ ընկայ . իմ
մօր փորիցն դու ես իմ Աստուածն :
11 Մի՛ հեռանար ինձանից . ինչուոր՝
նեղութիւնն մօտացած է . և ոչ ով չըկայ
որ օգնութիւն անէ :
12 Շատ աչառներ էլան իմ չորս կող-
միս . և բասանի զօրեղ եզներն պատեցին
ինձ :
13 Իրանց բերանըն ինձ վերայ բաց ա-
րին՝ ինչպէս առիւծ , որ գռռումէ և յա-
փըշտակումէ :
14 Ես թափվեցայ ինչպէս ջուր՝ և իմ
ամէն ոսկերքըս ցրվեցան . իմ սիրտս իմ
փորի մէջն էլաւ ինչպէս հալած մոմ :
15 Իմ զօրութիւնս խեցոյ պէս չորա-
ցաւ . և իմ լեզուս իմ քիմքիս (դամաղիս)
հետ կըպաւ , և դու մահի հողին մէջ
դրիր ինձ :
16 Պատճառնոր շըներ էլան իմ չորս
կողմիս և չարերի ժողովքն պատեցին ինձ .
նորանք իմ ձեռներըս և ոտներըս ծակե-
ցին :
17 Ես համարումեմ իմ ամէն ոսկերքըս
բայց նորանք նայումեն և ուրախութեամբ
տեսնումեն ինձ :
18 Իմ շորերըս բաժանումեն իրանց

մէջն . և իմ կապայիս վերայ վիճակ են
քցում :
19 Բայց դու Տէ՛ր՝ մի՛ հեռանար . իմ
զօրութիւն՝ շո՛ւտ արա ինձ օգնելու հա-
մար .
20 փրկի՛ր իմ անձըս սրից՝ և իմ կեան-
քըս շան ձեռքից :
21 փրկի՛ր ինձ առիւծի բերանից . և
ականջ դնելով ազատէ՛ր ինձ գոմէշի եղ-
ջիւրներից (պօղէրէյն) :
22 Ես քո անունըդ կըպատմեմ իմ եղ-
բարցս . ժողովըրդի միջումն կօրհնեմ քեզ :
23 Ո՛վ Տէրից վախեցողներ՝ օրհնեցէ՛ք
նորան . յակօբայ ամէն զաւակներ փա-
ռաւորեցէ՛ք նորան . և վախեցէ՛ք նորանից՝
Իսրայէլի ամէն զաւակ :
24 Պատճառնոր՝ նա չի անարգեց , և
աչքից չըքցեց խեղճի խեղճութիւնըն՝ և
իրան երեսըն չըծածկեց նորանից . բայց
երբոր աղաղակեց դէպի նա , ականջ
դրաւ :
25 Քեզ օրհնութիւն կըտամ մեծ ժո-
ղովըրդի միջումն . իմ ուխտըս կըկատարեմ
նորանից վախեցողների առաջին :
26 Թո՛ղ խեղճերն ուտեն և կըշտանան .
թո՛ղ օրհնեն Տէրին նորանք՝ որ խնդրումեն
նորան . ձեր սիրտն թո՛ղ ապրի յաւի-
տեան :
27 Երկրի ամէն ծայրերն կըյիշեն և

Տէրի մօտ կդառնան · հեթանոսների ամէն ազգերն քո առաջիդ երկրպագութիւն կանեն ։

28 Պատճառոր՝ Տէրինն է թագաւորութիւնն և նա իշխանութիւն է անում հեթանոսների միջումն ։

29 Երկրի ամէն պարարտներն կուտեն և երկրպագութիւն կանեն · նորա առաջին վեր կընկնին ամէնքն , որ հողի մէջ են վէր գալիս , որ չեն կարող իրանց անձըն ապրեցնել ։

30 Զաւակ կըլինի որ կըծառայէ նորան · նա Տէրին ազգ կըհամարվի ։

31 Կըգան և նորա արդարութիւնըն կըպատմեն էն ժողովըրդին , որ կըծնվի , թէ նա արաւ էս ամէնը ։

## ՍԱՂՄՈՍ · ԻԳ ։

### Դաւիթի Սաղմոս ։

Տէրն է իմ հովիւս · ես իսկի չեմ կարօտիլ ։

2 Նա կանանչ տեղերում հանգստացնումէ ինձ՝ և հանդարտ ջրերի մօտ տանումէ ինձ ։

3 Նա՛ իմ անձիս հանգիստ է տալիս · նա ինձ առաջնորդումէ արդարութեան ճանապարհումն իրան անունին համար ։

4 Եւ թէ և գնամ մահի շուաքի ձորումն՝
չար բանից էլ չեմ վախենալ . ինչու որ՝
դու ինձ հետ ես . քո գաւազանն և քո ձեռի
փայտն մխիթարումեն ինձ :
5 Դու իմ առաջիս սեղանես պատրաս-
տում իմ թշնամիների դիմացն . դու իմ
գլուխըս իւղով օծումես . իմ բաժակս
(Ըստոս) խապառ լիքն է :
6 Իրաւի բարութիւն և ողորմութիւն
իմ ետևէս կըգան՝ իմ կենաց ամէն օրե-
րումն . և Տէրի տանն կըբնակվիմ շատ եր-
կար ժամանակ :

## ՍԱՂՄՈՍ. ԻԴ:

### Դաւթի սաղմոս :

Տէրին է երկիրն և նորա լիութիւնն .
աշխարհք և նորա բնակիչքն :
2 Պատճառնոր՝ նա ինքն նորա հիմուն-
քըն դրաւ ծովերին վերայ . և նորան հաս-
տատեց գետերին վերայ :
3 Ո՞վ վեր կէլնի Տէրի սարն՝ և ո՞վ կը
կանգնի նորա սրբութեան տեղումն :
4 Նա որ սուրբ է ձեռքով՝ և անարատ
սրտով . որ իրան անձըն անիրաւութեան
չի տալիս՝ և երդում չի ուտում նենգաւո-
րութենով :
5 Նա օրհնութիւն կըստանայ Տէրիցն . և

արդարութիւն՝ իրան փրկութեան Աստուածանից :
6 Այս էն ազգն է որ խնդրումէ Նորան · որ խնդրումէ քո երեսըն՝ յակոբայ Աստուած · սէլա :
7 Ո՛վ դռներ՝ բարձրացրէ՛ք ձեր գլուխներըն · և բարձրացէ՛ք ո՛վ յաւիտենական դռներ · որ փառաց Թագաւորն մտնէ :
8 Ո՞վ է էն փառաց Թագաւորն · Տէրն՝ որ զօրաւոր և ուժեղ է · Տէրն՝ որ ուժեղ է պատերազմի մէջն :
9 Ո՛վ դռներ բարձրացրէ՛ք ձեր գլուխներըն · և բարձրացէ՛ք ո՛վ յաւիտենական դռներ , որ փառաց Թագաւորն մտնէ :
10 Ո՞վ է էն փառաց Թագաւորն · զօրութեանց Տէրն է · սա՛ է փառաց Թագաւորն · սէլա :

## ՍԱՂՄՈՍ. ԻԵ.

Դաւիթի սաղմոս :

Ո՛վ Տէ՛ր՝ դէպի քեզ եմ բարձրացնում իմ անձըս :
2 Ի՛մ Աստուած քեզ եմ յուսացած , թո՛ղ չի ամաչեմ · թո՛ղ իմ թշնամիներս չըցնծան ինձ վերայ :
3 Եւ ամէնքն որ քեզ սպասումեն՝ չեն ամաչիլ · բայց նորանք պիտի ամաչեն՝ որ զուր տեղն անօրէնութիւն են գործում :

4 Ցո՛յց տուր ինձ Տէ՛ր՝ քո ճանապարհնե-
րըն · սովորեցրո՛ւ ինձ քո գնալոյ ճանա-
պարհներըն ։
5 Առաջնորդի՛ր ինձ քո ճշմարտութե-
նումն , և սովորեցրո՛ւ ինձ · ինչու որ՝ դու ես
իմ փրկութեան Աստուածն · քեզ եմ յու-
սացած ամէն օր ։
6 Յիշի՛ր Տէ՛ր՝ քո ողորմութիւնըդ և
քո քաղցրութիւնըդ · որ նորանք յաւի-
տեան են
7 Մ՛ի յիշեր իմ մանկութեան մեղքե-
րըն և իմ անօրէնութիւններըս · բայց քո
ողորմութեան պէս յիշի՛ր ինձ դու՝ քո
բարութեան համար ո՛վ Տէր ։
8 Բարի և ուղիղ է Տէրն · որահամար
մեղաւորներին ցոյց է տալիս ճանապարհըն ։
9 Նա՛ առաջնորդումէ հեզահոգիներին
իրաւունքի մէջ · և սովորեցնումէ հեզահո-
գիներին իրան ճանապարհըն ։
10 Տէրի ամէն ճանապարհներըն՝ ողոր-
մութիւն են և ճշմարտութիւն նորանց հա-
մար՝ որ նորա ուխտըն և վկայութիւնըն
պահումեն ։
11 Տէ՛ր՝ քո անունիդ համար քաւի՛ր իմ
անօրէնութիւնըս · ինչու որ՝ շատ է ։
12 Ո՞վ է էն մարդն՝ որ Տէրից վախե-
նումէ · ցոյց կըտայ նորան էն ճանապար-
հըն որ պիտի ընտրէ ։
13 Նորա անձն բարութեան մէջ կը

բնակի · և նորա զաւակն երկիրը կըժա-
ռանգէ :
14 Տէրի խորհուրդը նորանց հետ է՝ որ
վախումեն նորանից · և նորա ուխտն էն է՝
որ սովորցնէ նորանց :
15 Իմ աչքերս ամէն ժամանակ նայումեն
դէպի Տէրն · ինչուոր՝ նա է հանում իմ
ոտներըս որոգայթից (Ծուղակից) :
16 Ինձ մտիկ արա՛ և ողորմեա՛ ինձ ·
ինչուոր՝ մենակ եմ ես և խեղճ :
17 Իմ սրտիս նեղութիւններն շատ են ·
հանի՛ր ինձ իմ վըշտերիցն ·
18 Տե՛ս իմ խեղճութիւնըս և իմ ցաւըս ·
և թո՛ղ իմ ամէն մեղքերըս :
19 Տե՛ս իմ թշնամիներըս որ շատ են · և
անիրաւութենով ատումեն ինձ :
20 Պահի՛ր իմ անձըս և փրկի՛ր ինձ ·
թո՛ղ չի ամաչեմ · ինչու որ՝ քեզ եմ յու-
սացած :
21 Թո՛ղ անարատութիւնն և ուղղու-
թիւնն պահեն ինձ · ինչու որ՝ քեզ եմ
մտիկ տալիս :
22 Ա՛ստուած՝ փրկի՛ր իսրայէլին իրան
ամէն նեղութենիցն :

## ՍԱՂՄՈՍ. ԻԵ:

Դաւթի սաղմոս :

Տէ՛ր՝ իրաւունք արա ինձ . ինչուոր՝ ես անմեղութենով եմ գնում և Տէրին եմ յուսացած . սրահամար վէր չեմ ընկնիլ :
2 փորձի՛ր ինձ Տէ՛ր՝ և քննի՛ր ինձ . փորձի՛ր իմ պօլոճիկներըս և իմ սիրտըս :
3 Ինչուոր՝ քո ողորմութիւնդ իմ աչաց առաջին կայ . և քո ճշմարտութենումդ գնումեմ :
4 Ես չեմ նստում ունայն մարդկանց հետ . և կեղծաւորներին հետ չեմ գնում :
5 Ես ատումեմ չարերի ժողովքըն . և ամպարիշտներին հետ չեմ նստում :
6 Լուանումեմ իմ ձեռներըս անմեղութենով . և քո սեղանի չորս կողմովն եմ ձնում ով Տէր .
7 Որ օրհնութեան ձայնըն լսել տամ . և քո ամէն զարմանալի գործքերըն պատմեմ :
8 Տէ՛ր՝ ես սիրումեմ քո տան բնակութիւնըն . և քո փառաց բնակվելոյ տեղըն :
9 Մ՛ի կորցներ իմ անձըս մեղաւորին հետ . և իմ կեանքըս արիւն թափող մարդկանց հետ :

10 Որ նորանց ձեռքումն անիրաւութիւն կայ . և նորանց աջն լցված է կաշառքով ։
11 Բայց ես գնումեմ անմեղութենով . փրկի՛ր ինձ և ողորմեա՛ ինձ ։
12 Իմ ոտս կանգնած է ուղիղ ճանապարհումն . ես կօրհնեմ Տէրին ժողովուրդների միջումն ։

## ՍԱՂՄՈՍ · ԻԶ ։

Դաւթի սաղմոս ։

Տէրն է իմ լոյսն և իմ փրկութիւնն՝ ես ումից վախենամ . Տէրն է իմ կեանքի զօրութիւնն՝ ումից սարսափիմ ։
2 Երբոր չարերն՝ էն իմ նեղացնողներն և թշնամիներն՝ ինձ վերայ գալիս են , որ իմ մարմինըս ուտեն . նորանք տկարանումեն և վէր են ընկնում ։
3 Թէ և զօրք պատրաստված գան ինձ վերայ , իմ սիրտըս չի՛ վախենալ . թէ և պատերազմ վեր կենայ ինձ դէմ՝ էլ էնպէս ես կըյուսամ ։
4 Մ՛ին բան խնդրեցի Տէրիցն՝ և հէնց էն շատ եմ ուզում՝ որ Տէրի տանըն բնակվիմ իմ կեանքիս ամէն օրերումն . որ Տէրի գեղեցիկ փառքըն տեսնեմ և ուրախութենով նորա տաճարին մօտիկ տամ ։
5 Ինչու որ՝ նա կըծածկէ ինձ իրան խո-

րանի մէջն չար օրումն․ նա կըթագցնէ ինձ
իրան խորանի ծածուկ տեղումն․ և կը
բարձրացնէ ինձ վիմի վերայ ։
6 Եւ ապա իմ գլուխս կըբարձրանայ իմ
թշնամիներիս վերայ՝ որ իմ չորս կողմովս
կան․ և նորա խորանի մէջն գոհութեան
պատարագներ կըմատուցանեմ․ ես կօրհ-
նեմ և սաղմոս կասեմ Տէրին
7 Լսի՛ր Տէ՛ր՝ իմ ձայնիս երբոր կանչեմ
և ողորմեա՛ ինձ , և ականջ դիր ինձ ։
8 Իմ սիրտս ասումէ քեզ ու խօսում՝ թէ
խնդրեցէ՛ք իմ երեսըս․ այո Տէ՛ր՝ ես էլ
խնդրումեմ՝ քո երեսըդ ։
9 Քո երեսըդ մի՛ ծածկեր ինձանից․ քո
ծառայիդ դէն մի՛ քցեր քո բարութենովդ․
դու ես իմ օգնութիւնն․ մի՛ հեռացներ ինձ
և մի՛ թողեր ինձ՝ իմ փրկութեան Աս-
տուած ։
10 Պատճառնոր՝ իմ հայրս և իմ մայրս
թողումեն ինձ․ բայց Տէրն ընդունումէ
ինձ ։
11 Սովորցրու ինձ Տէ՛ր՝ քո ճանապար-
հըն․ և առաջնորդի՛ր ինձ ուղիղ ճանա-
պարհումն՝ իմ թշնամիներիս համար ։
12 Մ՚ի՛ մատներ ինձ իմ նեղացնողների
կամքին․ ինչու որ՝ սուտ վկաներ են վերկե-
նում ինձ դէմ , որ անօրէնութիւն են խօ-
սում ։
13 Բայց ես հաստատ հաւատումեմ՝ որ

տէրի բարութիւնըն կըտեսնեմ կենդա-
նեաց երկրումն :
14 Սպասի՛ր Տէրին . թո՛ղ սիրտդ պինդ
և զօրաւոր լինի՛, և սպասի՛ր Տէրին :

## ՍԱՂՄՈՍ. ԻԸ:

Դաւթէ սաղմոս :

Տէ՛ր՝ դէպի քեզ կանչումեմ՝ իմ վէմ՝
լուռ մի՛ կենար ինձանից . որ չըլինի թէ
քո ինձանից լուռ կենալովդ՝ նման լինիմ
նորանց որ գերեզմանի մէջ են մտնում :
2 Լսի՛ր իմ աղաչանքի ձայնին, երբոր
դէպի քեզ աղաղակեմ՝ երբոր իմ ձեռքըս
դէպի քո սուրբ խորանըն բարձրացնեմ :
3 Մ՚ի՛ կորցներ ինձ ամպարիշտներին
հետ և նորանց հետ, որ անօրէնութիւն են
գործում . որ իրանց ընկերներին հետ խա-
ղաղութիւն են խօսում . և չարութիւն կայ
նորանց սրտերումն :
4 Տո՛ւր նորանց իրանց գործքերին պէս՝
և իրանց վարքերի չարութեան պէս՝ իրանց
ձեռաց գործքերին պէս տո՛ւր նորանց . ի-
րանց հատուցումըն հասցրո՛ւ նորանց :
5 Պատճառ որ՝ միտք չեն դնում Տէրի
գործքերին . և ոչ նորա ձեռաց գործքե-
րին . Սրա համար նա կըկործանէ նորանց և
էլ չի շինիլ :

6 Օրհնեալ է Տէրն. ինչու որ՝ Նա լսումէ իմ աղաչանքի ձայնին :

7 Տէրն է իմ զօրութիւն և իմ պաշտպան. իմ սիրտս յուսացաւ Նորան և օգնութիւն էլաւ ինձ. իմ սիրտս ցնծումէ և իմ օրհնութեններովս փառաբանումեմ Նորան :

8 Տէրն իրան ժողովրդի զօրութիւնն է. Նա՛ է փրկութեան զօրութիւնն իրան օծելոյն համար :

9 Փրկի՛ր քո ժողովրդին և օրհնի՛ր քո ժառանգութիւնըն. և արածացրո՛ւ նորանց և բարձրացրո՛ւ նորանց մինչև յաւիտեան :

## ՍԱՂՄՈՍ ԻԹ.

Դաւթի սաղմոս :

Տուէ՛ք Տէրին ով հզօրների որդիք՝ տուէ՛ք Տէրին փառք և զօրութիւն :

2 Տուէ՛ք Տէրին իրան անունի փառքըն. երկրըպագութիւն տուէ՛ք Տէրին սրբութեան զարդարանքով :

3 Տէրի ձայնն ջրերի վերայ է, փառաց Աստուածն որոտումէ. Տէրն շատ ջրերի վերայ կայ :

4 Տէրի ձայնն զօրութեննով է. Տէրի ձայնն մեծ փառաւորութեննով է :

5 Տէրի ձայնն փշրումէ մայրերըն (շատաղամճիներըն) և Տէրն փշրումէ լիբանանի մայրերըն :

6 Եւ նորանց վեր վազել է տալիս հոր-
թերի նման. լիբանանին և շիրիօնին՝ գօ-
մէշի հորթին նման։
7 Տէրի ձայնն կտրում է կրակի բոցերըն։
8 Տէրի ձայնն դղրդացնում է անապա-
տըն. Տէրն դղրդացնում է կադէս անա-
պատըն։
9 Տէրի ձայնն եղներին ([illegible])
ծնել է տալիս. և ծրմակներըն մերկաց-
նում է. և իրան տաճարումն ամէն մէկն
փառք է ասում նորան։
10 Տէրն ջրհեղեղի վերայ նստում է. և
Տէրն թագաւոր կընստի յաւիտեան։
11 Տէրն զօրութիւն կըտայ իրան ժո-
ղովրդին. Տէրն իրան ժողովուրդըն
կօրհնէ խաղաղութենով։

## ՍԱՂՄՈՍ. ԻԹ։

Դաւթի սաղմոս։

Տան օրհնելոյ երգ։

Փառաւոր կանեմ քեզ Տէ՛ր՝ որ ազատե-
ցիր ինձ. և իմ թշնամիներիս չի ուրա-
խացրիր ինձ վերայ։
2 Տէ՛ր՝ դէպի քեզ աղաղակեցի՝ և դու
բժշկեցիր ինձ։
3 Տէ՛ր՝ դու իմ անձըս հանեցիր դժոխ-

քիցն . և ինձ կենդանի պահեցիր նորանցից
որ փոսի մէջն են մտնում :
4 Սաղմոս ասացէ՛ք Տէրին ով նորա
սրբեր՝ և փառաբանեցէ՛ք նորա սուրբ ա-
նունըն :
5 Պատճառոր՝ նորա բարկութիւնն
աչք թափելոյ ժամանակ կայ . բայց նորա
քաղցրութիւնն բոլոր կեանքումն . իրի-
կունն լալն է գալիս՝ բայց առաւօտն ցնծու-
թիւնն :
6 Ես ասացի իմ հանգստութեան ժա-
մանակումն . թէ իսկի տեղիցս չեմ շարժ-
վիլ յաւիտեան :
7 Տէ՛ր քո հաճութենովդ իմ սարըս զօ-
րաւոր արիր՝ Բայց երբոր քո երեսըդ
թագցրիր՝ ես շփոթվեցայ :
8 Տէ՛ր՝ դէպի քեզ կաղաղակեմ և Տէ-
րիդ կաղաչեմ :
9 Ի՞նչ օգուտ կըգայ իմ արիւնիցս՝ որ
ես ապականութեան մէջ ընկնիմ . միթէ
հողն կըգոհանա՞յ քեզանից և քո ճշմար-
տութիւնըդ կըպատմէ :
10 Լսի՛ր Տէ՛ր՝ և ողորմեա՛ ինձ . Տէ՛ր
օգնական լե՛ր ինձ :
11 Դու իմ սուգըս փոխեցիր ցնծու-
թիւն . իմ քուրձըս (ձողէ շորըս) հանեցիր
ինձանից և ուրախութիւն հագցրիր ինձ :
12 Որահամար թող փառքս սաղմոս ա-
սէ քեզ և լուռ չըկենայ . Տէ՛ր իմ Աս-

տուած , յաւիտեան կըգոհանամ՝ քեզա-
նից :

## ՍԱՂՄՈՍ · Լ.

Երգողներին գլխաւորին · Դաւիթի սաղմոս :

Տէ՛ր՝ քեզ եմ յուսացած՝ թո՛ղ չի՛ ամա-
չեմ յաւիտեան · քո արդարութենովդ
փրկի՛ր ինձ :
2 Խոնարհացրո՛ւ քո ականջըդ ինձ մօտ ·
շուտով փրկի՛ր ինձ · լե՛ր ինձ համար զօ-
րաւոր վէմ , և ամուր տուն՝ որ փրկես
ինձ :
3 Ինչու որ՝ դու ես իմ վէմն և բերդն ·
քո անունիդ համար՝ առաջնորդի՛ր ինձ և
կառավարի՛ր ինձ :
4 Հանի՛ր ինձ որոգայթից (Ծուղակից՝)
որ թագցրին ինձ համար · ինչու որ՝ դու ես
իմ զօրութիւնն :
5 Քո ձեռքդ եմ յանձնում իմ հոգիս ·
դու փրկեցիր ինձ ով Տէր՝ ճշմարի՛տ Աս-
տուած :
6 Դու ատումես նորանց՝ որ ունայն
կուռքեր են պաշտում · բայց ես Տէրին եմ
յուսացած :
7 Կըցնծամ և ուրախ կըլինիմ քո ողոր-
մութենովդ · ինչու որ՝ իմ խեղճութիւնըս
տեսի՛ր և իմ անձիս նեղութիւնըն ճանաչե-
ցի՛ր :

8 Եւ ինձ իմ թշնամիների ձեռքն չը-
մատնեցիր · Բայց իմ ոտներըս լայնարձակ
տեղ կանգնացրի՛ր :
9 Ողորմեա՛ ինձ Տէ՛ր · ինչու որ՝ նեղա-
ցած եմ . իմ աչքս մաշվեցաւ տրտմութե-
նով՝ և էլ իմ անձս և իմ փորս :
10 Պատճառնոր՝ իմ կեանքս պակասե-
ցաւ տխրութենով , և իմ տարիքս հառա-
չանքով · իմ զօրութիւնս տկարացաւ իմ
անօրէնութենովս · և իմ ոսկերքս մաշվե-
ցան :
11 Իմ ամէն թշնամիներիս առաջին շատ
նախատինք էլայ իմ հարևաններիս համար ·
և ահու վախ՝ իմ բարեկամներիս համար՝
նորանք որ ինձ փողոցներումն տեսնումեն ,
փախչումեն ինձանից :
12 Մ՝եռածի պէս մոռացած էլայ սըր-
տից · կոտրած ամանի նման էլայ :
13 Պատճառնոր՝ շատերի բամբասանքըն
լսումեմ · իմ չորս կողմովս ահ կայ · երբոր ի-
րար հետ ժողովվումեն ինձ համար՝ խոր-
հուրդ են անում որ իմ կեանքըս վեր առ-
նեն :
14 Բայց ես քեզ եմ յուսացած ով
Տէր · ասումեմ թէ՝ դո՛ւ ես իմ Աստուածն :
15 Իմ ժամանակս քո ձեռքումդ է ·
ազատեցրո՛ւ ինձ իմ թշնամիների և իմ հա-
լածողների ձեռքիցն :
16 Քո երեսըդ երևացրո՛ւ քո ծառայիդ
վերայ · փրկի՛ր ինձ քո ողորմութենովդ :

17 Տէ՛ր թո՛ղ չի՛ ամաչեմ․ ինչու որ՝
դէպի քեզ եմ կանչում․ թող ամպարիշտ-
ները ամաչեն և պապանձուին դժոխքի
մէջն ։
18 Թո՛ղ լուռ կենան սուտ պռօշները՝ որ
արդարին հակառակ խօսումեն անամօթու-
թենով, դոռոզութենով և անարգան-
քով ։
19 Քանի՛ մեծ է քո բարութիւնդ, որ
պահեցիր նորանց համար՝ որ քեզանից վա-
խումեն․ և անումես նորանց՝ որ քեզ են
յուսացած՝ մարդկանց որդոց առաջին ։
20 Դու ծածկումես նորանց քո երեսի
ծածկոցումը մարդոց ամբարտաւանութե-
նից․ դու թագցնումես նորանց քո խորանի
մէջն լեզուների հակառակութենից ։
21 Օրհնեալ է Տէրն․ ինչու որ՝ նա փա-
ռաւոր արաւ իրան ողորմութիւնըն ինձ վե-
րայ մին ամուր քաղաքի մէջն ։
22 Ես ասացի իմ՝ շփոթմելույ ժամանա-
կումս․ թէ ես դէն քցվեցայ քո աչքերի ա-
ռաջին․ բայց էն պէս էլ լսեցիր իմ աղա-
ղակիս ձայնին, երբոր դէպի քեզ աղաղա-
կեցի ։
23 Սիրեցէ՛ք Տէրին՝ ո՛վ նորա ամէն
սրբեր․ Տէրն պահումէ հաւատացեալնե-
րին․ և աւելութենով հատուցանումէ նո-
րան, որ ամբարտաւանութիւն է գոր-
ծում ։

24 Ընդամխ կացէք . և ձեր սրտերդ թող
զօրանան՝ դուք ամէնքդ՝ որ Տէրին յուսա-
ցած էք ։

## ՍԱՂՄՈՍ. ԼԲ։

### Դաւթի վարդապետութիւն ։

Երանի՛ էն մարդոյն՝ որ անօրէնութիւնն
թողված նորան՝ որ նորա մեղքն ծած-
կըվեցաւ ։
2 Երանի՛ էն մարդոյն՝ որ Տէրն անօ-
րէնութիւնըն չի՛ համարում նորան՝ և նեն-
գաւորութիւն չըկայ նորա հոգոյ մէջն ։
3 Ինչուոր՝ երբոր ես լուռ կացայ՝ իմ
ոսկերքս մաշվեցան իմ ամէն օր հառաչե-
լովս ։
4 Պատճառնոր՝ ցերեկ և գիշեր քո ձեռն
ծանրանումէր ինձ վերայ. իմ թացութիւնս
դառաւ ամառվան չորութիւն ։ ※ԷԼԱ ։
5 Իմ մեղքըս յայտնեցի քեզ և իմ ա-
նօրէնութիւնըս չըծածկեցի . ասացի թէ՝
իմ անօրէնութիւններըս կըխոստովանիմ
Տէրին . և ապա թողեցիր դու իմ մեղքիս
անօրէնութիւնըն ։
6 Սրահամար ամէն սրբերն աղօթք կա-
նեն քեզ էն ժամանակումն՝ որ կարելի է
գանել քեզ . իրաւի՝ երբոր շատ ջրերի
հեղեղներն վեր կըկենան՝ չեն հասնիլ նո-
րանց վերայ ։

7 Դուն ես իմ ապաւէնն, նեղութենից կըպահես ինձ · փրկութեան ցնծութենովը կըպատես ինձ : սէլա :

8 Խմաստուն կանեմ քեզ, և ցոյց կըտամ քեզ էն ճանապարհըն որ նորանում պիտի գնաս · իմ աչքովըս կառաջնորդեմ քեզ :

9 Մ՛ի՛ լինիք ինչպէս ձի և ջորի, որ միտք չունին · որ նորանց կզակի մէջն լկամ և սանձ պէտք է դնել · թէ որ չըկամենան մօտենալ քեզ :

10 Շատ ցաւ կայ ամպարըշտին, բայց նա որ Տէրին է յուսացած՝ նորան Տէրի ողորմութիւնն կըպատէ :

11 Ուրախացէ՛ք Տէրովը՝ և ցնծացէ՛ք ով արդարներ · և պարծեցէ՛ք ամէնքդ՝ որ ուղիղ էք սրտով :

## ՍԱՂՄՈՍ · ԼԳ :

Ցնծացէ՛ք Տէրով ո՛վ արդարներ · ուղիղներին է վայելում օրհնութիւն :

2 Գոհացէ՛ք Տէրիցն քնարով (սանթուրով) · տասն թելաւոր սաղմոսարանով սաղմոս ասացէ՛ք նորան :

3 Երգեցէ՛ք նորան նոր երգ · քնարըն լաւ ածեցէ՛ք ցնծութեան բարձր աղաղակով :

4 Պատճառնոր՝ Տէրի խօսքն ուղիղ է ·

*և նորա ամէն գործքերն հաւատարմութենով են :*

5 *Նա արդարութիւն և իրաւունք է սիրում. երկիրն լիքն է Տէրի ողորմութենովն :*

6 *Տէրի խօսքովն երկինքն ստեղծվեցաւ՝ և նորա բերանի հոգովն նորա ամէն զօրքերն :*

7 *Նա ժողովեց ծովի ջրերըն ինչպէս տըկի մէջ՝ և անդունդըն ինչպէս ամբարի մէջ դրաւ :*

8 *Թող Տէրիցն վախենայ ամէն երկիր. թող նորանից սարսափին աշխարհքի ամէն բնակիչներն :*

9 *Պատճառոր՝ նա ասաց և էլաւ. նա հրամայեց՝ և հաստատվեցաւ :*

10 *Տէրն խափանումէ հեթանոսների խորհուրդներըն. և փչացնումէ ժողովուրդների մտածմունքներըն :*

11 *Բայց Տէրի խորհուրդն հաստատ մնումէ յաւիտեան. նորա սրտի մտածմունքներն ազգից մինչև ազգ :*

12 *Երանի՜ էն ազգին՝ որ նորա Աստուածն Տէրն է. և էն ժողովրդին՝ որ նա իրան համար ժառանգութիւն ընտրեց նորան :*

13 *Տէրն նայումէ երկնքից. և տեսնումէ մարդկանց ամէն որդիքըն :*

14 *Իրան բնակութեան աթոռից նայումէ երկրի ամէն բնակիչներին վերայ :*

15 Նա ստեղծեց նորանց ամէնի սիրտը, նա տեսնումէ նորանց ամէն գործքերը:

16 Թագաւորը չի փրկվում շատ զօրքով. և հսկան (ահագին մարդը) չի՛ պրծնում շատ զօրութենով:

17 Սուտ է ձին փրկութեան համար. և իրան շատ զօրութենովն չի ապրեցնում:

18 Ահա՛ Տէրի աչքն նորանց վերայ է, որ վախումեն նորանցից. և նորանց վերայ՝ որ նորա ողորմութեանն սպասումեն:

19 Որ նորանց անձները մահից փրկէ և սովի ժամանակումն նորանց կերակրէ:

20 Մ՛եր անձները մտիկ են տալիս Տէրին. նա՛ է մեր օգնութիւնն և պաշտպանն:

21 Պատճառնոր՝ նորանով է ուրախանում մեր սիրտն. ինչուոր՝ մենք նորա սուրբ անունին ենք յուսացած:

22 Ո՛վ Տէ՛ր՝ քո ողորմութիւնդ լինի մեզ վերայ՝ ինչպէս որ սպասումենք քեզ:

## ՍԱՂՄՈՍ ԼԳ:

Դաւիթէ սաղմոս. Երբոր իւրան կերպարանափոխեց Աբիմելէքի առաջին. և նա դուրս հանեց նորան, և գնաց:

Տէրին կօրհնեմ ամէն ժամանակ. նորա փառաբանութիւնն միշտ իմ բերանումն պիտի լինի:

2 Թո՛ղ իմ անձս պարծենայ Տէրովը․
խեղճերն թո՛ղ լսեն և ուրախանան ։
3 Մեծացրէ՛ք ինձ հետ Տէրին․ թո՛ղ
իրար հետ բարձրացնենք նորա անունըն ։
4 Ես խնդրեցի Տէրին և նա ականջ
դրաւ ինձ․ և իմ ահուվախից ազատեց
ինձ ։
5 Նորանք որ մտիկ են տալիս նորան՝
լուսաւորվումեն․ և նորանց երեսն չի ա-
մաչիլ ։
6 Այս խեղճ ֆուքարա կանչեց․ և Տէրն
լսեց․ և իրան ամէն նեղութիւններից
փրկեց սորան ։
7 Տէրի հրեշտակն բանակ (օրդու—) է
շինում նորանց չորս կողմովը՝ որ Տէրից
վախենումեն, և փրկումէ նորանց ։
8 Համ առէ՛ք և տեսէ՛ք՝ որ Տէրն քաղցր
է․ երանելի՛ է էն մարդն, որ յուսացած է
նորան ։
9 Վախեցէ՛ք Տէրից ո՛վ նորա սրբեր․
ինչուոր՝ իսկի պակասութիւն չըկայ նո-
րանց՝ որ վախենումեն նորանից ։
10 Առիւծի լակոտներն կարօտումեն և
սոված են․ բայց նորանք որ Տէրին խընդ-
րումեն, իսկի մին բանի պակասութիւն
չունին ։
11 Եկէ՛ք որդի՛ք՝ լսեցէ՛ք ինձ․ ես Տէրի
երկիւղըն կըսովորցնեմ ձեզ ։
12 Ո՞վ է էն մարդն՝ որ կեանք խնդրէ և

Երկար օրեր սիրէ՝ բարութիւն տեսնելու համար ։

13 Պահի՛ր քու լեզուն չարութենից · և քու պռօշներըն՝ որ նենգաւորութիւն չըխօսին ։

14 Հեռացի՛ր չարիցն և գործի՛ր բարին · խնդրի՛ր խաղաղութիւն և նորա ետևէն գնա՛ ։

15 Տէրի աչքերն արդարներին վերայ են · և նորա ականջներն նորանց աղաղակին վերայ ։

16 Տէրի երեսն չարագործներին վերայ է՝ որ նորանց յիշատակըն երկրիցն ջնջէ ։

17 Արդարները աղաղակումեն և Տէրն լսումէ · և իրանց ամէն նեղութիւններիցն փրկումէ նորանց ։

18 Տէրն մօտիկ է նորանց՝ որ սրտով կոտրված են · և փրկումէ նորանց որ հոգով մաշված են ։

19 Շատ են արդարի նեղութիւններն · բայց Տէրն էն ամէնիցն փրկումէ նորան ։

20 Նա՛ պահումէ նորա ամէն ոսկերքըն՝ որ նորանցից իսկի մինն էլ չփշրվի ։

21 Չարութիւնն ամպարըշտին կըսպանէ · և նորանք որ արդարին ատումեն կապականվին ։

22 Տէրն փրկումէ իրան ծառաների անձներըն · և ամէնքըն՝ որ նորան են յուսացած՝ չե՛ն ապականվիլ ։

# ՍԱՂՄՈՍ ԼԴ.

Դաւթի սաղմոս :

Հակառակի՛ր իմ հակառակօղներին հետ՝ և կռուի՛ր նորանց հետ, որ ինձ հետ կռւումեն :

2 Վե՛ր առ զէնքըն և վահանըն (ղալխանըն)՝ և վե՛ր կաց ինձ օգնելու համար :

3 Հանի՛ր գեղարդըն (մըզրախըն) և ճանապարհըն փակի՛ր իմ հալածօղներին դէմ. ասա՛ իմ անձիս. Թէ ես եմ քո փրկութիւնդ :

4 Թո՛ղ ամաչեն և ամօթ լինին նորանք՝ որ իմ անձըս խնդրումեն. թո՛ղ յետ դառնան և ամօթ լինին նորանք՝ որ չար են հնարում ինձ դէմ :

5 Նորանք պիտի լինին ինչպէս փոշի քամոյ առաջին. և Տէրի հրեշտակն պիտի հալածէ նորանց :

6 Նորանց ճանապարհն խաւար և գայթակղութիւն պիտի լինի. և Տէրի հրեշտակն պիտի հալածէ նորանց :

7 Պատճառնոր՝ զուր տեղն որոգայթ (թուզաղ) սարեցին ինձ բռնելու համար. զուր տեղն հոր փորեցին իմ անձիս համար :

8 Թո՛ղ կարկուտ հասնէ նորան՝ երբոր չի գիտում. և որոգայթն՝ որ սարեց՝ բռնէ

նորան. հենց նորանում կորուստի մէջ
ընկնի:
9 Բայց իմ անձս պիտի ցնծայ Տէրումը՝
և ուրախանայ նորա փրկութենումը:
10 Իմ ամէն ոսկերքս պիտի ասեն. Տէ՛ր՝
ո՞վ է քեզ նման՝ որ փրկումես խեղճին
նորա ձեռքիցն որ իրանից զօրաւոր է. և
խեղճին և աղքատին նորա ձեռքիցն՝ որ
յափշտակումէ նորան:
11 Անիրաւ վկաններ են վեր կենում.
ինչ որ ես չեմ գիտում՝ հարցնումեն ինձ:
12 Չար են հատուցանում ինձ բարոյ
տեղ՝ որ իմ անձս անզաւակ լինի:
13 Բայց ես նորանց հիւանդանալոյ ժա-
մանակումն մազի շոր էի հագնում. իմ
անձըս պասով մաշացնումէի. և իմ աղօթ-
քըս իմ ծոցի մէջ է դառնում:
14 Ես նորանց հետ ինչպէս իմ բարեկա-
մի և իմ եղբօր հետ վարվումէի. և խո-
նարհվումէի ինչպէս նա՝ որ մօր համար
սուգ է անում:
15 Բայց երբոր նեղութիւն է գալիս
ինձ վերայ, նորանք ուրախանումեն և ժո-
ղովվումեն. ժողովվումեն ինձ վերայ, որ
խոցեն ինձ՝ և ես չէի գիտում. պատառու-
մեն և չեն դադարում:
16 Ամպարիշտ կեղծաւորներին հետ՝ որ
փորի համար ծաղր են անում, իրանց ա-
տամներըն կրճըտացնումեն ինձ վերայ:

17 Տէ՛ր՝ ե՞րբ կըտեսնես․ ապրեցո՛ւր
իմ անձըս նորանց կորըստից․ իմ կեանքըս
առիւծների լակոտներից ։
18 Կըգոհանամ քեզանից՝ Տէ՛ր՝ մեծ ժո-
ղովրդի մէջն․ և կըփառաբանեմ քեզ
շատ ժողովքի մէջն ։
19 Թո՛ղ չի՛ ուրախանան ինձ վերայ
նորանք՝ որ զուր տեղն թշնամի են ինձ․ և
աչքով չանեն նորանք՝ որ զուր տեղն ա-
տումեն ինձ ։
20 Պատճառնոր՝ նորանք խաղաղութիւն
չեն խօսում․ բայց նենգաւոր բաներ են
մտածում նորանց դէմ որ երկրի մէջն
հանգիստ են ։
21 Եւ իրանց բերանըն լայնարձակ բա-
նումեն ինձ վերայ և ասումեն․ վա՛հ վա՛հ․
Հէ՜հէ՜ մեր աչքերս տեսնումեն ։
22 Դու տեսնումես Տէ՛ր՝ լուռ մի՛ կե-
նար․ Տէ՛ր՝ մի՛ հեռանար ինձանից ։
23 Զարթնեցի՛ր և վե՛ր կաց՝ ինձ իրա-
ւունք անելոյ համար՝ ի՛մ Աստուած և ի՛մ
Տէր՝ ինձ դատաստան անելոյ համար ։
24 Դատաստա՛ն արա ինձ քո արդարու-
թեան պէս՝ Տէ՛ր՝ ի՛մ Աստուած․ և թո՛ղ
չի՛ ուրախանան ինձ վերայ ։
25 Թո՛ղ իրանց սրտումն չասեն․ Է՛․
Է՛․ Է մեր անձներիս կամքն․ թո՛ղ չասեն՝
թէ մենք կուլ տուինք նորան ։
26 Թո՛ղ իրար հետ ամաչեն և ամօթ

լինին նորանք՝ որ ուրախանումեն իմ նեղութեանս համար . թո՛ղ ամօթ և անարգանք հագնին նորանք՝ որ պարծենումեն ինձ վերայ ։

27 Թո՛ղ ցնծան և ուրախ լինին նորանք՝ որ իմ արդարութեանս հաւանեն կենում . և միշտ ասեն՝ Տէրն փառաւորվի՛ որ իրան ծառայի խաղաղութիւնն կամենումէ ։

28 Եւ իմ լեզուս թո՛ղ պատմէ քո արդարութիւնքն՝ և ամէն օր քո գովասանքըն ։

## ՍԱՂՄՈՍ · ԼԶ ։

### Երգեցիկների գլխաւորին · Տէրի ծառայ Դաւիթի սաղմոս ։

Անօրէնութեան խօսք կայ ամպարըշտի մօտն , իրան սրտի մէջումն , Աստուծոյ վախն իսկի չըկայ նորա աչաց առաջին ։

2 Պատճառնոր՝ քաղցր է թուում նորան՝ իրան աչքումն , որ իրան անօրէնութիւնըն գտնէ՛ և ատելութիւն գործէ ։

3 Նորա բերանի խօսքերն անօրէնութիւն և նենգաւորութիւն են . յետ է քաշվում իմաստուն լինելուց՝ և բարի գործելուց ։

4 Անօրէնութիւն է մտածում իրան տեղաշորումն . կանգնած է էն ճանապար-

հին վերայ՝ որ բարի չէ. և չար գործելուցն
չի զզվում։
5 Տէ՛ր քո ողորմութիւնն երկնքումն է.
և քո ճշմարտութիւնն հասնումէ մինչև
ամպերն։
6 Քո արդարութիւնն՝ ինչպէս Աս-
տուծոյ սարերն է. և քո իրաւունքն՝ ինչ-
պէս մեծ խորութիւն. դու մարդկանց և ա-
նասուններին ապրեցնումես ով Տէր։
7 Քանի՜ պատուական է քո ողորմու-
թիւնդ ով Աստուած, և մարդկանց որ-
դիքն քո թևերի շուաքի տակն են յուսա-
ցած։
8 Նորանք լցվումեն քո տան հարուստ
բարիքներովն. և քո քաղցրութեան գե-
տիցն խմել ես տալիս նորանց։
9 Պատճառնոր՝ կենաց աղբիւրն քեզ
մօտ է. և լոյսըն՝ քո լուսովն ենք տեսնում։
10 Ծագի՛ր քո ողորմութիւնըդ նորանց
վերայ որ ճանաչումեն քեզ. և քո արդա-
րութիւնըդ նորանց վերայ՝ որ ուղիղ են
սրտով։
11 Թող ամբարտաւանի ոտն ինձ վերայ
չըգայ. և ամբարըշտի ձեռն ինձ տեղիցս
չըշարժէ։
12 Այն տեղ վէր կընկնին նորանք՝ որ
անօրէնութիւն են գործում. դէն կըքըց-
վին և էլ չեն կարենալ վերկենալ։

# ՍԱՂՄՈՍ ԼԷ:

Դաւիթի սաղմոս:

Մի՛ բարկանար չարերի վերայ, մի՛ նախանձվիր նորանց հետ որ անօրէնութիւն են գործում:

2 Պատճառնոր՝ նորանք խոտի պէս շուտով կըկտրվին. և կանանչ բանջարի պէս կըթափվին:

3 Տէրին յուսացի՛ր՝ և բարի՛ արա՛ բնակվի՛ր երկրումն՝ և հետևի՛ր ճշմարտութեանն:

4 Ցնծացի՛ր Տէրովմն՝ և նա կըտայ քեզ քո սրտի խընդրուածքները:

5 Տէրին յանձնի՛ր քո ճանապարհըն՝ և նորան յուսացի՛ր. և նա կանէ:

6 Եւ քո արդարութիւնըն կըհանէ լուսոյ պէս. և քո իրաւունքըն կէս օրվան պէս:

7 Համբերի՛ր Տէրին և մտի՛կ տուր նորան. մի՛ բարկանար նորա վերայ՝ որ յաջողակ է իրան ճանապարհումն՝ է՛ն մարդոյ վերայ՝ որ իւր չար խորհուրդները կատարումէ:

8 Դադարի՛ր բարկութենից՝ և թո՛ղ սրտմտութիւնըն. մի՛ բարկանար՝ որ ինչ չար չըգործես:

9 Պատճառոր՝ չարերն կըսատակվին · և նորանք որ Տէրին սպասումեն՝ երկիրըն կըժառանգեն :

10 Դեռ մին քիչ ժամանակ · և էլ ամպարիշտն չի լինիլ · և երբ որ նորա տեղին մտիկ տաս՝ նա չի կենալ :

11 Բայց խոնարհներն երկիրըն կըժառանգեն և փըրկութիւն կըվայելեն շատ խաղաղութեան մէջն :

12 Ամպարիշտն չար է մտածում արդարին դէմ · և իրան ատամներըն կըրճըտացնումէ նորա վերայ :

13 Բայց Տէրն ծիծաղումէ նորա վերայ · ինչու որ՝ տեսնումէ՝ որ նորա օրն հասնումէ :

14 Ամպարիշտներն սուրըն հանումեն՝ և իրանց աղեղներըն ձգումեն, որ խեղճին և աղքատին վէր քցեն և սպանեն նորանց՝ որ ուղիղ են ճանապարհով :

15 Բայց նորանց սուրն իրանց սրտի մէջն կըմտնէ, և նորանց աղեղներն կըփշըրվին :

16 Արդարի քիչ բանն լաւ է՝ քան թէ շատ ամպարիշտների ապրանքն :

17 Պատճառոր՝ ամպարիշտների բազուկներն կըփշըրվին · և արդարներին հաստատումէ Տէրն :

18 Տէրն ճանաչումէ անմեղների օրերըն · և նորանց ժառանգութիւնն յաւիտեան կըկենայ :

19 Նորանք չեն ամաչիլ չար ժամանա-
կումն . և սովի օրերումն կկշտանան :
20 Բայց ամպարիշտներն կկորչին , և
Տէրի թշնամիներն կփչանան ինչպէս
գառների պարարտութիւնն . ինչպէս ծուխ
կփչանան :
21 Ամպարիշտն փոխ է առնում և չի
վճարում . բայց արդարն ողորմած է և
տալիս է :
22 Պատճառոր՝ նորա օրհնվածներն
երկիրըն կժառանգեն , բայց նորա անիծ-
վածներն կըսատակվին :
23 Տէրոմն է հաստատվում էն մարդոյ
գնացքն . և նա հաւան է կենում նորա ճա-
նապարհին :
24 Թէ և վէր ընկնի , բայց չի կործան-
վիլ . ինչուոր՝ Տէրն նորա ձեռքիցն բռնու-
մէ :
25 Մանուկ էի և ծերացայ . և արդա-
րին յէ—էց թողված չտեսի՝ և ոչ նորա
զաւակին՝ ոչ հաց մուրանայ :
26 Ամէն օր ողորմած է՝ և փոխ է տա-
լիս . և նորա զաւակն օրհնված է :
27 Յե՛տ քաշվիր չարից՝ և բարին ա-
րա . և յաւիտեան կըմնաս :
28 Ինչուոր՝ Տէրն իրաւունք է սիրում՝
և իրան սրբերին չի թողում , յաւիտեան
պահպանվումեն . Բայց անէրաւնէրն պէտ
կորչին , և ամպարիշտների զաւակն կըսա-
տակվի :

29 Արդարներն երկիրըն կըժառանգեն,
և յաւիտեան կըբնակվին նորա մէջն :
30 Արդարի բերանն իմաստութիւն է
խօսում · և նորա լեզուն իրաւունք է սո-
վորցնում :
31 Իրան Աստուծոյ օրէնքն՝ իրան սըր-
տումն կայ · նորա գնացքըն չի ծռվիլ :
32 Ամպարիշտն մտիկ է տալիս արդարին
վերայ, և ման է գալիս՝ որ սպանէ նորան :
33 Բայց Տէրն՝ նորան չի թողիլ նորա
ձեռքումն, և չի՛ դատապարտիլ նորան՝
երբ որ դատվի :
34 Սպասի՛ր Տէրին՝ և պահի՛ր նորա
ճանապարհըն · և նա կըբարձրացնէ քեզ՝
որ երկիրըն ժառանգես · դու ամպարիշտ-
ների սատակվիլըն կըտեսնես :
35 Ես ամպարըշտին տեսի գոռոզացած՝ և
լայն փըռված հաստատ կանանչ ծառի պէս :
36 Անցկացայ՝ և ահա նա չըկար · ման
եկի նորան՝ և չըգտվաւ :
37 Անմեղութիւնըն պահի՛ր՝ և ուղղու-
թեանն մտի՛կ արա · ինչու որ՝ էսպէսի մար-
դոյ վերջն խաղաղութիւն է :
38 Բայց անիրաւներն իրար հետ մին
տեղ կըսատակվին · ամպարիշտների վերջն
կորուստ է :
39 Եւ արդարների փրկութիւնն Տէ-
րիցն է · նա նորանց զօրութիւնն է նեղու-
թեան ժամանակումն :
40 Եւ Տէրն կօգնէ նորանց՝ և կապրեցնէ

նորանց, կապրեցնէ նորանց ամպարիշտներիցն՝ և կըփրկէ նորանց, ինչու որ՝ նորան են յուսացած ։

## ՍԱՂՄՈՍ ԼԷ ։

Դաւթի սաղմոս · յիշատակի համար ։

Տէ՛ր մի՛ յանդիմանիր ինձ քո բարկութենովդ · և մի՛ խրատեր ինձ քո սըրտմտութենովդ ։

2 Ինչու որ՝ քո նետերն խրվեցան իմ մէջս, և քո ձեռն ծանրացաւ ինձ վերայ ։

3 Իսկի առողջութիւն չըկայ իմ մարմնումս՝ քո բարկանալոյ պատճառովն · իսկի խաղաղութիւն չըկայ իմ ոսկերքումս՝ իմ մեղաց պատճառովն ։

4 Ինչու որ՝ իմ անօրէնութիւններս իմ գլխիս վերայ բարձրացան · ինչպէս մին ծանր բեռն ծանրանումեն ինձ վերայ ։

5 Իմ խոցերս հոտումեն և փտում՝ իմ յիմարութեան պատճառովն ։

6 Ես կեռացած և վերընկած եմ, և ամէն օր սըգաւոր եմ գնում ։

7 Պատճառնոր՝ իմ երիկամներս (գոտեճկներս) լցված են տաքութենով · և առողջութիւն չըկայ իմ մարմնումս ։

8 Ես թուլացած և շատ սաստիկ փշրված եմ · հոգոց եմ հանում իմ սրտիս հառաչելոյն համար ։

9 Տէ՛ր քո առաջիդ է իմ ամէն ցանկու-
թիւնն · և իմ հառաչանքս քեզանից ծած-
կըված չէ՛ ։
10 Իմ սիրտս դողում է · իմ զօրութիւնս
թողեց ինձ · և իմ աչաց լոյսն՝ էն էլ ինձ
մօտ չէ ։
11 Իմ սիրելիքս և բարեկամներս իմ
խոցիս դիմացն կանգնած են · և իմ ընկեր-
քըս հեռուանց կանգնած են ։
12 Եւ նորանք որ իմ անձըս խնդրու-
մեն որոգայթ են քցում · և նորանք որ
ինձ չար են ուզում, անօրէնութիւն են
խօսում · և ամէն օր նենգաւորութիւններ
են հնարում ։
13 Բայց ես խուլի (——է) նման չեմ
լսում՝ և ինչպէս համր (լռէ՛է) որ իրան բե-
րանըն չի բաց անում ։
14 Եւ ես էլայ ինչպէս մարդ՝ որ չի
լսում · և որ նորա բերանումն յանդիմա-
նութեան խօսք չը՛կայ ։
15 Պատճառոր՝ քե՛զ եմ մտիկ տալիս
ով Տէ՛ր, դու կըլսես Տէ՛ր իմ Աստուած ։
16 Ինչու որ՝ ես ասացի · թող մի՛ տար
որ չ՛ թշնամիներս ինձ վերայ ուրախանան ·
եթէ իմ ոտս կըսըլկըվէր, շատ կըպարծե-
նային ինձ վերայ ։
17 Ինչու որ՝ ես պատրաստված եմ նե-
ղութեան համար · և իմ ցաւս միշտ առա-
ջիս է ։

18 Պատճառնոր՝ ես կըպատմեմ իմ անօ-
րէնութիւնըս · և կըտրտմիմ իմ մեղքիս հա-
մար :
19 Բայց իմ թշնամիներս կենդանի և
զօրաւոր են · և նորանք որ զուր տեղն ինձ
ատումեն շատ են :
20 Եւ նորանք՝ որ բարոյ տեղն չար են
հատուցանում ինձ , հակառակումեն ինձ ·
ինչուոր՝ ես հետևումեմ էն բանին՝ որ բա-
րի է :
21 Մ՛ի թողներ ինձ Տէր իմ Աստուած ·
մի՛ հեռանար ինձանից :
22 Շուտ արա , որ ինձ օգնես Տէ՛ր՝
իմ փրկիչ :

## ՍԱՂՄՈՍ · ԼԸ :

Երգօղների գլխաւորին · Եդիթունայ · Դաւթի սաղմոս :

Ես ասացի , թէ իմ ճանապարհըս կըպահեմ՝ որ չի մեղանչեմ իմ լեզուովս · իմ բերանիս սանձ կըդնեմ՝ դեռ քանի որ ամպարիշտն իմ առաջիս կայ :
2 Բերանըս փակեցի պապանձվելով ·
բարի բանից էլ լուռ կացայ · և իմ ցաւս
շատ սաստկացաւ :
3 Իմ սիրտս տաքացաւ ինձանում · իմ
մտածելոյ ժամանակն կրակ վառվեցաւ · իմ
լեզուովս խօսեցի :

4 Տէ՛ր ցո՛յց տուր ինձ իմ վերջըն՝ և իմ
օրերիս չափըն թէ ո՛րքան է, թո՛ղ գի-
տենամ՝ թէ քանի՛ անցաւոր եմ ես ։
5 Ահա՛ թիզի չափով կարգեցիր իմ օ-
րերըս. և իմ կեանքի ժամանակն ոչինչ
է քո առաջին, էլ ամէն մարդ որ կայ, իս-
պառ ունայն է. սէլա ։
6 Իրաւի՛ որ մարդն պատկերի պէս է
մանգալիս. իրաւի՛ որ զուր տեղն է հոգս
քաշում. հաւաքումէ՝ և չի գիտում թէ էն
ո՛վ պիտի առնէ ։
7 Եւ հիմիկ ի՞նչ բանի սպասեմ ո՛վ
Տէր. իմ յոյս քեզ վերայ է ։
8 Իմ ամէն անօրէնութիւններիցս փրկ-
կի՛ր ինձ. յիմարի նախատինքըն մի՛ դներ
ինձ վերայ ։
9 Ես լուռ եմ կենում. և իմ բերանըս
չեմ բաց անում. ինչուոր՝ դու արիր ։
10 Քո պատուհասըն հեռացրո՛ւ ինձա-
նից. որ ես քո ձեռի զարկելումն մաշվեցայ ։
11 Երբոր յանդիմանութենով մարդոյն
խրատումես անօրէնութիւններին համար,
ապա նորա գեղեցկութիւնն ապականվումէ
ինչպէս ցեցից. իրաւի՛ որ ունայն է ամէն
մարդ ։ սէլա ։
12 Տէ՛ր լսի՛ր իմ աղօթքիս և իմ աղա-
ղակիս. մի՛տք դիր իմ արտասունքիս՝ լուռ
մի՛ կենար. ինչուոր՝ ես պանդուխտ և օ-
տար եմ քո առաջին՝ ինչպէս որ իմ ամէն
հարքս ։

13 Թո՛ղ արա ինձ՝ որ իմ գնալուցն և
էլ չի լինելուցն առաջ հանգստանամ:

## ՍԱՂՄՈՍ · ԼԹ:

Երգեցիկներին գլխաւորին · Դաւթին սաղմոս:

Սպասելով սպասեցի Տէրին․ և նա ինձ
վերայ նայեց՝ և իմ աղաղակըս լսեց:
2 Եւ կորըստի հորիցն ջրջիմ ցեխիցն
հանեց ինձ․ և վիմի (քարի) վերայ կանգնաց-
րուց իմ ոտներըս․ և իմ գնացքըս հաստա-
տեց:
3 Եւ նոր երգ դրաւ իմ բերանումս՝ մեր
Աստուծոյ օրհնութիւնըն․ շատերըն կը
տեսնեն և կըվախենան՝ և Տէրին կըյու-
սան:
4 Երանի՛ է է՛ն մարդոյն՝ որ իրան յոյ-
սըն Տէրին վերայ է դնում՝ և դէպի ամ-
բարտաւաններըն չի դառնում․ և ոչ դէպի
նորանց որ ստութեան են հետևում:
5 Շատ են քո հրաշքներըն որ դու ա-
րիր ո՛վ Տէր իմ Աստուած՝ և քո խորհուրդ-
ներըն որ մեզ վերայ են․ ոչ ով քեզ հա-
ւասար չէ․ կըպատմեմ նորանց և կըխօսիմ,
բայց համարից շատ են:
6 Պատարագ և մատաղ չես կամենում․
բայց ականջներ ծակեցիր ինձ․ ողջակէզ
և մեղաց համար պատարագ չես խնդրում:

7 Ապա ասացի. ահա՛ ես գալիս եմ.
գրքի գըլխներումն գրված է ինձ համար։
8 Ո՛վ իմ Աստուած՝ կամենումեմ քո
կամքըն կատարել, և քո օրէնքն իմ սրտիս
միջումն կայ։
9 Քո արդարութիւնըն քարոզումեմ
մեծ ժողովըրդի մէջն. ահա իմ պռօշներըս
չեմ արգելում, Տէ՛ր դու գիտումես։
10 Քո արդարութիւնըն չեմ թագցնում իմ սրտիս միջումն. քո ճշմարտութեան և քո փրկութեան համար խօսումեմ. քո ողորմութիւնըն և քո հաւատարմութիւնըն չեմ ծածկում մեծ ժողովքի առաջին։
11 Բայց դու Տէ՛ր մի՛ հեռացներ ինձանից քո գթութիւնդ. քո ողորմութիւնդ և հաւատարմութիւնդ թո՛ղ միշտ պահեն ինձ։
12 Պատճառոր՝ չարիք պատեցին ինձ՝ մինչև որ թիւ չը՛կայ. իմ անօրէնութիւններըս հասին ինձ վերայ՝ որ չեմ կարող տեսնել. աւելի շատ են քան իմ գլխիս մազերըն. և իմ սիրտս թողեց ինձ։
13 Տէ՛ր հաւա՛ն կաց որ փրկես ինձ.
Տէ՛ր՝ շո՛ւտ արա, որ օգնես ինձ։
14 Թո՛ղ իրար հետ ամաչեն և ամօթ լինին նորանք՝ որ իմ անձըս խնդրումեն, որ կորցնեն նորան. թո՛ղ յետ դառնան և խայտառակ լինին նորանք՝ որ ինձ չար են կամենում։

15 Հենց իրանց ամօթի պատճառովը
պիտի զարհուրին նորանք՝ որ ինձ ասումեն
վա՛հ, վա՛հ:
16 Թո՛ղ ցնծան և ուրախանան քեզա–
նով էն ամէնքն՝ որ խնդրումեն քեզ · նո–
րանք որ քո փրկութիւնըդ սիրումեն, թո՛ղ
միշտ ասեն՝ Տէրն փառաւորվի :
17 Բայց ես խեղճ եմ և աղքատ · Տէրն
հոգս է անում ինձ համար · իմ օգնու–
թիւնն և փրկութիւնն դու ես · իմ Աս–
տուած՝ մի՛ ուշանար :

## ՍԱՂՄՈՍ. Խ :

Երգեցիկներու գլխաւորին · Դաւիթի սաղմոս :

Երանի՛ նորան որ հոգս է անում աղքա–
տի համար · Տէրն կփրկէ նորան նե–
ղութեան օրումը :
2 Տէրն կպահէ նորան և կապրեցնէ
նորան · և նա երանելի կլինի երկրիս վե–
րայ · և դու չես մատնիլ նորան իրան
թշնամիների ցանկութեանն :
3 Տէրն կմխիթարէ նորան ակարու–
թեան անկողնումը · դու նորա բոլոր ան–
կողինըն կփոխես իրան հիւանդութեան
ժամանակումը :
4 Ես ասացի · Տէ՛ր ողորմի՛ր ինձ՝ և
բժշկէ՛ր իմ անձըս · ինչուոր՝ քո առաջիդ
մեղանչեցի :

5 Իմ թշնամիներս չար են խօսում ինձ
վերայ. Ե՞րբ կըմեռնի նա՝ և նորա ա-
նունն կըկորչի :
6 Եւ եթէ մինն գայ ինձ տեսնելոյ՝ ու-
նայն է խօսում. նորա սիրտն անօրէնու-
թիւն է հաւաքում իրանում. և երբոր
դուրս է գնում, խօսումէ :
7 Ամենքն որ ատումեն ինձ՝ փսփսումեն
ինձ վերայ. և չար են հնարում ինձ դէմ :
8 Անօրէնութեան բան հասաւ նորա
վերայ. երբոր վէր ընկնի՝ էլ չի վերկե-
նալ :
9 Իմ յատուկ բարեկամ մարդն էլ՝ որ
նորան յուսացայ, որ իմ հացըս ուտումէր՝
ոտըն բարձրացրուց ինձ վերայ :
10 Բայց դու Տէ՛ր՝ ողորմի՛ր ինձ և
կանգնացրու ինձ. և ես կըհատուցանեմ
նորանց :
11 Սրանով ճանաչումեմ որ դու ինձ
կամենումես՝ որ իմ թշնամիս չըպարծենայ
ինձ վերայ :
12 Բայց ինձ իմ անմեղութեան մէջն
կըպահպանես. և ինձ քո երեսիդ առաջին
կըկանգնացնես յաւիտեան :
13 Օրհնեալ լինի Տէրն՝ Իսրայէլի Ա-
ստուածն յաւիտենից մինչև յաւիտեանս.
ամէն. ամէն :

# ՍԱՂՄՈՍ · ԽԲ.։

Երգողներին գլխաւորին · վարդապետու-
թեան · Կորխեայ որդւոց համար։

Ինչպէս որ եղջերուն (պախրէն) փափա-
կումէ ջրերի առուներին, էնպէս էլ իմ
անձս փափակումէ քեզ ի՛մ Աստուած։
2 Իմ անձս ծարաւ է Աստուծոյն, կեն-
դանի Աստուծոյն. ե՞րբ կըգամ և Նորա
երեսաց առաջին կերևիմ։
3 Իմ արտասունքս ինձ հաց էլան ցերեկ
և գիշեր. Նորա համար որ ամէն օր ասու-
մեն ինձ՝ թէ ի՞նչ տեղ է քո Աստուածն։
4 Երբոր էն յիշումեմ՝ իմ անձըս վէր
եմ թափում ինձանում. ինչուոր՝ կամե-
նումեմ անցկենալ ժողովքի մէջն՝ և նորանց
հետ մինչև Աստուծոյ տունն մտնել՝ օրհ-
նութեան և գովասանութեան ձայնով.
է՛ն բազմութեանն հետ՝ որ տօնախմբու-
թիւն են անում։
5 Ինչո՞ւ ես տրտում ո՛վ իմ անձն, և
շփոթվածես ինձանում. Աստուծոյն յու-
սացի՛ր. ինչուոր՝ էլ կըգոհանամ Նորանից՝
որ Նա իմ՝ երեսիս փրկութիւնն և իմ Աս-
տուածն է։
6 Իմ անձս տրտումէ ինձանում. սրա-
համար յիշումեմ քեզ յորդանանի երկ-
րիցն և հերմոնիցն և փոքր սարիցն։

7 Խորն դէպի խորն կանչում է քո ջրի
պտուտ ձայնովը · քո ամէն ջրերի կոհակ-
ներն և ալիքներն (տալղաները) ինձ վերայ
անց են կենում ։
8 Ցերեկումն Տէրն պատուիրում է իրան
ողորմութիւններն · և գիշերումն օրհնութիւն
եմ տալիս նորան · աղօթք եմ անում դէպի
կենաց Աստուածն ։
9 Ասում եմ Աստուծոյն · ո՛վ իմ վէմ,
ինչո՞ւ մոռացար ինձ · ինչո՞ւ սգաւոր գնամ
ես՝ թշնամիների նեղացնելոյն համար ։
10 Իմ ոսկերքս փշրվումեն իմ թշնամի-
ների նախատինք տալովը · որ ամէն օր ա-
սումեն՝ թէ ի՞նչտեղ է քո Աստուածն ։
11 Ինչո՞ւ ես տրտում ո՛վ իմ անձն,
ինչո՞ւ ես շփոթված ինձանում · Աստու-
ծոյն յուսացի՛ր · ինչուոր՝ էլ կըգոհանամ
նորանից՝ որ նա իմ երեսիս փրկութիւնն և
իմ Աստուածն է ։

## ՍԱՂՄՈՍ · ԽԲ ։

Դատաստա՛ն արա ինձ ո՛վ Աստուած՝ և
իմ իրաւունքըս հաստատի՛ր էն ազգին
դէմ, որ սուրբ չէ՝ ննենգաւոր և անիրաւ
մարդուցն փրկի՛ր ինձ ։
2 Պատճառն որ՝ դու ես իմ զօրութեան
Աստուածն · ինչո՞ւ ես ինձ դէն քցում · ին-
չո՞ւ սգաւոր գնամ ես թշնամիների նեղաց-
նելոյն համար ։

3 Ուղարկէ՛ր քո լոյսըդ և քո ճշմարտու-
թիւնըդ · որ նորանք առաջնորդեն ինձ և
տանեն ինձ դէպի քո սուրբ սարըն՝ և դէպի
քո բնակարաններըն :
4 Եւ ես մտնեմ դէպի Աստուծոյ սե-
ղանըն՝ իմ ուրախութեան և ցնծութեան
Աստուծոյ մօտն · և գոհանամ քեզանից
քընարով՝ ո՛վ Աստուած՝ իմ Աստուած :
5 Ինչո՞ւ ես տրտում ո՛վ իմ անձն , և
ինչո՞ւ ես շփոթված ինձանում · Աստու-
ծոյն յուսացի՛ր · ինչու որ՝ էլ կըգոհանամ
նորանից՝ որ նա իմ երեսի փրկութիւնն և
իմ Աստուածն է :

## ՍԱՂՄՈՍ · ԽԴ ·

Երգօղներին գլխաւորին · Վարդապետութեան
Կորխայ որդւոցն համար :

Ո՛վ Աստուած՝ մեր ականջներովս լսե-
ցինք՝ մեր հարքըն պատմեցին մեզ էն
գործըն՝ որ դու գործեցիր նորանց օրե-
րումն՝ էն առաջին օրերումն :
2 Դու քո ձեռքովդ հեթանոսներին
դուրս հանեցիր և նորանց տնկեցիր , չար-
չարեցիր ազգըն և նորանց փռեցիր :
3 Պատճառն որ՝ ոչ թէ իրանց սրովն
երկիրըն ժառանգեցին , և ոչ իրանց բա-
զուկն փրկեց նորանց , այլ քո աջն և քո

երեսիդ լոյսն · ինչուոր՝ հաւան կացար նորանց ։

4 Հէնց դու ես իմ Թագաւորն ով Աստուած, փրկութի՛ւն պատրաստիր Յակոբայ համար ։

5 Մ՝եր թշնամիներըն քեզանով գետինն կըքցենք · քո անունովդ կոխ կըտանք նորանց՝ որ վերկացան մեզ դէմ ։

6 Ինչուոր՝ իմ աղեղիս չեմ յուսացած՝ և իմ սուրս չի փրկում ինձ ։

7 Պատճառնոր՝ դու ես փրկում մեզ մեր թշնամիներիցն · և ամօթ ես անում նորանց՝ որ ատումեն մեզ ։

8 Աստուծոյն կըփառաբանենք ամէն օր · և քո անունիցն կըգոհանանք յաւիտեան · սէլա ։

9 Բայց հիմիկ դէն քցեցիր և ամօթ արիր մեզ, և չես դուրս գալիս մեր զօրքին հետ ։

10 Դու մեզ յետ ես դարձնում թշնամուցն · և մեզ ատօղներն՝ յափշտակումեն մեզ ։

11 Դու տըւիր մեզ՝ որ ոչխարի պէս կերակուր լինինք · և ցրվեցիր մեզ հեթանոսների մէջն ։

12 Ծախեցիր քո ժողովրդին առանց փողի, և չի հարստայար նորանց գնովն ։

13 Դու մեզ նախատինք ես դնում մեր հարևաններին առաջին · ծաղր և խայտա-

ռակութիւն նորանց առաջին , որ մեր չորս
կողմումն են :
14 Դու մեզ առակ ես դնում հեթա-
նոսների միջումն . և գլուխ շարժելոյ պատ-
ճառ՝ ազգերի միջումն :
15 Ամէն օր իմ նախատինքս իմ առաջիս
է . և իմ երեսիս ամօթն ծածկում է ինձ .
16 Նորա ձայնիցն՝ որ նախատինք է տա-
լիս և հայհոյում . թշնամոյ և քէն պահողի
երեսիցն :
17 Այս ամէնս եկաւ մեզ վերայ , և քեզ
չի մոռացանք . և քո ուխտըն չը՛ քանդե-
ցինք :
18 Մեր սիրտն յետ չըդարձաւ . և մեր
գնացքն չըծռվեցաւ քո ճանապարհիցն .
19 Թէ և փշրեցիր մեզ վիշապների տե-
ղումն , և մահի շուաքումն ծածկեցիր մեզ :
20 Եթէ մոռացած լինէինք մեր Աստու-
ծոյ անունըն , և մեր ձեռներըս մեկնած
լինէինք դէպի օտար Աստուած .
21 Չէ՞ որ Աստուած կըքննէր էս . ին-
չուոր՝ նա է գիտում սրտի ծածուկ խոր-
հուրդներըն :
22 Արա հակառակն քեզ համար սպան-
վումենք ամէն օր , և մորթվելոյ ոչխար
ենք համարվում :
23 Զարթնացի՛ր , ինչո՞ւ ես քնած ո՛վ
Տէր . վե՛րկաց՝ դէն մի՛քցեր իսպառ :
24 Ինչո՞ւ ես թագցնում քո երեսըդ , և

մեր խեղճութիւնըն և նեղութիւնն մոռա-
նումես :

25 Պատճառով՝ մեր անձն խոնարհվե-
ցաւ հողի մէջ , և մեր փորն երկրին
կպաւ :

26 Տէ՛ր կաց՝ որ օգնես մեզ . և փրկի՛ր
մեզ քո ողորմութեան համար :

## ՍԱՂՄՈՍ . ԽԴ :

Երգօղներին գլխաւորին . շօշաննիմ (սուսան) . Կորխայ որդոցն համար . վարդապետութիւն . սիրոյ երգ :

Իմ սիրտս բարի խօսք է բղխում , ես ա-
սումեմ՝ թէ իմ գործս թագաւորի հա-
մար է . իմ լեզուս խելացի գրագրի
գրիչ է :

2 Դու գեղեցիկ ես քան թէ մարդկանց
որդիքն . շնորհք է թափվում քո պռօշնե-
րիցն . սրա համար օրհնեց քեզ Աստուած
յաւիտեան :

3 Քո սուրըդ կապի՛ր քո մէջքդ ո՛վ զօ-
րաւոր . որ էն է քո պատիւդ և քո փառ-
քըդ :

4 Եւ քո փառքովդ յաջողի՛ր և ձի՛ հե-
ծիր ճշմարտութեան համար՝ և հեզ ար-
դարութեան համար . և քո աջ ձեռդ թո՛ղ
սովորցնէ քեզ ահաւոր բաներ :

5 Քո նետերն սրած են. ազգերն քո
ներքևն են ընկնում. նորանք թագաւորի
թշնամիների սիրտն են մտնում:
6 Ով Աստուած՝ քո աթոռդ յաւի-
տեանս յաւիտենից կայ. քո թագաւորու-
թեան գաւազանն ուղիղ գաւազան է:
7 Դու սիրումես արդարութիւնը և ա-
տումես անօրէնութիւնը. սրա համար ով
Աստուած՝ օծեց քեզ քո Աստուածն ուրա-
խութեան իւղովն՝ աւելի քան քո ընկեր-
ներին:
8 Քո շորերն բոլոր զմուռ հալուէ և
կասիա են. փղի ոսկերքով զարդարված
պալատներիցն ուրախացնումեն քեզ նուա-
գարանով. (սաղով:)
9 Թագաւորների աղջիկներն քո պա-
տուական զարդարանքովն կան. թագուհին
կանգնած է քո աջ կողմն՝ ոսկերի ազնիւ
ոսկովն:
10 Լսի՛ր աղջիկ՝ և տե՛ս. խոնարհացրո՛ւ
քո ականջըն. և մոռացի՛ր քո ժողովուրդըդ
և քո հօր տունըն:
11 Եւ ապա թագաւորն կըցանկանայ
քո գեղեցկութեանն. ինչու որ՝ նա՛ է քո
Տէրն՝ և դու պիտի երկրպագութիւն անես
նորան:
12 Սուրի աղջիկն ընծաներով կը-
գայ. ժողովըրդի մեծամեծներն քո երեսի ա-
ռաջին կաղաչեն:

13 Թագաւորի աղջիկն խայտառ փառաւոր է ներսևանց՝ նորա շորն հիւսած է ոսկուց :

14 Գեղեցիկ զարդարուած շորով նորա կըտանվի թագաւորի մօտն · աղջիկներ՝ նորա սիրելիներն նորա ետևէն կըգնան՝ և ներս կըտանվին քեզ մօտ :

15 Ներս կըտանվին ուրախութենով և ցնծութենով · և թագաւորի պալատն կըմտնեն :

16 Հարանց տեղն որդիք կըլինին քեզ · և իշխանք կըդնես նորանց ամէն երկրի վերայ :

17 Ես կըյիշեմ քո անունըդ ազգից մինչև ազգ · սորա համար ժողովուրդներն կըգոհանան քեզանից յաւիտեանս յաւիտենից :

## ՍԱՂՄՈՍ · ԽԵ :

Երգեցողներու գլխաւորին · Կորխայ որդոցը համար · Ալամօթի (սաղմոս ·) երգ :

Աստուած է մեր ապաւէնն և զօրութիւնն · նեղութեանց մէջն շատ օգնական գտնուած :

2 Սորա համար չենք վախենալ՝ թէ և երկիրն շարժվի · և սարերն ծովի անդընդի մէջն ընկնին :

3 Թող գոռան և պղտորվին նորա ջրերն. թող սարերն շարժվին նորա բարձրանալովն. Սէլա :

4 (Կայ) գետն իրան առուներովն կուրախացնէ Աստուծոյ քաղաքըն՝ բարձրելոյ սուրբ բնակարաններըն :

5 Աստուած նորա միջումն է. նա չի շարժվիլ. Աստուած օգնութիւն կանէ նորան առաւօտու ժամանակումն :

6 Հեթանոսներն խռովվեցան և թագաւորութիւններն շարժվեցան. նա իրան ձայնըն տուաւ՝ և երկիրն հալվեցաւ :

7 Զօրութեանց Տէրն մեզ հետ է. յակոբայ Աստուածն մեր ապաւէնն է. Սէլա :

8 Եկէ՛ք և տեսէ՛ք Տէրի գործքերըն՝ որ հրաշքներ է անում երկրի վերայ :

9 Որ դադարացնումէ պատերազմներըն՝ մինչև երկրի ծայրերն. փշրումէ աղեղները՝ կոտրատումէ նիզակներըն (մզրախնե-րըն). և կառքերըն (կառաղէլնէրըն) այրումէ կրակով :

10 Դադարեցէ՛ք և ճանաչեցէ՛ք՝ որ ես եմ՝ Աստուած. բարձր կըլինիմ՝ հեթանոսների մէջն. բարձր կըլինիմ երկրի վերայ :

11 Զօրութեանց Տէրն մեզ հետ է. յակոբայ Աստուածն մեր ապաւէնն է. Սէլա :

## ՍԱՂՄՈՍ. ԽԷ.

Երգողներուն գլխաւորին. Կորխայ որդւոց համար սաղմոս։

Ծափ տուէք ամէն ժողովուրդներ. աղաղակեցէ՛ք դէպի Աստուած՝ ցնծութեան ձայնով։

2 Ինչու որ՝ Տէրն բարձրեալ և ահաւոր է. մեծ թագաւոր ամէն երկրի վրայ։

3 Նա ժողովուրդներին մեր ներքևն է քցում. և ազգերին մեր ոտների ներքևն։

4 Նա մեզ համար ընտրումէ մեր ժառանգութիւնը՝ Յակոբայ փառաւորութիւնը՝ որ նորան սիրումէ. սէլա։

5 Աստուած վերանումէ ցնծութեան օրհնութենով. և Տէրն փողի ձայնով։

6 Սաղմոս ասացէք Աստուծոյն, սաղմոս ասացէք. սաղմոս ասացէք մեր թագաւորին՝ սաղմոս ասացէք։

7 Պատճառնոր՝ Աստուած ամէն երկրի թագաւորն է. սաղմոս ասացէք իմաստութենով։

8 Աստուած թագաւոր է հեթանոսներին վրայ. Աստուած նստումէ իրան սուրբ աթոռին վրայ։

9 Ժողովուրդների իշխաններն ժողովվեցան՝ Աբրահամու Աստուծոյ ժողովրդին

հետ. ինչու որ՝ երկրի վահաններն (պաշտպան-ները) Աստուծոյ են՝ Նա շատ բարձրացաւ :

## ՍԱՂ ՄՈՍ . ԽԷ :

Սաղմոսէ երգ. Կորխեայ որդւոցն համար :

Մեծ է Տէրն՝ և շատ օրհնեալ. մեր Աստուծոյ քաղաքումն՝ իրան սուրբ սարին վերայ :
2 Գեղեցիկ բարձրութիւն՝ բոլոր երկրի ուրախութիւն է սիօն սարն. հիւսիսի կողմումն է մեծ թագաւորի քաղաքն ,
3 Աստուած յայտնի է նորա պալատներումն՝ որ ապաւէն է Նա :
4 Ինչու որ՝ ահա՛ թագաւորներն ժողովեցան. և իրար հետ անցկացան ,
5 Նորանք տեսին և զարմացան. շփոթվեցան և փախչելով դէն գնացին :
6 Դողալն բռնեց նորանց էնտեղ՝ սաստիկ ցաւ, ինչպէս կնկան՝ որ ծնելոյ վերայ է :
7 Դու արևելեան քամով Թարսիսի նաւերըն փշրումես :
8 Ինչպէս որ լսեցինք՝ էնպէս էլ տեսինք զօրութեանց Տէրի քաղաքումն. մեր Աստուծոյ քաղաքումն. Աստուած հաստատումէ նորան մինչև յաւիտեան. սէլա ,
9 Ով Աստուած՝ մտիկ ենք տալիս քո ողորմութեանն՝ քո տաճարի մէջումն ,

10 Ո՛վ Աստուած՝ ինչպէս որ քո ա-
նունդ, էնպէս էլ քո գովութիւնդ մինչև
երկրի ծայրերն է. քո աջդ լիքն է արդա-
րութենով:
11 Թո՛ղ ուրախ լինի սիօն սարն. և
յուդայի աղջկներն ցնծան քո իրաւունքիդ
համար՝ ո՛վ Տէր:
12 Պտնացէ՛ք սիօնի չորս կողմո՛վն՝ և նո-
րան պատեցէ՛ք, համարեցէ՛ք նորա աշտա-
րակներն (Բուրգերն:)
13 Մտի՛կ արէք նորա բերդերին. քննե-
ցէ՛ք նորա պալատներն՝ որ պատմէք էն
ազգին՝ որ գալու է:
14 Թէ էս Աստուածս՝ է մեր Աստուածն
միշտ և յաւիտեան. սա՛ կառաջնորդէ մեզ
մինչև 'ի մահ:

## ՍԱՂՄՈՍ. ԽԸ:

Երգողներին գլխաւորին. կորխայ որդոցն համար. սաղմոս:

Լսեցէ՛ք էս՝ ամէն ժողովուրդներ, և ա-
կանջ դրէք ամէնքդ՝ որ աշխարհքի մէջ
բնակվում էք:
2 Ցած և մեծ մարդկանց որդիք՝ հա-
րուստ և աղքատ իրար հետ:
3 Իմ բերանս պիտի իմաստութիւն խօ-
սի. և իմ սրտի խորհուրդն իմացողու-
թիւն է:

4 Ես իմ ականջըս կըխոնարհեցնեմ դէպի առակ. և քնարով կըբանամ իմ խոր խօսքըն ։

5 Ինչո՞ւ վախենամ ես չար օրերումն՝ որ իմ խորամանկ թշնամիների անօրէնութիւնն պատումէ ինձ ։

6 Որ նորանք իրանց ապրանքներին են յուսացած. և իրանց մեծ հարստութենովն պարծենումեն ։

7 Մարդ չի կարող իրան եղբօրըն փրկել. և ոչ նորա փրկութեան գինըն տալ Աստուծոյն ։

8 Ինչուոր՝ նորանց անձների փրկութեան գինն թանկ է, և յաւիտեան կըդադարի.

9 Թէ և յաւիտեան ապրի՝ և ապականութիւն չըտեսնէ ։

10 Պատճառնոր՝ տեսնումէ, որ իմաստուններն էլ մեռնումեն՝ ինչպէս որ յիմարներն և անմիտներն կորչումեն, և իրանց հարստութիւնըն ուրիշներին են թողում ։

11 Նորանց գերեզմաններն իրանց տուն են յաւիտեան. իրանց բնակութիւն՝ ազգից մինչև ազգ. նորանք իրանց անունովն երկիրներումն կանչվումեն ։

12 Մարդն որ պատուի մէջ է և իմաստուն չէ, նման է անասուններին որ կորչումեն ։

13 Բայց նորանց էս ճանապարհը՝ նորանց յիմարն է . և նորանց զաւակներն հաւան են կենում նորանց ասմունքին . սէլա :

14 Ոչխարների նման դժոխքի մէջն են մտնըրվում , մահն նորանց հովիւն է . և ուղիղներն առաւօտանց կըտիրապետեն նորանց . և նորանց կերպարանքն կըմաշվի դժոխքում . ու իրանց բնակարաններիցն դուրս կըհանվին :

15 Բայց Տէրն իմ անձըս կըփրկէ դժոխքի ձեռքիցն . ինչու որ՝ նա ընդունում է ինձ . սէլա :

16 Մի՛ վախենար երբոր մարդ հարըստանայ . երբոր նորա տան փառքն շատանայ :

17 Պատճառն որ՝ իրան մեռնելոյ ժամանակում եսկի մին բան վէր չի առնիլ իրան հետ . նորա փառքն չի գնալ նորա ետևէն :

18 Ինչու որ՝ իրան անձըն կօրհնէ իրան կեանքում , և մարդիկ կըգովեն քեզ , որ բարի ես անում քեզ :

19 Բայց նա կըմտնէ իրան հարանց ազգին մօտ , որ նորանք մինչև յաւիտեան լոյս չեն տեսնիլ :

20 Մարդն որ պատուի մէջ է և իմաստուն չէ , նման է անասուններին՝ որ կորչումեն :

# ՍԱՂՄՈՍ . ԽԹ :

## Ասափայ սաղմոս :

Աստուածների Աստուած Տէրն խօսումէ , և կանչումէ երկրին ,արևելքից մինչև արևմուտքն :

2 Սիօնի միջից՝ գեղեցկութեան կատարելութենից Աստուած յայտնըվումէ փառքով :

3 Մե՛ր Աստուածն գալիս է՝ և էլ լուռ չի կենում . Նորա առաջին փչացնող կրակ կայ . և Նորա չորս կողմնին սաստիկ մըրրիկ քամի :

4 Նա կանչումէ երկնքին վերևից . և երկրին՝ որ իրան ժողովրդին դատէ :

5 Ինձ մօ՛տ ժողովեցէք իմ սրբերին՝ որ ինձ հետ ուխտ դրին պատարագի վերայ :

6 Եւ երկինքն կըպատմէ Նորա արդարութիւնըն . ինչու որ՝ Աստուած դատաւոր է . սէլա :

7 Լսի՛ր իմ ժողովուրդ՝ և ես կըխօսիմ . Իսրայէլ՝ և ես վկայութիւն կըտամ քեզ . ես եմ Աստուած , քո Աստուածն :

8 Քո պատարագներին համար չեմ յանդիմանում քեզ . և քո ողջակէզ մատաղներն ամէն օր իմ առաջին են :

9 Քո տանից արջառ չեմ առնում . և ոչ այծեր՝ քո հօտերից (ոչխարներից) :

10 Պատճառը՝ իմն են ծըմակի ամէն
գազանները . և հազարաւոր անասուն-
ները որ սարերումն կան :
11 Ճանաչեմ ես սարերի բոլոր թըռ-
չուններըն , և վայրի գազանները իմ ա-
ռաջին են :
12 Եթէ սոված լինիմ , քեզ չեմ ա-
սիլ . ինչու որ՝ իմն է աշխարհքս և նորա
լիութիւնն :
13 Մ՞իթէ ես արջառների միս կուտեմ՝
և այծերի արիւն կըխմեմ :
14 Պատարագի՛ր Աստուծոյն գոհու-
թիւն . և վճարի՛ր բարձրելոյն քո ուխ-
տերըն :
15 Եւ կանչի՛ր ինձ նեղութեան օ-
րումն . ես կազատեցնեմ քեզ՝ և դու կըփա-
ռաբանես ինձ :
16 Բայց ամպարըշտին ասումէ Աս-
տուած . ի՞նչ է որ դու իմ հրամանները
պատմումես՝ և իմ ուխտըս քո բերանն ես
առնում :
17 Եւ խըրատըն ատումես՝ և իմ խօսքե-
րըս քո յետին կողմն ես քցում :
18 Եթէ գող ես տեսնում՝ նորա հետ
ես գնում . և քո բաժինն շնացողներին
հետ է :
19 Քո բերանըն չարութեան ես տա-
լիս , և քո լեզուն նենգութիւն է հիւսում :
20 Դու նստումես և քո եղբօրն հակա-

ռակ ես խօսում. քո մօր որդոյն վերայ
բամբասանք ես անում:
21 Էսա արիր դու՝ և ես լուռ կացայ. կարծեցիր՝ թէ ես էլ քեզ նման եմ, Բայց կը
յանդիմանեմ քեզ և քո աչաց առաջին կը
դնեմ:
22 Մի՛տք արէք էս դուք՝ որ Աստուծոյն մոռանումէք, որ չըլլինի թէ ես յափշտակեմ՝ և ոչ ով չըլլինի՝ որ փրկէ:
23 Ով որ գոհութեան պատարագ է
մատուցանում՝ նա փառաւորումէ ինձ. և
էն է ճանապարհը՝ որ նորան ցոյց տամ Աստուծոյ փրկութիւնըն:

## ՍԱՂՄՈՍ. Ծ.

Երգօղներին գլխաւորին. Դաւթի սաղմոս: Էն ժամանակին՝ որ Նաթան մարգարէն նորա մօտ եկաւ՝ երբոր նա Բեթսաբէին մօտն էր մտել:

Ողորմի՛ր ինձ Աստուած քո քաղցրութեան
պէս, և ջնջի՛ր իմ անօրէնութիւններըս
քո մեծ ողորմութեան պէս:
2 Խապառ լուա՛ ինձ իմ անօրէնութենիցս՝ և սրբի՛ր ինձ իմ մեղքիցս:
3 Պատճառոր՝ ես ճանաչումեմ իմ անօրէնութիւններըս. և իմ մեղքս ամէն
ժամանակ իմ առաջիս կայ:

4 Միայն քեզ դէմ մեղանչեցի, և չարըն քո աչաց առաջին գործեցի. որ դու արդար լինիս քո խօսքերումդ, և մաքուր լինիս քո դատաստանումդ:

5 Ահա՛ ես անօրէնութենով ծնվայ. և մեղքով յղացաւ ինձ իմ մայրս:

6 Ահա՛ դու սիրում ես ճշմարտութիւնըն, որ ներսումն է. և սովորցնում ես ինձ էն իմաստութիւնըն որ ծածուկ է:

7 Սրբի՛ր ինձ զոպայով (կորն-խոտի ճիւղով) և մաքուր կըլինիմ. լուա՛ ինձ՝ և ձիւնից սպիտակ կըլինիմ:

8 Լսե՛լ տուր ինձ ցնծութիւն և ուրախութիւն. թո՛ղ ցնծան ոսկերքն որ կոտրատեցիր:

9 Քո երեսդ թագցրո՛ւ իմ մեղքերիցն. և իմ ամէն անօրէնութիւններըն ջնջի՛ր:

10 Մաքուր սիրտ ստեղծի՛ր ինձանում ո՛վ Աստուած՝ և ուղիղ հոգի նորոգի՛ր իմ ներսումս:

11 Դէն մի՛ քցեր ինձ քո երեսիցդ՝ և քո սուրբ հոգին վեր մի՛ առներ ինձանից:

12 Մէկէլ տո՛ւր ինձ քո փրկութեան ուրախութիւնըն. և ազնուութեան հոգո՛վն հաստատի՛ր ինձ:

13 Ապա անօրէններին կըսովորցնեմ քո ճանապարհներըն. և մեղաւորներն յետ կը դառնան քեզ մօտ:

14 փրկի՛ր ինձ արիւնիցն՝ ո՛վ Աստուած՝ իմ փրկութեան Աստուած . և իմ լեզուս կըփառաբանէ քո արդարութիւնըն :

15 Տէ՛ր բա՛ց արա իմ պռօշներըս . և իմ բերանս կըպատմէ քո գովութիւնըն :

16 Պատճառնոր՝ դու պատարագ չես ուզում . Բայց թէ չէ՝ ես կըտայի քեզ . և ողջակէզներին հաւան չե՛ս կենում :

17 Աստուծոյն հաճոյ պատարագ է կոտրված հոգին . կոտրված և փշրված սիրտըն՝ դու չես անարգիլ ո՛վ Աստուած :

18 Բարի՛ արա սիօնին քո քաղցրութենովդ . երուսաղէմի պարիսպներըն շինի՛ր :

19 Էն ժամանակն հաճոյ կըլինին քեզ արդարութեան պատարագներըն՝ ողջակէզներըն և բոլոր մատաղներըն . էն ժամանակն արջառներ կըմատուցանեն քո սեղանի վերայ :

## ՍԱՂՄՈՍ. ԾԱ.

Երգեցողների գլխաւորին. Դաւթի խրատա-
կանութիւնը :
Երբոր Դովեկ Եդովմայեցին եկաւ և Սաւու-
ղին պատմեց և նորան ասաց. Թէ Դաւիթը
Աքիմելէքի տունն եկաւ :

Ի՞նչես պարծենում՝ չարութենով ով բռնաւոր · Աստուծոյ ողորմութիւնն ամէն օր կայ :

2 Քո լեզուն անօրէնութիւն է խորհում , ինչպէս սուր ածելի՝ նենգաւորութիւն է գործում :

3 Դու չարը աւելի ես սիրում՝ քան թէ բարին · սուտ ասելը՝ քան թէ ճշմարտութիւն խօսելը · Սէլա :

4 Դու ամէն կորուստ բերող խօսքը՝ և նենգաւոր լեզուն ես սիրում :

5 Սրա համար Աստուած կըկործանէ քեզ իսպառ · կըխլէ և կըհանէ քեզ քո բնակարանիցն · և քո արմատը (ծլօրը) կենդանեաց երկրիցն · Սէլա :

6 Եւ արդարներն կըտեսնեն և կըվախենան · և նորա վերայ կըծիծաղեն :

7 Ահա էն մարդն է՝ որ Աստուծոյն իրան զօրութիւն չի՛ արաւ · բայց իրան մեծ հարստութեանն յուսացաւ , և իրան անօրէնութեննումն զօրացաւ :

8 Բայց ես կանանչած ձիթենիոյ նման
Աստուծոյ տան մէջն կը կենամ . Աստուծոյ
ողորմութեանն յուսացած եմ յաւիտեանս
յաւիտենից :
9 Կը գոհանամ քեզանից յաւիտեան . որ
դու էն արիր . և քո անունիդ կսպասեմ .
ինչու որ՝ բարի ես քո սրբերիդ առաջին :

## ՍԱՂՄՈՍ. ԾԳ:

Երգեցողներու գլխաւորին . Մահալաթ (ասով) .
Դաւթին հասկացողութիւնը :

Անզգամ մարդն իրան սրտումն ասաց՝ Թէ
Աստուած չկայ . Նորանք ապականվե-
ցան և գարշելի էլան անօրէնութենով .
ոչ ով չկայ որ բարին անէ :
2 Աստուած երկնքիցն նայեց մարդկանց
որդոցն վերայ . որ տեսնէ , թէ կը լինի՞ մին
իմաստուն , որ Աստուծոյն խնդրէ :
3 Ամէնքն յետ քաշվեցան . և իրար հետ
անպիտան էլան . ոչ ով չկայ որ բարին
անէ . մինչև մինն էլ չկայ :
4 Մի՞ թէ չե՞ն իմանում Նորանք որ
անօրէնութիւն են գործում . որ իմ ժո-
ղովուրդըս ուտումեն ինչպէս հաց . և Աս-
տուծոյն չեն կանչում :
5 Էնտեղ են վախենում վախով՝ որ
տեղ որ վախ չկայ . ինչու որ՝ Աստուած

քեզ պատօղների ոսկորքըն ցրւել․ ա-
մօթ ես անում նորանց․ ինչու որ՝ Աս-
տուած դէն է քցում նորանց ։
6 Ով կըտայ սիօնիցն իսրայէլի փրկու-
թիւնըն, երբոր Աստուած իրան ժողովըր-
դի գերութիւնըն կըդարձնէ, ապա յա-
կոբն կըցնծայ՝ և իսրայէլն ուրախ կըլինի ։

## ՍԱՂՄՈՍ ԾԳ։

Երգօղներին գլխաւորին․ նէյէնօվ (սաղմոս․)
Դաւթի խրատականութիւն ։
Երբոր Զիփացիքն եկան և Սաւուղին ասա-
ցին․ չէ՞ որ Դաւիթն մեզ մօտ թագ է կացած ։

Ով Աստուած քո անունովդ ապրեցրու
ինձ․ և քո զօրութեանովդ իրաւունք արա
ինձ ։
2 Ով Աստուած՝ լսի՛ր իմ աղօթքիս․
ականջ դի՛ր իմ բերանիս խօսքերին ։
3 Պատճառնոր՝ օտար մարդիք վեր կա-
ցան ինձ վերայ․ և զօրաւորներն իմ ան-
ձըս խնդրումեն․ նորանք Աստուծոյն ի-
րանց աչաց առաջին չեն դնում․ սէլա ։
4 Ահա՛ Աստուած իմ օգնականն է՝
Տէրն իմ անձըս պահպանումէ ։
5 Նա չարըն կըդարձնէ իմ թշնամինե-
րին վերայ․ քո ճշմարտութեանովդ կորցրու
նորանց ։

6 Ես յօժար կամօք պատարագ կընծայեմ քեզ · ու քո անունիդ կըգովեմ ով Տէր · ինչու որ բարի է ։
7 Պատճառ որ՝ դու ամէն նեղութենից փրկեցիր ինձ · և իմ աչքս ուրախութենով նայեց իմ թշնամիներիս վերայ ։

## ՍԱՂՄՈՍ · ԾԵ ։

Երգեցիկների գլխաւորին · Նէգինօթ (սազով ·) Դաւթի վարդապետութեան ։

Աստուա՛ծ ականջ դիր իմ աղօթքիս, և քեզ մի՛ թագցներ իմ աղաչանքիցս ։
2 Նայի՛ր ինձ վերայ և լսի՛ր ինձ · որ ես սուգ եմ անում իմ տրտմութենումս և շուարված եմ ·
3 Թշնամոյ ձայնին համար՝ և ամպարշտի նեղացնելոյն համար · ինչու որ՝ անօրէնութիւն են քցում ինձ վերայ · և բարկութենով ոխ են պահում ինձ հետ ։
4 Իմ սիրտս շփոթված է ինձանում · և մահի ա՛հ ընկաւ ինձ վերայ ։
5 Վախ և դող եկաւ ինձ վերայ · և սարսափմունք ծածկեց ինձ ։
6 Սրա համար ասացի · ով կըտայ ինձ թև ինչպէս աղաւնոյ՝ որ թռչիմ և մէն տեղ բնակվիմ ։
7 Ահա՛ փախչելով կըհեռանայի՝ ու անապատի մէջ կըմնայի · սէլա ։

8 Կըփութայի որ յափշտակող քամուցն և մրրկիցն պրծնիմ :

9 Ով Տէր՝ կործանի՛ր բաժանի՛ր նորանց լեզուն․ ինչու որ՝ անիրաւութիւն և հակառակութիւն տեսի քաղաքումն :

10 Ցերեկ և գիշեր նորա պարիսպների չորս կողմումն պտտումեն․ անօրէնութիւն և չարագործութիւն կան նորա միջումն :

11 Անիրաւութիւն կայ նորա միջումն․ և խաբէութիւն և նենգութիւն չի պակասում նորա փողոցներիցն :

12 Պատճառնոր՝ եթէ թշնամին ինձ նախատինք տայր, կըհամբերէի․ և եթէ ինձ ատողն պարծենայր ինձ վերայ, կըգաղվէի նորանից :

13 Բայց դու ինձ հաւասար մարդ ես՝ իմ սրտակից և իմ բարեկամ :

14 Որ մենք իրար հետ քաղցրութենով խորհուրդ էինք անում, և Աստուծոյ տունն էինք գնում ժողովրդի հետ :

15 Թո՛ղ մահ հասնէ նորանց վերայ՝ և հենց կենդանի վէր ընկնին դժոխքի մէջն․ ինչու որ՝ չարութիւնք կան նորանց բնակարաններումն՝ նորանց միջումն :

16 Բայց ես դէպի Աստուած կըկանչեմ․ և Տէրն կըփրկէ ինձ :

17 Իրիկունն և առաւօտն և կէսօրումն կըխօսիմ և կըհառաչեմ՝ և նա կըլսէ իմ ձայնիս :

18 Նա խաղաղութենով կըփրկէ իմ
անձըս էն կռվիցն՝ որ ինձ դէմ է. ինչու որ՝
շատ են նորանք՝ որ ինձ հետ են ։
19 Աստուած կըլսէ և կընեղացնէ նո-
րանց. նա որ յաւիտենից կայ. սելա. ին-
չու որ՝ նորանք չեն փոխվում և Աս-
տուածանից չեն վախենում ։
20 Իրանց ձեռներըն ձգում են՝ նորանց
վերայ՝ որ խաղաղութենով են իրանց հետ.
և իրանց ուխտուպայմանըն ապականվու-
մեն ։
21 Նորանց բերանն իւղիցն էլ կակուղ
է. բայց կռիւ կայ նորանց սրտումն. նո-
րանց խօսքերըն ձէթիցն էլ կակուղ են՝
բայց սրած խիշտ են ։
22 Քո հոգսըն Աստուծոյ վերայ քցի՛ր՝
և նա խնամք կանէ քեզ. նա թող չի
տայ, որ արդարըն յաւիտեան տեղիցն
շարժվի ։
23 Եւ դու Աստուած՝ վէր կըքցես նո-
րանց ապականութեան հորի մէջ. արիւն
թափող մարդիկըն իրանց օրերըն մինչև
՚ի կէսն չե՛ն հասցնիլ. բայց ես քեզ եմ
յուսացած ։

## ՍԱՂՄՈՍ ԾԵ։

*Երգեցիներուն գլխաւորին · հեռու (տեղեր) աղաւնոյ համար հետաքրքրական ձեռին · դաւթին գիր · երբոր փղշտացիները բռնեցին նորան Գէթը (յաղագման) ։*

Աստուա՛ծ ողորմի՛ր ինձ · ինչու որ՝ մարդն հալածումէ ինձ · հակառակողն ամէն օր նեղացնումէ ինձ ։

2 Իմ թշնամիներս ամէն օր կամենումեն կուլ տալ ինձ · ինչու որ՝ շատ են նորանք որ ինձ հետ կռիւ են անում ամբարտաւանութենով ։

3 Ինչ օր՝ որ վախենամ՝ քեզ կըյուսամ ։

4 Աստուծով կըգովեմ նորա խօսքըն · Աստուծոյն եմ յուսացած՝ չեմ վախենալ · ի՞նչ կանէ ինձ մարդն ։

5 Ամէն օր իմ խօսքերին հակառակումեն · նորանց ինձ վերայ դրած ամէն խորհուրդներն՝ դէպի չարութիւնն են ։

6 Նորանք հաւաքվումեն և թագուն սպասումեն · իմ ոտաց հետերին (իզերին) միտիկ են տալիս · ինչու որ՝ կամենումեն իմ անձըս բռնել ։

7 Անօրէնութենով կամենումեն պրծնիլ · բարկութենով վէ՛ր քցիր ժողովուրդներըն ո՛վ Աստուած ։

8 Իմ օտար տեղերում մանգալըն դու համարումես . իմ արտասունքներըն դի՛ր քո տըկի մէջն . չէ՛ որ նորանք քո գրքումն են :

9 Էն ժամանակն իմ թշնամիներս յետ կըդառնան՝ երբոր ես կըկանչեմ . է՛ն եմ գիտում՝ որ Աստուած ինձ հետ է :

10 Աստուծով կըգովեմ նորա խօսքըն . Տէրովն կըգովեմ նորա խօսքըն :

11 Աստուծոյն եմ յուսացած՝ չեմ վախենալ . ի՞նչ կանէ ինձ մարդն :

12 Ով Աստուած՝ քո ուխտերն ինձ վերայ կան . գոհութեան պատարագներ կըմատուցանեմ քեզ :

13 Պատճառոր՝ դու իմ անձըս փրկեցիր մահից . և իմ ոտներըս՝ վէր ընկնելուցն . որ Աստուծոյ առաջին ման գամ կենդանեաց լուսոյ մէջն :

## ՍԱՂՄՈՍ ԾԶ.

Երգողներին գլխաւորին . Մի՛ ապականեր . Դաւթի գիր . Երբոր նա Սաւուղի երեսիցն փախաւ՝ (գաղձեցաւ) այրի՝ (մաղարայի) մէջն :

Աստուա՛ծ ողորմի՛ր ինձ՝ ողորմի՛ր ինձ . ինչու որ՝ քեզ է յուսացած իմ անձս . և քո թևերի շուաքին կըյուսամ մինչև որ չարիքն անց կենան :

2 Դէպի բարձրեալ Աստուածն կանչումեմ, դէպի Աստուածն՝ որ ինձ բարի է անում:

3 Նա ուղարկումէ երկնքից և փրկումէ ինձ. նա ամօթ արաւ նորան՝ որ ինձ կուլ է տալիս. սէլա: Աստուած ուղարկումէ իրան ողորմութիւնըն և ճշմարտութիւնըն:

4 Իմ անձս առիւծների միջումն է, ես վէր ընկած եմ բոց փչողների միջումն, մարդկանց որդոց միջումն, որ նորանց ատամներն նիզակ ([illegible]) և նետ են՝ և նորանց լեզուներն սրած սուր:

5 Բարձրացի՛ր Աստուած՝ երկնքի վերայ. և քո փառքն ամէն երկրի վերայ:

6 Որոգայթ (Ծուղակ) պատրաստեցին իմ ոտներիս համար՝ և իմ անձըս խոնարհացրին. հոր փորեցին իմ առաջին, հենց իրանք ընկան նորա մէջն. սէլա:

7 Իմ սիրտս պատրաստ է ով Աստուած՝ իմ սիրտս պատրաստ է. երգով կօրհնեմ և սաղմոս կասեմ:

8 Զարթնացի՛ր իմ փառք. զարթնացի՛ր սաղմոսարան և քնար. ես կզարթնանամ [illegible] առաւօտանց:

9 Կգոհանամ քեզանից Տէ՛ր՝ ժողովուրդների միջումն. սաղմոս կասեմ քեզ ազգերի միջումն:

10 Պատճառնոր՝ քո ողորմութիւնն մեծ

է մինչև երկինքն. և քո ճշմարտութիւնն
մինչև ամպերըն:
11 Բարձրացի՛ր Աստուած՝ երկնքի վե-
րայ. և քո փառքն ամէն երկրի վերայ:

## ՍԱՂՄՈՍ. ԾԷ.

Երգեցիկների գլխաւորին. Մի՛ ապականիր.
Դաւիթի գիր:

Իրաւի՞ է որ արդարութիւն կըխօսիք ով
զօրաւորք. և ուղիղ դատաստան կանէք
ով մարդկանց որդիք:
2 Այլ հակառակն սրտով անօրէնու-
թիւն էք գործում. ձեր ձեռաց անիրաւու-
թիւններն կշռով բաժանումէք երկրի մէջն:
3 Ամպարիշտներն օտար են մօր փո-
րից, և հենց ծնվելուցն ետև մոլորված են
նորանք՝ որ սուտեն խօսում:
4 Նորանց չարութիւնն նման է օձի
չարութեանն. ինչպէս խուլ իժ օձի՝ որ
իրան ականջը խփումէ,
5 Որ չըլսէ կախարդի ձայնին՝ է՛ն թով-
չին, (ափսունչուն) որ լաւ գիտումէ թովել
(ափսուն անել):
6 Ո՛վ Աստուած՝ փշրի՛ր նորանց ատամ-
ներըն իրենց բերանումն. և առիւծների
մեծ կեռիքներըն ջարդի՛ր ով Տէր:
7 Թո՛ղ հալվին՝ և ինչպէս ջուր անդա-

դար գնան, և երբոր նետ ձգեն՝ թող
փշրվին :
8 Թո՛ղ չքվին՝ ինչպէս որ լպրտուկն
հալվումէ. ինչպէս անցուցք արած զաւակ՝
որ արեգակըն չի տեսնում :
9 Դեռ որ ձեր ամաններն վառված փը-
շի տաքութիւնըն չեն իմացած, իբր մրրիկ
քամով վեր կառնէ նորանց՝ թէ նորըն և
թէ այրվածըն :
10 Արդարըն ուրախ կըլինի՝ երբոր
վրէժխնդրութիւն կըտեսնէ. իրան ոտնե-
րըն կըլուանայ ամպարըշտի արիւնովը :
11 Եւ մարդիք կասեն, իրաւի՛ որ
պտուղ կայ արդարոյն, իրաւի՛ որ Աս-
տուած դատաւոր է երկրի վերայ :

## ՍԱՂՄՈՍ. ԾԹ :

Երգեցիկների գլխաւորին. Մի՛ ապականիր. Դաւթի գիրը. Երբոր Սաւուղը ուղարկեց և նորա տունը պահել տուաւ որ սպանէ նորան :

Փրկի՛ր ինձ իմ թշնամիներիցն ի՛մ Աս-
տուած. ապրեցրո՛ւ ինձ նորանցից՝ որ
ինձ վերայ վերկացան :
2 Փրկի՛ր ինձ նորանցից՝ որ անօրէնու-
թիւն են գործում, և արիւն թափող
մարդկանցիցն ապրեցրո՛ւ ինձ :

3 Պատճառնոր՝ ով Տէր, ահա՛ թագուն սպասումեն՝ որ իմ անձըս բռնեն. զօրեղներն ժողովվումեն ինձ վերայ՝ առանց իմ անօրէնութեան եւ առանց իմ մեղաց։

4 Առանց իմ անօրէնութեան վազումեն՝ եւ իրանց պատրաստումեն. զարթնացի՛ր՝ որ իմ առաջս գաս՝ եւ տե՛ս։

5 Եւ դու Տէ՛ր՝ զօրութեա՛նց Աստուած՝ Իսրայէլի՛ Աստուած վե՛ր կաց՝ որ տես գաս ամէն հեթանոսներին. մի՛ ողորմիր էն ամէնին՝ որ անօրէնութիւն են գործում. սէլա։

6 Թո՛ղ յետ դառնան իրիկունն՝ եւ ոռնան ինչպէս շուն, եւ քաղաքումն շուռ գան։

7 Ահա՛ վայրահաչ խօսումեն իրանց բերանովը. սրեր կան նորանց պռօշներումն, ինչուոր՝ ամէն ո՛վ կլսէ։

8 Բայց դու Տէ՛ր՝ կծիծաղես նորանց վերայ, ու ծաղր կանես էն ամէն հեթանոսներին։

9 Նորանց զօրութեան համար քեզ մտիկ եմ տալիս. ինչուոր՝ Աստուած է իմ պահպանութիւնն։

10 Իմ Աստուծոյ ողորմութիւնն իմ առաջս կըգայ. Աստուած կըտայ ինձ ուրախութենով նայիլ իմ թշնամիներիս վերայ։

11 Մի՛ սպաններ նորանց՝ որ իմ ժողովուրդս չըմոռանայ. ցրւի՛ր նորանց քո զօ-

րութենովդ. և վե՛ր քցիր նորանց՝ ո՛վ Տէր
մեր պաշտպան ։
12 Իրանց բերանի մեղքին համար՝ և ի-
րանց պռօշների խօսքին համար թո՛ղ բըռ-
նըվին իրանց ամբարտաւանութենումն. և
է՛ն անէծքին և սուտ խօսքերին համար՝ որ
պատմումեն ։
13 Սատակի՛ր նորանց բարկութենով.
սատակի՛ր՝ որ էլ չըլինին. և գիտենան՝ որ
Աստուած տիրումէ յակոբայ մէջն մինչև
երկրի ծայրերն. սէլա ։
14 Թո՛ղ յետ դառնան իրիկունն՝ ոռ-
նան ինչպէս շուն՝ և քաղաքումն շուռ
գան ։
15 Թո՛ղ նորանք էստեղ էնտեղ ման
գան ուտելու համար. և եթէ չըկշտանան,
կըտրտնջեն ։
16 Բայց ես կօրհնեմ քո զօրութիւնըն.
և առաւօտանց կըփառաբանեմ քո ողոր-
մութիւնըն. ինչուոր՝ պաշտպան և ա-
պաւէն էլար ինձ համար՝ իմ նեղութեան
օրումն ։
17 Ո՛վ իմ զօրութիւն՝ քեզ սաղմոս
կասեմ. ինչուոր՝ ո՛վ Աստուած՝ դու ես իմ
պաշտպանն՝ և իմ ողորմութեան Աստու-
ածն ։

## ՍԱՂՄՈՍ · ԾԹ ։

Երգօղներէ գլխաւորին · շուշան էդութ (առակ ·) դաւիթէ գիր՝ ուսուցանելու համար ։ Երբոր կռւէր արամ միջագետացոց ասորոց՝ և ցոբայ ասորոց հետ · և երբոր յովաբ յետ դարձաւ և եդոմեցին տասն երկու հազար մարդ կոտորեց աղէ ձորումն ։

Աստուա՛ծ՝ դէն քցեցիր մեզ, ցրւեցիր մեզ · բարկացար, մինել յե՛տ դարձի՛ր դէպի մեզ ։

2 Դու դողացրիր երկիրը՝ և նորան կոտրատեցիր · բժշկի՛ր նորա կոտրածքն · ինչուոր՝ խիստ շարժվեցաւ ։

3 Խիստ բան ցոյց տուիր քո ժողովրդին · խմել տուիր մեզ թմրութեան գինի ։

4 Բայց քեզանից վախեցողներին դրօշակ (բայրաղ) տուիր՝ որ փրկվին աղեղի երեսից · սէլա ։

5 Որ քո սիրելիքն ապրին · թո՛ղ քո աջդ փրկէ՝ և լսի՛ր մեզ ։

6 Աստուած խօսեց իրան սուրբ տեղումն՝ ես կըցնծամ · սիւքեմ կըբաժանեմ և սուքօթ ձորըն կըչափեմ ։

7 Ի՛մ է գաղաադն՝ և իմ է մանասէն · և եփրեմն իմ գլխի զօրութիւնն է, և յուդան իմ իշխանն է ։

8 Մ՛ովաբն իմ լուանալու ամանն է · իմ
կօշիկըն Եդօմայ վերայ կըքցեմ · փղշտա-
ցոց երկիր՝ ցնծա՛ ինձ համար :
9 Ո՞վ կըտանի ինձ ամուր քաղաք ·
ո՞վ կառաջնորդէ ինձ մինչև Եդօմ,
10 Եթէ ոչ դու ո՛վ Աստուած՝ որ դէն
քցեցիր մեզ · և չես դուրս գալիս մեր զօր-
քին հետ ո՛վ Աստուած :
11 Տո՛ւր մեզ քո օգնութիւնըն նեղու-
թեան միջումն · ինչու որ՝ մարդոյ փրկու-
թիւնն ունայն է :
12 Աստուծով կըգործենք զօրութիւն ·
և նա կոխ կըտայ մեր թըշնամիներըն :

## ՍԱՂՄՈՍ · Կ :

Երգօղներուն գլխաւորին · Նէգինօթ (սազով) ·
Դաւիթի սաղմոս :

Ո՛վ Աստուած՝ լսի՛ր իմ աղաղակիս ·
մտի՛կ արա իմ աղօթքիս :
2 Երկրի ծայրիցն կանչումեմ դէպի
քեզ՝ իմ սրտի խիստ տրտմութեան մէջն ·
առաջնորդի՛ր ինձ էն վիմի վերայ՝ որ ինձ
համար շատ բարձր է :
3 Ինչու որ՝ դու ես իմ ապաւէնն · զօ-
րաւոր աշտարակ (քուլէ) թշնամույ երե-
սիցն :
4 Ես քո խորանի մէջն կըբնակվիմ յա-

ւիտեան․ քո թեւերի ծածկոցի տակն կապաւինեմ․ սէլա ։

5 Պատճառն որ՝ ո՛վ Աստուած՝ դու լսումես իմ ուխտերըն․ և ինձ ես տալիս նորանց ժառանգութիւնըն՝ որ վախումեն քո անունիցդ ։

6 Օրեր ես աւելացնում թագաւորի օրերին վերայ․ և նորա տարիքն ազգից մինչև ազգ են․

7 Որ նա յաւիտեան մնայ Աստուծոյ առաջին․ ողորմութիւն և ճշմարտութի՛ւն պատրաստիր՝ որ պահեն նորան ։

8 Սրահամար քո անունիդ յաւիտեան սաղմոս կասեմ՝ որ իմ ուխտերըն օրէցօր վճարեմ ։

## ՍԱՂՄՈՍ · ԿԲ ։

Երգողների գլխաւորին Իդիթումայ համար․ Դաւթի սաղմոս ։

Իրաւի՛ որ իմ անձս հանգստ մտիկ է տալիս Աստուծոյն․ նորանից է գալիս իմ փրկութիւնն ։

2 Իրաւի՛ որ նա՛ է իմ վէմս և իմ փրկութիւնն, իմ ապաւէնն՝ որ աւելի չըշարժվիմ ։

3 Մ՚ինչև ե՞րբ էք վեր կենում մարդոյ վերայ՝ որ ամէնքդ սպանէք նորան․ ինչպէս ծռված պատ և խախտված պարիսպ ։

4 Մ՛ենակ խորհուրդ են անում՝ որ ի-
րան բարձրութենիցն վէր քցեն նորան.
հաւանեն կենում ստութեան, իրանց բե-
րանովն օրհնումեն՝ և իրանց սրտումն անի-
ծումեն. սէլա:
5 Ո՛վ իմ անձն՝ հանդարտ մնիկ տուր
Աստուծոյն. ինչու որ նորանից է գալի իմ
յոյսն:
6 Իրաւի՛ որ նա է իմ վէմն՝ իմ փրկու-
թիւնն՝ իմ ապաւէնն, որ չըշարժվիմ:
7 Աստուծոյ մօտն է իմ փրկութիւնն և
իմ փառքն. իմ զօրութեան վէմն և իմ
ապաւէնն Աստուծոյ մէջն է:
8 Յուսացէ՛ք նորան ամէն ժամանակ.
ո՜վ ժողովուրդներ՝ թափեցէ՛ք ձեր սըր-
տերըն նորա առաջին. Աստուած մեր ա-
պաւէնն է. սէլա:
9 Իրաւի՛ որ ցած մարդկանց որդիքն ու-
նայն են. և մեծ մարդկանց որդիքն սուտ.
երբոր կշռի մէջ դնվին՝ նորանք ամէն ու-
նայնութենից էլ թեթև են:
10 Մ՛ի յուսաք անիրաւութեան՝ և
զուր յոյս մի՛ դնէք յափշտակութեան վե-
րայ, եթէ հարստութիւնն շատանայ, սիրտ
մի՛ դնէք նորա վերայ:
11 Աստուած մին անգամ խօսեց. ես եր-
կու բան լսեցի. թէ զօրութիւնն Աս-
տուծոյն է:
12 Եւ քո է ողորմութիւնն Տէ՛ր՝ ինչու

որ դու մարդոյն հատուցումն կըտաս իրան գործքերին պէս ։

## ՍԱՂՄՈՍ ԿԲ.

Դաւիթի սաղմոս․ Երբոր նա Հրէաստանի անապատումն (չօլումն) էր ։

Ով Աստուած՝ դու ես իմ Աստուածն, առաւօտանց քեզ եմ մանդալիս․ իմ հոգիս ծարաւ է քեզ համար․ իմ մարմինս քեզ է ցանկանում՝ ցամաք և ծարաւ երկրի մէջ՝ որ տեղ որ ջուր չըկայ ։

2 Այսպէս սրբութեան տեղումն նայեցի քեզ՝ որ քո զօրութիւնըն և քո փառքըն տեսնեմ ։

3 Պատճառնոր՝ քո ողորմութիւնն լաւ է քան թէ կեանքն․ իմ պռօշներս պիտի գովեն քեզ ։

4 Այսպէս կօրհնեմ քեզ իմ կեանքումս․ քո անունովդ իմ ձեռներըս կըբարձրացնեմ ։

5 Իմ անձս կըկշտանայ ինչպէս փորի ճրագուով և պարարտութենով․ և իմ բերանս կօրհնէ ձէն ուրախ պռօշներով ։

6 Երբոր քեզ յիշումեմ իմ տեղաշորիս մէջն․ գիշերի ամէն պահերումն քեզ վերայ մտածումեմ ։

7 Ինչուոր՝ դու էլար ինձ օգնութիւն․ և քո թևերի շուաքումն կըցնծամ ։

8 Իմ անձս պինդ քո ետեւէն է ընկնում · քո աջդ հաստատ պահումէ ինձ :

9 Բայց նորանք որ իմ անձիս կորուստըն ուզումեն , վէր պիտի ընկնին երկրի անդունդն :

10 Սրի ձեռն կըմատնըվին · աղուէսների բաժին կըլինին

11 Բայց թագաւորն Աստուծով կուրախանայ · կըպարծենան էն ամէնքն՝ որ նորանով երդումեն ուտում · ինչուոր՝ կըխփվի նորանց բերանն՝ որ սուտ են խօսում :

## ՍԱՂՄՈՍ · ԿԳ ·

Երգեցողների գլխաւորին · Դաւթի սաղմոս :

Ո՛վ Աստուած՝ լսի՛ր իմ ձայնիս երբոր աղաչեմ քեզ · պահի՛ր իմ կեանքըս թշնամոյ ահիցն :

2 Ծածկի՛ր ինձ չարերի ժողովքիցն · նորանց բազմութենիցն՝ որ անօրէնութիւն են գործում :

3 Որ իրանց լեզուներըն սրումեն ինչպէս սուր · և դառնութեան խօսք են պատրաստում ինչպէս նետ ·

4 Որ թագուն ձգեն անմեղին վերայ · յանկարծ ձգումեն և չեն վախենում :

5 Չար բանըն զօրաւոր են անում ի-

րանց համար . պատմումեն որ թագուն որոգայթներ (Ծուղակներ) դնեն . և ասումեն՝ ո՛վ կը տեսնէ նորանց :

6 Նորանք անօրէնութիւններ են քըննում . Հնարված հնարներըն կատարումեն . և ամէն մէկի ներսն և սիրտն խոր է :

7 Բայց Աստուած նետ կըձգէ նորանց վերայ՝ յանկարծ խոց կըլինի նորանց :

8 Եւ նորանց լեզուն՝ իրանց վէր կըքցէ մինըն մընին վերայ . ամէնքն որ կըտեսնեն նորանց՝ կըփախչին :

9 Եւ ամէն մարդիք կըվախենան՝ և Աստուծոյ գործքերըն կըպատմեն՝ և նորա արածըն միտք կառնեն :

10 Արդարն ուրախ կըլինի Տէրովը՝ և նորան կըյուսայ . և կըպարծենան էն ամէնքն՝ որ ուղիղ են սրտով :

## ՍԱՂՄՈՍ. ԿԵ:

Երգողներու գլխաւորին . Դաւիթի սաղմոս . երգ :

Ո՛վ Աստուած՝ քեզ հանդստութենով գովումեն սիօնի մէջն , և քեզ ուխտ են հատուցանում :

2 Դու լսումես աղօթքին . ամէն մարմին քեզ մօտ է գալիս :

3 Անօրէնութիւնք զօրացան ինձ վե-

րայ, մեր ամպարշտութիւններըն դու ես քաւում ։
4 Երանի՛ նորան՝ որ դու ընտրումես և
ընդունում՝ որ քո սրահումն բնակվի ․
թող կըշտանանք քո տան՝ քո սուրբ տաճա-
րի բարիքներովն ։
5 Զարհուրելի կերպով՝ արդարութե-
նով կըլսես՝ մեզ մեր փրկութեան Աս-
տուած՝ որ երկրի ամէն ծայրերի և հե-
ռաւոր ծովի յոյսն ես ։
6 Որ սարերըն հաստատումէ իրան կա-
րողութեննովն ․ և զօրութիւն է հագած ։
7 Որ ծովի ձայնըն ցածացնումէ՝ նորա
ալիքների ձայնըն և ազգերի խռովութիւ-
նըն ։
8 Որ քո նշաններիցն վախենան նորանք՝
որ Երկրի ծայրերումն բնակվումեն ․ ինչոր
առաւօտն և իրիկունն դուրս է գալիս՝
նրան ցնծալ ես տալիս ։
9 Տես ես գալիս երկրին և խմացնումես
նորան ․ շատ հարստացնումես նորան ․ Աս-
տուծոյ գետն լիքն է ջրով ․ ցորեն ես պատ-
րաստում նորանց համար ․ ինչուոր՝ էս-
պէս պատրաստեցիր նորան ։
10 Դու խմացնումես նորա ակօսներըն ․
ցածացնումես նորա վարածըն ․ անձրևով
կակղացնումես նորան, և օրհնումես նորա
բուսածըն ։
11 Դու պսակումես տարին քո բարիք-

ներումն՝ և քո հետքերն պարարտութիւն են կաթեցնում :
12 Պարարտ են անապատի դաշտերն · և դարերն ցնծութիւն են հագած :
13 Արօտատեղերն հագած են ոչխարներով · և ձորերն ծածկված են ցորենով · աղաղակումեն ցնծութենով և օրհնումեն :

## ՍԱՂՄՈՍ · ԿԵ :

Երգողներուն գլխաւորին · սաղմոս երգ :

Ցնծութենով աղաղակեցէ՛ք դէպի Աստուած՝ ո՛վ ամէն երկիրներ :
2 Սաղմո՛ս ասացէք նորա անունի փառացն · փառաւո՛ր արէք նորա գովութիւնըն :
3 Ասացէ՛ք Աստուծոյն՝ քանի՛ զարմանալի են քո գործքերն · քո մեծ զօրութեան համար քո թշնամիներն ստութենով կըհնազանդվին քեզ :
4 Թո՛ղ ամէն երկիր քեզ երկրպագութիւն տայ և սաղմո՛ս ասէ քեզ · սաղմո՛ս ասէ քո անունիդ · Սելա :
5 Եկէ՛ք և տեսէ՛ք Աստուծոյ գործքերըն · որ նա զարմանալի է իւր գործքերումն մարդկանց որդոց վերայ :
6 Ծովըն ցամաք փոխեց · գետի միջումն անցկացան ոտով · էն տեղ մենք ուրախ էլանք նորանով :

7 Նա տիրապետում է իրան զօրութե-
նովն յաւիտեան, նորա աչքերն նայում են
հեթանոսներին վերայ. ապստամբվածներն
իսկի չբարձրանան. սէլա:
8 Ո՛վ ժողովուրդներ՝ օրհնեցէք մեր Աս-
տուծոյն. և լսե՛լ տուէք նորա գովութեան
ձայնըն:
9 Որ նա մեր անձներըն կեանքի մէջ
պահում է. և թող չի տալիս որ մեր ոտներն
ծռվին:
10 Դու փորձեցի՛ր մեզ ո՛վ Աստուած.
քննեցիր մեզ ինչպէս որ արծաթն քննվում է:
11 Մտցրիր մեզ որոգայթի մէջ. ծանր
բեռըն դրիր մեր մէջքին վերայ:
12 Մարդիք անցկացրիր մեր գլխին վե-
րայ. կրակի և ջրի մէջ մտինք. և դու հա-
նեցիր մեզ հանգիստ տեղ:
13 Ես կըմտնեմ քո տունն ողջակէզ
մատաղներով. կըհատուցանեմ քեզ իմ
ուխտերըն:
14 Էն որ իմ պռօշներս խոստացան՝ և
իմ բերանս խօսեց իմ նեղութեան ժամա-
նակումն:
15 Խոյերի (գօչերի) պարարտ ողջակէզ
մատաղներ կըմատուցանեմ քեզ խնկով.
պատարագ կըբերեմ արջառներ որձ այ-
ծերի հետ. սէլա:
16 Եկէ՛ք լսեցէ՛ք ամէնքդ՝ որ Աստուա-
ծանից վախում էք. և կըպատմեմ՝ թէ ինչ
արաւ նա իմ անձիս համար:

17 Կանչեցի դէպի նա իմ բերանովս՝ և
փառաբանեցի նորան իմ լեզուովս :
18 Եթէ ես անօրէնութիւն տեսնէի իմ
սրտումս , Տէրն չէր լսել ինձ :
19 Բայց Աստուած լսեց ինձ՝ և իմ ա-
ղօթքիս ձայնին նայեց :
20 Օրհնեալ է Աստուած՝ որ իմ ա-
ղօթքըս դէն չի քցում՝ և իրան ողորմու-
թիւնըն ինձանից չէ պակսում :

## ՍԱՂՄՈՍ . ԿԷ. :

Երգօղներին գլխաւորին . Նէգինօթ (սաղմոս) .
Երգի սաղմոս :

Աստուած ողորմի՛ր մեզ և օրհնի՛ր մեզ .
երեւցրո՛ւ քո երեսըդ մեզ վերայ . սելա :
2 Որ քո ճանապարհն ճանաչվի երկ-
րումս , և քո փրկութիւնն ամէն ազգերի
մէջն :
3 Թո՛ղ ժողովուրդներն գովանան քե-
զանից ով Աստուած . թո՛ղ ամէն ժողո-
վուրդներն գովանան քեզանից :
4 Թո՛ղ ժողովուրդներն ուրախանան և
ցնծան . ինչու որ՝ ժողովուրդներին դատու-
մես ուղղութեննով՝ և ազգերին առաջնոր-
դումես երկրի վերայ . սելա :
5 Թո՛ղ ժողովուրդներն գովանան քե-
զանից ով Աստուած . թո՛ղ ամէն ժողո-
վուրդներն գովանան քեզանից :

6 Երկիրն իրան պտուղըն տուաւ. Թո՛ղ
օրհնէ մեզ Աստուած մեր Աստուածն:
7 Թո՛ղ օրհնէ մեզ Աստուած՝ և նորա-
նից վախենան երկրի ամէն ծայրերն:

## ՍԱՂՄՈՍ. ԿԷ:

Երգեցիկներու գլխաւորին. Դաւթին սաղմոս.
երգ:

Թո՛ղ Աստուած վերկենայ՝ նորա թշնա-
միները ցրուին, և նորա երեսից
փախչին նորանք՝ որ ատումեն նորան:
2 Ինչպէս որ ծուխն փչանումէ, փչաց-
րո՛ւ նորանց. ինչպէս որ մոմն հալվումէ
կրակի առաջին, թո՛ղ ամպարիշտները
կորչին Աստուծոյ երեսից:
3 Բայց արդարները պիտի ուրախանան
և ցնծան Աստուծոյ առաջին՝ և զուարճա-
նան ուրախութենով:
4 Երգեցէ՛ք Աստուծոյն. սաղմո՛ս ասա-
ցէք նորա անունին. ճանապա՛րհ պատրաս-
տեցէք նորան՝ որ հեծած գալիս է անապա-
տի միջովն. Տէր է նորա անունն. և ցնծա-
ցէ՛ք նորա առաջին:
5 Նա որբերի հայր՝ և որբևերիների
դատաւոր է. Աստուած իրան սրբութեան
տեղումն:
6 Աստուած մենակ թողածներին բնա-

կացնումէ տան մէջն՝ կապվածներին հանումէ յաջողութեան մէջ , բայց ապըստամբվածներն բնակվումէն ցամաք տեղումն ։

7 Ով Աստուած՝ երբոր դու քո ժողովըրդի առաջն էիր գնում , երբոր անապատի մէջն անց էիր կենում . Սէլա .

8 Երկիրն դողաց՝ և երկինքն շաղ թափեց Աստուծոյ երեսիցն . էս սինա սարն էլ դողաց Աստուծոյ՝ իսրայէլի Աստուծոյ երեսիցն ։

9 Առատ անձրև ածեցիր ով Աստուած . քո ժառանգութիւնըն՝ որ վաստակված էր , դու զօրացրիր ։

10 Քո ժողովուրդն բնակվեցաւ էնտեղ . դու Աստուած՝ քո քաղցրութենովդ [illegible] պատրաստեցիր խեղճերին համար ։

11 Տէրն է տալիս խօսքըն . նորանք՝ որ աւետարանումէն՝ մեծ բազմութիւն են ։

12 Զօրութեանց թագաւորներն փախչումէն՝ և տան մէջ բնակվածն բաժանումէ աւարըն ([illegible]) ։

13 Երբոր չէք սահմանների մէջն հանգըստանումէք , աղաւնիների թևերին պէս փայլումէք . որ արծաթով պատած են՝ և նորանց թեփուրներն դեղին ոսկով ։

14 Երբոր ամենակարողն ցրվումէ թագաւորներին էն Երկրումն՝ փայլուն էլաւ ինչպէս ձիւն սաղմոնումն ։

15 Աստուծոյ սարն պարարտ սար է՝
բարձր և պարարտ սար ։
16 Ո՛վ բարձր սարեր՝ ինչո՞ւ էք նա–
խանձով նայում, Է՛ս է սարն՝ որ նորան
Աստուած հաւան կացաւ՝ որ բնակվի նո–
րանում. Տէրն յաւիտեան կը բնակվի նո–
րանում ։
17 Աստուծոյ կառքերն բիւրաւոր են՝
հազար հազարաւոր՝ Տէրն նորանց մի–
ջումն է Սինա սինայումն սրբութեան
տեղումն ։
18 Վեր ելար բարձր տեղերն՝ գերի ա–
ռիր գերութիւնըն. պարգևներ առիր
մարդկանց համար՝ և ապստամբվածներին
համար էլ, որ Աստուածն Եհովան բնակ–
վի ։
19 Օրհնեալ է Տէրն օրէցօր. Եթէ բե–
ռըն դնեն մեզ վերայ, նա՛ է մեր փրկու–
թեան Աստուածն ։ Սէլա ։
20 Աստուած մեզ համար է փրկու–
թեան Աստուած. և Տէր Աստուածն ա–
զատումէ մահիցն ։
21 Բայց Աստուած կը փշրէ իրան թշնա–
միների գլուխըն և նորանց մազաւոր գա–
գաթըն, որ գնումեն իրանց անօրէնու–
թեան մէջն ։
22 Տէրն ասաց. Բասանիցն յետ կը
դարձնեմ նորանց՝ ծովի անդունդիցն յետ
կը դարձնեմ նորանց ։

23 Որ քո ոտըն արիւնով թրջես՝ և քո
շների լեզուն նորան քո թշնամիներից լա-
կէ :

24 Տեսին քո գնացքըդ ով Աստուած՝
իմ Աստուծոյ և իմ՝ թագաւորի գնացքըն
սրբութեան մէջն :

25 Առաջ երգեցողներն գնացին՝ յետոյ
նուագարան (սազ) ածողներն . միջի տե-
ղումն դափ ածող կոյս աղջիկներն :

26 Ժողովարանների մէջն օրհնեցէ՛ք Տէր
Աստուծոյն՝ դուք որ Իսրայէլի աղբիւրից
էք :

27 Էնտեղ է փոքր բենիամինն՝ նորանց
տիրապետողն . յուդայի իշխաններն ի-
րանց ժողովքումն , զաբուղոնի իշխաններն
և նեփթաղիմայ իշխաններն :

28 Քո Աստուածն քեզ համար զօրու-
թիւն հաստատեց . զօրացրո՛ւ էն՝ որ մեզ
համար արիր ով Աստուած :

29 Քո տաճարին համար երուսաղէ-
մումն թագաւորներն ընծայ կըբերեն
քեզ :

30 Սաստի՛ր էն գազանին՝ որ եղէգի
(ղամիշէ) մէջն է . արջառների ժողովքին՝
ազգերի երինջներին հետ . որ երեսի վերայ
ընկնին արծաթի հատերով . ցրւի՛ր էն
ազգերըն որ կռիւ են կամենում :

31 Իշխանք կըգան եգիպտոսից . եթօ-
պացիքն իրանց ձեռներըն կըմեկնեն դէպի
Աստուած :

32 Երկրի՛ թագաւորութիւնք՝ երգե-
ցէ՛ք Աստուծոյն . սաղմոս ասացէք Տէրին .
Սէլա :
33 Նորան՝ որ յաւիտենից նստում է
երկնքի երկնքին վերայ . աՀա՛ իրան ձայ-
նովն զօրաւոր ձայն կտայ :
34 Զօրութիւն տուէք Աստուծոյն . Նո-
րա մեծ փառաւորութիւնն Իսրայէլի վերայ
է . և Նորա զօրութիւնն ամպերի մէջն :
35 Զարմանալի՛ ես քո սրբութեան տե-
ղումն ով Աստուած՝ Իսրայէլի՛ Աստուած .
Նա զօրութիւն և կարողութիւն է տալիս
ժողովրդին . օրՀնեալ է Աստուած :

## ՍԱՂՄՈՍ . ԿԸ :

Երգողներին գլխաւորին . շուշանի (տաղով) .
Դաւթինը (սաղմոս) :

Ապրեցրո՛ւ ինձ Աստուած՝ ինչու որ ջը-
րերն իմ անձիս վերայ Հասին :
2 Խոր ցեխի մէջ թաղվեցայ՝ որ իսկի
տեղ չըկայ . ջրերի խոր տեղն մտի՝ և
պտուտներն ինձ կուլ են տալիս :
3 Սատակված եմ իմ աղաղակելովն .
իմ կոկորդս (պօղազս) ցամաքեցաւ . իմ
աչքերս նուաղվեցան Աստուծոյն մտիկ
տալով :
4 Նորանք որ զուր տեղն ատում են ինձ

շատ են քան իմ գլխիս մազերն․ նորանք
որ զուր տեղն ինձ կամենում են կորցնել՝
և ինձ թշնամի են, զօրաւոր են․ ինչ որ
չեմ յափշտակել պէտք է վճարեմ ։
5 Ո՛վ Աստուած՝ դու գիտումես իմ
յիմարութիւնըն․ և իմ յանցանքներս քե-
զանից ծածկված չե՛ն ։
6 Թո՛ղ ինձ համար չի ամաչեն նորանք՝
որ քեզ սպասումեն Տէ՛ր՝ զօրութեանց
Տէ՛ր․ թո՛ղ ինձ համար ամօթ չըլինին նո-
րանք՝ որ քեզ խնդրումեն Իսրայէլի՛ Աս-
տուած ։
7 Պատճառոր՝ քեզ համար ես նախա-
տինքի համբերումեմ․ ամօթն ծածկումէ
իմ երեսըս ։
8 Օտար էլայ իմ եղբարցս՝ և անճա-
նանչ իմ մօր որդոցն ։
9 Պատճառոր՝ քո տան նախանձն կե-
րաւ ինձ․ և քեզ նախատինք տուօղների
նախատինքներն ինձ վերայ ընկան ։
10 Լաց եմ լինում՝ և անձնովս պաս
եմ պահում․ և նախատինք է լինում ինձ ։
11 Եւ իմ շորս քուրձ (սուգի շոր) արի՝ և
առակ էլայ նորանց ։
12 Նորանք որ դռներումն նստումեն՝
խօսումեն ինձ վերայ․ և նորանք որ հար-
բեցնող խմելիք են խմում՝ երգումեն ինձ
վերայ ։
13 Բայց ես աղօթք եմ անում քեզ

Տէ՛ր՝ ընդունելի ժամանակում · Աստուա՛ծ
քո առատ ողորմութեան համար լսի՛ր ինձ՝
քո փրկութեան ճշմարտութենովը :
14 Ապրեցրո՛ւ ինձ ցեխից՝ որ չըթաղ-
վիմ · թո՛ղ փրկվիմ ինձ ատողներիցն և
խոր ջրերիցն :
15 Թո՛ղ ջրերի պտուտներն չըյափըշ-
տակեն ինձ · և անդունդն կուլ չըտայ ինձ ·
և հորն իրան բերանըն չըխփէ ինձ վերայ :
16 Լսի՛ր ինձ Տէ՛ր՝ ինչու որ՝ լա՛ւ է քո
քաղցրութիւնդ · քո շատ ողորմութեան
պէս նայի՛ր ինձ վերայ :
17 Եւ քո երեսըդ յետ մի՛ դարձներ քո
ծառայիցն · ինչու որ՝ նեղացած եմ ես ·
շուտո՛վ լսի՛ր ինձ :
18 Մօտեցի՛ր իմ անձիս և փրկի՛ր
որան · իմ թշնամիներիս համար ապրեց-
րո՛ւ ինձ :
19 Դու գիտումես իմ նախատինքըս և
իմ ամօթըս և իմ խայտառակութիւնըս ·
քո առաջիդ են ամէնքն՝ որ ինձ նեղացնու-
մեն :
20 Նախատինքն կոտրեց իմ սիրտըս՝ և
հիւանդ էլայ · և մտիկ եմ տալիս թէ մինն
ինձ հետ տրտմի՝ և չըկայ · և մխիթարիչներ
էլ · և չեմ գտնում :
21 Եւ կերակուրի տեղ ինձ լեղի են
տալիս · և իմ ծարաւութեան մէջն՝ քացախ
են խմացնում ինձ :

22 Նորանց սեղանն իրանց առաջին ո-
րոգայթ (Թակարդ) և հատուցումն և ակա-
նատ պիտի դառնայ:
23 Նորանց աչքերն պիտի խաւարին՝
որ չըտեսնեն. և նորանց մէջքըն միշտ կը-
ռացրո՛ւ:
24 Թափի՛ր նորանց վերայ քո սրտմտու-
թիւնըն. և քո խիստ բարկութիւնն թո՛ղ
հասնէ նորանց վերայ:
25 Նորանց բնակարաններն աւերւած
պիտի լինին՝ և ո՛չ ով չըլինի որ նորանց
տըներումն բնակվի:
26 Պատճառոր՝ հալածումեն նորան որ
դու զարկեցիր. և քո խոցվածների ցաւերին
համար պատմումեն:
27 Մե՛ղք դիր նորանց մեղքին վերայ՝
որ քո արդարութեանն չըհասնեն:
28 Կենդանեաց գրքիցն պիտի ջնջվին՝
և արդարներին հետ չըգրվին:
29 Բայց ես աղքատ և ցաւով լցված
եմ. ո՛վ Աստուած՝ թո՛ղ քո փրկութիւնդ
ապրեցնէ ինձ:
30 Ես կըգովեմ Աստուծոյ անունըն
երգով. և կըփառաբանեմ նորան գոհու-
թենով:
31 Եւ էս աւելի հաճոյ կըլինի Տէրին՝
քան պարարտ եզն՝ որ եղջիւր (պօզ) և
կճղակ (պճեղ) ունի:
32 Խեղճերն կըտեսնեն և կուրախա-

նան· դուք՝ որ Աստուծոյն խնդրումէք՝
ձեր սիրտն կենդանի կըլինի:
33 Պատճառնոր՝ Տէրն լսումէ խեղ-
ճերին· և իրան կապվածներին չի անար-
գում:
34 Թո՛ղ գովեն նորան երկինքն և եր-
կիրս· ծովն և էն ամէնն՝ որ ման է գալիս
նորանց միջումն:
35 Պատճառնոր՝ Տէրն կըփրկէ սիօնըն·
և յուդայի քաղաքներըն կըշինէ· և կըբը-
նակվին էնտեղ՝ և կըժառանգեն նորան:
36 Եւ քո ծառաների զաւակներն կըվայ-
յելեն նորան՝ և նորանք որ քո անունըդ
սիրումեն՝ կըբնակվին նորանում:

## ՍԱՂՄՈՍ · ԿԹ:

Երգեցիկների գլխաւորին· Դաւիթի (սաղմոս)·
յիշատակի համար:

Աստուած շո՛ւտ արա ինձ փրկելոյ հա-
մար· Տէ՛ր ինձ օգնելոյ համար:
2 Թո՛ղ ամաչեն և ամօթ լինին նորանք՝
որ իմ անձըս խնդրումեն· Թո՛ղ յետ դառ-
նան և ամօթ լինին նորանք որ ինձ չար են
ուզում:
3 Թո՛ղ իրանց ամօթովն յետ դառնան
նորանք՝ որ ինձ ասումեն՝ վա՛հ՝ վա՛հ:
4 Թո՛ղ ցնծան և ուրախանան քեզա-

նով էն ամէնքն՝ որ քեզ խնդրումեն. և նորանք որ քո փրկութիւնըն սիրումեն, միշտ ասեն՝ մեծ է Աստուած ։

5 Բայց ես խեղճ եմ և աղքատ ո՛վ Աստուած. շուտո՛վ հասիր ինձ մօտ. դու ես իմ օգնականն և փրկիչն. Տէ՛ր մի՛ ուշանար ։

## ՍԱՂՄՈՍ. Հ ։

Տէ՛ր քեզ եմ յուսացած՝ թո՛ղ չի ամաչեմ յաւիտեան ։

2 Քո արդարութենովդ ապրեցրո՛ւ և ազատի՛ր ինձ. խոնարհացրո՛ւ քո ականջներըդ ինձ մօտ՝ և փրկի՛ր ինձ ։

3 Ապաւինութեան վէ՛մ լե՛ր ինձ համար՝ որ միշտ քեզ մօտ փախչեմ. դու հրամայեցիր փրկել ինձ. ինչուոր՝ իմ վէմն և իմ բերդն դու ես ։

4 Ի՛մ Աստուած՝ փրկի՛ր ինձ ամպարըշտի ձեռքիցն. անօրէն և բռնաւոր մարդոյ ձեռքիցն ։

5 Պատճառնոր՝ դու իմ ապաւինութիւնն ես Տէ՛ր Տէ՛ր. իմ յոյսն իմ մանկութենիցն ։

6 Քեզ վերայ հաստատվեցայ արգանդիցն՝ դո՛ւ ես իմ պահապանն իմ մօր փորիցն. իմ օրհնութիւնն միշտ քեզ համար է ։

7 Հրաշքի պէս եմ շատերին համար .
բայց դու ես իմ զօրաւոր ապաւէնն :
8 Թող իմ բերանս լցուի քո գովութե-
նովը . ամէն օր քո փառաւորութենովը :
9 Իմ ծերութեան ժամանակումն դէն
մի՛ քցեր ինձ . իմ զօրութեան պակասե-
լոյ ժամանակումն մի՛ թողեր ինձ :
10 Պատճառնոր՝ իմ թշնամիներս խօ-
սումեն ինձ վերայ . և նորանք որ իմ ան-
ձիս սպասումեն՝ իրար հետ խորհուրդ են
անում :
11 Եւ ասումեն՝ Աստուած թողեց նո-
րան . հալածեցէ՛ք և բռնեցէ՛ք նորան . ին-
չու որ՝ ոչ ով չըկայ որ փրկէ նորան :
12 Ո՛վ Աստուած՝ մի՛ հեռանար ինձա-
նից . իմ Աստուած՝ շուտ արա որ օգնես
ինձ :
13 Թո՛ղ ամաչեն և կորչին նորանք՝ որ
իմ անձիս հակառակ են կենում . թող նա-
խատինքով և ամօթով ծածկուին նորանք՝
որ ինձ չար են ուզում :
14 Բայց ես միշտ կըսպասեմ՝ և քո ա-
մէն փառաւորութիւններին վերայ կա-
ւելացնեմ :
15 Թո՛ղ իմ բերանս պատմէ քո արդա-
րութիւնըն . ամէն օր քո փրկութիւնըն .
ինչու որ՝ ես չեմ գիտում նորանց համա-
րըն :
16 Ես կըգնամ Տէր Աստուծոյ զօրու-

թենոյն · ես կըյիշեմ մինակ քո արդարու-
թիւնըն :
17 Ո՛վ Աստուած՝ դու սորվըցրիր ինձ
իմ մանկութենիցն · և մինչև հիմիկ պատ-
մումեմ քո հրաշքներըն :
18 Եւ հիմիկ մինչև իմ ծերութիւնն և ա-
լեւորութիւնն մի՛ թողիր ինձ Աստուած ,
մինչև որ քո բազուկըն պատմեմ էն ազգին՝
և քո զօրութիւնըն էն ամէնին՝ որ գա-
լու է :
19 Եւ քո արդարութիւնն շատ բարձր
է ո՛վ Աստուած · որ դու մեծամեծ բաներ
ես անում · ո՛վ Աստուած՝ ո՞վ է քեզ
նման :
20 Դու որ շատ նեղութիւններ և չար-
չարանք ցըց տուիր ինձ , մին էլ կենդանի
ես անում ինձ՝ և երկրի անդընդիցն մին էլ
հանումես ինձ :
21 Դու շատացնումես իմ մեծութիւնըն՝
և մին էլ մխիթարումես ինձ :
22 Ապա կըգոհանամ քեզանից ո՛վ Աս-
տուած՝ նուագարանով (սազով) · քո ճըշ-
մարտութեան համար սաղմոս կասեմ քեզ
քնարով · ո՛վ Իսրայէլի սուրբդ :
23 Իմ պռօշներս կըցնծան՝ երբոր
սաղմոս կասեմ քեզ · և իմ անձս՝ որ դու
փրկեցիր :
24 Եւ իմ լեզուս էլ ամէն օր կըխօսի քո
արդարութեան համար · ինչուոր՝ ամաչե-

ցին և ամօթ էլան նորանք՝ որ ինձ չար էին
ուզում :

## ՍԱՂՄՈՍ · ՀԱ ։

(Սաղմոս) սողոմոնին վերայ :

Աստուած՝ քո իրաւունքներըն թագա-
ւորին տուր · և քո արդարութիւներն
թագաւորի որդոյն :
2 Նա քո ժողովրդին կըդատէ արդա-
րութենով · և քո խեղճերին իրաւուն-
քով :
3 Սարերն խաղաղութիւն կըբուսացնեն
ժողովրդին համար · և դարերն՝ արդա-
րութենով :
4 Նա իրաւունք կանէ ժողովրդի աղ-
քատներին · խեղճերի որդիքըն կըփրկէ , և
նեղացնօղներին կըջարդէ :
5 Կըվախենան քեզանից քանի որ արե-
գակն կայ՝ և քանի որ լուսինն կըմնայ ազ-
գից մինչև ազգ :
6 Նա կըգայ ինչպէս անձրև՝ հնձած
խոտի վերայ · ինչպէս շաղ՝ որ երկիրըն
թրջումէ :
7 Նորա օրերումն կըծաղկի արդարն ·
և շատ խաղաղութիւն՝ մինչև որ լուսին էլ
չըլինի :
8 Եւ նա կըտիրապետէ ծովից մինչև ի
ծով · և գետից մինչև երկրի ծայրերն :

9 Նորա առաջին գետինն կընկնին նո-
րանք՝ որ անապատի մէջն են բնակվում ․ և
նորա թշնամիներն փոշի կըլիզեն ։
10 Թարսիսի և կղզիների թագաւոր-
ներն ընծայ կըմատուցանեն՝ Շաբայի և սա-
բայի թագաւորներն պարգև կըբերեն ։
11 Եւ ամէն թագաւորներն երկրպա-
գութիւն կըտան նորան ․ և ամէն ազգերն
կըծառայեն նորան ։
12 Պատճառոր՝ նա կըփրկէ խեղճին՝ որ
աղաղակումէ ․ և աղքատին և նորան՝ որ
օգնական չունի ։
13 Նա կըխղճայ տկարին և խեղճին ․
և խեղճերի անձներըն կապրեցնէ ։
14 Նենգութենից և բռնութենից կը
փրկէ նորանց անձներըն ․ և նորանց ա-
րիւնն պատուական կըլինի նորա առաջին ։
15 Եւ նա կապրի՝ և կըտան նորան շա-
բայի ոսկուցն ․ և աղօթք կանեն նորա հա-
մար ամէն ժամանակ ․ ամէն օր կօրհնեն նո-
րան ։
16 Ցորենոյ առատութիւն կըլինի երկ-
րի մէջն՝ սարերի գըլխներին վերայ, նորա
պտուղն կըշարժվի ինչպէս լիբանանն ․ և
քաղաքիցն կըծաղկին ինչպէս երկրի խոտն ։
17 Նորա անունն կըլինի յաւիտեան ․
դեռ քանի որ արեգակն կըկենայ, նորա
անունն կըմնայ՝ և կօրհնըվին նորանով ․ ա-
մէն հեթանոսներն երանի կըտան նորան ։

18 Օրհնեալ է Տէր Աստուած՝ Իսրայէլի Աստուածն. որ մենակ հրաշք է անում:

19 Եւ օրհնեալ է նորա փառաւոր անունն յաւիտեան. և թող ամէն երկիր լցվի նորա փառքովը. ամէն և ամէն:

20 Վերջացան Յեսսէի որդի Դաւթի աղօթքները:

## ՍԱՂՄՈՍ. ՀԳ:

Ասափայ սաղմոս:

Իրաւի՛ որ Աստուած բարի է Իսրայէլին համար. նորանց համար՝ որ ուղիղ են սրտով:

2 Բայց քիչ մնաց որ իմ ոտներս ծռվէին՝ և շատ քիչ՝ որ իմ գնացքս թեքվէին:

3 Պատճառը՝ նախանձով լցվեցայ յիմարներին վերայ՝ երբոր ամպարիշտների խաղաղութիւնը տեսնումէի:

4 Ինչուոր՝ ցաւ չըկայ նորանց մինչև իրանց մահը. և նորանց մարմինն փափուկ է:

5 Նորանք մարդոյ պէս նեղութիւն չեն քաշում՝ և ուրիշ մարդկանց հետ չեն տանջվում:

6 Սրահամար ամբարտաւանութիւնն վզանոցի պէս պատումէ նորանց՝ և բռնու-

թիւնն զարդարանքի պէս ծածկումէ նո-
րանց :
7 Նորանց աչքերն պարարտութենից
դուրս են գալիս. նրանց սրտի խորհուրդ-
ներին պէս գնումեն :
8 Ծիծաղումեն՝ և չարութենով խօսու-
մեն բռնութեան համար. բարձր տեղից են
խօսում :
9 Իրանց բերանըն երկնքումն են դը-
նում՝ և նորանց լեզուն երկրի միջումն
ման է գալիս :
10 Արահամար նորա ժողովուրդն էս
տեղ է դառնում՝ և լիութենով ջուր են
գտնում իրանց համար :
11 Եւ ասումեն՝ Աստուած ի՞նչպէս է
գիտում, և գիտութի՞ւն կայ բարձրելոյ
մօտն :
12 Ահա՛ սորանք են ամպարիշտներն՝ որ
յաջողակ են աշխարհքումս, և աւելաց-
նումեն հարստութիւնըն :
13 Իրաւի՛ որ իմ սիրտըս զուր տեղն եմ
սրբում. և իմ ձեռներըս սրբութենով
լուանում :
14 Եւ ամէն օր տանջվումեմ՝ և իմ պա-
տիժս հէնց առաւօտանց կայ :
15 Եթէ ասէի՝ թէ ես էլ նորանց նման
կըխօսիմ. ահա՛ քո որդոց ազգին նենգու-
թիւն կանէի :
16 Եւ միտք արի՝ որ իմանամ էս, բայց
դժուար էր իմ աչքերիս առաջին .

17 Մ՚ինչեւ որ մտնումէի Աստուծոյ սրբութեան տեղն. եւ նորանց վերջըն միտքըս էի առնում՝:

18 Իրաւի՛ որ դու նորանց հեշտ սղքըլվելոյ տեղ ես դնում՝. կործանվելոյ մէջ ես քցում՝ նորանց:

19 Ինչպէս յանկարծակի փչանումեն սաստակվումեն կորչումեն զարհուրանքով:

20 Ինչպէս երազ է զարթնանալուցն ետեւ, էնպէս դու Տէր՝ երբոր զարթնանաս, կանարգես նորանց պատկերըն:

21 Երբոր դառն ցաւեցաւ իմ՝ սիրտս, եւ իմ՝ երիկամունքներս խոցեցին ինձ.

22 Ապա ես յիմար էլայ եւ չիմացայ. էնպէս անասուն էլայ քո առաջին:

23 Նայց միշտ քեզ հետ էլայ. դու իմ՝ աջ ձեռիցս բռնեցիր:

24 Դու առաջնորդումես ինձ քո խորհրդով. եւ վերջն փառքով կընդունես ինձ:

25 Ի՞նչ կայ ինձ համար երկնքումն՝ եւ քեզանից ջոկ էլի չեմ՝ ուզում՝ երկրի վերայ:

26 Թէ եւ իմ՝ մարմինս եւ իմ՝ սիրտս մաշվին, էլի Աստուած յաւիտեան իմ՝ սրտիս զօրութիւնն եւ իմ՝ բաժինն է:

27 Պատճառն որ՝ ահա՛ նորանք որ հեռանումեն քեզանից՝ կորչին. դու կըսատկես ամէնին՝ որ քեզ դէմ՝ շնութիւն են գործում՝:

28 Բայց ինձ համար բարի է՝ մօտենալ
Աստուծոյն . իմ յոյսըս Տէր Աստուծոյն
եմ դնում՝ . որ քո ամէն գործքերն պատ-
մեմ՝ ։

## ՍԱՂՄՈՍ ՀԴ. ։

Ասափայ խրատականութեան ։

Ո՛վ Աստուած՝ ինչո՞ւ ես դէն քցում մեզ
իսպառ՝ և քո բարկութիւնդ բորբոքված
է քո արօտի ոչխարների վերայ ։
2 Յիշի՛ր քո ժողովըրդին որ առաջար
սկզբից՝ և փրկեցիր որ քեզ ժառանգու-
թեան վիճակ լինի , էս սիօնի սարըն՝ որ
նորանում բնակված ես ։
3 Բարձրացրո՛ւ քո ոտներըն էն յա-
ւիտենական աւերմունքներին վերայ , որ
թշնամին ամէնըն ապականեց սրբութեան
տեղումն ։
4 Քո հակառակողներըն գոռգոռումն
քո ժողովարանի մէջն . իրանց նշաններըն
նշանի տեղ են դնում ։
5 Նա երևումէ ինչպէս մինն՝ որ կացի-
ներն բարձրացնումէ անտառի (մէշայէ) վե-
րայ ։
6 Եւ հիմիկ նորա ամէն շինովի զարդա-
րանքըրն քանդեցին կացիններով և մըրճե-
րով (չաքուչներով) ։
7 Կրակի մէջ քցեցին քո սրբութիւնըն .

գետինն գցելով պղծեցին քո անունի
բնակարանըն ։
8 Իրանց սրտերումն ասացին. թող
իրար հետ կորցնենք սորանց. այրեցին
Աստուծոյ ամէն ժողովարաններըն երկրի
մէջ ։
9 Մեր նշաններըն չենք տեսնում. և
էլ մարգարէ չըկայ. և ոչ էլ մէկը՝ որ գի-
տենայ թէ մինչև ե՞րբ կըլինի ։
10 Ո՛վ Աստուած՝ մինչև երբ նախա-
տինք կըտայ նեղացնողն. միթէ թշնամին
մինչև իսպառ պիտի անարգէ՞ քո անու-
նըդ ։
11 Ինչո՞ւ ես յետ դարձնում քո ձեռըդ
և աջըդ. հանի՛ր նորան քո ծոցիցդ և կորց-
րու նորանց ։
12 Աստուած է իմ թագաւորն սկզբիցն.
նա՛ փրկութիւն արաւ երկրի միջումն ։
13 Դու ծովըն պատառեցիր քո զօրու-
թենովդ՝ վիշապ ձկների գլխներըն փշրե-
ցիր ջրերի միջումն ։
14 Դո՛ւ ջարդեցիր վիշապի գլուխըն՝ և
նորան կերակուր տուիր ժողովըրդին անա-
պատի միջումն ։
15 Դու բղխացրիր աղբիւրներ և առու-
ներ. դո՛ւ ցամաքացրիր սաստիկ գետեր ։
16 Քո է ցերեկն և քո գիշերն. դու
պատրաստեցիր լոյս և արեգակըն ։
17 Դո՛ւ հաստատեցիր երկրի ամէն սահ-

մաններըն. դու ստեղծեցիր ամառըն և ձմեռըն:

18 Այս մի՛տքդ բեր էս՝ որ թշնամին նախատինք է տալիս Տէրին. և յիմար ազգ անարգումէ քո անունըդ:

19 Մ՚ի՛ մատներ գազանին քո տատրակի անձըն. մի՛ մոռանար իսպառ՝ քո աղքատների ժողովքըն:

20 Նայի՛ր քո ուխտին վերայ. ինչու որ երկրի խաւար տեղերըն՝ անօրէնութեան բնակարաններով լցված են:

21 Թո՛ղ խեղճն յետ չդառնայ ամօթով. թո՛ղ խեղճն և աղքատն օրհնեն քո անունըդ:

22 Վե՛ր կաց ո՛վ Աստուած՝ դատի՛ր քո դատաստանըն. յիշէ՛ր էն նախատինքըն, որ յիմարն ամէն օր քեզ վերայ է դնում:

23 Մ՚ի՛ մոռանար քո թշնամիների ձայներըն՝ և քեզ դէմ վերկացածների խռովութիւնըն. որ ամէն ժամանակ բարձրանումէ:

## ՍԱՂՄՈՍ. ՀԵ:

Երգեցողների գլխաւորին. մի՛ ապականիր. Ասափայ սաղմոս. երգ:

Գոհանումենք քեզանից ո՛վ Աստուած՝ գոհանումենք, և քո անունդ մօտ է՝ քո հրաշքներըն պատմումեն քեզ համար:

2 Երբոր պատշաճ ժամանակ կըստա-
նամ, ուղի՛ղ կըդատեմ ։
3 Երկիրն՝ և նորա ամէն բնակիչներն
մաշվեցան · ես նորա սիւներըն կըհաստա-
տեմ ։
4 Ասացի յիմարներին՝ թէ յիմարու-
թիւն մի՛ գործէք · և ամպարիշտներին՝ թէ
եղջիւր (պօղ) մի՛ բարձրացնէք ։
5 Ձեր եղջիւրըն դէպի բարձր տեղն մի՛
բարձրացնէք · հաստ վզով մի՛ խօսիք ։
6 Պատճառնոր՝ ո՛չ արևելքից և ո՛չ
արևմուտքից և ոչ անապատից է գալիս
բարձրանալըն ։
7 Բայց Աստուած է դատաւոր · նա էս
խոնարհացնումէ՝ և էն բարձրացնումէ ։
8 Ինչուոր՝ բաժակ (թաս) կայ Տէրի
ձեռունն · և գինին պղտորութենով լցված
եփումէ · և նա թափումէ նորանից · բայց
երկրի ամէն ամպարիշտներն՝ նորա մրուր-
ներըն (տորտուլարը) պիտի քամեն և
խմեն ։
9 Բայց ես յաւիտեան կըպատմեմ ·
սաղմոս կասեմ յակոբայ Աստուծոյն ։
10 Եւ ամպարիշտների ամէն եղջիւր-
ները կըփշրեմ · արդարների եղջիւրներն
կըբարձրանան ։

# ՍԱՂՄՈՍ. ՀԵ:

Երգեցիկների գլխաւորին. Նեգինօթ (սազով).
Ասափայ սաղմոս. երգ:

Աստուած յայտնի է Հրէաստանի մէջն.
նորա անունն մեծ է Իսրայէլի մէջն:
2 Նորա խորանն է Սաղեմի մէջն. և նո-
րա բնակարանն՝ Սիօնի մէջն:
3 Այնտեղ փշրեց աղեղի թռչող նետե-
րը՝ վահանը ղալքանը սուրը և կռիւը
սելա:
4 Դու լուսաւոր ես՝ աւելի փառաւոր
քան յափշտակութեան սարերն:
5 Սրտով զօրաւորներն աւար (եաղմա)
եղան. ննջեցին իրանց քնովն. և զօրութեան
մարդիկն չգտին իրանց ձեռները:
6 Քո յանդիմանութիւնիցն Յակոբայ Աստուած՝ քո սաստե-
լուցն քնով թմրեցան կառքերը (կառանէլ-
ները) և ձիանքը:
7 Դու ահաւոր ես՝ և ո՞վ կրկենայ քո
առաջին քո բարկութեան ժամանակումն:
8 Դու երկնքիցն լսել ես տալիս դատաս-
տանըն. երկիրն վախենում և լուռ է կե-
նում:
9 Երբոր Աստուած վեր է կենում դա-
տաստան անելու, երկրի ամէն խեղճերըն
փրկելու համար. սելա:

10 Պատճառոր՝ մարդկանց բարկու-
թիւնն քեզ համար փառք կըդառնայ · Եր-
բոր մնացած բարկութիւնըն գօտկի պէս
Քէջոձէ կըկապես :
11 Ուխտ դրէք և կատարեցէ՛ք ձեր Տէր
Աստուծոյն · ամէնքն որ նորա չորս կող-
մումն են՝ թո՛ղ ընծայ բերեն ահաւորին :
12 Որ նա ցածանումէ իշխանների հո-
գին · և ահաւոր է երկրի թագաւորներին
վերայ :

## ՍԱՂՄՈՍ · ՀԷ։

Երգեցիկների գլխաւորին · Իդիթունեայ համար · Ասափայ սաղմոս :

Իմ ձայնս դէպի Աստուած է՝ և ես կան-
չումեմ դէպի նա . և իմ ձայնս դէպի
Աստուած է և նա կըլսէ ինձ :
2 Իմ նեղութեան օրումն Տէրին եմ
խնդրում · իմ ձեռս գիշերումն մեկնած է և
չի թուլանում · իմ անձս չի կամենում
մխիթարվիլ :
3 Յիշումեմ Տէրին՝ և անհանգիստ եմ ·
միտք եմ անում և իմ հոգիս մաշվումէ ·
Սէլա :
4 Իմ աչքերի թրթեռունքըն արթուն ես
պահում · խռովված եմ և չեմ կարող
խօսիլ :

5 Մտածում եմ առաջվան օրերը՝ յաւիտեննից եղած տարիները :

6 Յիշում եմ գիշերումն իմ երգելը . խօսում եմ իմ սրտիս հետ՝ և իմ հոգիս քննութիւն է անում :

7 Մի՞ թէ Տէրն յաւիտեան դէ՞ն կըքըցէ , և էլ խնկի քաղցրութիւն չի՞ ցոյց տալ :

8 Մի՞ թէ յաւիտեան կըպակասի՞ նորա ողորմութիւնն՝ և նորա խօսքն կըվերջանայ՞ ազգից մինչև ազգ :

9 Մի՞ թէ մոռացա՞ւ Աստուած շնորհք ցոյց տալ՝ միթէ բարկութեննով արգելե՞ց իրան ողորմութիւնքն · սելա :

10 Նայց ես ասում եմ՝ է՛ս է իմ ցաւս · բարձրեալոյ ձեռն կարող է նա փոխել :

11 Յիշում եմ Տէրի գործքերը · ինչու որ՝ յիշում եմ քո հրաշքները յաւիտեննից :

12 Քննում եմ քո ամէն գործքերը՝ և միտք եմ առնում քո արածները :

13 Ով Աստուած՝ քո ճանապարհն սըրբութեան մէջն է · ո՞ր Աստուած է մեծ ինչպէս մեր Աստուածն :

14 Դու ես Աստուած՝ որ հրաշք ես անում · դու ցոյց տուիր քո զօրութիւնքն ժողովուրդների միջումն :

15 Դու քո բազկովդ ([illegible]) փրկեցիր քո ժողովրդին՝ յակոբայ և յօսեփայ որդոցն : սելա :

16 Տեսին քեզ ջրերն ո՛վ Աստուած՝
տեսին քեզ ջրերն ու դողացին . և ան-
դունդներն սարսափեցան :
17 Ամպերն ջուր թափեցին՝ ամպերն
ձայն հանեցին և քո նետերն գնացին :
18 Քո որոտմունքի ձայնն էր երկնքի
պտուտներումն . փայլակներն լուսաւորեցին
բոլոր աշխարհքըն . երկիրն դղրդաց և դո-
ղաց :
19 Քո ճանապարհդ ծովումն էր և
քո շաւիղներն շատ ջրերի մէջն . և քո հետքն
(հետքերն) չըյայտնըւեցան :
20 Առաջնորդեցիր քո ժողովըրդին ինչ-
պէս ոչխարի հօտի ([illegible]) Մովսէսի և Ա-
հարօնի ձեռովն :

## ՍԱՂՄՈՍ . ՀԸ :

### Ասափայ վարդապետութիւն :

Ականջ դիր իմ օրէնքին՝ ո՛վ իմ ժողո-
վուրդ՝ և ձեր ականջներըն խոնարհաց-
րէ՛ք դէպի իմ բերանիս խօսքերն :
2 Ես առակով կըբանամ իմ բերանըս՝
դուրս կըբղխեմ ծածկըւած բաներ հին ժա-
մանակից :
3 Զոր լսեցինք և ճանաչեցինք՝ և մեր
հարքն պատմեցին մեզ .
4 Մենք չենք թագցնում նորանց որ-

դիքներից · յետոյ եկող ազգին պատմու-
մենք Տէրի գովասանքըն՝ և նորա զօրու-
թիւնըն և նորա հրաշքներըն՝ որ արաւ :
5 Նա վկայութիւն հաստատեց Յակօ-
բայ մէջն և օրէնք դրաւ Իսրայէլի մէջն · էն
որ պատուիրեց մեր հարանցն՝ որ էն սո-
վորցնեն իրանց որդոցն :
6 Որ նոր եկող ազգն իմանայ՝ էն որ-
դիքն որ կըծնվին · նա ալ վերկենան և ի-
րանց որդոցն պատմեն :
7 Որ նորանք իրանց յոյսըն Աստուծոյ
վերայ դնեն՝ և չըմոռանան Աստուծոյ
գործքերըն՝ և նորա պատուիրանքներըն
պահեն :
8 Եւ իրանց հարանց նման չըլինին
խստավիզ և դառնացնող ազգ · էնպէս
ազգ՝ որ իրան սիրտն չըպատրաստեց՝ և նո-
րա հոգին չըհաստատվեցաւ Աստուծոյ վե-
րայ :
9 Եփրեմի որդիքն որ զէնք հագած ա-
ղեղըն էին ձգում՝ պատերազմի օրումն
փախան :
10 Աստուծոյ ուխտըն չըպահեցին՝ և
նորա օրէնքի մէջն չըկամեցան գնալ :
11 Եւ մոռացան նորա գործքերըն և
նորա հրաշքներըն որ ցոյց էր տուել նո-
րանց :
12 Նորանց հարանց առաջին հրաշք
արաւ եգիպտոսի երկրումն՝ տայանի դաշ-
տումն :

13 Նա ծովըն պատառեց և անցկացրուց
նորանց. և ջրերըն պարըսպի պէս կանգ-
նացրուց:
14 Ցերեկն առաջնորդեց նորանց ամ-
պով՝ և ամէն գիշեր կրակի լուսով:
15 Վէմերըն պատառեց անապատի մի-
ջումն՝ և խմացրուց նորանց ինչպէս շատ
խոր տեղից:
16 Ջրեր հանեց վէմիցն և ջրեր վէր
բերաւ գետերի պէս:
17 Բայց էնպէս էլ աւելացան մեղանչել
նորա դէմ՝ և դառնացնել բարձրելոյն ան-
ջուր տեղումն:
18 Եւ փորձեցին Աստուծոյն իրանց
սրտերումն. կերակուր խնդրելով իրանց
անձներին համար:
19 Եւ Աստուծոյ դէմ խօսեցին և աս-
ցին. մի թէ կարո՞ղ կըլինի Աստուած սե-
ղան պատրաստել անապատումն:
20 Ահա՛ վէմին զարկեց և ջրեր դուրս
բըղխեցին՝ և առուներ դուրս թափվեցան.
Բայց մի թէ հաց էլ կըկարենայ տա՞լ. մի
թէ միս կըպատրաստէ՞ իրան ժողովըրդին
համար:
21 Սրա համար լսեց Տէրն և խիստ բար-
կացաւ. և կրակ բորբոքվեցաւ Յակոբայ
մէջն և բարկութիւն վերկացաւ Իսրայէլի
վերայ:
22 Որ չըհաւատացին Աստուծոյն՝ և չը-
յուսացան նորա փըրկութեանն:

23 Եւ վերևիցն հրաման տուաւ ամպե-
րին՝ և երկընքի դռներըն բաց արաւ ։
24 Եւ անձրևի պէս մանանայ թափեց
նորանց վերայ կերակուրի համար . և
երկնքի ցորենըն տուաւ նորանց ։
25 Մարդն հրեշտակների հաց կերաւ .
կերակուր ուղարկեց նորանց լիութենով ։
26 Նա երկնքումն վերկացրուց արևե-
լեան քամին . և իրան զօրութենովն մօտ ա-
ծեց հարաւային քամին ։
27 Եւ միս թափեց նորանց վերայ ինչ-
պէս փոշի՝ և թևաւոր թռչուններ ինչպէս
ծովի աւազ ։
28 Եւ նորանց բանակի (օրդու-ի) մէջ
քցեց՝ նորանց բնակարանների չորս կող-
մովն ։
29 Եւ կերին և շատ կըշտացան . և ի-
րանց ցանկութիւնըն տուաւ նորանց ։
30 Բայց դեռ որ չէին դադարած իրանց
ցանկութենիցն՝ և դեռ որ նորանց կերա-
կուրն իրանց բերանումն էր .
31 Աստուծոյ բարկութիւնն դուրս ե-
կաւ նորանց վերայ՝ և սպանեց նորանց պա-
րարտների միջումն՝ և գետնովը զարկեց Իս-
րայէլի երիտասարդներըն ։
32 Բայց էս ամէն բաներումս էլ աւելի
մեղանչեցին և չըհաւատացին նորա հրաշք-
ներին ։
33 Սրա համար պակասացրուց նորանց

օրերըն ունայնութեան մէջ. և նորանց տարիքըն ահուվախով :

34 Երբոր սպանումէր նորանց՝ խնդրումէին նորան, յետ էին դառնում. և առաւօտանց Աստուծոյն էին խնդրում :

35 Եւ յիշումէին՝ թէ Աստուած իրանց վէմն է և բարձրեալ Աստուածն իրանց փրկիչն :

36 Կեղծաւորութիւն էին անում նորա առաջին իրանց բերանովն՝ և իրանց լեզուովն սուտ էին ասում նորան :

37 Բայց նորանց սիրտն ուղիղ չէր նորա հետ. և հաւատարիմ չէին նորա ուխտի միջումն :

38 Բայց նա ողորմած էր քաւումէր անօրէնութիւնըն և չէր ապականում. և շատ անգամ դարձնումէր իրան բարկութիւնըն. և չէր վերկացնում իրան բոլոր սրտմտութիւնըն :

39 Նա յիշումէր՝ որ նորանք մարմին էն. քամի՝ որ գնումէ և էլ յետ չի դառնում :

40 Քանի՛ անգամ դառնացրին նորան անապատումն՝ և բարկացրին նորան անջուր տեղումն :

41 Եւ մին էլ փորձեցին Աստուծոյն՝ և Իսրայէլի սուրբին նեղացրին :

42 Չըյիշեցին նորա ձեռըն՝ էն օրումն՝ որ փրկեց նորանց թշնամուցն :

43 Որ իրան նշաններըն դրաւ եգիպ-
տոսի մէջն . և իրան հրաշքներըն տայանի
գաշտի մէջն :

44 Եւ արիւն փոխեց նորանց գետերըն
և նորանց առուներըն՝ որ չըկարացին
խմել :

45 Հանաճանճներ ուղարկեց նորանց
վերայ՝ որ ուտեն նորանց՝ և գորտեր՝ որ ա-
պականեն նորանց :

46 Եւ նորանց պտուղներըն տուաւ
թրթուրին՝ և նորանց վաստակըն մարա-
խին :

47 Նորանց որթերըն (ձաղնէրըն) փչաց-
րուց կարկտով և նորանց թզի ծառերըն
եղեմնով :

48 Նորանց անասուններըն մատնեց
կարկտին՝ և նորանց հօտերըն (ոչխարնէ-
րըն) կրակի կայծակներին :

49 Իրան բարկութեան բոցըն ուղար-
կեց նորանց վերայ՝ սրտմտութիւն , բար-
կութիւն և նեղութիւն՝ չար հրեշտակների
գընտովն (ղէօլէ-կօնն) :

50 Ճանապարհ պատրաստեց իրան
բարկութեան համար . նորանց անձներըն
չըպահեց մահիցն և նորանց կեանքըն մատ-
նեց ժանտամահին :

51 Եւ առաջինեկ որդիքներըն սպանեց
եգիպտոսումն՝ զօրութեան առաջին պտուղ-
ներըն քամայ բնակարաններումն :

52 Եւ ժողովրդին հանեց ինչպէս ոչ-
խարներ՝ և տարաւ նորանց անապատ ինչ-
պէս հօտ . (–է–րէ–) :
53 Եւ առաջնորդեց նորանց յուսով և
չըվախեցան . և ծովն ծածկեց նորանց
թշնամիներին :
54 Եւ նորանց ածեց սրբութեան սահ-
մանի մէջ՝ էս սարիս մօտ՝ որ նորա աջ
ձեռն ստացաւ :
55 Եւ հեթանոսներին դէն քցեց նորանց
երեսիցն՝ և վիճակով ժառանգութիւն
բաժանեց նորանց . և Իսրայէլի ցեղերըն
բնակացրուց նորանց բնակարաններումն :
56 Բայց նորանք փորձեցին և դառնաց-
րին բարձրեալ Աստուծոյն՝ և չըպահեցին
նորա վկայութիւններըն :
57 Եւ յետ դարձան և նենգաւորու-
թիւն արին ինչպէս իրանց հարքն . յետ
դարձան ինչպէս խաբերայ աղեղն :
58 Եւ նորան բարկացրին իրանց կըռ-
քերի սեղաններումն՝ և իրանց կըռքերի
պատկերներումն նախանձ շարժեցին նո-
րան :
59 Աստուած լսեց և բարկացաւ՝ և շատ
անարգեց Իսրայէլին :
60 Երեսից քցեց սելովայ բնակարանըն՝
էն խորանըն՝ որ նորանում բնակվեցաւ
մարդկանց մէջն :
61 Եւ գերութեան մէջ մատնեց նորա

զօրութիւնըն՝ և նորա փառքըն թշնամի-
ների ձեռքն :

62 Եւ իրան ժողովըրդին մատնեց սըրի
մէջ · և իրան ժառանգութեան վերայ
խիստ բարկացաւ :

63 Կրակն կերաւ նորա երիտասարդնե-
րըն · և նորա աղջիկների համար հարսա-
նըքի երգ չի երգեցին :

64 Նորա քահանաներն սրով ընկան՝ և
նորա որբևէրիներն չըկարացին սուգ ա-
նել :

65 Բայց Տէրն զարթնացաւ ինչպէս քնից ·
ինչպէս զօրաւոր մարդ՝ որ գինով ցնծում է :

66 Եւ իրան թշնամիներըն զարկեց յե-
տին կողմիցն · յաւիտեան նախատինք արաւ
նորանց :

67 Եւ յօսեփայ բնակարանըն անար-
գեց · և եփրեմի ցեղըն չի ընտրեց :

68 Բայց յուդայի ցեղըն ընտրեց՝ սիօնի
սարըն՝ որ նորան սիրեց :

69 Եւ իրան սրբութիւնըն շինեց ինչ-
պէս երկնքի բարձր տեղերըն · ինչպէս եր-
կիրն՝ որ նորան հաստատեց յաւիտեան :

70 Եւ իրան ծառայ դաւթին ընտրեց ·
և առաւ նորան ոչխարների փարախից
(ախոռներից) :

71 Ծիծ տուող ոչխարների մօտիցն
տարաւ նորան՝ որ իրան յակոբ ժողովուր-
դըն և իրան իսրայէլ ժառանգութիւնըն
կառավարէ :

72 Եւ նա արածացնումէր նորանց սուրբ սրտով . և իմաստուն ձեռքով առաջնորդումէր նորանց :

## ՍԱՂՄՈՍ · ՀԸ :

### Ասափայ սաղմոս :

Ո՜վ Աստուած՝ հեթանոսնե՞րն մտին քո ժառանգութեան մէջ՝ պղծեցին քո սուրբ տաճարըն և Երուսաղէմըն աւերակ արին :

2 Նորանք քո ծառաների դիակներըն (լաշերն) կերակուր տուին երկնքի թռչուններին՝ և քո սրբերի մարմինըն երկրի գազաններին :

3 Նորանց արիւնըն թափեցին ինչպէս ջուր Երուսաղէմի չորս կողմումն . և ոչ ով չըկար որ թաղէր :

4 Նախատինք էլանք մենք մեր հարևանների առաջին՝ ծաղր և անարգանք նորանց համար՝ որ մեր չորս կողմումն են :

5 Մինչև ե՞րբ՝ Տէ՛ր՝ կըբարկանաս իսպառ՝ և քո նախանձդ կրակի պէս կըբորբոքվի :

6 Թափի՛ր քո բարկութիւնըդ էն ազգերին վերայ՝ որ քեզ չեն ճանաչում . և էն թագաւորութեանց վերայ՝ որ քո անունըդ չեն կանչում :

7 Վասնզի նորանք Յակոբին կերին
և նորա բնակութիւնըն աւերեցին ։
8 Մ՛ի յիշեր մեր առաջին անօրէնու-
թիւններըն․ թո՛ղ շուտով հասնի մեզ քո
ողորմութիւնն․ ինչու որ՝ շատ տկարա-
ցանք ։
9 Օգնի՛ր մեզ՝ մեր փրկութեան Աս-
տուած՝ քո անունի փառքին համար․ և
փրկի՛ր մեզ և քաւի՛ր մեր մեղքերըն քո ա-
նունիդ համար ։
10 Ինչո՞ւ պիտի ասեն հեթանոսներն՝
թէ ո՞ր տեղ է նորանց Աստուածն․ թո՛ղ
հեթանոսաց միջումն մեր աչաց առաջին
յայտնըվի էն քո ծառաների արիւնի վրէժ-
խնդրութիւնն որ թափվեցաւ ։
11 Թո՛ղ կապվածների հառաչանքն քո
առաջիդ մտնէ․ քո բազկի (ձեռքի) մեծու-
թեան պէս ապրեցրո՛ւ մահի որդոցըն ։
12 Եօթն պատիկ հատուցումըն արա՛
մեր հարևաններին իրանց ծոցի մէջ՝ էն ի-
րանց նախատինքըն որ նորանով քեզ ա-
նարգեցին ով Տէր ։
13 Բայց մենք քո ժողովուրդն ենք և քո
արօտի հօտն․ յաւիտեան կըգոհանանք քե-
զանից․ և քո գովասանքըն կըպատմենք
ազգից մինչև ազգ ։

# ՍԱՂՄՈՍ · ՀԹ·:

Երգօղներէ գլխաւորին · շուշանին (Ադուդ) ·
Ասափայ վկայութեան · սաղմոս :

*Ո՛վ Իսրայէլի Հովիւ ականջ դիր · դու որ Յովսէփին առաջնորդում ես ինչպէս ոչխարների հօտին՝ որ նստում ես քերովբէից վերայ՝ յայտնուի՛ր :*

*2 Եփրեմի և Բենիամինի և Մանասէի առաջին զարթեցրո՛ւ քո զօրութիւնը՝ և ե՛կ մեզ ապրեցնելու համար :*

*3 Ո՛վ Աստուած դարձրո՛ւ մեզ՝ և երեւացրո՛ւ քո երեսդ՝ և կապրինք :*

*4 Տէր զօրութեանց Աստուած մինչև ե՞րբ կբարկանաս քո ժողովրդի աղօթքին վերայ :*

*5 Արտասունքի հաց ես ուտեցնում նորանց՝ և արտասունք ես խմեցնում նորանց մեծ չափով :*

*6 Մեզ կռուի պատճառ ես դնում մեր հարևաններին համար՝ և մեր թշնամիները ծաղր են անում մեզ վերայ :*

*7 Ո՛վ զօրութեանց Աստուած դարձրո՛ւ մեզ՝ և երևացրո՛ւ քո երեսդ՝ և կապրինք :*

*8 Մի որթ (վազ) փոխեցիր Եգիպտոսից՝ հեթանոսներին դուրս հանեցիր և նորան տնկեցիր :*

9 Ճ՛անապարհ պատրաստեցիր նորա
առաջին և նորա արմատները (քէօքլէրի)
հաստատեցիր՝ և նա լցրուց երկիրը :
10 Սարերն ծածկվեցան նորա շուա-
քովը՝ և Աստուծոյ մայրերն (շամ ծառերն)
նորա ճղքներովը :
11 Նորա մատները երկարացրիր մին-
չև ծովը . և նորա ճղքները մինչև
գետն :
12 Ապա ինչո՞ւ քանդեցիր նորա պատըն
որ քաղեն նորան ամէնքըն որ ճանապար-
հովը անց են կենում :
13 Անտառի խոզն ապականումէ նորան՝
և վայրի գազանն արածումէ նորան :
14 Ո՛վ զօրութեանց Աստուած դար-
ձի՛ր՝ երկնքիցն նայի՛ր և տե՛ս . և տես ե՛կ
էս որթիս ([illegible]) :
15 Եւ նոր բուսած ճուղին՝ որ քո աջ
ձեռն տնկեց նորան և որդոյն՝ որ նորան
զօրացրիր քեզ համար :
16 Այրված է կրակով և աւերված . քո
երեսի սաստելուցն կորչումեն :
17 Թո՛ղ քո ձեռն լինի քո աջի մարդոյն
վերայ՝ մարդոյ որդոյն վերայ՝ որ նորան
զօրացրիր քեզ համար :
18 Ապա յետ չենք քաշվիլ քեզանից .
կենդանացրու մեզ՝ և քո անունովը կըկան-
չենք :
19 Տէ՛ր զօրութեանց Աստուած՝ դար-

ձուր մեզ՝ երևցուր քո երեսըդ և կապ-
րինք :

## ՍԱՂՄՈՍ · Ձ :

Երգեցողներու գլխաւորին · Գիթթիթ (տաւիղ) Ա-
սափայ սաղմոս :

Ցնծացէ՛ք Աստուծոյ առաջին որ մեր զօ-
րութիւն է · ուրախութենով աղաղա-
կեցէ՛ք դէպի յակոբայ Աստուածն :
2 Սաղմոս առէ՛ք՝ թմբուկըն (դափը)
տուէ՛ք · քաղցր քնարըն սաղմոսարանին
հետ :
3 Փող փչեցէ՛ք ամսի գլխումն · լցված
լուսնի ժամանակումն · մեր տօնի օրումն :
4 Պատճառն որ՝ էս է հրամանն իսրայէլին՝
և յակոբայ Աստուծոյ իրաւունք :
5 Վկայութիւն դրաւ էս , յովսէփայ
մէջն՝ երբոր նա դուրս էր գալիս եգիպտոսի
երկրին դէմ · լեզու էի լսում · որ չէի գի-
տում :
6 Ես նորա թիկունքըն հեռացրի բեռ-
նիցն՝ և նորա ձեռքըն պրծան քթոցիցն :
7 Նեղութենումն դարդի կանչեցիր՝ և
փրկեցի քեզ՝ լսեցի քեզ որոտմունքի ծած-
կոցումն · փորձեցի քեզ հակառակութեան
ջրերի մօտն մերիբա :
8 Լսի՛ր իմ ժողովուրդ՝ և կվկայեմ քո
միջումդ · իսրայէ՛լ՝ երանի՛ թէ լսես ինձ :

9 Օտար Աստուած չը՛լլնի քու միջումդ .
և երկրպագութիւն չի՛ անես օտար Աս-
տուծոյ :
10 Ես եմ քու Տէր Աստուածն որ հա-
նեցի քեզ Եգիպտոսի երկրիցըն . շատ բա՛ց
արա քու բերանըն՝ և ես կըլցնեմ դորան :
11 Բայց իմ ժողովուրդս չըլսեց իմ
ձայնիս՝ և Իսրայէլն հաւան չըկացաւ ինձ :
12 Ապա նորանց թողի իրանց սրտերի
կամացն՝ որ գնան իրանց խորհուրդնե-
րումն :
13 Եթէ իմ ժողովուրդս ինձ լսէր՝ և
Իսրայէլն իմ ճանապարհումս գնար .
14 Շուտով կըխոնարհացնէի նորա
թշնամիներըն՝ և իմ ձեռքս կըդարձնէի նո-
րա նեղացնողներին դէմ :
15 Տէրին ատողներըն կըխոնարհվէին նո-
րա առաջին՝ բայց նորա ժամանակն յաւի-
տեան կըլինէր :
16 Նա կըկերակրէր նորան պարարտ
ցորենով՝ և վէմի միջիցն կըկշտացնէի նո-
րան մեղրով :

## ՍԱՂՄՈՍ · ՁԲ :

### Ասափայ սաղմոս :

Աստուած կանգնում է Աստուծոյ ժողո-
վըրդի մէջն՝ նա աստուածների միջումն
դատում է :

2 Մինչև ե՞րբ էք դատում անիրաւու-
թեամբ․ և ամպարիշտներին երես էք տես-
նում․ Սէլա ։
3 Իրաւունք արէք աղքատին և որբին․
արդարացրէ՛ք խեղճին և աղքատին ։
4 Փրկեցէ՛ք աղքատին և խեղճին․ ազա-
տեցէ՛ք նորանց ամպարիշտների ձեռքից ։
5 Բայց չե՛ն իմանում և միտք չեն առ-
նում․ խաւարի մէջն են գնում․ երկրի ա-
մէն սիւներն շարժված են ։
6 Ես ասացի․ Աստուածներ էք դուք՝ և
դուք ամէնքդ բարձրեալի որդիք ։
7 Բայց էսպէս էլ մարդկանց նման կը
մեռնիք՝ և ինչպէս իշխաններից մինն վէր
կընկնիք ։
8 Վե՛ր կաց ո՛վ Աստուած՝ դու դատի՛ր
երկիրըն․ ինչու որ՝ դու պիտի ժառանգես
ամէն հեթանոսներըն ։

## ՍԱՂՄՈՍ · ՁԲ ։

### Երգ · Ասափայ սաղմոս ։

Ո՛վ Աստուած լուռ մի՛ կենար․ մի՛ լինիր
ինչպէս նա որ չի՛ լսում՝ և մի՛ դադարիր
ո՛վ Աստուած ։
2 Պատճառնոր՝ ահա՛ քո թշնամիներն
գոռումեն՝ և նորանք որ քեզ ատումեն
բարձրացրին իրանց գլխներըն ։

3 Խորամանկ հնարք են շինում քո ժո-
ղովրդին դէմ. և խորհուրդ են անում քո
ընտրվածներին վերայ:
4 Ասումեն թէ եկէք նորանց վերաց-
նենք ազգերի միջից. և էլ չյիշվի Իս-
րայէլի անունն:
5 Միաբան սրտով խորհուրդ արին՝
քեզ դէմ ուխտաւորութիւն հաստատեցին.
6 Եդովմայ բնակարաններն և Իսմայէ-
լացիք. Մովաբ և Հագարացիք.
7 Գեբաղ և Ամոն և Ամաղէկ՝ Փղշտա-
ցիք Տիւրոսի բնակիչներին հետ:
8 Ասուր էլ միաւորվեցաւ նորանց հետ.
օգնութիւն են անում Ղովտի որդոցն.
Սելա:
9 Արա՛ նորանց ինչպէս Մադիամին՝ ինչ-
պէս Սիսարային՝ ինչպէս Յաբինին Կիսոն
գետի մօտն:
10 Որ նորանք Այնտօրի մօտն սատակ-
վեցան՝ և աղբ եղան երկրի վերայ:
11 Արա՛ նորանց իշխաններըն ինչպէս Օ-
րէբըն և Զէբըն, և նորանց ամէն մեծաւոր-
ներըն ինչպէս Զեբեէն և Սաղմանան:
12 Որ նորանք ասումեն թող տիրապե-
տենք մեզ համար Աստուծոյ բնակարան-
ներին:
13 Իմ Աստուած արա՛ նորանց ինչպէս
փոշի՝ և ինչպէս դարման՝ քամոյ առաջին:
14 Ինչպէս որ կրակն այրումէ անտա-

ուին և ինչպէս որ բոցն խանձում է սարե-
րին.
15 Այնպէս հալածի՛ր նորանց քո մրրիկ
հողմովդ. և զարհուրեցրո՛ւ նորանց քո փո-
թորիկ քամովդ։
16 Լցրո՛ւ նորանց երեսները անար-
գանքով՝ որ քո անունդ խնդրեն ով Տէր։
17 Թող ամաչեն և շփոթվին յաւի-
տեան. և ամօթ լինին և կորչին։
18 Ապա կիմանան՝ որ քո անունդ Տէր է
և դու մինակ բարձրեալ ես ամեն երկրի
վերայ։

## ՍԱՂՄՈՍ. ՁԴ։

Երգեցողների գլխաւորին. Գիթթին (տաղով) Կոր-
խեայ որդոցն համար. սաղմոս։

Քանի՛ սիրելի են քո բնակարանները՝
ով զօրութեանց Տէր։
2 Իմ անձս ցանկանում է և փափագում
Տէրի սրահներին՝ իմ սիրտս և իմ մար-
մինս ցնծումեն կենդանի Աստուծոյ։
3 Ծիտն էլ տուն գտաւ և ծիծեռնակն
բուն իրան համար՝ որ իրան ձագերըն դնէ
նորանում. այսինքն քո սեղանները զօրու-
թեանց Տէր՝ իմ թագաւոր և իմ Աս-
տուած։
4 Երանի՛ նորանց՝ որ քո տան մէջն

բնակվումեն . նորանք յաւիտեան կօրհնեն
քեզ . սէլա :
5 Երանի՜ էն մարդկանց՝ որ նորանց զօ-
րութիւնն քեզանում է . որ նորանց սրտե-
րումն պատրաստված՝ ճանապարհներ կան :
6 Նորանք արտասունքի ձորի միջովն
անցեն կենում և նորան աղբիւրի պէս են
շինում . և աշունի անձրևն ծածկումէ նո-
րան օրհնութենով :
7 Նորանք զօրութենից դէպի զօրու-
թիւն են գնում , և ամէն մէկն Աստուծոյ
առաջին կերևին սիօնի միջումն :
8 Ո՜վ Տէր զօրութեանց Աստուած՝
լսի՛ր իմ աղօթքիս . ականջ դի՛ր ո՜վ յակո-
բայ Աստուած . սէլա :
9 Ո՜վ մեր վահան (ղալխան) Աստուած՝
տե՛ս և քո օծելոյ երեսին նայի՛ր :
10 Պատճառոր՝ լաւ է մին օր քո սրահ-
ներումն . քան հազարը . աւելի ուզումեմ
դուռըն պահպանել իմ Աստուծոյ տան
մէջն՝ քան բնակվիլ ամբարշտութեան տը-
ներումն :
11 Ինչուոր՝ Տէ՛ր Աստուած՝ արև և
վահան է . Տէրն շնորհք և փառք է տա-
լիս . նա իսկի բան չի՛ պակասացնում
նորանցից , որ անարատութենով են
գնում :
12 Ո՜վ զօրութեանց Տէր՝ երանի՜ էն
մարդոյն՝ որ քեզ է յուսացած :

## ՍԱՂՄՈՍ . ՁԴ :

Երգողներուն գլխաւորին . Կորխայ որդւոցն համար . սաղմոս :

Տէ՛ր դու հաւան կացար քո երկրիդ՝ ու դարձըրիր Յակոբայ գերութիւնըն :
2 Քո ժողովըրդի անօրէնութիւնըն բաշխեցիր՝ ու նորանց ամէն մեղքերըն ծածկեցիր :
3 Հեռո՛ւ արիր քո ամէն սրտմտութիւնըն՝ ու յետ դարձար քո բարկութեան բորբոքվելուցն :
4 Դարձրու մեզ ով մեր փրկիչ Աստուած . և դադարի՛ր քո բարկութենիցն որ մեզ վերայ է :
5 Մի՛ թէ յաւիտեան կըբարկանա՞ս մեզ վերայ ու քո բարկութիւնըն կերկարացնես ազգից մինչև ազգ :
6 Մի՞թէ յետ չե՞ս դառնալ՝ որ մեզ կենդանացնես՝ և քո ժողովուրդըն ուրախ լինի քեզանով :
7 Ցո՛յց տուր մեզ Տէ՛ր քո ողորմութիւնըն . և տո՛ւր մեզ քո փրկութիւնըն :
8 Թող լսեմ թէ ինչ կըխօսի Տէր Աստուած . նա խաղաղութիւն կըխօսի իրան ժողովըրդին հետ . և իրան սըրբերին հետ և էլ չեն դառնալ յիմարութեան մէջ :

9 Իրաւի՛ որ Նորա փրկութիւնն մօտիկ
է Նորանց՝ որ վախենում են Նորանից · որ
փառք բնակուի մեր երկրումն ։
10 Ողորմութիւն և ճշմարտութիւն իրար
կըպատահին · արդարութիւն և խաղաղու-
թիւն իրար կըհամբուրեն ։
11 Ճշմարտութիւն երկրիցն կըբուսնի
և արդարութիւն երկնքիցն վէր կընայի ։
12 Տէրն կըտայ բարիք · և մեր երկիրն
կըտայ իրան պտուղըն ։
13 Արդարութիւն Նորա առաջին կըգը-
նայ՝ և իրան ոտներըն կըդնէ ճանապարհի
վերայ ։

## ՍԱՂՄՈՍ · ՁԵ ։

### Դաւթի աղօթք ։

Տէ՛ր խոնարհեցրո՛ւ քո ականջըդ · և
լսի՛ր ինձ · ինչուոր՝ աղքատ և խեղճ եմ
ես ։
2 Պահի՛ր իմ անձըս · ինչուոր՝ սուրբ
եմ ես · փրկի՛ր ո՛վ իմ Աստուած՝ քո ծառայ-
իդ՝ որ քեզ է յուսացած ։
3 Ողորմեա՛ ինձ Տէ՛ր · ինչուոր՝ դէպի
քեզ եմ կանչում ամէն օր ։
4 Ուրախ արա՛ քո ծառայի անձըն · ին-
չուոր՝ դէպի քեզ բարձրացնում եմ իմ ան-
ձըս ։

5 Պատճառնոր՝ դու Տէր բարի ես և նե-
րող. և հարուստ ողորմութենով էն ա-
մենին վերայ՝ որ դէպի քեզ կանչումեն ։
6 Ակա՛նջ դի՛ր իմ աղօթքիս՝ և մտի՛կ
արա իմ աղաչանքներին ձայնին ։
7 Իմ նեղութեան օրումն դէպի քեզ
եմ կանչում. ինչու որ՝ դու լսումես ինձ ։
8 Աստուածների մէջն ոչ ով քեզ նման
չէ ո՛վ Տէ՛ր՝ և ոչ ով չըկայ որ քեզ նման
գործք անէ ։
9 Ամէն ազգերն, որ արիր, կըգան և
երկրպագութիւն կանեն քո առաջիդ ո՛վ
Տէ՛ր՝ և քո անունիդ փառք կըտան ։
10 Պատճառնոր՝ դու մեծ ես և հրաշք
ես գործում. միայն դու ես Աստուած ։
11 Տէ՛ր ցո՛յց տուր ինձ քո ճանապարհըն՝
որ գնամ քո ճշմարտութեան մէջն. միաց-
րո՛ւ իմ սիրտըս որ քո անունիցն վախե-
նամ ։
12 Կըգոհանամ քեզանից Տէ՛ր իմ Աս-
տուած բոլոր սրտով. և յաւիտեան կըփա-
ռաւորեմ քո անունըդ ։
13 Պատճառնոր՝ քո ողորմութիւնն մեծ
է ինձ վերայ. և դու փրկեցիր իմ անձըս
ներքևի դժոխքիցն ։
14 Ո՛վ Աստուած՝ ամբարտաւաններն
վերկացան ինձ դէմ և բռնաւորների ժո-
ղովքն խնդրումէ իմ անձըս. և քեզ իսկի
չեն դնում իրանց աչքերի առաջին ։

15 Բայց դու Տէ՛ր գթած Աստուած
ես, և ողորմած՝ երկայնամիտ և հարուստ
քաղցրութենով և ճշմարտութենով ։
16 Նայի՛ր ինծի վրայ և ողորմեա՛ ինծի ․
քո զօրութիւնըն տո՛ւր քո ծառայիդ՝ և
փրկի՛ր քո աղախնոյդ (ղարավաշէ) որդին ։
17 Նշա՛ն արա ինծի վրայ՝ որ բարի լի-
նի ինծի ․ և նորանք որ ատումեն ինծի՝ կը
տեսնեն և կամաչեն ․ նրահամար՝ որ դու
Տէ՛ր օգնեցիր և մխիթարեցիր ինծի ։

## ՍԱՂՄՈՍ· ՁԶ.

Կորխեայ որդւոցն համար · սաղմոս · երգ ։

Նորա հիմունքներն սուրբ սարերին վե-
րայ են ։
2 Տէրն սիրումէ սիոնի դռներըն աւելի
քան յակօբայ ամէն բնակարաններըն ։
3 Փառաւոր բաներ պատմվումեն քե-
զանում՝ ո՛վ Աստուծոյ քաղաք · սէլա ։
4 Ռահաբին և բաբիլօնին կըյիշեմ
նորանց միջումն որ ճանաչումեն ինծի ․ ահա
փղշտացիք և տիւրոս փուշի հետ՝ սորանք
կըծնվին էնտեղ ։
5 Եւ սիոնի համար կասվի՝ Թէ էս մարդս
և էն մարդն ծնվաւ նորանում ․ և ինքն
բարձրեալն նորա հիմունքըն հաստատեց ։
6 Տէրն ազգերի գրքումն կըպատմէ՝ Թէ
սա ծնվաւ էն տեղ · սէլա ։

7 Եւ երգողներն ինչպէս որ պար եկող-
ներ կասեն [Թէ] իմ ամէն աղբիւրներն քե-
զանում են :

## ՍԱՂՄՈՍ · ՁԷ:

Երգ · սաղմոս Կորխայ որդոցն համար · Եր-
գեցողներին գլխաւորին՝ որ մահալաթ (սաղով)
երգելու պատասխանելով · Եզրախայեցի Եմանի
վարդապետութիւն :

Տէ՛ր իմ փրկութեան Աստուած՝ ցերե-
կուան կանչում եմ . և գիշերուան քո ա-
ռաջին եմ :
2 Թո՛ղ իմ աղօթքս քո առաջին մտնէ
խոնարհեցրո՛ւ քո ականջըդ դէպի իմ ա-
ղաղակս :
3 Պատճառնոր՝ իմ անձս լցվաւ չարչա-
րանքով՝ և իմ կեանքըս մօտեցաւ դժոխ-
քին :
4 Ես համարվեցայ նորանց հետ՝ որ վէր
են գալիս գերեզմանի մէջ՝ ես էլայ ինչպէս
մարդ որ ուժ չունի :
5 Մեռելների միջումն անուժ [Եղած
եմ · ինչպէս խոցվածներն՝ որ գերեզմանումն
վէր ընկած են՝ որ էլ չես յիշում նորանց
և երեսից քցված են նորանք քո ձեռքիցն :
6 Դու ինձ ներքևի փոսի մէջ դրիր՝
խաւար և խոր տեղերի մէջ :

7 Քո սրտմտութիւնն հաստատուեցաւ
ինձ վերայ՝ և քո ալիքներովն (տառապանքնե-
րովն) նեղացրիր ինձ · սելա ։
8 Իմ ճանաչներս հեռացրիր ինձանից՝
և ինձ գարշելի արիր նորանց առաջին ·
փակված եմ և չեմ դուրս գալիս ։
9 Իմ աչքս մաշվեցաւ խեղճութեան
պատճառովը · կանչումեմ դէպի քեզ Տէ՛ր
ամէն օր · մեկնումեմ իմ ձեռքս դէպի
քեզ ։
10 Մի՞թէ մեռելներին վերայ հրաշք
կանես · մի թէ մահացածներն վե՞ր կենե-
նան , և քեզանից կըգոհանան · սելա ։
11 Մի՞ թէ գերեզմանի մէջն կըպա՞տ-
մեն քո ողորմութիւնն · և քո ճշմարտու-
թիւնըն կորուստի մէջն ։
12 Մի՞ թէ խաւարի մէջ կըճանաչվին
քո հրաշքներն՝ և քո արդարութիւնն մո-
ռացութեան երկրի մէջ ։
13 Բայց ես դէպի քեզ Տէ՛ր՝ աղաղա-
կումեմ · և իմ աղօթքս կանուխ առաւօ-
տանց գալիս է քեզ մօտ ։
14 Տէ՛ր ինչո՞ւ ես երեսից քցում իմ ան-
ձըս՝ և քո երեսըդ թագցնումես ինձանից ։
15 Ես աղքատ եմ և մեռնում եմ իմ
մանկութենիցս · քո զարհուրանքովն պա-
տած եմ որ յոյս կըտրած է ։
16 Քո սրտմտութիւնն հասաւ ինձ վե-
րայ և քո զարհուրանքներն կորցնումեն
ինձ ։

17 Նորանք ամէն օր ջրի նման պատու-
մեն ինձ. պատումեն ինձ մին տեղ :
18 Դու հեռացրիր ինձանից բարեկամիս
և մօտաւորիս. իմ ճանաչներս խաւարի
մէջ ծածկված են :

## ՍԱՂՄՈՍ ՁԸ :

Եզրախայեցի Եթանի Վարդապետութիւն :

Յաւիտեան կօրհնեմ Տէրի ողորմութիւ-
նըն. ազգից ազգ իմ բերանովս կըպատ-
մեմ քո ճշմարտութիւնըն :
2 Պատճառնոր՝ ասացի թէ ողորմու-
թիւնն յաւիտեան հիմնըված կըմնայ.
երկնքումն հաստատումես քո ճշմարտու-
թիւնըն :
3 Ես ուխտ դրի իմ ընտրվածին հետ.
երդում կերի իմ դաւիթ ծառային հա-
մար :
4 Մ՚ինչև յաւիտեան կըհաստատեմ քո
զաւակըդ՝ և ազգից ազգ կըշինեմ քո աթո-
ռըդ. Սէլա :
5 Եւ երկինքն՝ կըփառաւորեն քո
հրաշքներըն՝ ով Տէր. և սըրբերի ժողո-
վըրդումն քո ճշմարտութիւնըն. Սէլա :
6 Պատճառնոր՝ ով է ամպերի մէջն՝ որ
հաւասար լինի Տէրին. Եւ Աստուածների
որդոց մէջն՝ ով նման լինի Տէրին :

7 Աստուած զարհուրելի է սրբերի ժողովրդումն՝ և ահաւոր էն ամենին վերայ՝ որ նորա չորս կողմումն են ։
8 Տէ՛ր զօրութեանց Աստուած՝ ո՞վ է զօրաւոր Աստուած ինչպէս դու · և քո ճշմարտութիւնն քո չորս կողմումն է ։
9 Դու տիրապետումես ծովի զօրութեան վերայ · երբոր բարձրացնումէ իրան ալիքները դու ցածացնումես նորանց ։
10 Դու փշրեցիր Ռահաբին խոցվածի նման · քո բազուկի (ԸՆՒԷ) զօրութեննովը ցրվեցիր քո թշնամիներըն ։
11 Քո են երկինքն և քո է երկիրն · դու հիմնացրիր աշխարհքըս և նորա լիութիւնըն ։
12 Դու արիր հիւսիսըն և հարաւըն · Թաբօրն և Հերմօնն ցնծումեն քո անունովդ ։
13 Քո՛ է ուժեղ բազուկն · քո ձեռքդ զօրաւոր է՝ և քո աջդ բարձր է ։
14 Արդարութիւն և իրաւունք քո աթոռի հաստատութիւն են՝ ողորմութիւնն և ճշմարտութիւնն քո երեսիդ առաջն են գնում՝ ։
15 Երանի՛ էն ժողովրդին՝ որ գիտումէ փողերի ձայնըն · Տէ՛ր , նորանք քո երեսի լուսովն կըգնան ։
16 Քո անունովդ ամէն օր կըցնծան և քո արդարութեննովդ կըբարձրանան ։

17 Պատճառ որ՝ դու ես նորանց զօրու-
թեան փառքն. և քո հաճութենովդ կը
բարձրանայ մեր եղջիւրն (պոզը) ։
18 Ինչու որ՝ Տէրն է մեր վահան (պաշ-
տպան) և Իսրայէլի սուրբն մեր թագաւոր ։
19 Այն ժամանակն տեսիլքով խօսեցիր
քո սրբին հետ և ասացիր՝ թէ օգնութիւն
դրի զօրեղի վրայ՝ բարձրացրի ընտրվածին
ժողովրդի միջից ։
20 Իմ դաւիթ ծառայիս գտի. իմ սուրբ
իւղովս օծեցի նորան ։
21 Որ իմ ձեռս կըհաստատէ նորան՝ և
իմ բազուկս կըզօրացնէ նորան ։
22 Թշնամի չի նեղացնիլ նորան՝ և ա-
նօրէնութեան որդին չի չարչարիլ նորան ։
23 Բայց ես կըփշրեմ նորա թշնամինե-
րըն նորա երեսի առաջին՝ և կըզարկեմ
նորանց որ ատումեն նորան ։
24 Եւ իմ ճշմարտութիւնն և իմ ողոր-
մութիւնն նորա հետ կըլինի՝ և նորա եղ-
ջիւրն կըբարձրանայ իմ անունովս ։
25 Եւ նորա ձեռըն կըդնեմ ծովի մէջ՝
և նորա աջ ձեռըն գետերի մէջ ։
26 Նա դէպի ինձ կըկանչէ՝ դու ես իմ
հայր՝ իմ Աստուած և իմ փրկութեան
վէմ ։
27 Եւ ես առաջինեկ կըդնեմ նորան՝
երկրի թագաւորներին վերայ բարձրացած ։
28 Յաւիտեան կըպահեմ նորա համար

իմ ողորմութիւնըն․ և իմ ուխտս հաւա-
տարիմ կըլլինի նորա հետ ։
29 Եւ նորա զաւակին յաւիտեան կը
հաստատեմ․ և նորա աթոռըն ինչպէս
երկնքի օրերըն ։
30 Եթէ նորա որդիքն իմ օրէնքըս թո-
ղեն՝ և իմ իրաւունքի մէջ չըգնան․
31 Եթէ նորանք իմ հրամաններըն ա-
նարգեն՝ և իմ պատուիրանքներըս չըպա-
հեն․
32 Այս գաւազանով կըպատժեմ նո-
րանց անօրէնութիւնըն․ և ծեծելով նո-
րանց անիրաւութիւնըն ։
33 Բայց իմ ողորմութիւնըս չեմ արգե-
լել նորանից՝ և իմ ճշմարտութիւնըս չեմ
պակասացնել ։
34 Իմ ուխտըս չեմ անարգել՝ և էն որ
իմ պռօշներիցս դուրս եկաւ՝ չեմ փոխել ։
35 Մ՛ին անգամ երդուեմ կերի իմ
սրբութենովս՝ թէ սուտ չեմ ասել դաւ-
թին ։
36 Նորա զաւակն յաւիտեան պիտի լի-
նի՝ և նորա աթոռն ինչպէս արեգակն իմ
առաջիս ։
37 Ինչպէս լուսինն յաւիտեան հաստատ
պիտի լինի՝ և ինչպէս վկան ամպերումն հա-
ւատարիմ․ Սէլա ։
38 Բայց հիմիկ երեսիցդ քցեցիր և անար-
գեցիր՝ բարկացար քո օծելոյն վերայ ։

39 Քո ծառայի ուխտը փչացրիր. նորա պսակը գետնով պղծեցիր:
40 Նորա ամէն պարիսպները քանդեցիր՝ նորա ամուր տեղերը աւերակ արիր:
41 Կողոպտում են նորան ամէնքը, որ անց են կենում ճանապարհովը, նախատինք էլաւ իրան հարևաններին առաջին:
42 Նորան նեղացնողների աջ ձեռըն բարձրացրիր՝ նորա ամէն թշնամիներին ուրախացրիր:
43 Եւ նորա սրի զօրութիւնը յետ դարձրիր՝ և պատերազմի մէջն չը հաստատեցիր նորան:
44 Նորա փառաւորութիւնը վեր առիր՝ և նորա աթոռը գետինն քցեցիր:
45 Նորա երիտասարդութեան օրերը կարճացրիր՝ ամօթով ծածկեցիր նորան. Սէլա:
46 Տէ՛ր մինչև ե՞րբ կըթագցնես քո անձըդ իսպառ. և քո սրտմտութիւնդ կրակի՞ պէս կըբորբոքվի:
47 Յիշի՛ր թէ ինչ է իմ կեանքս. թէ քանի՛ ունայն ստեղծեցիր մարդկանց ամէն որդիքը:
48 Ո՞վ է էն մարդը՝ որ ապրի և մահ չը տեսնէ. և իրան անձը դժոխքի ձեռքիցն փրկէ. Սէլա:
49 Տէ՛ր ո՞ւր է քո առաջին ողորմութիւնն. որ երդում կերիր Դաւթի համար քո ճշմարտութենովդ:

50 Տէ՛ր յիշի՛ր քո ծառաների նախատինքըն․ որ իմ ծոցի մէջ դրի ամէն զօրաւոր ազգերիցն ։

51 Որ նորանով քո թշնամիներն անարգումեն ով Տէ՛ր․ որ նորանով անարգումեն քո օծելոյ գնացքներըն ։

52 Օրհնեալ է Տէրն յաւիտեան․ ամէն և ամէն ։

## ՍԱՂՄՈՍ․ ՁԹ․

Աստուծոյ մարդու Մովսէսի աղօթքը ։

Տէ՛ր դու մեր ապաւէն ես ազգից մինչև ազգ ։

2 Դեռ որ սարերն չէին հաստատուած․ և երկիրս և աշխարհքս չէին ստեղծուած՝ յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես Աստուած ։

3 Դու մարդոյն փոշի ես դարձնում․ և ասում ես՝ յե՛տ դարձէք մարդկանց որդիք ։

4 Պատճառն որ՝ հազար տարիք քո առաջին են ինչպէս երեկուան օրն որ անցկացաւ․ և ինչպէս մին պահ (ժամին) գիշերուն ։

5 Իբր ջրհեղեղով ապականումես նորանց՝ ինչպէս քուն են նորանք․ ինչպէս խոտ որ առաւօտանց անց է կենում ։

6 Առաւօտանց ծաղկումէ և անց է կենում․ իրիկունն կտրվումէ և չորանում ։

7 Պատճառոր մաշվեցանք քո բարկու-
թեներովդ՝ և քո սրտմտութեներովդ շփոթվե-
ցանք ։
8 Մ՚եր անօրէնութիւններըն դրիր քո
առաջին · մեր ծածուկ մեղքերըն քո երեսի
լուսին մէջ ։
9 Ինչուոր՝ մեր ամէն օրերն փչանու-
մեն քո բարկութենովը · մեր տարիքն անց
են կացնում ինչպէս ափեղցփեղ խօսք ։
10 Մ՚եր տարիքների օրերն՝ որ տրուա-
ծ են եօթանասուն տարի՝ և թէ շատ լի-
նի՝ ութսուն տարի · և էն որ լաւն է նո-
րանցում՝ աշխատանք է և ցաւ · ինչուոր՝
շուտով է անց կենում, և թռչումենք ։
11 Բայց ո՞վ է գիտում քո բարկութեան
զօրութիւնըն · և քո սրտմտութիւնըն՝ էն-
պէս որ քեզանից վախենայ ։
12 Սովորցրու մեզ՝ որ էսպէս համարինք
մեր օրերըն՝ և իմաստութիւն ընդունենք
սրտի մէջ ։
13 Դարձի՛ր Տէ՛ր · մինչև ե՞րբ · խեղճիր
քո ծառաներին վերայ ։
14 Կշտացրու մեզ առաւօտանց քո ո-
ղորմութենովդ · որ ցնծանք և ուրախ լի-
նինք մեր ամէն օրերումն ։
15 Ուրախացրու մեզ էն օրերի չա-
փովն որ նորանցում տրտմացրիր մեզ · էն
տարիների չափովն որ նորանցում նեղու-
թիւն տեսինք ։

16 Թող երեւի քո ծառաներին քո
գործդ՝ եւ քո փառքդ նորանց որդոցն ։
17 Եւ մեր Տէր Աստուծոյ քաղցրու-
թիւնն լինի մեզ վրայ․ եւ մեր ձեռաց
գործքըն հաստատի՛ր մեզանում՝ եւ մեր ձե-
ռաց գործքըն հաստատի՛ր ։

## ՍԱՂՄՈՍ Ղ.

Նա՛ որ բարձրելոյ ծածկոցի տակն բնակ-
ված է․ Նա ամենակարողի շուաքի տակն
հանգըստանումէ ։
2 Կասէ Տէրին․ իմ ապաւէն եւ իմ ամ-
րոց․ իմ Աստուած որ նորան եմ յուսա-
ցած ։
3 Պատճառնոր՝ նա կըփրկէ քեզ հորսո-
ղի որոգայթիցն (ծուղակներից)․ Եւ չար ժան-
տամահիցն ։
4 Նա կըծածկէ քեզ իւրան թեւերովն․
նորա թեւերի տակն անվախ կըլինիս․ նորա
ճշմարտութիւնն ասպար եւ վահան է ։
5 Չե՛ս վախենալ գիշերի զարհուրան-
քիցն՝ էն նետիցն՝ որ ցերեկումն թռչումէ․
6 Էն ժանտամահիցն որ խաւարումն
շուռ է գալիս՝ Էն ապականութենիցն՝ որ
սատակումէ կէս օրումն ։
7 Հազար հոգի քո կողմիցդ կընկնին՝ եւ
տասն հազար քո աջ կողմիցդ․ Բայց քեզ
չի մօտենալ ։

8 Մ՚էնակ քո աչքերովդ կը նայես՝ եւ
ամպարիշտներու հատուցումըն կը տեսնես :
9 Պատճառնոր՝ դու Տէ՛ր իմ յոյսն ես ·
դու բարձրեալըն արի՛ր քեզ ապաւէն :
10 Իսկի չար բան չի հասնիլ քեզ · եւ
նեղութիւն չի մօտենալ քո բնակարանին :
11 Ինչու որ՝ իրան հրեշտակներին հրամայել է քեզ համար՝ որ պահեն քեզ քո
ամէն ճանապարհներումդ :
12 Նորանք ձեռներին վերայ կառնեն
քեզ՝ որ քո ոտըն քարի չի դիպցնես :
13 Նոխուծների եւ իժ օձերի վերայ կը գընաս · առիւծի լակոտներին եւ վիշապին ոտով կոխ կը տաս :
14 Պատճառնոր՝ նա ինձ ցանկացաւ՝ եւ
ես կը փրկեմ նորան · ես բարձր կանեմ նորան · ինչու որ՝ նա ճանաչումէ իմ անունըս :
15 Նա կը կանչէ դէպի ինձ եւ ես կը լսեմ
նորան · ես նորա հետ կը լինիմ նեղութեան
մէջն · կազատեցնեմ նորան եւ փառաւոր կանեմ նորան :
16 Երկայն օրերով կը կշտացնեմ նորան · եւ իմ փրկութիւնըս ցոյց կը տամ նորան :

# ՍԱՂՄՈՍ · ՂԲ.

Սաղմոս երգ շաբաթ օրին համար :

Բարի է գոհանալ Տէրիցն՝ և սաղմոս ա-
սել քո անունին ով բարձրեալ .
2 Առաւօտանց պատմել քո ողորմու-
թիւնըն և գիշերուան քո ճշմարտութիւ-
նըն .
3 Տասն թելէ նուագարանով (տաւղով)
և սաղմոսարանով . օրհնութեան ձայնով
քնարի հետ :
4 Պատճառոր՝ դու Տէ՛ր ուրախացրիր
ինձ քո գործքերովդ՝ և քո ձեռաց գործքե-
րուն ցնծումեմ :
5 Ո՜վ Տէր քանի՛ մեծ են քո գործքերն .
շատ խոր են քո խորհուրդներն :
6 Յիմար մարդն էս չի ճանաչում՝ և
անմիտն չի իմանում էս :
7 Երբոր ամպարիշտներն բուսնումեն
ինչպէս խոտ . և ծաղկումեն էն ամէնքն , որ
անօրէնութիւն են գործում . էն է որ սա-
տակվին յաւիտեանս յաւիտենից :
8 Բայց դու՝ Տէ՛ր բարձր ես յաւի-
տեան :
9 Պատճառոր՝ ահա քո թշնամիներն
Տէ՛ր՝ ահա՛ քո թշնամիներն կրկորչին . էն
ամէնքն կցրվին՝ որ անօրէնութիւն են
գործում :

10 Բայց իմ եղջիւրըս կըբարձրացնես
ինչպէս մի եղջերուինն . օծված եմ ես նոր
իւղով :
11 Եւ իմ աչքս կընայի իմ թշնամինե-
րիս վերայ . և իմ ականջս կըլսէ էն չարա-
գործներին համար՝ որ վերկացան ինձ վե-
րայ :
12 Արդարն ինչպէս արմաւի (խուրմի)
ծառ կըբուսնէ՝ ինչպէս լիբանանի մայր
(շամ) ծառ կըմեծանայ :
13 Նորանք որ Տէրի տան մէջն տնկված
են՝ մեր Աստուծոյ սրահներումն կըբուսնին :
14 Ծերութեան մէջն էլ պտուղ կը
բերին . պարարտ և կանանչ կըլինին :
15 Որ պատմեն թէ՝ իմ վէմ Տէրն ու-
ղիղ է . և անիրաւութիւն չըկայ նորա-
նում :

## ՍԱՂՄՈՍ. ՂԳ.

Տէրն թագաւորում է . մեծ փառաւորու-
թիւն հագած է . Տէրն զօրութիւն հա-
գած և իրան մէջքն կապած է . որա համար
աշխարհքն հաստատ կայ և չի շարժվում :
2 Հաստատ է քո աթոռդ սկըզբից .
յաւիտենից դու ես :
3 Տէ՛ր գետերն բարձրացնումեն՝ գե-
տերն բարձրացնումեն իրանց ալիքներըն :
4 Շատ ջրերի ձայնից աւելի զօրաւոր

էն ծովի ալիքներն. էլ զօրաւոր է Տէրն 'ի բարձունս :

5 Քո վկայութիւններն շատ հաւատարիմ էն. քո տանդ վայել է սրբութիւն երկայն օրերով :

## ՍԱՂՄՈՍ. ՂԳ.

Տէ՛ր վրէժխնդրութեան Աստուած՝ վրէժխնդրութեան Աստուած յայտնըվի՛ր :

2 Բա՛րձր լեր երկրի դատաւոր. հատուցում տո՛ւր ամբարտաւաններին :

3 Տէ՛ր՝ ամպարիշտներն մինչև ե՞րբ՝ ամպարիշտներն մինչև ե՞րբ կըպարծենան :

4 Նորանք բղխում խօսում գոռոզ անամօթ բաներ. պարծենում էն ամէնքն որ անօրէնութիւն են գործում :

5 Տէ՛ր նորանք կոխ են տալիս քո ժողովուրդըն՝ և նեղացնում քո ժառանգութիւնըն :

6 Որբևէրին և պանդուխտ մարդոյն սպանում՝ և որբերին կոտորում ։

7 Եւ ասում՝ թէ Տէրն չի՛ տեսնում. և յակոբայ Աստուածն չի՛ իմանում :

8 Իմացէ՛ք ո՛վ յիմարներ ժողովրդի միջում. և դուք անմիտներ՝ ե՞րբ միտք կառնէք :

9 Մի՛ թէ նա որ ականջըն տնկեց՝ չի՞ լսիլ՝ կամ թէ նա որ աչքըն ստեղծեց՝ չի տեսնիլ :

10 ‘Նա որ խրատումէր ազգերին՝ մի թէ չի՞ յանդիմանիլ . հենց նա որ մարդոյն գիտութիւն է սովորցնում :

11 Տէրն ճանաչումէ մարդկանց խորհուրդները՝ որ ունայն են :

12 Երանի՛ են մարդոյն՝ որ դու խրատումես նորան Տէ՛ր . և քո օրէնքիցդ սովորցնումես նորան .

13 Որ հանգստացնես նորան չարութեան օրերից . մինչև հոր փորվի ամբարշտի համար :

14 Պատճառոր՝ Տէրն երեսից չի քցում իրան ժողովուրդը . և չի՛ թողում իրան ժառանգութիւնը :

15 Ինչուոր՝ դատաստանն դէպի արդարութիւն կդառնայ . և ամէնքն՝ որ ուղիղ են սրտով . նորա ետևէն կըգնան :

16 Ո՞վ վեր կըկենայ ինձ հետ չարերին դէմ . ո՞վ ինձ հետ կըկանգնի նորանց դէմ որ անօրէնութիւն են գործում :

17 Եթէ Տէրն չէր օգնիլ ինձ՝ քիչ կըմնար որ իմ անձս դժոխքի մէջն բնակվէր :

18 Եթէ ես ասեմ՝ թէ իմ ոտս դողդողումէ . Տէ՛ր՝ քո ողորմութիւնդ հաստատումէ ինձ :

19 Երբոր իմ նեղութիւնս շատ է իմ սրտումս՝ քո մխիթարութիւնքն ուրախացնումեն ինձ :

20 Մի՞թէ քեզ հե՞տ կըհաւասարվի ա-
նօրէնութեան աթոռն՝ որ աշխատանք է
շինում հրամանի դէմ :
21 Նորանք ժողովվումեն արդարի ան-
ձին դէմ · անմեղի արիւնըն դատապար-
տումեն :
22 Բայց Տէրն ինձ ապաւէն է և իմ
Աստուած՝ իմ յուսոյ վէմ :
23 Եւ նա նորանց կըհատուցանէ ի-
րանց անօրէնութեան պէս · և իրանց չա-
րութենովն կըջնջէ նորանց · մեր Տէր
Աստուածն կըջնջէ նորանց :

## ՍԱՂՄՈՍ · Ղ.Դ:

Եկէ՛ք ցնծանք Տէրովն՝ աղաղակե՛նք դէ-
պի մեր փրկութեան վէմն :
2 Թո՛ղ գոհութիւն տալով կանուխ
գանք նորա երեսի առաջն , սաղմոսներով
աղաղակենք դէպի նա :
3 Պատճառնոր՝ Տէրն է մեծ Աստուած ·
և մեծ թագաւոր ամէն Աստուածներին
վերայ :
4 Որ նորա ձեռումն են երկրի խորու-
թիւններն · և սարերի բարձրութիւններն
նորանն են :
5 Նորանն է ծովն · և նա արաւ նո-
րան · և նորա ձեռքն ստեղծեցին ցամաքըն :
6 Եկէ՛ք երկրպագութիւն անենք և ե-

րեսի վերայ վեր ընկնենք · ծունր դնենք մեր ստեղծօղ Աստուծոյ առաջին :

7 Պատճառոր՝ նա՛ է մեր Աստուածն՝ և մենք նորա արօտի ժողովուրդ՝ և նորա ձեռի ոչխարներ · էսօր եթէ նորա ձայնըն լսէք ·

8 Մ՛ի պնտացնէք ձեր սրտերըն ինչպէս մերիպայումն՝ ինչպէս փորձութեան օրումն անապատի մէջն :

9 Որ էնտեղ ձեր հարքն փորձեցին ինձ · քննեցին ինձ՝ և իմ գործքերըն տեսին :

10 Քառասուն տարի զզվեցայ էն ազգիցն · և ասացի · նորանք էնպէսի ժողովուրդ էն՝ որ մոլորված են սրտով · նորանք չեն ճանաչում իմ ճանապարհներըս :

11 Որ նորա համար երդում կերի իմ բարկութենումս՝ թէ որ մտնեն իմ հանգստի մէջ :

## ՍԱՂՄՈՍ · ՂԵ :

Երգեցէ՛ք Տէրին նոր երգ · երգեցէ՛ք Տէրին ամէ՛ն երկիր :

2 Երգեցէ՛ք Տէրին · օրհնեցէ՛ք նորա անունըն · քարոզեցէ՛ք օրէցօր նորա փրկութիւնըն :

3 Պատմեցէ՛ք հեթանոսների միջումն նորա փառքըն ամէն ազգերի միջումն նորա հրաշքներըն :

4 Պատճառնոր՝ Տէրն մեծ է և շատ
օրհնըված . ահաւոր է նա ամէն Աստուած-
ների վերայ ։
5 Ինչու որ՝ ազգերի ամէն Աստուածներն
կուռք էն բայց Տէրն արաւ երկինքըն ։
6 Փառք և մեծութիւն նորա առաջին
կայ . զօրութիւն և գեղեցկութիւն նորա
սրբութեան միջումն ։
7 Տուէ՛ք Տէրին ով ազգերի ցեղեր՝
տուէ՛ք Տէրին փառք և զօրութիւն ։
8 Տուէ՛ք Տէրին նորա անունի փառքըն .
ընծայ բերէ՛ք և մտէ՛ք նորա սրահներին
մէջ ։
9 Երկրպագութիւն արէ՛ք Տէրին սուրբ
զարդարանքով . վախեցէ՛ք նորա երեսիցն
ամէն երկիր ։
10 Ասացէ՛ք հեթանոսների միջումն՝ թէ
Տէրն թագաւորումէ . սրա համար աշ-
խարհքըն հաստատ կայ և չի շարժվում . նա
ժողովուրդներըն կըդատէ ուղղութենով ։
11 Երկինքըն թո՛ղ ուրախ լինի և եր-
կիրս ցնծայ . ծովն գոռգոռայ իրան լիու-
թենովն ։
12 Դաշտն ուրախանայ և ամէնն որ նո-
րանում կայ . թող ցնծան անտառի ամէն
ծառերն .
13 Տէրի առաջին . ինչու որ՝ նա գալիս
է՝ գալիս է որ երկիրըն դատէ . նա աշ-
խարհքըն կըդատէ արդարութենով , և
ժողովուրդներըն իրան ճշմարտութենովն ։

## ՍԱՂՄՈՍ· ՂԶ։

Տէրն թագաւորում է· թո՛ղ երկիրս ցըն-
ծայ և շատ կղզիներն ([illegible]) ու-
րախ լինին ։
2 Ամպ և մառախուղ նորա չորս կող-
մո՛ւմն էն· արդարութիւն և իրաւունք նորա
աթոռի հիմունք էն ։
3 Կրակ է գնում՝ նորա առաջին· և
չորս կողմով այրում է նորա թշնամիներըն ։
4 Նորա փայլակներն լուսաւորումեն
աշխարհքըս· երկիրս տեսնում է և դողում՝ ։
5 Սարերն մոմի պէս հալվումեն Տէրի ե-
րեսիցն, ամէն երկի՛ր Տէրի երեսիցն ։
6 Երկինքն պատմումեն նորա արդա-
րութիւնըն· և ամէն ժողովուրդներն տես-
նումեն նորա փառքըն ։
7 Թո՛ղ ամաչեն էն ամէնքն՝ որ կուռ
պատկերին ծառայումեն՝ որ փուչ կռքերով
պարծենումեն· թո՛ղ ամէն Աստուածներ
նորան երկրպագութիւն տան ։
8 Սիոնն լսում է և ուրախանում է· և
յուդայի աղջիկներն ցնծումեն քո ի-
րաւունքից համար ո՛վ Տէ՛ր ։
9 Պատճառոր՝ դու Տէր բարձրեալ էս
ամէն երկրի վերայ· շատ բարձրացար ա-
մէն Աստուածների վերայ ։
10 Դուք որ Տէրին սիրումէք՝ ատեցէք

չարըն · նա պահում է իրան սրբոց անձնե-
րըն · ամպարիշտների ձեռքիցն կըփրկէ նո-
րանց :
11 Լոյս է ծագում արդար մարդոյ · և
ուրախութիւն նորանց վերայ՝ որ ուղիղ են
սրտով :
12 Ուրախացէ՛ք Տէրումն ով արդարք՝ և
օրհնեցէ՛ք նորա սուրբ յիշատակըն :

## ՍԱՂՄՈՍ · ՂԸ :

### Սաղմոս :

Օրհնեցէ՛ք Տէրին նոր օրհնութենով ·
ինչուոր նա հրաշքներ արաւ · փրկեց
նորան նորա աջ ձեռն և նորա սուրբ բա-
զուկն :
2 Տէրն ճանաչացրուց իրան փրկութիւ-
նըն · և ազգերի աչաց առաջին յայտնեց
իրան արդարութիւնըն :
3 Նա յիշեց իրան ողորմութիւնըն և ի-
րան ճշմարտութիւնըն Իսրայէլի տան վե-
րայ · երկրի ամէն ծայրերն տեսին մեր Աս-
տուծոյ փրկութիւնըն :
4 Ցնծացէ՛ք Տէրի առաջին ամէն եր-
կիր · օրհնեցէ՛ք երգեցէ՛ք և սաղմոս ասա-
ցէ՛ք :
5 Սաղմոս ասացէ՛ք Տէրին քնարով ·
քնարով և սաղմոսների ձայնով :

6 Փողով և պօռուի ձայնով ցնծացէ՛ք
Տէրի թագաւորի առաջին :
7 Թո՛ղ գոռգոռայ ծովն իրան լիութե-
նովն · աշխարհքս և նորանք որ բնակվումեն
նորանում :
8 Գետերն թո՛ղ ծափ տան ձեռքով · Ե-
սարերն իրար հետ ցնծան ,
9 Տէրի առաջին · ինչուոր նա գալիս է
որ երկիրըս դատէ · նա աշխարհքըս կըդա-
տէ արդարութենով՝ և ժողովուրդներըն
ուղղութենով :

## ՍԱՂՄՈՍ · ՂԸ :

Տէրն թագաւորումէ · ժողովուրդներն
թո՛ղ շփոթվին · նա նստումէ քերօբէից
վերայ՝ թո՛ղ երկիրն շարժվի :
2 Տէրն մեծ է սիօնի միջումն · և նա
բարձր է ամէն ժողովուրդների վերայ :
3 Թո՛ղ օրհնեն քո մեծ և ահաւոր ա-
նունըդ · ինչուոր սուրբ է :
4 Եւ օրհնէն թագաւորի զօրութիւնըն՝
որ իրաւունք է սիրում · դու հաստատեցիր
ուղիղ կարգըն · իրաւունք և արդարու-
թիւն դու արիր յակօբայ մէջն :
5 Բա՛րձր արէք մեր Տէր Աստուծոյն ·
և երկրպագութիւն արէ՛ք նորա ոտը դնե-
լու տեղումն · ինչուոր սուրբ է նա :
6 Մ՝օսէս և ահարօն նորա քահանանե-

րի մէջն՝ և Սամուէլ նորանց մէջն որ նորա անունը կանչումէն՝ դէպի Տէրն կանչեցին և նա լսեց նորանց :

7 Ամպի սիւնումն խօսումէր նորանց հետ. նորանք պահումէին նորա վկայութիւնները և էն հրամանները՝ որ տուաւ նորանց :

8 Ո՛վ Տէր մեր Աստուած՝ դու լսումէիր նորանց. դու նորանց համար քաւող Աստուած էիր և վրէժխնդրութիւն անող նորանց գործքներին համար :

9 Բարձր արէք մեր Տէր Աստուծոյն և երկրպագութիւն արէ՛ք նորա սուրբ գնելոյ տեղումն, ինչու որ՝ մեր Տէր Աստուածն սուրբ է :

## ՍԱՂՄՈՍ. ՂԹ.

Գոհութեան սաղմոս :

Աղաղակեցէ՛ք դէպի Տէրն ամէն երկիր :

2 Ծառայեցէ՛ք Տէրին ուրախութենով. եկէ՛ք նորա երեսաց առաջին ցնծութենով :

3 Ճանաչեցէ՛ք որ Տէրն է Աստուած. նա արաւ մեզ, և ոչ թէ մենք՝ ու՛ր նորա ժողովուրդն և նորա արօտի ոչխարներն ենք :

4 Մտէ՛ք նորա դռներն գոհութենով .
և նորա սրահներին մէջ գոհութենով . գո-
հացէ՛ք նորանից՝ օրհնեցէ՛ք նորա անունըն :
5 Պատճառով՝ Տէրն բարի է և նորա
ողորմութիւնն յաւիտեան է . և նորա
ճշմարտութիւնն ազգից մինչև ազգ :

## ՍԱՂՄՈՍ . Ճ՛Ա :

Դաւթի սաղմոս :

Ողորմութիւն և իրաւունք կերգեմ .
Տէ՛ր քեզ սաղմոս կասեմ :
2 Իմաստութենով կըգնամ անմեղ
ճանապարհումն՝ երբոր կըգաս ինձ մօտ.
իմ սրտիս անմեղութենովն կըգնամ իմ
տան մէջն :
3 Իմ աչաց առաջին բելիարի բաներըն
չեմ դնիլ . ատումեմ նորան՝ որ անօրէնու-
թիւն է գործում . որ ինձ չըմօտենայ :
4 Ծուռ սիրտն պէ՛տք է հեռանայ ին-
ձանից . չարին չեմ ճանաչիլ :
5 Նա որ ծածուկ խօսումէ իրան ընկե-
րին դէմ . նորան կըջնջեմ . նա որ ամբար-
տաւան է աչքերով և բարձր սրտով՝ նո-
րան չեմ կարող համբերիլ :
6 Իմ աչքերս երկրի հաւատարիմներին
վերայ նայումեն որ ինձ հետ բնակվին . ով
որ անմեղ ճանապարհի վերայ է գնում՝
նա կըծառայէ ինձ :

7 Նա որ նենգութիւն է անում՝ չի բնակուիլ իմ տան միջումն. եւ նա որ սուտ է խօսում՝ հաստատ չի կենալ իմ աչաց առաջին:

8 Կանուխ առաւօտանց կըջնջեմ երկրի ամէն ամպարիշտներըն, որ Տէրի քաղաքիցն սատակեմ էն ամէնին, որ անօրէնութիւն են գործում:

## ՍԱՂՄՈՍ. ՃԲ:

Աղքատի աղօթքն, երբոր տրտմութիւններով պաշարուած է եւ իրան (սրտի) ցաւերն Տէրի առաջին թափում:

Տէ՛ր լսի՛ր իմ աղօթքիս. եւ իմ աղաղակս թո՛ղ քեզ մօտ գայ:

2 Ինչո երեսըդ մի՛ թագցներ ինձանից իմ նեղութեան օրումն. խոնարհացրո՛ւ քո ականջըդ ինձ մօտ. ինչ օր որ կանչեմ, շուտով լսի՛ր ինձ:

3 Պատճառնոր՝ իմ օրերս ծըխի պէս փչացան՝ եւ իմ ոսկերքս չոր օճախի պէս այրվեցան:

4 Իմ սիրտս կոտրվեցաւ եւ ցամաքեցաւ խոտի նման. որ իմ հաց ուտելըն էլ մոռացայ:

5 Իմ հառաչանքի ձայնիցն իմ ոսկորս իմ մարմնոյն հետ կըպաւ:

6 Ես նման էլայ հաւալուսնին անապա-
տումն. բուի (դադայդու—շէ) պէս էլայ աւեր-
ված տեղերումն ։
7 Անքուն մնացի և ծըտի պէս էլայ՝ որ
մէնակ կենումէ կըտուրներին վերայ ։
8 Ամէն օր նախատինք են տալիս ինձ
իմ թշնամիներն. և նորանք որ ինձ դէմ
քէն են պահում՝ երդում են ուտում ին-
ձանով ։
9 Պատճառնոր՝ մոխիրըն հացիպէս ու-
տումեմ՝ և իմ խմելիքըս արտասունքի հետ
խառնումեմ.
10 Քո բարկութեան և սրտմտութեան
պատճառովն՝ որ ինձ վերկալար և գետնին
քցեցիր ։
11 Իմ օրերս անցնող շուաքի պէս էն.
և ես խոտի պէս չորացայ ։
12 Բայց դու Տէր յաւիտեան կաս և քո
յիշատակդ ազգից մինչև ազգ ։
13 Դու վերկըկենաս որ ողորմիս սիօ-
նին. պատճառնոր՝ ժամանակ է նորան ո-
ղորմելոյ. ինչու որ՝ ժամանակն հասաւ ։
14 Պատճառնոր՝ քո ծառաներն հաւան
են կենում նորա քարերին. և նորա փո-
շըյն խեղճ են գալիս ։
15 Ապա հեթանոսներն կըվախենան
Տէրի անունիցն՝ և երկրի ամէն թագաւոր-
ներն նորա փառքիցն ։
16 Պատճառնոր՝ Տէրն շինումէ սիօնըն
և երևումէ իրան փառքովն ։

17 Մտիկ է տալիս խեղճերի աղօթքին ·
և նորանց աղօթքըն չի՛ անարգում :
18 Սա պիտի գրվի նոր եկող ազգի հա-
մար · և ժողովուրդն որ ստեղծվելու է՝
Տէրին կըգովէ :
19 Պատճառոր՝ նա իրան սրբութեան
բարձրութենիցն մտիկ է տալիս · Տէրն
երկնքիցն նայումէ երկրի վերայ ·
20 Որ կապվածի հառաչանքին լսէ · և
մահի որդոցըն արձակէ ·
21 Որ սիօնի մէջն Տէրի անունըն պատ-
մեն՝ և նորա գովասանքըն երուսաղէմի
մէջն :
22 Երբոր ժողովուրդներն մին տեղ կը
ժողովվին · և թագաւորութիւններն՝ Տէ-
րին ծառայելոյ համար :
23 Նա ճանապարհումն թուլացրուց իմ
զօրութիւնըս՝ և կարճացրուց իմ օրերըս :
24 Ես ասացի · իմ Աստուած վեր մի՛
առներ ինձ իմ օրերի կէսումն · քո տարիքն
են ազգից մինչև ազգ :
25 Առաջուց երկրի հիմունքըն հաստա-
տեցիր՝ և երկինքն քո ձեռաց գործն է :
26 Նորանք կըկորչին և դու կըկենաս ·
և նորանք ամէնքն շորի պէս կըմաշվին ·
հագուստի պէս կըփոխես նորանց և կը
փոխվին :
27 Բայց դու հէնց էն ես · և քո տա-
րիքն չեն վերջանալ :

28 Քո ծառաների որդիքն կբնակվին
Երկրում և նորանց զաւակն հաստատ կը
կենայ քո առաջին :

# ՍԱՂՄՈՍ ՃԳ:

Դաւթի սաղմոս :

Օրհնիր Տէրին՝ ով իմ անձն՝ և էն ա-
մէնն որ իմ ներսումն է՝ նորա սուրբ
անունըն :
2 Օրհնիր Տէրին՝ ով իմ անձն՝ և մի
մոռանար նորա էն ամէն բարիքներըն՝ որ
տուաւ քեզ :
3 Որ նա քաւում է քո ամէն մեղքերըն . և
բժշկում է քո ամէն ցաւերըն :
4 Որ նա փրկում է քո կեանքըն ապա-
կանութենից՝ և պսակում է քեզ շնորհքով
և ողորմութենով :
5 Որ նա քո ցանկութիւնըն լցնում է բա-
րութենով . և քո մանկութիւնն նորոգ-
վում է արծուի պէս :
6 Տէրն արդարութիւն և իրաւունք է
անում՝ ամէնին որ զրկված են :
7 Նա իրան ճանապարհներըն իմաց ա-
րաւ Մօսէսին՝ և իրան գործքերըն Իսրայ-
էլի որդոցն :
8 Բարեգութ և ողորմած է Տէրն . եր-
կայնամիտ և շատ քաղցրութենով :

9 Նա իսպառ չի բարկանալ և ոխ չի
պահիլ յաւիտեան :
10 Նա մեր մեղքերին պէս չի անում
մեզ . և մեր անօրէնութիւններին պէս չի
հատուցանում մեզ :
11 Այլ որքան որ երկինքն բարձր է
երկրիս վերայ՝ էնքան զօրաւոր է նորա ո֊
ղորմութիւնն նորանց վերայ՝ որ վախենու֊
մեն նորանից :
12 Որքան որ արևելքն հեռու է արև֊
մտքիցն՝ էնքան էլ հեռացրուց մեզանից մեր
անօրէնութիւններըն :
13 Ինչպէս որ հայրն գթած է որդոց
վերայ՝ էնպէս էլ Տէրն գթած է նորանց
վերայ՝ որ վախենումեն նորանից :
14 Պատճառոր՝ նա գիտումէ մեր կաղ֊
մուածքըն . յիշումէ որ հող էնք մենք :
15 Մ՝արդոյ օրերն ինչպէս խոտ են .
ինչպէս վայրի ծաղիկ՝ էնպէս ծաղկումէ :
16 Երբոր քամին փչումէ նորա վերայ՝
էլ չըկայ . և նորա տեղն էլ չի ճանաչում
նորան :
17 Բայց Տէրի ողորմութիւնն յաւիտե֊
նից մինչև յաւիտեանս նորանց վերայ է՝ որ
վախենումեն նորանից՝ և նորա արդարու֊
թիւնն որդիքներից մինչև որդիք .
18 Նորանց վերայ որ պահումեն նորա
ուխտըն՝ և յիշումեն նորա պատուիրանք֊
ներըն՝ որ անեն նորանց :

19 Տէրն իրան աթոռն հաստատեց
երկնքումն՝ և նորա թագաւորութիւնն ա-
մենին վերայ տիրապետումէ :
20 Օրհնեցէ՛ք Տէրին . ով նորա հրեշ-
տակներ՝ որ զօրեղ էք զօրութենով՝ որ
կատարումէք նորա խօսքը՝ նորա խօսքի
ձայնին լսելով :
21 Օրհնեցէ՛ք Տէրին . ով նորա ամէն
զօրքեր՝ նորա պաշտօնեաներ՝ որ նորա
կամքը անումէք :
22 Օրհնեցէ՛ք Տէրին ով նորա ամէն
գործքեր՝ նորա տէրութեան ամէն տեղե-
րումն . օրհնի՛ր Տէրին ով իմ անձն :

## ՍԱՂՄՈՍ. ՃԴ.

Օրհնի՛ր Տէրին ով իմ անձն . Տէր իմ
Աստուած դու շատ մեծ ես . գեղեցկու-
թիւն և փառք հագած ես :
2 Լոյս ես քցում քեզ վերայ ինչպէս
շոր . երկինքը տարածումես ինչպէս խո-
րան (չադըր) :
3 Նա իրան վերնատներին վերայ
ջրով ծածք է շինում . ամպերը իրան հա-
մար կառք է անում՝ քամոյ թևերին վերայ
գնումէ :
4 Իրան հրեշտակները հոգի է ա-
նում . իրան պաշտօնեաները այրող
կրակ :

5 Դա հաստատեց երկինքըն իրան հիմունքին վերայ՝ որ տեղիցն էլ չըշարժվի յաւիտեան :

6 Անդունդովն ինչպէս շորով ծածկեց նորան . ջրերն սարերին վերայ կացան :

7 Քո սաստելուցն փախչումեն՝ քո որոտմունքի ձայնիցն սարսափելով յետ գնացին :

8 Սարերն բարձրանումեն և ձորերն վէր են գալիս էնտեղն որ դու հաստատեցիր նորանց համար :

9 Դու սահման դրիր՝ որ նորանով չեն անց կենալ . յետ չեն դառնալ՝ որ երկիրըս ծածկեն :

10 Դու աղբիւրներ ես բղխացնում ձորերումն , որ սարերի միջումն ջրեր գնան :

11 Նորանք ամէն վայրի գազաններին խմացնումեն՝ և վայրի էշերն իրանց ծարաւըն անցեն կացընում :

12 Նորանց վերայ երկնքի թռչուններն բնակվում են և ճեղքների միջիցն ձայն են տալիս :

13 Դու խմացնումես սարերին քո վերնատներիցն . քո գործքերի պտուղներովն կըշտացնումես երկիրըն :

14 Դու խոտ ես բուսացնում անասուններին համար . և բանջար մարդոյ օգտին համար . որ հաց հանես երկրիցն :

15 Եւ գինին ուրախացնում է մարդոյ սիրտը՝ նորա երեսն փայլում է իւղից. և հացն է հաստատում մարդոյ սիրտը:

16 Կշտանում են Տէրի ծառերը՝ Լիբանանի մայրերը (շամ ծառերը) որ նա տնկեց:

17 Այնտեղ թռչունները բուն են դնում. և արագիլը (լէյլէկ) եղևինների վրայ տուն է շինում:

18 Բարձր սարերը վայրի այծերին համար ապաւէն են՝ և վէմերը նապաստակներին համար:

19 Դու լուսինը արիր որ ժամանակների նշան լինի. արեգակն ճանաչում է իւր մտնելը:

20 Խաւար ես դնում և գիշեր է լինում. որ նորանում անտառի ամէն գազանները ման են գալիս:

21 Առիւծների կորիւնները մռնչում են որ յափշտակեն. և Աստուածանից իրանց կերակուրը խնդրեն:

22 Երբոր արեգակն դուրս է գալիս՝ գէն են գնում և իրանց բներումն դադարումեն:

23 Մարդն դուրս է գնում իրան գործին և իրան հողագործութեան համար մինչև իրիկունն:

24 Ով Տէր որքան մեծ են քո գործքերն. նորանց ամէնը իմաստութենով ա-

բիր · երկիրս լցված է քո ստեղծվածնե-
րովը ։
25 Այս մեծ և լայն ծովս · էնտեղ սողա-
ցող կենդանիք կան որ թիւ չըկայ նորանց ·
փոքր և մեծ կենդանիք ։
26 Էնտեղ նաւերն գնումեն · էն-
տեղ է լեւիաթանն որ դու ստեղծեցիր
նորան՝ որ խաղ անէ նորանում ։
27 Սորանք ամէնքն քեզ են մտիկ տալիս՝
որ նորանց կերակուր տաս իրանց ժամանա-
կումն ։
28 Դու տալիս ես նորանց ու ժողովու-
մեն · բաց ես անում քո ձեռըդ՝ ու կըշտա-
նումեն բարութենով ։
29 Թագցնումես քո երեսըդ ու սարսա-
փումեն · վեր ես առնում նորանց հոգին
ու մեռնումեն և իրանց հողի մէջն են դառ-
նում ։
30 Քո հոգին ուղարկումես և ստեղծ-
վումեն · և երկրի երեսըն նորոգումես ։
31 Թո՛ղ փառք լինի Տէրին յաւիտեան՝
թո՛ղ ուրախ լինի Տէրն իրան գործքե-
րովը ։
32 Սա նայումէ երկրիս վերայ և էն
դողումէ · մտանում է սարերին և ծխու-
մեն ։
33 Կօրհնեմ Տէրին իմ կեանքումս ·
սաղմոս կասեմ իմ Աստուծոյն քանի որ
կամ ։

34 Թո՛ղ իմ խօսքս քաղցր լինի նորան ·
ես ուրախ կըլլինիմ Տէրով ։
35 Մեղաւորներն կըպակասվին երկ-
րից , և ամպարիշտներն էլ չէն լինիլ ·
օրհնի՛ր Տէրին ով իմ անձըն · Ալէլուիա ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԵ ։

Գոհացէ՛ք Տէրիցն՝ կանչեցէ՛ք նորա ա-
նունըն · պատմեցէ՛ք նորա գործքերըն
ազգերի մէջն ։
2 Օրհնեցէ՛ք նորան , սաղմոս ասացէ՛ք
նորան · խօսեցէ՛ք նորա ամէն հրաշքնե-
րըն ։
3 Պարծեցէ՛ք նորա սուրբ անունովն ·
Թո՛ղ ուրախ լինին նորանց սրտերն՝ որ Տէ-
րին խնդրումեն ։
4 Խնդրեցէ՛ք Տէրին և նորա զօրութիւ-
նըն · խնդրեցէ՛ք նորա երեսըն ամէն ժամա-
նակ ։
5 Յիշեցէ՛ք նորա հրաշքներըն որ ա-
րաւ , նորա նշաններըն և նորա բերանի
իրաւունքըն ։
6 Ո՛վ նորա աբրահամ ծառայի՛ զա-
ւակներ , նորա ընտրված յակոբայ որդի՛ք ·
7 Նա՛ է մեր Տէր Աստուածն · նորա ի-
րաւունքներն ամէն երկրի մէջն կան ։
8 Յաւիտեան յիշումէ իրան ուխտըն ·
էն խօսքըն որ պատուիրեց մինչև հազար
ազգ ·

9 Ին որ աբրահամի հետ դրաւ · և իրան
երդումն իսահակի հետ ։
10 Եւ հաստատեց զորան որ օրէնք լինի
յակոբայ համար՝ յաւիտենական ուխտ իս-
րայէլի համար ։
11 Ասաց · քեզ կըտամ՝ քանանի երկի-
րըն որ ձեզ ժառանգութեան վիճակ լի-
նի ·
12 Երբոր նորանք քիչ էին թւով՝
նուազ և պանդուխտ նորա մէջն .
13 Եւ ազգից ազգի մէջ գնացին՝ թա-
գաւորութենից ուրիշ ժողովրդի մէջ ։
14 Իսկի մարդկանց թոյլ չտուաւ նե-
ղացնել նորանց · և թագաւորներ պատ-
ժեց նորանց համար ։
15 Մի՛ մօտենաք [illegible] իմ օծեալներիս ,
և չար մի՛ անէք իմ մարգարէներիս ։
16 Եւ սով կանչեց երկրին վերայ՝ և
հացի ամէն զօրութիւնըն կոտրեց ։
17 Նորանց առաջն մարդ ուղարկեց ·
յօսէփին ծառայութեան մէջ ծախվեցաւ ։
18 Զարչարեցին նորա ոտները կա-
պանքի մէջ · նորա անձն երկաթի մէջ
մտաւ ·
19 Մինչև էն ժամանակն որ նորա
խօսքն եկաւ · Տէրի խօսքն փորձեց նորան ։
20 Թագաւորն ուղարկեց և արձակեց
նորան · նա որ տիրապետումէր ժողովուրդ-
ներին · ազատեց նորան ։

21 Նա տէր դրաւ նորան իրան տան վերայ՝ և իշխան իրան ամէն ապրանքին վերայ․

22 Որ իշխաններին խրատէ իրան կամքին պէս, և ծերերին իմաստուն անէ ։

23 Եւ Իսրայէլն եկաւ Եգիպտոս՝ և Յակոբն պանդուխտ էլաւ Քամայ երկրումն ։

24 Եւ նա շատ մեծացրուց իրան ժողովուրդը՝ և նորան զօրացրուց աւելի քան նորա թշնամիները ։

25 Փոխեց նորանց սրտերը որ ատեն իրան ժողովուրդը՝ և նենգութիւն անեն իրան ծառաներին վերայ ։

26 Իրան ծառայ Մովսէսին ուղարկեց՝ և Ահարոնին որ նորան ընտրեց ։

27 Նորանք ցոյց տուին նորանց միջումն նորա նշանները․ և նորա հրաշքները Քամայ երկրումն ։

28 Խաւար ուղարկեց և խաւարացրուց․ և նորանք հակառակ չըկացան նորա խօսքին ։

29 Նորանց ջրերը փոխեց արիւն․ և նորանց ձըկները սպանեց ։

30 Նորանց երկիրը գորտեր դուրս բերաւ լիութենով՝ և թագաւորների ներսի սենեակներումն (օդաներումն) էլ ։

31 Ասաց և եկաւ շանաճանճ․ և մժեղները նորանց՝ ամէն սահմաններին մէջ ։

32 Անձրևի տեղ կարկուտ տուաւ նորանց՝ և կրակի բոց նորանց երկրումն ։

33 Նորանց որթերը ([illegible]) և
թզի ծառերը զարկեց · և նորանց սահ-
մանների ծառերը փշրեց ։
34 Ասաց՝ և եկաւ մարախն և թրթուրն՝
որ խսկի թիւ չըկար ։
35 Եւ ամէն խոտ կերաւ նորանց երկ-
րումն · և նորանց արտերի պտուղը կուլ
տուաւ ։
36 Եւ նորանց երկրումն ամէն առաջի-
նեկները , ամէն զօրութեան առաջին
պտուղները զարկեց կոտրեց ։
37 Եւ նորանց հանեց արծաթով և ոս-
կով · և նորանց ցեղերումն տկար մարդ չը-
կար ։
38 Եգիպտոսն ուրախացաւ նորանց
դուրս գալու վերայ · ինչու որ՝ սրանց ահու
լախն ընկաւ նորանց վերայ ։
39 Ամպ փռեց որ ծածկոց լինի՝ և կրակ՝
որ գիշերումն լոյս տայ ։
40 Խնդրեցին և նա ուղարկեց լորամար-
գիներ (լորեր) · և երկնքի հացով կշտաց-
րուց նորանց ։
41 Վէմը պատռեց և ջրեր դուրս
բղխեցին · և գետեր գնացին անջուր տե-
ղերումն ։
42 Պատճառը՝ նա յիշեց իրան սուրբ
խօսքը՝ որ իրան Աբրահամ ծառային հետ
հաստատեց ։
43 Եւ իրան ժողովուրդը հանեց ցըն-

*ծութենով՝ և իրան ընտրվածներըն ուրա-*
*խութենով :*
44 *Եւ հեթանոսների երկիրներըն*
*տուաւ նորանց . և ազգերի վաստակներըն*
*ժառանգեցին նորանք .*
45 *Որ նորա պատուիրանքներըն պա-*
*հեն և նորա օրէնքըն կատարեն . ալէ-*
*լուիա :*

## ՍԱՂՄՈՍ · ՃԶ :

### Ալէլուիա :

*Գոհացէ՛ք Տէրիցն . ինչու որ՝ բարի է . և*
*նորա ողորմութիւնն յաւիտեան կայ :*
2 *Ո՞վ կըխօսի Տէրի զօրութիւնըն . ո՞վ*
*կիմացնէ նորա ամէն գովասանքըն :*
3 *Երանի՛ նորանց որ իրաւունք են պա-*
*հում և արդարութիւն են անում՝ ամէն*
*ժամանակ :*
4 *Յիշի՛ր մեզ Տէր էն հաճութեան պէս .*
*որ քո ժողովըրդին վերայ ունիս . մեզ տես*
*ի՛կ քո փրկութենովդ :*
5 *Որ տեսնեմ՝ քո ընտրվածների յաջո-*
*ղութիւնըն և ուրախանամ՝ քո ազգի ուրա-*
*խութենովն . և քո ժառանգութեան հետ*
*պարծենամ :*
6 *Մ՛ենք մեղանչեցինք մեր հարանց*
*հետ . անօրէնութիւն և ամպարշտութիւն*
*գործեցինք :*

7 Մ՚եր հարքն եգիպտոսումն չիմացան
քո հրաշքներըն · չըյիշեցին քո մեծ ողոր-
մութիւնըն և հակառակ կացան ծովի
մօտն՝ կարմիր ծովի մօտն ։
8 Բայց նա փրկեց նորանց իրան անու-
նին համար՝ որ իրան զօրութիւնըն ցոյց
տայ ։
9 Եւ կարմիր ծովին սաստեց և ցամաք-
վեցաւ և նորանց գնալ տուաւ անդընդի
միջովն ինչպէս անապատի մէջն ։
10 Եւ նորանց փրկեց նորա ձեռքիցն որ
ատումէր նորանց · և նորանց ազատեց
թշնամոյ ձեռքիցն ։
11 Եւ ջըրերն ծածկեցին նորանց նե-
ղացնօղներին՝ որ նորանցից մինն էլ չըմնաց ։
12 Եւ հաւատացին նորա խօսքին և
օրհնեցին նորա օրհնութիւնըն ։
13 Բայց շուտով մոռացան նորա գործ-
քերըն · և մտիկ չըտուին նորա խորհուրդ-
ներին ։
14 Եւ ցանկացան ցանկութենով անա-
պատումն՝ և փորձեցին Աստուծոյն անջուր
տեղումն ։
15 Եւ նորանց տուաւ իրանց ուզածըն ·
և ուղարկեց վատուժութիւն նորանց անձ-
ներին վերայ ։
16 Նախանձվեցան մօսէսի դէմ բանակի
(օրդու–ի) մէջն · և Տէրի օծեալ ահարօնին
դէմ ։

17 Երկիրն բացվաւ և կուլ տուաւ Դաթանին. և աբիրոնի ժողովքին ծածկեց ։
18 Կրակ բորբոքվեցաւ նորանց ժողովքումն. բոց մաշեց ամպարիշտներըն ։
19 Հորթ արին Քորեբումն՝ և երկրպագութիւն տուին ածուղի (ձուլածոյ) պատկերին ։
20 Եւ իրանց փառքըն փոխեցին խոտ ուտող հորթի նմանութեան մէջ ։
21 Մոռացան իրանց փրկիչ Աստուծոյն՝ որ մեծամեծ գործքեր արաւ Եգիպտոսումն.
22 Հրաշքներ Քամայ երկրումն և ահաւոր բաներ կարմիր ծովին վերայ ։
23 Եւ ասաց՝ սատակել նորանց՝ եթէ նորա ընտրեալ Մօսէսն կանգնած չըլինէր մէջ տեղն նորա առաջին՝ որ յետ դարձնէ նորա բարկութիւնըն որ չըսատակէ ։
24 Եւ էն ցանկալի երկիրըն անարգեցին և նորա խօսքին չըհաւատացին ։
25 Տրտնջեցին իրանց վրաններումն (չա-տըրնէլումն) և Տէրի ձայնին չըլսեցին ։
26 Եւ նա բարձրացրուց իրան ձեռըն նորանց վերայ՝ որ նորանց վէրցէ անապատի միջումն ։
27 Եւ նորանց զաւակըն հեթանոսների մէջ քցէ և նորանց երկիրների մէջ ցրվէ ։
28 Եւ Բաահաղ փեգորի եաւէն գնացին՝ և մեռած կըռքերի մատաղներըն կերին ։

29 Եւ բարկացրին Աստուծոյն իրանց
գործքերովը · և սատակմունքն նորանց վերայ
հասաւ :
30 Ապա փինէհէս վերկացաւ և քաւեց
և մահն արգելվեցաւ :
31 Եւ համարվեցաւ նորան արդարու-
թիւն ազգից մինչև ազգ յաւիտեան :
32 Եւ բարկացրին նորան Մերիպայի
ջրերին վերայ՝ և չար էլաւ Մօսէսին նո-
րանց համար :
33 Պատճառնոր՝ դառնացրին նորա հո-
գին · և նա մեղանչեց իրան պռօշներովը :
34 Նորանք չըսատակեցին էն ազգերըն՝
որ Տէրըն ասաց նորանց :
35 Եւ խառնըվեցան հեթանոսներին
հետ և սովորեցին նորանց գործքերըն :
36 Եւ ծառայեցին նորանց կռըքերին ·
և որոգայթ (Ծուղակ) էլան նորանց համար :
37 Եւ իրանց որդիքըն և իրանց աղջիկ-
ներըն մատաղ արին դևերին համար :
38 Եւ անմեղ արիւն թափեցին՝ իրանց
որդոց և իրանց աղջիկների արիւնըն , որ
նորանց մատաղ արին քանանի կռըքերին ·
և երկիրն պղծվեցաւ արիւնով :
39 Եւ նորանք պղծվեցան իրանց գործ-
քերովը · և պոռնկութիւն արին իրանց
գնացքներովը :
40 Եւ Տէրի բարկութիւնն բորբոքվե-
ցաւ իրան ժողովրդին վերայ · և նա զզվե-
ցաւ իրան ժառանգութենից :

41 Եւ նորանց մատնեց հեթանոսների
ձեռքն . և նորանց ատողներն տիրապետե-
ցին նորանց վերայ :
42 Եւ նորանց թշնամիներն նեղացրին
նորանց՝ և ցածացան նորանց ձեռքի տակն :
43 Շատ անգամ փրկեց նորանց .
բայց նորանք դառնացրին նորան իրանց
խորհուրդներովը՝ և փչացան իրանց անօ-
րէնութեանց համար :
44 Եւ նա նայեց նորանց նեղութեանն՝
երբոր նորանց աղաղակըն լսեց :
45 Եւ իրան ուխտըն յիշեց նորանց հա-
մար՝ և զղջացաւ իրան մեծ ողորմութե-
նովը :
46 Եւ նորանց ողորմութիւն գտնել
տուաւ էն ամէնի առաջին , որ գերի արին
նորանց :
47 Փրկի՛ր մեզ Տէ՛ր՝ մեր Աստուած , և
ժողովի՛ր մեզ հեթանոսների միջիցն՝ որ
գոհանանք քո սուրբ անունիցն և քո օրհ-
նութեներովդ պարծենանք :
48 Օրհնեալ է Տէրն Իսրայէլի Աստու-
ածն յաւիտենից մինչև յաւիտեանս . և ա-
մէն ժողովուրդն պիտի ասէ . ամէն . ա-
լէլուիա :

# ՍԱՂՄՈՍ · ՃԷ.

Գոհացէ՛ք Տէրիցն · ինչու որ բարի է · և
նորա ողորմութիւնն յաւիտեան է :
2 Թող ասեն այն Տէրի փրկվածները՝
որ նորանց թշնամու ձեռքիցն փրկեց :
3 Որ նորանց ժողովեց երկրներիցն ·
արևելքիցն և արևմուտքիցն , հիւսիսիցն և
ծովիցն :
4 Որ նորանք մոլորվեցան անապատի
միջումն անջուր ճանապարհումն · և բնակ-
վելոյ համար քաղաք չգտին :
5 Սոված և ծարաւ էլան · և նորանց
անձները թուլացան նորանցում :
6 Եւ դէպի Տէրն աղաղակեցին իրանց
նեղութեննումն · և նա նորանց փրկեց ի-
րանց վշտերիցն :
7 Եւ առաջնորդեց նորանց ուղիղ ճա-
նապարհով՝ որ գնան քաղաք բնակելոյ
համար :
8 Նորանք թող գոհանան Տէրիցն՝ նո-
րա ողորմութեան համար և նորա հրաշք-
ներին համար որ մարդկանց որդոց մէջն ա-
նումէ :
9 Պատճառնոր՝ նա կշտացնումէ կարօ-
տացած անձըն · և սոված անձըն լցնումէ
բարիքներով :
10 Նորանք որ խաւարի և մահի շուա-

քին մէջ նստում էին նեղութենով և եր-
կաթով կապված .
11 Նորահամար որ Աստուծոյ խօսքե-
րին հակառակ կացան և բարձրելոյ խոր-
հուրդները անարգեցին :
12 Եւ նա նորանց սիրտը ցածացրուց
վաստակով . որ տկարացան և ոչ ով չըկար
որ օգնութիւն անէր :
13 Եւ դէպի Տէրն աղաղակեցին իրանց
նեղութենումն . և նորանց փրկեց իրանց
վըշտերիցն :
14 Նորանց հանեց խաւարիցն և մահի
շուաքիցն և նորանց կապանքները կտրա-
տեց :
15 Նորանք թող գոհանան Տէրիցն նո-
րա ողորմութեան համար և նորա հրաշքնե-
րին համար՝ որ մարդկանց որդոց մէջն ա-
նում է :
16 Պատճառոր՝ նա պղնձէ դըռները
փշրեց և երկաթէ նըգերը ([illegible])
կոտրատեց :
17 Յիմարները որ իրանց անօրէնու-
թեան ճանապարհին համար՝ և իրանց անի-
րաւութեանց համար նեղութիւն քաշե-
ցին :
18 Նորանց անձները ամէն կերակրից
զզվեցան՝ և մինչեւ մահի դըռներն մօտե-
ցան :
19 Եւ դէպի Տէրն աղաղակեցին իրանց

նեղութենումն · և նորանց փրկեց իրանց
վըշտերիցըն ։
20 Իրան խօսքըն ուղարկեց և նորանց
բժշկեց և նորանց ազատեց իրանց կորուս-
տից ։
21 Նորանք թող գոհանան Տէրից՝
նորա ողորմութեան համար և նորա
հրաշքներին համար որ մարդկանց որդոց
մէջըն անում ։
22 Եւ գոհութեան պատարագներ մա-
տուցանեն՝ և նորա գործքերըն պատմեն
ցնծութենով ։
23 Նորանք որ ծովի մէջ են վեր գալիս
նաւերով և գործ են անում շատ ջրերի
մէջն ։
24 Նորանք Տէրի գործքերըն տեսին ,
և նորա հրաշքներըն խոր տեղերումն ։
25 Նա ասաց՝ և մըրիկ քամի վերկա-
ցաւ , նորա ալիքներըն բարձրացրուց ։
26 Վեր էլան երկինքըն վէր եկին ան-
դունդն՝ և նորանց անձներն մաշվեցան նե-
ղութենով ։
27 Շփոթվեցան և էստեղ էնտեղ
շարժվեցան ինչպէս հարբած մարդ · և նո-
րանց ամէն իմաստութիւնն կորաւ ։
28 Եւ դէպի Տէրն աղաղակեցին իրանց
նեղութենումն և նորանց փրկեց իրանց
վըշտերիցն ։
29 Մըրիկ քամոյն դարձրուց հանդար-

տուԹիւն . և նորա ալիքներն հանդստա-
ցան :
30 Եւ նորանք ուրախ էլան որ դադա-
րեցին . և նա առաջնորդեց նորանց դէպի
նաւահանգիստ՝ որ ցանկացան նորան :
31 Նորանք Թող գոհանան Տէրից՝
նորա ողորմուԹեան համար՝ և նորա
հրաշքներին համար որ մարդկանց որդոց
մէջն անում է :
32 Եւ բարձր անեն նորան ժողովրդի
ժողովքումն՝ և ծերերի աԹոռներումն օրհ-
նեն նորան :
33 Նա գետերըն անապատ է դարձ-
նում՝ և ջրերի գնացքներըն ծարաւ եր-
կիր :
34 Պտղաբեր երկիրըն աղէ հող, նորա
մէջ բնակողների չարուԹեան համար :
35 Անապատըն ջրերի լիճ է փոխում
և ծարաւ երկիրըն ջրերի գնացք :
36 Եւ էնտեղ է բնակացնում սոված-
ներըն և քաղաք են հաստատում բնակվե-
լու համար :
37 Եւ ցանումեն արտեր և տնկումեն
այգիքներ (բաղեր) որ տարվան պտուղնե-
րըն բերեն :
38 Եւ նա օրհնումէ նորանց որ շատ շա-
տանան . և նորանց անասուններըն չի պա-
կասացնում :
39 Մէնէլ՝ պակասվումեն և ցածանու-

մեն չարիքների նեղութենով և տրտմութենով :

40 Նա անարգանք է թափում իշխանների վերայ · թողում է նորանց մոլորվել անապատի մէջն՝ որ ճանապարհ չըկայ :

41 Եւ բարձրացնում է աղքատին նեղճութենից՝ և նորա ցեղը ոչխարների հօտին պէս շինում է :

42 Ուղիղները էս կըտեսնեն և ուրախ կըլինին · և ամէն անօրէնութիւն կըխփէ իրան բերանը :

43 Ո՞վ է իմաստուն՝ որ էս բաները պահէ · ապա միտք կանեն Տէրի ողորմութիւնները :

## ՍԱՂՄՈՍ · ՃԷ :

### Երգ · Դաւթի սաղմոս :

Իմ սիրտս պատրաստ է ով Աստուած՝ երգով կօրհնեմ սաղմոս կասեմ՝ և իմ փառքս էլ :

3 Զարթնացի՛ր սաղմոսարան և քնար · ես էլ զարթնանամ՝ կանուխ առաւօտանց :

4 Կըգոհանամ քեզանից Տէ՛ր ժողովուրդների միջումն · և սաղմոս կասեմ քեզ ազգերի միջումն :

5 Պատճառնոր՝ մեծ է քո ողորմութիւնն երկնքին վերայ՝ և քո ճշմարտութիւնն մինչև ամպերն :

6 Բարձրացի՛ր Աստուած երկնքին վե-
րայ . և քո փառքդ ամէն երկրիս վերայ :
7 Որ քո սիրելիքդ ապրին՝ թո՛ղ քո աջդ
փրկէ՝ և լսի՛ր ինձ :
8 Աստուած խօսեց իրան սուրբ տեղումն՝
ես կըցնծամ . սիւքեմ կըբաժանեմ և սու-
փօթ ձորըն կըչափեմ :
9 Իմ է գաղայադն և իմ է մանասէն .
և եփրեմն իմ գլխի զօրութիւնն է՝ յու-
դան իմ իշխանն է :
10 Մովաբն իմ լուանալոյ ամանն է .
իմ կօշիկըս եդօմայ վերայ կըքցեմ .
փղշտացոց երկրին վերայ կըցնծամ :
11 Ո՞վ կըտանի ինձ ամուր քաղաք . ո՞վ
կառաջնորդէ ինձ մինչև եդօմ .
12 Եթէ ոչ դու ո՛վ Աստուած որ դէն
քցեցիր մեզ . և չես դուրս գալիս մեր զօրքի
հետ ո՛վ Աստուած :
13 Տո՛ւր մեզ օգնութիւն նեղութեան
մէջն . ինչու որ՝ մարդոյ փրկութիւնն ու-
նայն է :
14 Աստուծով կըգործենք զօրութիւն .
և նա կոխ կըտայ մեր թշնամիներըն :

## ՍԱՂՄՈՍ · ՃԸ ։

Երգեցողներու գլխաւորին · Դաւիթին սաղմոս ։

Ո՛վ իմ փառք Աստուած՝ լուռ մի՛ կենար ։

2 Պատճառնոր՝ ամպարիշտ բերան և նենգաւոր բերան բաց էլան ինձ վերայ · խօսումեն ինձ դէմ սուտ լեզուով ։

3 Ատելութեան խօսքերով պատումեն ինձ՝ և զուր տեղը կռւումեն ինձ դէմ ։

4 Իմ սիրոյն տեղակ հակառակումեն ինձ · և ես աղօթք եմ անում ։

5 Եւ բարոյն տեղակ չար են հատուցանում ինձ · և իմ սիրոյն տեղակ ատելութիւն ։

6 Ամպարիշտ մարդ դի՛ր նորա վերայ և սատանան թո՛ղ նորա աջկողմն կանգնի ։

7 Երբոր դատուի՝ թո՛ղ դատապարտուած դուրս գայ՝ և նորա աղօթքն մեղք դառնայ ։

8 Նորա օրերն պիտի պակասին · և նորա պաշտօնըն ուրիշ պիտի առնէ ։

9 Նորա որդիքն որբ պիտի լինին · և նորա կինն որբևէրի ։

10 Եւ նորա որդիքն էստեղ և էնտեղ պիտի շուռ գան և մուրանան և հաց ուզեն իրանց աւերուած բնակարանների միջից ։

11 Փոխ տուօղն պիտի բռնէ էն ամէն
ինչ որ կայ նորան՝ և օտարներն նորա
վաստակըն պիտի յափշտակեն ։
12 Իսկի մինն չը՛լինի որ քաղցրութիւն
ցոյց տայ նորան՝ և մինն էլ չը՛լինի որ ո-
ղորմութիւն անէ նորա որբերին վերայ ։
13 Նորա զաւակներն պիտի սատակվին․
նորանց անունն մէկէլ ազգի մէջ պիտի
ջնջվի ։
14 Նորանց հարանց անօրէնութիւնն
պիտի յիշվի Տէրի առաջին՝ և նորա մօր
մեղքն չըպիտի ջնջվի ։
15 Ամէն ժամանակ Տէրի առաջին պիտի
լինի․ և նա նորա յիշատակն պիտի ջնջէ
երկրիցն․
16 Որահամար՝ որ չըյիշեց ողորմու-
թիւն անելըն․ այլ խեղճ և աղքատ և
սրտով մաշված մարդոյն հալածեց՝ որ
սպանէ ։
17 Անէծք սրեց և կըհասնէ նորան․ և
օրհնութիւն չըկամեցաւ՝ և հեռու կըլինի
նորանից ։
18 Անէծք շորի պէս հագաւ․ և էն ինչ-
պէս ջուր կըմտնէ նորա փորի մէջն՝ և ինչ-
պէս ձէթ նորա ոսկերքի մէջն ։
19 Նորան էնպէս պիտի լինի ինչպէս
շոր որ հագնումէ՝ և ինչպէս գօտիկ՝ որ
միշտ մէջքըն է կապում ։
20 Տէրի կողմիցն էս պիտի լինի նորանց

վարձքն՝ որ ինձ հակառակ են կենում և
իմ անձիս համար չար են խօսում ։
21 Բայց դու Տէ՛ր Տէր արա՛ ինձ,
ինչպէս որ վայել է քո անունին · ինչու որ՝
քո ողորմութիւնդ բարի է · փրկի՛ր ինձ ։
22 Պատճառ որ՝ ես խեղճ եմ և աղքատ ·
և իմ սիրտս խոցված է իմ ներսումս ։
23 Ես անց եմ կենում ինչպէս շուաք
որ պակասվում է · վեր եմ թափվում ինչ-
պէս մարախ ։
24 Իմ ծընկներս տկարացան պասով՝
և իմ մարմինս պակասվեցաւ պարարտու-
թենից ։
25 Ես նախատինք էլայ նորանց առա-
ջին · որ տեսնումեն ինձ՝ իրանց գըլխները
շարժումեն ։
26 Օգնի՛ր ինձ Տէ՛ր իմ Աստուած ·
փրկի՛ր ինձ քո ողորմութեան պէս ·
27 Որ իմանան՝ թէ էս է քո ձեռդ՝ թէ
դու Տէր արիր էս ։
28 Նորանք անիծումեն և դու օրհնի՛ր ·
նորանք վեր են կենում ինչ ելնեն և կամա-
չեն · բայց քո ծառան ուրախ կըլինի ։
29 Թող ամօթ հագնեն իմ հակառա-
կօղներն՝ և իրանց ամօթըն վերարկուի պէս
իրանց վերայ առնեն ։
30 Շատ կըգոհանամ Տէրիցն իմ բե-
րանովս · և շատերի միջումն կօրհնեմ նո-
րան ։

31 Պատճառը՝ նա է կանգնում աղքատի աջ կողմը . որ նորան փրկէ նորանցից՝ որ նորա անձը դատապարտումեն :

## ՍԱՂՄՈՍ ՃԹ :

Դաւթի սաղմոս :

Տէրն իմ Տէրին ասաց . նստի՛ր իմ աջ կողմս մինչև քո թշնամիներըն քո ոտացդ կոխելիք դնեմ :

2 Տէրն քո զօրութեան գաւազանըն կուղարկէ սիոնիցն . տիրապետի՛ր քո թշնամիների միջումն :

3 Քո ժողովուրդդ քո զօրութեան օրումն յօժար կամքով պատրաստ կըլինի սրբութեան զարդարանքով . ինչպէս շաղն արշալուսի արգանդիցն ելնում է կըգան քեզ քո մանկունքըն :

4 Տէրն երդուաւ և չի զղջանալ . դու ես քահանայ յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս :

5 Տէրն քո աջ կողմն է . նա կըջարդէ թագաւորներըն իրան բարկութեան օրումն :

6 Նա կըդատէ հեթանոսների միջումն . երկիրըն կըլցնէ մեռելներով , գլուխըն կըջարդէ շատ երկիրների մէջն :

7 Գետից կըխմէ ճանապարհումն . որա համար գլուխըն կըբարձրացնէ :

# ՍԱՂՄՈՍ ՃԺԱ.

## Ալէլուիա :

Տէրիցն կը գոհանամ բոլոր սրտով՝ ուղիղների ժողովքի մէջն և ժողովրդի մէջն :

2 Մեծ են Տէրի գործքերն՝ ցանկալի են էն ամենին՝ որ սիրումեն նորանց :

3 Փառք և գեղեցկութիւն են նորա գործքերն՝ և նորա արդարութիւնն մնումէ յաւիտեան :

4 Յիշատակ արաւ իրան հրաշքներին համար՝ ողորմած և գթած է Տէրն :

5 Կերակուր տուաւ նորանց՝ որ վախենումեն իրանից՝ յաւիտեան յիշումէ իրան ուխտըն :

6 Իրան գործքերի զօրութիւնըն ցոյց տուաւ իրան ժողովրդին · երբոր հեթանոսների ժառանգութիւնըն տուաւ նորանց :

7 Նորա ձեռաց գործքերն ճշմարտութիւն և իրաւունք են · նորա ամէն պատուիրանքներն հաւատարիմ են :

8 Հաստատուած են յաւիտեանս յաւիտենից · և շինած են ճշմարտութենով և ուղղութենով :

9 Փրկութիւն ուղարկեց իրան ժողովըր-

դին համար · իրան ուխտըն պատուիրեց յաւիտեան · սուրբ և ահաւոր է նորա անունն ։

10 Իմաստութեան սկիզբն Տէրի վախն է · բարի խոհեմութիւն ամէնին համար՝ որ անումեն նորան · նորա օրհնութիւնն մնումէ յաւիտեան ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԺԲ։

### Ալէլուիա ։

Երանելի է էն մարդն՝ որ Տէրիցն վախենումէ · ու նորա պատուիրանքներին շատ հաւան է կենում ։

2 Նորա զաւակն զօրաւոր կըլինի երկրիս վերայ, ուղիղների ցեղն կօրհնըվի ։

3 Ապրանք և հարստութիւն նորա տանն կըլինի · և նորա արդարութիւնն կըմնայ յաւիտեան ։

4 Լոյս է ծագում խաւարի մէջն ուղիղներին համար՝ նորանից՝ որ ողորմած գթած և արդար է ։

5 Երանի՜ էն մարդոյն՝ որ ողորմած է՝ և փոխ է տալիս · ու իրան բանըն շինումէ իրաւունքով ։

6 Պատճառնոր՝ նա յաւիտեան տեղիցն չի շարժվիլ · արդարի յիշատակն յաւիտեան կըլինի ։

7 Չար համբաւից չի վախենալ. նորա սիրտն պատրաստ է՝ որ Տէրին յուսայ.

8 Նորա սիրտն հաստատուած է և չի՛ վախենալ՝ մինչև որ իրան թշնամիներին վերայ նայի:

9 Նա փռեց և աղքատներին տուաւ. նորա արդարութիւնն կըմնայ յաւիտեան. նորա եղջիւրն կըբարձրանայ փառքով:

10 Ամպարիշտն կըտեսնէ և կըբարկանայ. իրան ատամներըն կըկրճտացնէ և կըհալվի. ամպարիշտների ցանկութիւնն կըկորչի:

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԳ.

### Ալէլուիա:

Օրհնեցէ՛ք ով Տէրի ծառաներ՝ օրհնեցէ՛ք Տէրի անունըն:

2 Տէրի անունն օրհնեա՛լ լինի՝ այսուհետև մինչև յաւիտեան:

3 Արևելքից մինչև արևմուտքն օրհնեա՛լ լինի Տէրի անունն:

4 Տէրն բարձր է ամէն ազգերին վերայ՝ և նորա փառքն երկնքին վերայ:

5 Ո՞վ է ինչպէս մեր Տէր Աստուածն՝ որ 'ի բարձունս բնակված է:

6 Որ իրան խոնարհացնում է՝ տեսնել ինչ որ երկնքումն և երկրումն է:

7 Որ աղքատին վեր է կացնում փոշուցն. և խեղճին բարձրացնում աղբիցն։

8 Եւ նստացնում իրան իշխաններին հետ՝ իրան ժողովրդի իշխաններին հետ։

9 Որ ամուլ (չբերը) կինը բնակացնում տան մէջ՝ որ նա որդոց ուրախ մայր լինի. ալէլուիա։

## ՍԱՂՄՈՍ· ՃԺԴ·

(Ալէլուիա)։

Երբոր Իսրայէլն Եգիպտոսից դուրս էր գալիս՝ յակոբայ տունն այլազգի ժողովրդի միջիցն։

2 Յուդան եղաւ նորա սրբութիւն՝ և Իսրայէլն նորա իշխանութիւն։

3 Ծովն տեսաւ և փախաւ՝ և Յորդանանն յետ դարձաւ։

4 Սարերն խոյերին (ղոչերին) պէս վերըվեր խաղացին՝ և սարերն ոչխարաց գառներին պէս։

5 Ինչ եղաւ քեզ ո՛վ ծով՝ որ փախչում ես՝ և յո՛րդանան՝ որ յետ ես դառնում։

6 Դուք ո՛վ սարեր՝ Ինչու խոյերին (ղոչերին) պէս վերըվեր էք խաղում՝ և դա՛րեր՝ ոչխարաց գառներին պէս։

7 Տէրի երեսիցն սարսափի՛ր ո՛վ երկիր՝ յակոբայ Աստուծոյ երեսիցն։

8 Որ նա վէմը ջրերի լիճ (գէօլ) է
դարձնում. և քարքարուտը ջրերի աղ-
բիւր:
9 Ո՛չ թէ մեզ Տէ՛ր՝ ոչ թէ մեզ. այլ քո
անունիդ փառք տուր՝ քո ողորմութեան
համար և քո ճշմարտութեան համար:
10 Ի՞նչու համար հեթանոսները ասեն՝
թէ ի՞նչ տեղ է նորանց Աստուածն:
11 Բայց մեր Աստուածն երկնքումն է.
նա ամէն ինչ որ կամենում է՝ անումէ:
12 Նորանց կուռքերն արծաթ և ոսկի
են. մարդոյ ձեռաց գործքեր:
13 Բերան ունին և չեն խօսում. աչք
ունին և չեն տեսնում:
14 Ականջներ ունին և չե՛ն լսում.
քիթ ունին և հոտ չեն առնում:
15 Ձեռք ունին և բուռ չեն բռնում.
ոտք ունին և չեն գնում. և իրանց կոկոր-
դովը (ղողողուղով) ձայն չեն հանում:
16 Նորանք որ նորանց շինումեն. նման
են նորանց՝ և էն ամէնքն որ յոյս են
դնում նորանց վերայ:
17 Ո՛վ իսրայէլ յուսացի՛ր Տէրին. նա
է նորանց օգնութիւնն և վահանն:
18 Ո՛վ ահարօնի տուն յուսացէ՛ք Տէ-
րին. նա է նորանց օգնութիւնն և վահանն:
19 Տէրից վախեցողնե՛ր յուսացէ՛ք Տէ-
րին. նա է նորանց օգնութիւնն և վա-
հանն:

20 Տէրն յիշում է մեզ․ նա կօրհնէ՝ նա
կօրհնէ Իսրայէլի տունը․ նա կօրհնէ Ահա-
րոնի տունը։
21 Նա կօրհնէ Տէրից վախեցողներին՝
փոքրներին մեծամեծների հետ։
22 Տէրն օրհնութեան կըշատացնէ ձեզ
վերայ․ ձեզ վերայ և ձեր որդոց վերայ։
23 Օրհնեալ էք դուք Տէրից՝ որ
ստեղծեց երկինքը և երկիրը։
24 Երկինքի երկինքն Տէրինն է և եր-
կիրը մարդկանց որդոցն տուաւ։
25 Ոչ թէ մեռելներն կօրհնեն Տէրին՝ և
ոչ թէ էն ամէնքն՝ որ դժոխքին մէջ են վէր
գալիս։
26 Բայց մենք պիտի օրհնենք Տէրին այ-
սուհետև մինչև յաւիտեան․ ալէլուիա։

## ՍԱՂՄՈՍ․ ՃԺԶ․

Ես ուրախ եմ, որ Տէրն լսեց իմ աղա-
չանքի ձայնը։
2 Պատճառնոր՝ նա իրան ականջը խո-
նարհացրուց դէպի ինձ․ և կըկանչեմ նո-
րան իմ ամէն օրերումս։
3 Մահի ցաւերն պատեցին ինձ․ և
դժոխքի վիշտերն բռնեցին ինձ․ նեղու-
թիւն և տրտմութիւն գըտի ես։
4 Բայց ես Տէրի անունը կանչեցի․ ով
Տէր փրկի՛ր իմ անձըս։

5 Ողորմած է Տէրն և արդար . և մեր
Աստուածն գթած է :
6 Տէրն պահում է պարզամիտներըն . ես
խեղճ էլայ , և Նա ապրեցրուց ինձ :
7 Ով իմ անձն յետ դարձի՛ր քո
հանգստի մէջ . ինչուոր՝ Տէրն բարի արաւ
քեզ :
8 Պատճառոր՝ դու իմ անձըս ապրեց-
րիր մահից՝ իմ աչքըս արտասունքից . և
իմ ոտներըս գայթակղութենից :
9 Ես ման կըգամ՝ Տէրի առաջին կեն-
դանեաց երկրի մէջն :

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԵ:

Ես հաւատացի և սրա համար խօսեցի . ես
շատ չարչարվեցայ :
2 Ես ասացի իմ՝ շփոթութենումս՝ թէ
ամէն մարդ սուտ է :
3 Ի՞նչ հատուցանեմ Տէրին Նորա ա-
մէն բարութեան համար , որ արաւ ինձ :
4 փրկութեան բաժակըն (Ըսաքըն) կառ-
նեմ և Տէրի անունըն կըկանչեմ :
5 Իմ ուխտերըս Տէրին կըվճարեմ Նո-
րա ամէն ժողովըրդի առաջին :
6 Պատուական է Տէրի առաջին Նորա
սրբերի մա՜հ :
7 Ով Տէր՝ ես քո ծառայ եմ . ես քո ծա-
ռայ եմ և քո աղախնի (ղարա—ւաշէ) որդին .
դու իմ կապանքներըս յետ արիր :

8 Քեզ գոհութեան պատարագ կըմա-
տուցանեմ. և Տէրի անունըն կըկանչեմ:
9 Իմ ուխտերըս Տէրին կըվճարեմ՝ նո-
րա ամէն ժողովրդի առաջին.
10 Տէրի տան սրահներումն. քո միջումն
Երուսաղէմ. ալէլուիա:

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԶ:

Օրհնեցէ՛ք Տէրին ով ամէն ազգեր՝
գովեցէ՛ք նորան ո՛վ ամէն ժողովուրդներ:
2 Պատճառով՝ նորա ողորմութիւնն զօ-
րաւոր է մեզ վերայ. և Տէրի ճշմարտու-
թիւնն յաւիտեան կայ. ալէլուիա:

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԷ:

Գոհացէ՛ք Տէրիցն. ինչուոր՝ բարի է՝ և
նորա ողորմութիւն յաւիտեան կայ:
2 Թո՛ղ իսրայէլն ասէ՝ թէ նորա ողոր-
մութիւնն յաւիտեան կայ:
3 Ահարոնի տունն ասէ՝ թէ նորա ողոր-
մութիւն յաւիտեան կայ:
4 Տէրից վախեցողներն ասեն՝ թէ նորա
ողորմութիւնն յաւիտեան կայ:
5 Նեղութեան միջից Տէրին կանչեցի՝
և Տէրն լսեց ինձ և հանեց ինձ լայնարձակ
տեղ:
6 Տէրն ինձ հետ է, չե՛մ վախենալ.
մարդն ինձ ի՞նչ կանէ:

7 Տէրն իմ օգնական է. և ես իմ
թշնամիներիս վերայ կընայեմ ։
8 Լաւ է Տէրին յուսալ՝ քան թէ մարդ-
կանց յուսալ ։
9 Լաւ է Տէրին յուսալ քան թէ իշ-
խաններին յուսալ ։
10 Ամէն հեթանոսները պատեցին ինձ՝
Բայց Տէրի անունովը կըջարդեմ նորանց ։
11 Ամէն կողմով պատեցին ինձ՝ Բայց
Տէրի անունովը կըջարդեմ նորանց ։
12 Պատեցին ինձ ինչպէս մեղրի ճան-
ճեր. վառվեցան ինչպէս փշերի կրակ.
Բայց Տէրի անունով կըջարդեմ նորանց ։
13 Զարկելով զարկեցին ինձ որ վէր
ընկնիմ, բայց Տէրն օգնեց ինձ ։
14 Տէրն իմ զօրութիւն և սաղմոս է.
նա եղաւ ինձ համար փրկութիւն ։
15 Ցնծութեան և փրկութեան ձայն
կայ արդարների բնակարաններումը. Տէրի
աջն զօրութիւն է անում ։
16 Տէրի աջն բարձր է. Տէրի աջն զօ-
րութիւն է անում ։
17 Ես չեմ մեռնիլ՝ կապրիմ. և Տէրի
գործերն կըպատմեմ ։
18 Խրատելով խրատեց ինձ Տէրն՝
բայց մահին մէջ չըմատնեց ինձ ։
19 Բացէ՛ք ինձ համար արդարութեան
դռները որ նորանց միջովը մտնեմ՝ և
Տէրիցն գոհանամ ։
20 Այս է Տէրի դուռն. արդարները
կըմտնեն նորանով ։

21 Կըգոհանամ քեզանից՝ որ ինձ լսեցիր
և ինձ համար փրկութիւն եղար ։
22 Այն քարն՝ որ շինօղներն անարգե-
ցին՝ նա եղաւ անկիւնի գլուխ ։
23 Այս բանս Տէրիցն եղաւ՝ և զարմանա-
լի է մեր աչքերի առաջին ։
24 Այս էն օրն է որ Տէրն արաւ․ թող
ցնծանք և ուրախ լինինք սորանում ։
25 Ո՛վ Տէր փրկի՛ր․ ո՛վ Տէր յաջո-
ղի՛ր ։
26 Օրհնեալ է նա՝ որ գալիս է Տէրի ա-
նունովը․ օրհնումենք ձեզ, որ Տէրի տա-
նիցն էք ։
27 Տէրն է Աստուած՝ որ լոյս է երևաց-
նում մեզ․ մատաղներըն կապեցէ՛ք չուան-
ներով մինչև սեղանի եղջիւրներն ։
28 Դու ես իմ Աստուածն և կըգոհա-
նամ քեզանից․ ի՛մ Աստուած բարձր կա-
նեմ քեզ ։
29 Գոհացէ՛ք Տէրիցն․ ինչու որ՝ բարի
է և նորա ողորմութիւնն յաւիտեան կայ ։

## ՍԱՂՄՈՍ ՃԺԸ ։

Երանելի՛ են նորանք՝ որ անմեղ են ճա-
նապարհով․ որ Տէրի օրէնքումն
գնում են ։
2 Երանելի՛ են նորանք՝ որ նորա վկա-
յութիւններըն պահում են և բոլոր սըր-
տով խնդրումեն նորան ։

3 Պատճառը՝ նորանք անօրէնութիւն չեն գործում՝ այլ նորա ճանապարհներումն գնումեն ։

4 Դու պատուիրեցիր քո պատուիրանքներըն որ շատ պահեն նորանց ։

5 Երանի՛ թէ իմ ճանապարհներս յաջողվէին՝ որ քո հրամաններըն պահեմ ։

6 Այն չե՛մ ամաչիլ՝ երբոր քո ամէն պատուիրանքներին մտիկ կըտամ ։

7 Ես կըգոհանամ քեզանից սրտի ուղղութենով․ երբոր քո արդարութեան իրաւունքներըն կըսովորեմ ։

8 Քո հրամաններըն կըպահեմ․ մի՛ թողեր ինձ իսպառ ։

9 Երիտասարդն ի՞նչով յիստակ կանէ իրան ճանապարհըն․ իրան անձըն քո բանին պէս պահելով ։

10 Իմ բոլոր սրտովս խնդրեցի քեզ՝ թող մի՛ տար որ քո պատուիրանքներիցն մոլորվիմ ։

11 Իմ սրտումս թագցրի քո խօսքերըն՝ որ չըմեղանչեմ քեզ դէմ ։

12 Օրհնեալ ես դու Տէր․ սովորցրու ինձ քո հրամաններըն ։

13 Իմ պռօշներովս պատմումեմ քո բերանի ամէն իրաւունքներըն ։

14 Քո վկայութեանց ճանապարհովն ուրախանումեմ՝ ինչպէս ամէն ջերմ հարստութենով ։

15 Քո պատուիրանքներին վերայ կըմըտածեմ․ և քո ճանապարհին մտիկ կըտամ։

16 Քո հրամաններովը կուրախանամ՝ և քո խօսքըն չեմ մոռանալ։

17 Բարի' արա քո ծառային․ որ ապրիմ և քո խօսքըն պահեմ։

18 Բա՛ց արա իմ աչքերըս՝ որ քո օրէնքի հրաշքներին մտիկ անեմ։

19 Պանդուխտ (ղարիբ) եմ երկրիս վերայ․ մի' թագցներ ինձանից քո պատուիրանքներըն։

20 Իմ անձս մաշված է՝ ամէն ժամանակ ցանկանալով քո իրաւունքներին։

21 Դու սաստեցիր անիծված ամբարտաւաններին՝ որ քո պատուիրանքներիցն մոլորվեցան։

22 Նախատինքըն և անարգանքըն յետ դարձրու ինձանից․ ինչու որ՝ քո վկայութիւններըն պահումեմ։

23 Իշխաններ էլ նստումեն և ինձ դէմ խօսումեն՝ Բայց քո ծառան քո հրամաններին վերայ է մտածում։

24 Իրաւի' որ քո վկայութիւններն իմ ուրախութիւնն են՝ և ինձ խորհուրդ տըւող մարդիք են։

25 Իմ անձս կըպաւ հողի հետ՝ ապրեցրու ինձ քո խօսքին պէս։

26 Ես իմ ճանապարհներըս պատմումեմ

և դու լսումես ինձ. սովորցրու ինձ քո
հրամաններըն :
27 Քո պատուիրանքների ճանապարհըն
իմաց արա՛ ինձ. և քո հրաշքներին վերայ
կըմտածեմ :
28 Իմ անձս թափվեցաւ տրտմութենով՝
հաստատի՛ր ինձ քո խօսքին պէս :
29 Սուտութեան ճանապարհըն հեռաց-
րու ինձանից՝ և քո օրէնքըն շնորհի՛ր ինձ :
30 Ես ճշմարտութեան ճանապարհըն
ընտրեցի. և քո իրաւունքներըն իմ առա-
ջիս դրի :
31 Քո վկայութիւններին մօտեցայ՝
Տէ՛ր ամօթ մի՛ աներ ինձ :
32 Քո պատուիրանքների ճանապար-
հո՛վն կըվազեմ. ինչուոր՝ դու իմ սիրտըս
հանգստացրի՛ր :
33 Տէ՛ր ցոյց տուր ինձ քո հրամանների
ճանապարհըն՝ որ պահեմ նորան մինչև
վերջն :
34 Իմաստուն արա՛ ինձ՝ որ քո օրէնքըն
քննեմ և նորան պահեմ բոլոր սրտով :
35 Առաջնորդի՛ր ինձ քո պատուիրանք-
ների շաւիղներումն (կղ—մն). ինչուոր՝ նո-
րանց հաւան կացայ :
36 Խոնարհացրու իմ սիրտըս դէպի քո
վկայութիւններն՝ և ոչ թէ դէպի ագահու-
թիւն :
37 Յե՛տ դարձրու իմ աչքերըս՝ որ ու-

նայն բան չըտեսնեն. Եւ քու ապրեցրու ինծի
քու ճանապարհներուդ մէջ :
38 Հաստատէ՛ր քու խօսքըդ՝ քու ծառա-
յին համար՝ որ քեզանից վախենայ :
39 Ե՛տ դարձրու ինձանից իմ նախա-
տինքըս՝ որ նորանից վախեցայ՝ ինչու որ՝ քու
իրաւունքներդ բարի են :
40 Ահա ցանկանում եմ քու պատուիրանք-
ներին. քու արդարութեանովդ ապրեցրու
ինձ :
41 Տէ՛ր թո՛ղ քու ողորմութիւնն գայ
ինձ վերայ՝ և քու փրկութիւնն քու խօսքին
պէս :
42 Այպա ես պատասխան կըտամ նորանց
որ ինձ նախատինք են տալիս խօսքով. ին-
չու որ՝ քու խօսքին յուսացած եմ :
43 Եւ իսկի քու ճշմարտութեան խօսքըն
մի՛ հեռացներ իմ բերանիցս. ինչու որ՝ քու
իրաւունքին յուսացած եմ :
44 Այպա քու օրէնքըն կըպահեմ ամէն
ժամանակ՝ յաւիտեանս յաւիտենից :
45 Եւ լայնարձակ կըգնամ. ինչու որ՝
քու պատուիրանքներըն խնդրեցի :
46 Եւ քու վկայութիւններին համար կը
խօսիմ թագաւորների առաջին՝ և չեմ ա-
մաչիլ :
47 Եւ քու պատուիրանքներովն կուրա-
խանամ. որ նորանց սիրում եմ :
48 Եւ իմ ձեռքըս կըբարձրացնեմ դէպի

քո պատուիրանքներն՝ որ նորանց սիրու-
մեմ. և քո հրամաններին վերայ կըմտա-
ծեմ:
49 Յիշի՛ր քո ծառայի վերայ՝ Էլած
խօսքըն, որ նորան յուսալ տուիր ինձ:
50 Իմ նեղութեանումս իմ մխիթարու-
թիւնս էն է, որ քո խօսքն ապրեցնումէ
ինձ:
51 Ամբարտաւաններն ինձ վերայ շատ
ծաղր են անում. Բայց ես քո օրէնքից
չեմ հեռանում:
52 Տէ՛ր յիշում եմ քո իրաւունքներըն
յաւիտենից՝ և մխիթարվում եմ:
53 Նարկութիւն բռնեց ինձ էն ամպա-
րիշտներին համար՝ որ քո օրէնքըն թողու-
մեն:
54 Քո հրամաններն ինձ համար երգ
են իմ պանդըխտութեան տան մէջն:
55 Տէ՛ր գիշերումն յիշում եմ քո անու-
նըդ՝ և պահում եմ քո օրէնքըն:
56 Էս է իմ ապրանքս, որ քո հրաման-
ներըն պահում եմ:
57 Իմ բաժինս դու ես ով Տէ՛ր. ես ա-
սացի թէ քո խօսքերըն կըպահեմ:
58 Աղաչում եմ քո առաջիդ բոլոր սըր-
տով՝ ողորմի՛ր ինձ քո խօսքին պէս:
59 Ես մտածում եմ իմ ճանապարհներիս
վերայ. և իմ ոտներըս դէպի քո վկայու-
թիւններն եմ դարձնում:

60 Շուտ եմ անում և չե՛մ ուշանում, որ քո պատուիրանքներըն պահեմ :

61 Ամպարիշտների չուաններըն պատեցին ինձ, Բայց ես քո օրէնքըն չեմ՝ մոռանում :

62 Կէս գիշերումն վեր եմ կենում՝ որ քեզանից գոհանամ քո արդար իրաւունքներին համար :

63 Ես ընկեր եմ էն ամէնին՝ որ վախենում են քեզանից՝ և քո պատուիրանքներըն պահումեն :

64 Տէ՛ր երկիրս լիքն է քո ողորմութենովն. քո հրամաններըն սովորցրու ինձ :

65 Բարի արիր քո ծառային Տէ՛ր, քո խօսքին պէս :

66 Բարի խրատ և գիտութիւն սովորցրու ինձ. ինչու որ՝ քո պատուիրանքներին հաւատումեմ :

67 Դեռ որ ես խոնարհված չէի, սխալվեցայ. բայց հիմիկ քո խօսքըն պահումեմ :

68 Բարի՛ ես դու, և բարի՛ անող. սովորցրու ինձ քո հրամաններըն :

69 Ամբարտաւաններըն սուտ են հնարում ինձ վերայ. Բայց ես բոլոր սրտով կըպահեմ քո պատուիրանքներըն :

70 Նորանց սիրտն պարարտ է ինչպէս ճրագու. Բայց ես ուրախանումեմ քո օրէնքովն :

71 Լաւ է ինձ համար՝ որ խոնարհվեցայ՝ որ քո հրամաններըն սովորիմ :

72 Բարի է ինծ համար քո բերանիդ օ-
րէնքն՝ աւելի քան թէ հազարաւոր հատ
ոսկի և արծաթ :

73 Քո ձեռքդ արին ինծ և հաստատե-
ցին ինծ · իմաստուն արա ինծ՝ որ քո պա-
տուիրանքներըն սորվիմ :

74 Քեզանից վախեցողներն կըտեսնեն
ինծ և ուրախ կըլինին · ինչու որ՝ քո խօս-
քին յուսացայ :

75 Գիտեմ Տէ՛ր որ քո դատաստան-
ներդ արդարութենով են · և իրաւունքով
խոնարհացրի՛ր ինծ :

76 Թող քո ողորմութիւնն լինի՛ ինծ
մխիթարելոյ համար՝ քո խօսքին պէս որ
քո ծառային տուեր :

77 Թող քո բարեգթութիւնն ինծ վե-
րայ գայ որ ապրիմ · ինչու որ՝ քո օրէնքն
իմ ուրախութիւն է :

78 Ամբարտաւաններն թող ամօթ լի-
նին՝ պատճառնոր՝ ստութենով անիրաւ-
ութիւն գործեցին ինծ վերայ · բայց ես քո
պատուիրանքներին վերայ եմ խօսում :

79 Թող ինծ մօտ դառնան քեզանից
վախեցողներն՝ և նորանք որ քո վկայու-
թիւններըն ճանաչումեն :

80 Թող իմ սիրտս անմեղ լինի քո հրա-
մաններին մէջն · որ չի ամաչեմ :

81 Իմ անձս մաշվեցաւ քո փրկութեանն
անձկանալով · բայց ես քո խօսքին յուսա-
այ :

82 Իմ աչքերս մաշվեցան քո խօսքին ցանկանալով. ես ասում եմ. Ե՞րբ կըմխիթարես ինձ։

83 Պատճառ որ՝ ես ծխի մէջ տըկ- տըկի պէս էլայ. Բայց քո հրամաններըն չեմ մոռանում։

84 Քանի՞ են քո ծառայի օրերն. ե՞րբ դատաստան կանես իմ հալածօղներին։

85 Ամբարտաւանները հորեր փորեցին ինձ համար՝ որ քո օրէնքին պէս չեն։

86 Քո ամէն պատուիրանքները ճշմարիտ են. զուր տեղն հալածումեն ինձ. օգնի՛ր ինձ։

87 Մ՚ին քիչ էլ մնաց՝ որ ինձ կորցնէին երկրի մէջն. Բայց ես քո պատուիրանքներըն չեմ թողում։

88 Քո ողորմութեան պէս ապրեցրու ինձ. և քո բերանի վկայութիւններըն կըպահեմ։

89 Տէ՛ր քո խօսքդ յաւիտեան հաստատ կայ երկնքումն։

90 Քո ճշմարտութիւնն ազգէ ազգից մինչև ազգ՝ դու երկիրըն հաստատեցիր և կենում է։

91 Քո հրամաններին պէս կենումեն էս օր՝ ինչու որ ամէնքն քո ծառայ են։

92 Եթէ քո օրէնքն իմ ուրախութիւն չըլինէր՝ ես վաղուց կորած կըլինէի իմ խեղճութենումն։

93 Յաւիտեան չեմ մոռանայ քո պա-
տուիրանքներըն · ինչու որ՝ նորանցով ապ-
րեցրիր ինձ ։
94 Ես քունն եմ, փրկի՛ր ինձ · ինչու որ՝
քո պատուիրանքներըն խնդրումեմ ։
95 Ամպարիշտներըն սպասումեն ինձ՝ որ
կորցնեն ինձ · Բայց ես քո վկայութիւննե-
րըն միտքս եմ առնում ։
96 Ամէն կատարեալ բանի վերջըն տե-
սի Բայց քո պատուիրանքն շատ լայն ար-
ձակ է ։
97 Ո՜րքան եմ սիրում քո պատուի-
րանքներըն · ամէն օր մտածումեմ նորանց
վերայ ։
98 Քո պատուիրանքներն ինձ իմ
թշնամիներիցն իմաստուն են անում · ին-
չու որ յաւիտեան իմն են ։
99 Աւելի իմաստուն էլայ քան թէ իմ
ամէն վարժապետներս, ինչու որ՝ քո վկա-
յութիւններին վերայ մտածումեմ ։
100 Աւելի խելացի էլայ քան թէ ծե-
րերն · ինչու որ՝ քո պատուիրանքներըն պա-
հումեմ ։
101 Ամէն չար ճանապարհից իմ ոտնե-
րս յետ եմ քաշում · որ քո խօսքըն պա-
հեմ ։
102 Քո իրաւունքներից չե՛մ հեռանում ·
ինչու որ՝ դու ես սովորցնում ինձ ։
103 Ո՛րքան քաղցր է իմ քիմքումս (պա-

[illegible]) քո խօսքն · աւելի քան մեղրն իմ բերանոյ համար ։

104 Քո պատուիրանքներովն ես իմաստուն էլայ · սրա համար ստութեան ամէն ճանապարհըն ատումեմ ։

105 Քո խօսքդ ճրագ է իմ ոտներին համար՝ և լոյս է իմ ճանապարհիս վերայ ։

106 Ես երդուայ և կըկատարեմ, թէ քո արդարութեան իրաւունքըն կըպահեմ ։

107 Ես շատ խոնարհվեցայ · Տէ՛ր ապրեցրո՛ւ ինձ քո խօսքինպէս ։

108 Իմ բերանիս կամաւոր մատաղներին հաւան կաց Տէ՛ր · և քո իրաւունքներըն սովորցրո՛ւ ինձ ։

109 Իմ անձս ամէն ժամանակ իմ ձեռքումն է · և քո օրէնքըն չեմ մոռանում ։

110 Ամպարիշտներն որոգայթ (Թակարդ) դրին ինձ համար · բայց ես քո պատուիրանքներիցն չեմ մոլորվում ։

111 Ես քո վկայութիւններըն ժառանգեցի մինչև յաւիտեան · ինչու որ՝ նորանք իմ սրտիս ցնծութիւն են ։

112 Ես խոնարհացրի իմ սիրտըս՝ որ քո հրամաններըն անեմ մինչև յաւիտեան ։

113 Անօրէն մարդկանց ատումեմ, և քո օրէնքըն սիրումեմ ։

114 Իմ ապաւէնն և պահապանն դու ես · քո խօսքին յուսացայ ։

115 Հեռո՛ւ կացէ՛ք ինձանից ո՛վ չարեր ·

և ես իմ Աստուծոյ պատուիրանքներըն
կըպահեմ :
116 Պահպանի՛ր ինձ քո խօսքի պէս և
կապրիմ . և ամօթ մի՛ անիր ինձ իմ յու-
սոյ համար :
117 Օգնի՛ր ինձ և կապրիմ . և ամէն
ժամանակ քո հրամաններին մտիկ կըտամ :
118 Դէն ես քցում էն ամէնին՝ որ քո
հրամաններից հեռանումեն . ինչու որ՝ նո-
րանց նենգաւորութիւնն սուտ է :
119 Դու կըկղանք ես համարում երկրի
ամէն ամպարիշտներըն . սորա համար սիրու-
մեմ ես քո վկայութիւններըն :
120 Իմ մարմինս դողումէ քո ահից՝ և
քո դատաստաններից վախենումեմ :
121 Ես իրաւունք և արդարութիւն եմ
անում . մի՛ մատներ ինձ նորանց ձեռքն որ
նեղացնումեն ինձ :
122 Պահպանի՛ր քո ծառային՝ որ բարի
լինի նորան . որ ամբարտաւանները չընե-
ղացնեն ինձ :
123 Իմ աչքերս մաշվեցան քո փրկու-
թեանն և քո արդարութեան խօսքին ցան-
կանալով :
124 Քո ծառային հետ արա՛ քո ողոր-
մութեան պէս . և քո հրամաններըն սո-
վորցրո՛ւ ինձ :
125 Ես քո ծառայ եմ, իմաստուն արա՛
ինձ՝ որ քո վկայութիւններըն ճանաչեմ :

126 Ժամանակ է որ Տէրն է՛ անէ՝ նորանք քո օրէնքըն խափանեցին ։

127 Սրա համար սիրում եմ քո պատուիրանքներըն աւելի քան թէ ոսկի և քան թէ ազնիւ ոսկի ։

128 Սրա համար էլ ամէն պատուիրանքներըն ամէն բանի մէջ ուղիղ եմ պահում. և ստութեան ամէն ճանապարհըն ատում եմ ։

129 Քո վկայութիւններն զարմանալի են. սրա համար իմ անձս պահում է նորանց ։

130 Քո խօսքերի յայտնութիւնն լոյս է տալիս՝ և իմաստուն է անում պարզամիտներըն ։

131 Իմ բերանըս բաց եմ անում և հոգի առնում. ինչու որ՝ քո պատուիրանքներին ցանկանում եմ ։

132 Նայի՛ր ինձ վերայ և ողորմի՛ր ինձ՝ ինչպէս որ նորանց ես անում՝, որ քո անունըն սիրում են ։

133 Իմ գնացքըս հաստատի՛ր քո խօսքի մէջն՝ և իսկի անօրէնութիւն չի՛ տիրապետէ ինձ վերայ ։

134 Փրկի՛ր ինձ մարդկանց բռնութենիցն՝ և քո պատուիրանքներըն կըպահեմ ։

135 Թո՛ղ քո երեսդ լուսաւորէ քո ծառային վերայ. և սովորեցրու ինձ քո հրամաններըն ։

136 Ջրերի առուներ են վէր գալիս
իմ աչքերիցս՝ սրա համար որ քո օրէնքըն
չեն պահում ։
137 Դու արդար ես Տէ՛ր . և քո դա-
տաստաններըն ուղիղ են ։
138 Քո վկայութիւնների արդարու-
թիւնըն պատուիրեցիր . և նորանք շատ
ճշմարիտ են ։
139 Իմ նախանձս ինձ մաշեց՝ նրա հա-
մար՝ որ իմ թշնամիներս քո խօսքըն մոռա-
նումեն ։
140 Քո խօսքն շատ յստակած է . և
քո ծառան սիրումէ նորան ։
141 Ես ցած եմ և անարգված . Բայց քո
պատուիրանքներըն չեմ մոռանում ։
142 Քո արդարութիւնն յաւիտենա-
կան արդարութիւն է . և քո օրէնքն
ճշմարիտ է ։
143 Նեղութիւն և ցաւ գտին ինձ .
Բայց քո պատուիրանքներն իմ ուրախու-
թիւնն են ։
144 Քո վկայութիւնների արդարու-
թիւնն յաւիտեան է . իմաստուն արա ինձ
և կապրիմ ։
145 Բոլոր սրտով կանչումեմ . լսի՛ր ինձ
Տէ՛ր՝ որ քո հրամաններըն պահեմ ։
146 Դէպի քեզ եմ կանչում , փրկիր
ինձ և քո վկայութիւններըն կըպահեմ ։
147 Կանուխ եմ գալիս լուսանալըս ժա-

մանակումն և աղաղակումեմ․ ես քո խօսքին յուսացայ ։

148 Վաղուց գիշերով զարթնումեն իմ աչքերս՝ որ քո խօսքին վերայ մտածեմ ։

149 Իմ ձայնիս լսի՛ր քո ողորմութեան պէս․ Տէ՛ր քո իրաւունքին պէս ապրեցրու ինձ ։

150 Նորանք որ անօրէնութեանն են հետևում՝ մօտեցան․ նորանք քո օրէնքիցն հեռացան ։

151 Տէ՛ր դու մօտիկ ես․ և քո ամէն պատուիրանքներն ճշմարտութիւն են ։

152 Առաջուց իմացայ քո վկայութիւններիցն՝ որ դու հաստատեցիր նորանց յաւիտեան ։

153 Տե՛ս իմ խեղճութիւնըս և փրկի՛ր ինձ․ ինչուոր՝ քո օրէնքըն չեմ մոռանում ։

154 Ինձ իրաւունք արա և ազատի՛ր ինձ․ քո խօսքին համար ապրեցրու ինձ ։

155 Փրկութիւնն հեռու է ամբարիշտներիցն՝ ինչուոր՝ քո հրամաններըն չե՛ն խնդրում ։

156 Տէ՛ր քո բարեգթութիւնն շա՛տ է․ քո իրաւունքին պէս ապրեցրու ինձ ։

157 Շատ են նորանք՝ որ հալածումեն և նեղացնումեն ինձ․ Բայց քո օրէնքիցն դուրս չե՛մ գալիս ։

158 Ես տեսնումեմ ապստամբվածներըն և զզվումեմ․ նրահամար որ նորանք քո խօսքըն չե՛ն պահում ։

159 Տե՛ս որ քո պատուիրանքներըն սիրում եմ. Տէ՛ր քո ողորմութեան պէս ապրեցրու ինձ :

160 Քո խօսքի սկիզբն ճշմարտութիւն է. և քո արդարութեան ամէն իրաւունքներն յաւիտեան կան :

161 Իշխաններ զուր տեղ հալածում են ինձ. բայց իմ սիրտս վախենում է քո խօսքերիցն :

162 Ես ցնծում եմ քո խօսքովդ՝ ինչպէս նա՝ որ շատ աւար (Եաղմա) է գտնում :

163 Ստութիւնըն ատում եմ և գարշելի եմ համարում. իսկ քո օրէնքըն սիրում եմ :

164 Օրն եօթն անգամ օրհնում եմ քեզ՝ քո արդարութեան իրաւունքներին համար :

165 Շատ խաղաղութիւն կայ նորանց՝ որ քո օրէնքըն սիրում են և գայթակղութիւն չըկայ նորանց համար :

166 Տէ՛ր ես քո փրկութեանն եմ սպասում. և քո պատուիրանքներըն կատարում եմ :

167 Իմ անձս պահում է քո վկայութիւններըն. և ես շատ սիրում եմ նորանց :

168 Ես պահում եմ քո պատուիրանքներըն և քո վկայութիւններըն. ինչու որ՝ իմ ամէն ճանապարհներս քո առաջին են :

169 Տէ՛ր թող իմ աղաղակս մօտենայ քո առաջին. քո խօսքի պէս իմաստուն արա՛ ինձ :

170 Թող իմ աղաչանքս մտնէ քո առա-
ջին՝ քո խօսքին պէս փրկէ՛ր ինծի :
171 Իմ պռօշներս օրհնութիւն կըբըղ-
խեն՝ երբոր քո հրամաններըն կըսորվեցնես
ինծի :
172 Թող իմ լեզուն քո խօսքին համար
խօսի․ ինչուոր՝ քո ամէն պատուիրանքներն
արդարութիւն են :
173 Թող քո ձեռք ինծի օգնական ըլլի․
ինչուոր՝ քո պատուիրանքներըն ընտրու-
մեմ :
174 Տէ՛ր ես ցանկանումեմ քո փրկու-
թեանն․ և քո օրէնքն իմ ուրախու-
թիւն է :
175 Թող իմ անձս ապրի և քեզ օրհնէ․
և քո իրաւունքներն օգնեն ինծի :
176 Ես մոլորվեցայ ինչպէս կորած ոչ-
խար․ մտն եկ քո ծառային․ ինչուոր՝ քո
պատուիրանքներըն ես չի մոռացայ :

## ՍԱՂՄՈՍ․ ՃԺԹ․

### Աստիճաններու Երգ :

Իմ նեղութենումս դէպի Տէրն կանչեցի․
և նա լսեց ինծի :
2 Տէ՛ր փրկէ՛ր իմ անձըս սուտ պռօշնե-
րիցն՝ նենգաւոր լեզուիցն :
3 Ի՞նչ կըտայ քեզ , և ի՞նչ կանէ քեզ
նենգաւոր լեզուն :

4 Նա՛ է ինչպէս զօրաւոր մարդոյ սուր նետերն․ ինչպէս անծուխներն գիհինների (տըրտու-ճըներէ) միջումն ։

5 Վա՛յ ինձ՝ որ պանդուխտ եմ մօսոքի մէջն․ և բնակվում եմ կեդարի վրանների (չադըրներէ) մէջն ։

6 Շատ երկար է իմ անձիս համար բնակվիլ նորանց հետ՝ որ խաղաղութիւնըն ատումեն ։

7 Ես խաղաղութիւն եմ պահում․ բայց երբոր խօսում եմ՝ նորանք կռիւ են անում։

## ՍԱՂՄՈՍ· ՃԻ ։

### Աստիճաններէ երգ ։

Ես բարձրացնում եմ իմ աչքերըս դէպի սարերն՝ որ էն տեղից օգնութիւն կըգայ ինձ համար ։

2 Իմ օգնութիւնն Տէրիցն է՝ որ երկինքըն և երկիրըս արաւ ։

3 Նա քո ոտին դողալ չիտալ․ քո պահապանն չի քնիլ ։

4 Ահա՛ իսրայէլի պահապանն չի ննջիլ և քուն չի լինիլ ։

5 Տէրն քո պահապանն է․ Տէրն քեզ շուաք է քո աջ ձեռին վերայ ։

6 Ցերեկումն արեգակն չի զարկիլ քեզ՝ ո՛չ լուսինն գիշերումն ։

7 Տէրն կըպահպանէ քեզ ամէն չարից ·
նա կըպահպանէ քո անձըդ :
8 Տէրն կըպահպանէ քո դուրս գալըն և
քո մտնելըն այսուհետև մինչև յաւիտեան :

## ՍԱՂՄՈՍ · ՃԻԲ ։

### Աստիճանների Երգ · Դաւթինը :

Ես ուրախ էլայ՝ երբոր ասումէին ինձ՝
Թէ Տէրի տունն գնանք :
2 Մ՚եր ոտներս կըկանգնեին քո դըռնե-
րումն ով Երուսաղէմ :
3 Երուսաղէմն շինված է ինչպես քաղաք՝
որ ինքն իրան հետ միաւորված է :
4 Որ էնտեղ են վեր էլըում Տէրի ցե-
ղերն՝ Իսրայէլի վկայութեան համար՝ որ
Տէրի անունիցն գոհանան :
5 Պատճառնոր՝ էնտեղ են դըրած դա-
տաստանի աթոռներն՝ Դաւթի տան աթո-
ներն :
6 Ողջո՛յն խնդրեցէ՛ք Երուսաղէմին հա-
մար · թո՛ղ յաջողակ լինին նորանք՝ որ
սիրումեն քեզ :
7 Թո՛ղ խաղաղութիւն լինի քո պա-
րիսպներումն · և յաջողութիւն քո պա-
լատներումն :
8 Իմ եղբարցս և իմ ընկերներիս հա-
մար ասումեմ ես՝ ողջո՛յն լինի քեզ :

9 Մեր Տէր Աստուծոյ տան համար բա-
րի եմ ուզում քեզ ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԻԲ ։

### Աստիճանների երգ ։

Դէպի քեզ եմ բարձրացնում իմ աչքե-
րըս՝ որ բնակվում ես երկնքումն ։
2 Ահա՛ ինչպէս ծառաների աչքերն ի-
րանց Տէրերի ձեռքին են նայում՝ ինչպէս որ
աղախնոյ աչքերն իրան տիկինի (խաթունի)
ձեռքին · էնպէս էլ մեր աչքերն մեր Տէր
Աստուծոյն՝ մինչև որ ողորմի մեզ ։
3 Ողորմի՛ր մեզ Տէ՛ր ողորմի՛ր · ինչու որ՝
շատ լցվեցանք անարգանքով ։
4 Շատ լցված է մեր անձն գոռոզների
նախատինքովն՝ և ամբարտաւանների ա-
նարգանքովն ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԻԳ ։

### Աստիճանների երգ · Դաւթի ։

Եթէ Տէրն մեզ հետ չըլլինէր՝ թող ասէ
իսրայէլ ·
2 Եթէ Տէրն մեզ հետ չըլլինէր՝ երբոր
մարդիք վեր էին կենում մեզ վերայ ·
3 Ապա կենդանի կուլ կըտային մեզ՝

երբոր նորանց բարկութիւնն բորբոքվու-
մէր մեզ վերայ :
4 Ապա ջրերն կըթաղէին մեզ՝ վարար
գետերն մեր անձներիս վերայ անց կըկե-
նային :
5 Ապա գոռող ջրերն անց կըկենային
մեր անձներիս վերայ :
6 Օրհնեա՛լ լինի Տէրն՝ որ մեզ հորս
չըտուաւ նորանց ատամներին համար :
7 Մեր անձներս ինչպէս ծիտ՝ պրծան
հորսօղների որոգայթիցն (Ծուղակիցն) · ո-
րոգայթն փշրվեցաւ և մենք պրծանք :
8 Մեր օգնութիւնն Տէրի անունումն է՝
որ երկինքըն և երկիրըս արաւ :

## ՍԱՂՄՈՍ · ՃԻԴ։

### Աստիճանների երգ :

Նորանք որ յուսացած են Տէրին՝ սիօն
սարի պէս են · նա տեղից չի շարժվիլ
Բայց յաւիտեան կըկենայ :
2 Երուսաղէմի չորս կողմանն սարեր կան ·
և Տէրն իրան ժողովրդի չորս կողմանն է
այսուհետև մինչև յաւիտեան :
3 Պատճառոր՝ ամպարիշտների գաւա-
զանն չի մնալ արդարների վիճակին վերայ՝
որ արդարներն իրանց ձեռներըն չըձգեն
դէպի անօրէնութիւն :

4 Տէ՛ր բարի՛ արա նորանց՝ որ բարի և իրանց սրտերումն ուղիղ են ։

5 Բայց դէպի ծուռ ճանապարհ դարձածներին Տէրն կըտանի նորանց հետ՝ որ անօրէնութիւն են գործում . խաղաղութիւն լինի՛ Իսրայէլի վերայ ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԻԵ ։

### Աստիճանների երգ ։

Երբոր Տէրն սիօնի գերութիւնըն դարձնում էր երազ տեսնողներին նման էլանք ։

2 Էն ժամանակն մեր բերանն լցվաւ ծիծաղով՝ և մեր լեզուն ցնծութեննով . էն ժամանակն ասացին հեթանոսների միջումն . Թէ Տէրն մեծ բաներ արաւ նորանց վերայ ։

3 Տէրն մեծ բաներ արաւ մեզ վերայ . և մենք ուրախ էլանք ։

4 Տէ՛ր դարձրո՛ւ մեր գերութիւնըն . ինչպէս առուներըն հարաւի երկրումն ։

5 Նորանք որ արտասունքով ցանումեն՝ ցնծութեննով կըհնձեն ։

6 Գնալով գնումեն և լաց են լինում ցանելոյ սերմըն տանելով . գալով կըգան ցնծութեննով՝ իրանց ցորենի խըրցերըն բերելով ։

## ՍԱՂՄՈՍ ՃԻԶ:

Աստիճանների երգ. Սողոմոնին։

Եթէ Տէրն չըշինէ տունըն՝ զուր տեղն են աշխատում՝ նորա շինողներն. եթէ Տէրն չըպահպանէ քաղաքըն. զուր տեղն են անքուն լինում պահապաններն :

2 Զուր է ձեզ համար կանուխ վերկենալն՝ դուք որ հանգստանալըն յետացնում էք. և հացն ցաւով էք ուտում. ինչու որ՝ նա իրան սիրելոյն քնի մէջն է տալիս :

3 Ահա՛ որդիք Տէրի պարգև ժառանգութիւնն են . և որովայնի (պտղը) պտուղն՝ նորա վարձք :

4 Ինչպէս որ նետերն զօրեղ մարդոյ ձեռումն՝ էնպէս են երիտասարդ մարդիքն :

5 Երանի՜ էն մարդոյն՝ որ իրան կապարճներն (նետի ամաններըն) նորանցով լցրուց . նորանք չեն ամանչիլ երբոր թշնամիներին հետ կըխօսին դռան միջումն :

## ՍԱՂՄՈՍ ՃԻԷ:

Աստիճանների երգ :

Երանի՜ են ամէնին՝ որ Տէրիցն վախենումեն և նորա ճանապարհներումն գնումեն :

2 Դու քո ձեռաց աշխատանքըն կուտես. երանի՜ է քեզ՝ և լաւ կըլինի քեզ համար :

3 Քո կինդ ինչպէս պտղաբեր որթ (ձուղ) է քո տան քնջներումն . քո որդիքըն ինչպէս տնկված ձիթենիի ծառեր քո սեղանի չորս կողմումն :

4 Ահա՛ էսպէս է օրհնըվում էն մարդն՝ որ վախենումէ Տէրիցն :

5 Տէրն կօրհնէ քեզ սիօնի միջիցն . և երուսաղէմի բարութիւնըն կըտեսնես քո կենաց ամէն օրերումն :

6 Եւ քո որդոց որդիքըն կըտեսնես . խաղաղութիւն լինի՛ իսրայէլի վերայ :

## ՍԱՂՄՈՍ ՃԻԹ.

### Աստիճանների երգ :

Շատ անգամ նեղացրին ինձ իմ մանկութենիցս՝ թող ասէ իսրայէլ :

2 Շատ անգամ նեղացրին ինձ իմ մանկութենիցս՝ բայց չըյաղթեցին ինձ :

3 Վար անողներն իմ թիկունքիս վերայ վարեցին և իրանց ակօսներըն երկար արին :

4 Տէրն արդար է . նա ամպարիշտների չուաններըն կտրեց :

5 Ամօթ պիտի լինին և յետ դառնան էն ամէնքըն՝ որ սիօնըն ատումեն :

6 Կըտուրքի խոտին պէս պիտի լինին՝ որ դեռ չի՚հնձած՝ չորանումէ :

7 Որ նորանից հնձողն իրան բուռն չի
լցնում՝ և ոչ խուրձ կապողն իրան խըղտի-
տըն :
8 Եւ անցկացողներն չե՛ն ասում. Տէ-
րի օրհնութիւնն ձեզ վերայ լինի՛, օրհնու-
մենք ձեզ Տէրի անունովն :

## ՍԱՂՄՈՍ ՃԻԹ

### Աստիճանների երգ :

Ո՛վ Տէր՝ խորութենից դէպի քեզ եմ
կանչում :
2 Ո՛վ Տէր՝ լսի՛ր իմ ձայնիս. թող քո
ականջներդ մտիկ անեն իմ աղօթքի ձայ-
նին :
3 Տէ՛ր եթէ դու անօրէնութիւններըն
համարես՝ ո՞վ կըկենայ Տէ՛ր :
4 Պատճառնոր՝ քեզ մօտ է թողու-
թիւնն՝ որ քեզանից վախենան :
5 Ես սպասումեմ Տէրին. իմ անձս
սպասումէ. և նորա խօսքին յուսացած եմ :
6 Իմ անձս սպասումէ Տէրին աւելի
քան թէ նորանք որ առաւօտին սպասումեն՝
որ առաւօտին սպասումեն :
7 Իսրայէլն թող յուսայ Տէրին. ին-
չուոր՝ Տէրի մօտն է ողորմութիւն. և նո-
րա մօտն է շատ փրկութիւն :
8 Եւ նա կըփրկէ Իսրայէլին իրան ամէն
անօրէնութիւններիցն :

## ՍԱՂՄՈՍ · ՃԼ.

### Աստիճանների երգ :

Տէ՛ր իմ սիրտս չի գոռոզանում՝ և իմ աչքերս չեն բարձրանում . և ես չեմ գնում մեծամեծ բաների մէջն՝ և ոչ էն բաների մէջն՝ որ ինձանից բարձր են :

2 Իրաւի՛ որ՝ իմ անձըս հանդարտացրի և հանգստացրի՝ ինչպէս ծըծից կտրածն իւրան մօր մօտն՝ իմ անձս ինչպէս ծըծից կտրածն է ինձանում :

3 Իսրայէլն կըյուսայ Տէրին այսուհետև մինչև յաւիտեան :

## ՍԱՂՄՈՍ · ՃԼԱ.

### Աստիճանների երգ :

Տէր յիշի՛ր դաւթին և նորա ամէն նեղութիւնները :

2 Որ նա երդուաւ Տէրին՝ և ուխտ դրաւ յակոբայ զօրաւոր Աստուծոյն, ասելով :

3 Թէ իմ տան յարկի (չատըրի) մէջն չե՛մ մտնիլ . և իմ անկողնի (դէօշէկի) տեղուբարձն չե՛մ վերէլնիլ ·

4 Թէ իմ աչացս քուն չեմ տալ՝ և ոչ նինջ իմ թերթևանունքներին :

5 Մինչև որ՝ տեղ գտնեմ Տէրին հա–
մար՝ և բնակարան՝ յակօբայ զօրաւոր
Աստուծոյն համար :
6 Ահա՛ լսեցինք նորա համար եփրա–
թայի միջումն . գտինք նորան անտառի
դաշտումն :
7 Թող մտնենք նորա բնակարանների
մէջն՝ երկրպագութիւն անենք նորա ոտը
դնելոյ տեղումն :
8 Վե՛ր կաց Տէ՛ր դէպի քո հանգստու–
թեան տեղը . դու և քո զօրութեան տա–
պանակն :
9 Քո քահանաներն թո՛ղ արդարու–
թիւն հագնին . և քո սրբերն ցնծան :
10 Քո ծառայ դաւթի համար դէ՛ն մի՛
դարձներ քո օծելոյ երեսըն :
11 Տէրն երդուաւ դաւթին ճշմարտու–
թենով , յետ չի դառնալ նորանից . թէ
քո որովայնի (Դաւիթ) պտղից քո աթոռի վե–
րայ կընստացնեմ :
12 Եթէ քո որդիքն իմ ուխտըս և իմ
վկայութիւնըս պահեն՝ որ կըսովորցնեմ
նորանց , ապա նորանց որդիքն յաւիտեանս
յաւիտենից կընստին քո աթոռին վերայ :
13 Պատճառ որ՝ Տէրն սիօնին ընտրեց .
և հաւան կացաւ բնակիլ նորանում ա–
տեղըլ :
14 Սա է իմ հանգստութեան տեղը
յաւիտեանս յաւիտենից . էս տեղ կըբնակ–
վիմ . ինչու որ՝ սորան հաւան կացայ :

15 Նորա կերակուրըն օրհնելով կօրհնեմ՝ և նորա աղքատներըն կըկըշտացնեմ հացով :

16 Եւ նորա քահանաներին փրկութիւն կըհագցնեմ՝ և նորա սրբերն ցնծալով կըցնծան :

17 Ինտեղ Դաւթի համար եղջիւր կը ծագեմ՝ և ճրագ կըպատրաստեմ իմ օծելոյն համար :

18 Նորա թշնամիներին ամօթ կըհագցնեմ. բայց նորա վերայ նորա պսակն կըծաղկի :

## ՍԱՂՄՈՍ ՃԼԳ:

### Աստիճաններու երգ Դաւիթին :

Ահա՛ որքան բարի և որքան ցանկալի է՝ որ եղբայրքն իրար հետ միատեղ բնակվումեն :

2 Ինչպէս ազնիւ իւղն է գլխին վերայ՝ որ վէր է գալիս մօրուսին վերայ, Ահարօնի մօրուսին վերայ. և իջանումէ մինչև ի նորա շորերի ծայրն :

3 Ինչպէս Հերմօնի շաղն՝ որ վէր է գալիս սիօնի սարերին վերայ. ինչուոր՝ Տէրն էնտեղ պատրաստեց օրհնութիւն և կեանք մինչև յաւիտեան :

## ՍԱՂՄՈՍ ՃԼԴ։

### Աստիճանների երգ։

Աստեղ օրհնեցէ՛ք Տէրին՝ ո՛վ Տէրի ամէն ծառաներ՝ որ տէրի տանն կանգնումէք գիշերումն։

2 Ձեր ձեռներըն բարձրացրէ՛ք դէպի սրբութիւնն՝ և օրհնեցէ՛ք Տէրին։

3 Տէրն կօրհնէ քեզ սիօնի միջից՝ նա որ երկինքըն և երկիրըս արաւ։

## ՍԱՂՄՈՍ ՃԼԴ։

### Ալէլուիա։

Օրհնեցէ՛ք Տէրի անունըն. օրհնեցէ՛ք ո՛վ Տէրի ծառաներ.

2 Որ Տէրի տանն կանգնումէք՝ մեր Աստուծոյ տան սրահներումն։

3 Օրհնեցէ՛ք Տէրին ինչուոր՝ Տէրն բարի է. սաղմոս ասացէ՛ք նորա անունին. ինչուոր՝ քաղցր է։

4 Պատճառնոր՝ Տէրն յակօբին ընտրեց իրան համար՝ և իսրայէլին իրան ժառանգութեան համար։

5 Պատճառնոր՝ ես իմացայ՝ որ Տէրն մեծ է. և մեր Տէրն աւելի մեծ քան ամէն Աստուածներըն։

6 Ամէն ինչ որ կամենում է Տէրն՝ անում է երկնքումն և երկրումն՝ ծովումն և ամէն խոր տեղերումն ։

7 Որ նա ամպերը բարձրացնում է երկրի ծայրիցն՝ կայծակներն անձրև է շինում, քամին հանում է իրան ամբարներիցն ։

8 Նա Եգիպտոսի առաջինեկներն սպանեց մարդուցն ոչխար մինչև անասուններն ։

9 Նա նշաններ և հրաշքներ ուղարկեց քո մէջդ ով Եգիպտոս՝ փարաւոնի և նորա ամէն ծառաներին վերայ ։

10 Նա շատ ազգեր զարկեց կոտորեց · և զօրեղ թագաւորներ սպանեց ·

11 Ամուրհացոց սէհօն թագաւորըն՝ բասանի օգ թագաւորըն՝ և քանանացոց ամէն թագաւորութիւններըն ։

12 Եւ նորանց երկիրըն տուաւ ժառանգութիւն · ժառանգութիւն իրան իսրայէլ ժողովրդին համար ։

13 Տէ՛ր քո անունն մինչև յաւիտեան կայ · Տէ՛ր քո յիշատակն ազգից մինչև ազգ ։

14 Պատճառոր՝ Տէրն իրան ժողովրդին կըդատէ՝ և իրան ծառաներին կըողորմի ։

15 Հեթանոսների կուռքերն արծաթ և ոսկի են՝ մարդկանց ձեռաց գործքեր ։

16 Բերան ունին և չեն խօսում · աչք ունին և չեն տեսնում ։

17 Ականջներ ունին և չեն լսում՝ և իսկի շունչ չըկայ նորանց բերանումն ։

18 Նորանք որ նորանց շինումեն՝ նման են նորանց՝ և էն ամէնքն՝ որ յոյս են դնում՝ նորանց ։

19 Իսրայէլի՛ տուն օրհնեցէ՛ք Տէրին · ահարոնի՛ տուն օրհնեցէ՛ք Տէրին ։

20 Ղևեա՛յ տուն օրհնեցէ՛ք Տէրին · Տէրից վախեցողներ՝ օրհնեցէ՛ք Տէրին ։

21 Օրհնեալ լինի՛ Տէրն սիոնի միջից · նա որ բնակված է երուսաղէմի միջումն · ալէլուիա ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԼԵ ։

Գոհացէ՛ք Տէրիցն · ինչու որ՝ բարի է · ինչու որ՝ նորա ողորմութիւնն յաւիտեան կայ ։

2 Գոհացէ՛ք Աստուածների Աստուածանիցն · ինչու որ՝ նորա ողորմութիւնն յաւիտեան կայ ։

3 Գոհացէ՛ք Տէրանց Տէրիցն · ինչու որ՝ նորա ողորմութիւնն յաւիտեան կայ ։

4 Որ նա մէնակ մեծամեծ հրաշքներ է անում · ինչու որ՝ նորա ողորմութիւնն յաւիտեան կայ ։

5 Նա երկինքըն արաւ իմաստութենով · ինչու որ՝ նորա ողորմութիւնն յաւիտեան կայ ։

6 Երկիրըն ջրերի վերայ տարածեց · ին-
չուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ :
7 Մեծամեծ լուսաւորներ արաւ · ին-
չուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ :
8 Արեգակըն՝ որ ցերեկի վերայ իշխա-
նութիւն անէ · ինչուոր՝ նորա ողորմու-
թիւնն յաւիտեան կայ :
9 Լուսինըն և աստեղներըն՝ որ գիշերի
վերայ իշխանութիւն անեն · ինչուոր՝ նորա
ողորմութիւնն յաւիտեան կայ :
10 Նա եգիպտոսին զարկեց իրան առա-
ջինեկներովն · ինչուոր՝ նորա ողորմու-
թիւնն յաւիտեան կայ :
11 Իսրայէլին հանեց նորանց միջիցն ·
ինչուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ :
12 Զօրեղ ձեռով և երկար մեկնած
բազուկով (թևով) · ինչուոր՝ նորա ողոր-
մութիւնն յաւիտեան կայ :
13 Կարմիր ծովըն երկու բաժին արաւ ·
ինչուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ :
14 Եւ իսրայէլին անցկացրուց նորա մի-
ջովն · ինչուոր՝ նորա ողորմութիւնն յա-
ւիտեան կայ :
15 Եւ փարաւօնին և նորա զօրքին
կարմիր ծովին մէջ թափեց · ինչուոր՝ նորա
ողորմութիւնն յաւիտեան կայ :

16 Եւ իրան ժողովրդին անապատի մի-
ջովն տարաւ․ ինչուոր՝ նորա ողորմու-
թիւնն յաւիտեան կայ ։
17 Մեծամեծ թագաւորներ զարկեց
(կոտրեց)․ ինչուոր՝ նորա ողորմութիւնն
յաւիտեան կայ ։
18 Եւ զօրեղ թագաւորներ սպանեց․
ինչուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ․
19 Ամօրհացոց սեհօն թագաւորըն․ ին-
չուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ․
20 Եւ բասանի օգ թագաւորին․ ին-
չուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ ։
21 Եւ նորանց երկիրըն ժառանգու-
թիւն տուաւ․ ինչուոր՝ նորա ողորմու-
թիւնն յաւիտեան կայ․
22 Ժառանգութիւն իրան իսրայէլ ծա-
ռային համար․ ինչուոր՝ նորա ողորմու-
թիւնն յաւիտեան կայ ։
23 Որ խոնարհութեան միջումն յի-
շեց մեզ․ ինչուոր՝ նորա ողորմութիւնն
յաւիտեան կայ ։
24 Եւ փրկեց մեզ մեր թշնամիներից․
ինչուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ ։
25 Նա՛ հաց է տալիս ամէն մարմնոյ․
ինչուոր՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ ։

26 Գոհացէ՛ք երկնքի Աստուածանից.
ինչու որ՝ նորա ողորմութիւնն յաւիտեան
կայ:

## ՍԱՂՄՈՍ ՃԼԷ.

Բաբիլոնի գետերի մօտն՝ էնտեղ նստում
էինք և լաց էինք լինում. երբոր սիօ֊
նին յիշում էինք:
2 Նորա միջումն եղած ուռի ծառերից
կախ արինք մեր քնարները:
3 Պատճառն որ՝ մեզ գերի անողները
մեզանից օրհնութեան խօսք խնդրեցին էն֊
տեղ. և մեզ գերի տանողները խնդրեցին
ուրախութիւն. Ելէ՛ երգեցէ՛ք սիօնի օրհնու֊
թիւններից:
4 Տէրի օրհնութիւնը ի՞նչպէս երգենք
օտար երկրումն:
5 Եթէ քեզ մոռանամ Երուսաղէմ.
թող իմ աջ ձեռս մոռացված լինի:
6 Իմ լեզուս թող քիմքիս (դամաղիս)
կպչի՝ եթէ քեզ չըյիշեմ. եթէ Երուսաղէ֊
մին իմ ամէն ուրախութեններից էլ վերև
չըբարձրացնեմ:
7 Յիշի՛ր Տէ՛ր եդօմի որդիքը Երուսա֊
ղէմի օրումն. որ ասումէին՝ քանդեցէ՛ք
քանդեցէ՛ք մինչև նորա հիմունքն:
8 Ո՛վ բաբիլոնի աղջիկ. որ պիտի
քանդվիս. երանի՛ նորան՝ որ կըհատուցա֊

նէ քեզ էն գործքերին համար, որ մեզ վերայ գործեցիր :

9 Երանի՛ նորան՝ որ քո երեխաներին վեր կառնէ և քարերին վերայ կըփշրէ :

## ՍԱՂՄՈՍ․ ՃԼԷ։

Դաւթի (սաղմոս) :

Կըգոհանամ քեզանից իմ բոլոր սրտովս․ Աստուածների առաջին քեզ սաղմոս կասեմ :

2 Երկրպագութիւն կանեմ քո սուրբ տաճարիդ առաջին՝ և քո անունիցդ կըգոհանամ քո ողորմութեան համար և քո ճշմարտութեան համար․ ինչուոր՝ քո ամէն անունիդ վերայ մեծացրիր քո խօսքըն :

3 Այն օրումն, որ կանչեցի դէպի քեզ, լսեցիր ինձ․ դու ինձ զօրութենով ուժովացնումես իմ անձնումս :

4 Տէ՛ր երկրի ամէն թագաւորներն կը գոհանան քեզանից․ ինչուոր՝ քո բերանի խօսքերըն լսեցին :

5 Եւ Տէրի ճանապարհներումն օրհնութիւն կասեն՝ որ Տէրի փառքն մեծ է :

6 Պատճառոր՝ Տէրն բարձր է և ցածրըն տեսնումէ․ և բարձրամիտին հեռուանց ճանաչումէ :

7 Եթէ նեղութեան մէջ գնամ՝ կապրեցնես ինձ. իմ թշնամիների բարկութեան վերայ քո ձեռքն կըմեկնես, և քո աջ ձեռքն կըփրկէ ինձ։

8 Տէրն բոլորը կըկատարէ իմ տեղս. Տէ՛ր քո ողորմութիւնն յաւիտեան է. քո ձեռաց գործքերըն երեսից մի՛ թողներ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԼԸ։

### Երգեցողներին գլխաւորին. Դաւթի սաղմոս։

Տէ՛ր դու քննումես ինձ և ճանաչումես ինձ։

2 Դու գիտումես իմ նստիլըն և վեր կենալըն. իմ մտածմունքներըն հեռուանց ես իմանում։

3 Իմ գնալըն և իմ վերընկնիլըն քննումես. և իմ ամէն ճանապարհներըն իսպառ ճանաչումես։

4 Պատճառոր՝ խսկի խօսք չըկայ իմ լեզուումս, բայց դու Տէր՝ գիտումես էն ամէնըն։

5 Իմ առաջին և յետին կողմերս պատումես ինձ՝ և քո ձեռըն ինձ վերայ ես դնում։

6 Էսպիսի գիտութիւնդ ինձ համար շատ զարմանալի է. բարձր է որ չեմ կարող հասնել նորան։

7 Ո՞ր տեղ գնամ քո հոգուցն . և քո ե-
րեսիցն ո՞ր տեղ փախչեմ :
8 Եթէ վերանամ երկինքն՝ դու էնտեղ
էս . և եթէ իմ տեղու բարձըս դժոխքի
մէջն գնեմ . ահա՛ դու էնտեղ էս :
9 Եթէ արշալուսի (լուսաբացի) թևե-
րըն առնեմ և ծովի ծայրերումն բնակ-
վեմ .
10 Էնտեղ էլ քո ձեռն կառաջնորդէ
ինձ , և քո աջ ձեռն կըպահէ ինձ :
11 Եւ եթէ ասեմ . թո՛ղ խաւարն ծած-
կէ ինձ . ապա գիշերն էլ լոյս կըլինի իմ
չորս կողմիս :
12 Պատճառոր՝ խաւարն էլ չի խա-
ւարացնիլ քեզանից . և գիշերն ցերեկի պէս
կըլուսաւորէ . խաւարն էնպէս է՝ ինչպէս որ
լոյսն [illegible] :
13 Պատճառոր՝ դու ստեղծեցիր իմ ե-
րիկամունքներըն [illegible] . և ծածկե-
ցիր ինձ իմ մօր որովայնի (փորի) միջումն :
14 Ես կըգոհանամ քեզանից՝ որ ահա-
ւոր զարմանալի կերպով ստեղծվեցայ . զար-
մանալի էն քո գործքերն , և իմ անձս լաւ
գիտումէ էն :
15 Իմ ոսկերքս իսկի չըծածկվեցան քե-
զանից երբոր ստեղծվեցայ ծածուկ տե-
ղում . և ճարտարութենով կազմվեցայ
երկրի ներքևի տեղերումն :
16 Քո աչքերն տեսին իմ կերպարան-

*քըն դեռ որ չէր պատրաստված . և քո գրքումն գրված էին էն ամէն օրերն՝ որ լինելու էին . և նորանցից՝ դեռ իսկի մինն չը կար ։*

17 *Քանի՛ պատուական են ինձ համար քո խորհուրդներն ո՜վ Աստուած . քանի՞ մեծ է նորանց թիւն ։*

18 *Եթէ համարեմ նորանց՝ աւազից շատ են . զարթնացայ և դեռ քեզ հետ եմ ։*

19 *Երանի՛ թէ ամպարիշտներին սպանես ո՜վ Աստուած . և դո՛ւք արիւն թափօղ մարդիք հեռացէ՛ք ինձանից ։*

20 *Նորանք քեզ հակառակ են խօսում նենգաւորութենով՝ և քո թշնամիներն սուտ երդում են ուտում ։*

21 *Չէ՞ որ ես նորանց եմ ատում Տէ՛ր , որ քեզ ատումեն և զզվումեմ նորանցից , որ քեզ դէմ վեր են կենում ։*

22 *Կատարեալ ատելութենով ատումեմ նորանց . և թշնամի էլան ինձ ։*

23 *Փորձի՛ր ինձ ո՜վ Աստուած՝ և ճանաչի՛ր իմ սիրտըս . քննի՛ր ինձ և ճանաչի՛ր իմ մտածմունքներըն ։*

24 *Եւ տե՛ս՝ թէ չար ճանապարհի մէջ լինիմ . և առաջնորդի՛ր ինձ դէպի յաւիտենական ճանապարհն ։*

## ՍԱՂՄՈՍ . ՃԼԹ :

### Երգեցիկներէ գլխաւորին . Դաւիթին սաղմոս :

Տէ՛ր ապրեցրո՛ւ ինձ չար մարդուցն . և պահի՛ր ինձ բռնաւոր մարդուցն :

2 Որ նորանք չար բաներ են մտածում իրանց սրտի միջումն . և ամէն օր կռիւ են վերկացնում :

3 Իրանց լեզուներըն սրումեն ինչպէս օձ . իժ օձի թոյն կայ նորանց պռօշների տակն . սելա :

4 Տէ՛ր պահի՛ր ինձ ամպարշտի ձեռքիցն . պահի՛ր ինձ բռնաւոր մարդկանցից՝ որ կամ֊ րումեն իմ ոտներըս վեր քցել :

5 Ամպարտաւաններն ինձ համար որո֊ գայթ (ծուղակ) թագցրին և չուաններ փռե֊ ցին , ու որոգայթ լարին իմ ճանապար֊ հումն . թօռ դրին ինձ համար . սելա :

6 Ես ասացի Տէրին . դու ես իմ Աս֊ տուածն . Տէ՛ր , լսի՛ր իմ աղաչանքիս ձայ֊ նին :

7 Տէ՛ր՝ Տէ՛ր՝ իմ փրկութեան զօրու֊ թիւն՝ դու ես պատում իմ գլուխըն կռւի օրումն :

8 Տէ՛ր մի՛ տար ամպարշտին իրան ցան֊ կութիւնըն . մի՛ յաջողեր նորա չար խոր֊ հուրդըն՝ որ չըլինի թէ բարձրանան . սե֊ լա :

9 Ինձ պատողների գլուխըն, հէնց իրանց պռօշների վաստակն պիտի ծածկէ ։

10 Թո՛ղ այրող անծուխներ ընկնին նորանց վերայ . թո՛ղ նա կրակի մէջ քցէ նորանց՝ խոր հորերի մէջ՝ որ իսկի չըվերկենան ։

11 Զարախօս մարդն չի հաստատվիլ երկրի վերայ . չար բան կըհորսայ բռնաւոր մարդոյն, մինչև կործանվի ։

12 Գիտեմ, որ Տէրն դատաստան կանէ խեղճի համար՝ և իրաւունք աղքատի համար ։

13 Իրաւի՛ որ արդարներն կըգոհանան քո անունիցն . Եւ ուղիղներն կըբնակվին քո երեսից առաջին ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԽԱ ։

Դաւթի սաղմոս ։

Տէ՛ր՝ ես կանչում եմ դէպի քեզ՝ շո՛ւտ արա դէպի ինձ . ակա՛նջ դի՛ր իմ ձայնիս՝ երբոր կանչում եմ դէպի քեզ ։

2 Իմ աղօթքս թո՛ղ ընդունելի լինի ինչպէս խունկ քո առաջին . Եւ իմ ձեռաց բարձրանալն ինչպէս իրիկվան պատարագ ։

3 Տէ՛ր պահպան դի՛ր իմ բերանիս . Եւ իմ պռօշների դուռըն պահպանի՛ր ։

4 Իմ սիրտըս մի՛ դարձներ չար բանի

վերայ՝ որ իսկի ամպարշտութենով բան չանեմ էն մարդկանց հետ՝ որ անօրէնութիւն են գործում՝ և նորանց քաղցր բաներիցն չուտեմ :

5 Արդարն թո՛ղ խրատէ ինձ քաղցրութենով, և յանդիմանէ ինձ. էն է իւղ իմ գլխի համար. իմ գլուխս դէն չի քցիլ էն. բայց իմ աղօթքս դեռ նորանց չարագործութեանց դէմ է :

5 Նորանց դատաւորները քարերի վերայ վէր ընկան՝ և իմ խօսքերըն լսեցին, որ քաղցր են :

7 Ինչպէս որ վարնորդն և ակօս ճղքօղն հողի մէջ ցանում է, էնպէս մեր ոսկերքն ցրված են դժոխքի բերանին մէջ :

8 Բայց Տէ՛ր Տէ՛ր իմ աչքերս դէպի քեզ են նայում. քեզ եմ յուսացած, իմ անձըս մի՛ մատներ :

9 Պահի՛ր ինձ էն որոգայթից՝ (Թակար-կիցն) որ սարեցին ինձ համար՝ և նորանց թօռիցն՝ որ անօրէնութիւն են գործում :

10 Ամպարիշտները հենց իրանց թօռի մէջ պիտի ընկնին՝ դեռ որ ես մենակ անցկենամ :

# ՍԱՂՄՈՍ· ՃԽԲ։

Դաւթի վարդապետութիւն · երբ ժամը որ այրի (մղարայի) մէջն էր : Աղօթք :

Իմ ձայնովս դէպի Տէրն աղաղակումեմ՝ իմ ձայնովս Տէրին աղաչումեմ :

2 Իմ հառաչանքըս թափումեմ նորա առաջին · իմ նեղութիւնըս պատմումեմ նորա առաջին :

3 Երբոր իմ հոգիս մաշվումէ ինձանում · դու ճանաչումես իմ գնալըս · էն ճանապարհումն՝ որ գնումեմ՝ որոգայթ (ծուղակ) սարեցին ինձ համար :

4 Նայի՛ր աջ կողմին և տե՛ս · իսկի մինն չըկայ , որ ճանաչէ ինձ · փախչելոյ տեղն կորաւ ինձանից , իսկի մինն չըկայ , որ իմ անձիս համար հոգս անէ :

5 Տէ՛ր դէպի քեզ եմ աղաղակում և ասում · դու ես իմ յոյսն և իմ բաժինն կենդանեաց երկրումն :

6 Նայի՛ր դէպի իմ աղաղակն . ինչուոր՝ շատ տկար էլայ · ապրեցրու ինձ իմ հալածողներիցն · ինչուոր՝ ինձանից զօրաւոր են :

7 Իմ անձըս բանտիցն հանի՛ր՝ որ քո անունիցն գոհանամ · արդարներն իմ չորս կողմովս կըպատեն երբոր բարի կանես ինձ :

# ՍԱՂՄՈՍ · ՃԽԳ :

Դաւիթին սաղմոս :

Տէ՛ր լսի՛ր իմ աղօթքին · իմ աղաչանքին
ականջ դի՛ր քո ճշմարտութենովդ՝ միտք
դի՛ր ինձ քո արդարութենովդ :
2 Եւ դատաստանի մէջ մի՛ մտներ քո
ծառային հետ · ինչու որ՝ խսկի մին կենդանի
քո առաջիդ չի արդարանալ :
3 Պատճառ որ՝ թշնամին հալածում է
իմ անձըս՝ իմ կեանքըս վէր է քցում գե-
տինն՝ և նստացնում է ինձ խաւարի մէջ
ինչպէս որ առաջուց մեռածներըն :
4 Եւ իմ հոգիս մաշված է ինձանում ·
և իմ սիրտս աւերված է ինձանում :
5 Յիշում եմ առաջին օրերըն՝ մտածու-
մեմ քո ամէն գործքերին վերայ · քո ձեռաց
ստեղծվածներըն միտքս եմ անում :
6 Իմ ձեռներըս տարածում եմ դէպի
քեզ · իմ անձս ինչպէս ցամաքված երկիր
ծարաւած է քեզ · սելա :
7 Շուտ արա լսի՛ր ինձ Տէ՛ր՝ իմ հոգիս
մաշվում է · քո երեսըդ մի՛ ծածկի՛ր ինձանից՝
որ չընմանվիմ նորանց՝ որ գերեզմանի մէջ
են վէր գալիս :
8 Առաւօտումն ինձ լսե՛լ տո՛ւր քո ողոր-
մութիւնըն · ինչու որ՝ քեզ յուսացայ · ինձ

ցոյց տուր էն ճանապարհըն որ պիտի
գնամ նորանում. ինչու որ՝ իմ անձըս դէպի
քեզ եմ բարձրացնում:
9 Տէ՛ր փրկի՛ր ինձ իմ թշնամիներիցն.
Ինչու որ՝ քեզ ապաւինեցայ:
10 Սովորեցրո՛ւ ինձ որ քո կամաց պէս ա-
նեմ. ինչու որ՝ դու ես իմ Աստուածն. քո
բարի հոգին թո՛ղ առաջնորդէ ինձ դէպի
ուղիղ երկիրն:
11 Տէ՛ր քո անունիդ համար ապրեցրո՛ւ
ինձ. քո արդարութեանդ համար՝ հանի՛ր
իմ անձըս նեղութենից:
12 Եւ քո ողորմութենովդ սատակի՛ր
իմ թշնամիներըն և կորցրու իմ անձիս ա-
մէն նեղացնողներըն. ինչու որ՝ ես քո ծա-
ռայ եմ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԴ.

Դաւիթին սաղմոս:

Օրհնեալ է Տէրն իմ զօրութիւնն՝ որ իմ
ձեռներըս սովորցնումէ կռիւ անել՝ և իմ
մատներըս պատերազմի:
2 Ի՛մ ողորմութիւն և ի՛մ ապաւէն՝ ի՛մ
օգնական և ի՛մ փրկիչ. ի՛մ պահապան
որ նորան յուսացած եմ, որ իմ ժողո-
վըրդին իմ ձեռաց տակն հնազանդաց-
նումէ:

3 Տէ՛ր ի՞նչ է մարդն որ դու ճանաչես
նորան և մարդոյ որդիքն՝ որ դու միտք
դնես նորան :
4 Մարդն նման է ունայնութեան . նո-
րա օրերն ինչպէս շուաք են որ անց է կե-
նում :
5 Տէ՛ր խոնարհացրո՛ւ քո երկինքըն և
վէ՛ր եկ . մօտեցի՛ր սարերին և կըծըխեն :
6 Փայլատակի՛ր փայլակներով և ցրվի՛ր
նորանց . քո նետերըն ուղարկի՛ր և շփո-
թացրո՛ւ նորանց :
7 Քո ձեռըդ ուղարկի՛ր բարձր տեղից
և ազատի՛ր ինձ . փրկի՛ր ինձ շատ ջրերից՝
օտար որդոց ձեռքից :
8 Որ նորանց բերանն ունայն բան է խօ-
սում . և նորանց աջ ձեռն ստութեան
աջ է :
9 Աստուած՝ նոր օրհնութիւն կերգեմ
քեզ . տասն թելանի սաղմոսարանով սաղ-
մոս կասեմ քեզ :
10 Որ փրկութիւն է տալիս թագաւոր-
ներին՝ և իրան ծառային դաւիթ փրկում է
չար սրից :
11 Ազատի՛ր ինձ և փրկի՛ր ինձ օտար
որդոց ձեռքից . որ նորանց բերանն ու-
նայն բան է խօսում , և նորանց աջ ձեռն
ստութեան աջ է .
12 Որ մեր որդիքն տղայութենից մե-
ծանան ինչպէս նոր տնկած ծառեր , և մեր

աղջիկներն ինչպէս անկիւնի սիւներն՝ պա-
լատների ձեւի նման չարխով քաշած ։
13 Որ մեր ամպարներն լիքն լինին՝ ու ա-
մէն կերպ կերակուր թափեն ․ և մեր ոչ-
խարներն հազար և տասն հազար լինին
մեր փողոցներումն ։
14 Որ մեր եզներն պարարտ լինին ․ և
խախտ կորուստ և ոչ ըշխամինելէ ելնելոյ
փախչիլն՝ և ոչ աղաղակ չըլինի մեր փո-
ղոցներումն ։
15 Երանի՜ էն ժողովրդին՝ որ նորան
էսպէս է ․ երանի՜ էն ժողովրդին՝ որ նորա
Աստուածն Տէրն է ։

## ՍԱՂՄՈՍ · ՃԽԴ։

Դաւթի օրհնութիւնն ։

Բարձր կանեմ քեզ իմ Աստուած՝ որ
թագաւոր ես ․ և քո անունդ կօրհնեմ
յաւիտեանս յաւիտենից ։
2 Ամէն օր կօրհնեմ քեզ՝ և քո անունդ
կըգովեմ յաւիտեանս յաւիտենից ։
3 Մեծ է Տէրն և շատ օրհնեալ ․ և նո-
րա մեծութեանն չափ չըկայ ։
4 Ազգ և ազգ կըգովէ քո գործքերըն ․ և
քո զօրութիւններըն կըպատմեն ։
5 Քո փառաւոր մեծութեան գեղեց-
կութեան համար և քո հրաշալի գործքե-
րին համար կըմտածեմ ։

6 Քու ահաւոր զօրութեան համար կը
խօսին՝ և ես քու մեծութիւնըն կըպատմեմ :
7 Քու շատ քաղցրութեան յիշատակըն
կըբղխեն՝ և քու արդարութեանըն կըցնծան :
8 Ողորմած և գթած է Տէրն . երկայ-
նամիտ և շատ քաղցր :
9 Բարի է Տէրն ամէնին համար . և նո-
րա ողորմութիւնն իրան ամէն գործքերին
վերայ է :
10 Տէ՛ր՝ քու ամէն գործքերըն պիտի գո-
հանան քեզանից՝ և քու սրբերըն պիտի օրհ-
նեն քեզ :
11 Քու թագաւորութեան փառքըն պի-
տի ասեն . և քու զօրութիւններըն պիտի
պատմեն :
12 Որ մարդկանց որդիքն նորա զօրու-
թիւնըն իմանան . և նորա թագաւորու-
թեան փառաւոր մեծութիւնըն :
13 Քու թագաւորութիւնն յաւիտե-
նական թագաւորութիւն է և քու իշխանու-
թիւնն ազգից մինչև ազգ : Հաւատարիմ
է Տէրն իրան ամէն խօսքերումն՝ և սուրբ՝ ի-
րան ամէն գործքերումն :
14 Տէրն հաստատումէ ամէն վէր ըն-
կածներըն՝ և կանգնացնումէ ամէն կեռա-
ցածներըն :
15 Ամէնի աչքերըն քեզ են սպասում .
և դու նորանց տալիս ես իրանց կերակու-
րըն իրանց ժամանակումն :

16 Բաց ես անում քո ձեռքդ. և ամէն
կենդանի կըշտացնումես հաճութենով :
17 Արդար է Տէրն իրան ամէն ճանա-
պարհներումն՝ և սուրբ՝ իրան ամէն գործ-
քերումն :
18 Տէրն մօտիկ է էն ամէնին՝ որ կան-
չումեն դէպի նա. էն ամէնին՝ որ կանչու-
մեն դէպի նա ճշմարտութենով :
19 Նա իրանից վախեցողների կամքըն
անում է. և նորանց աղաղակին լսումէ և
փրկումէ նորանց :
20 Տէրն պահումէ էն ամէնին՝ որ սիրու-
մեն նորան. և ամէն ամպարիշտներըն
կըկորցնէ :
21 Իմ բերանս Տէրի օրհնութիւնըն կը
խօսի՝ և ամէն մարմին նորա սուրբ անունըն
կօրհնէ յաւիտեանս յաւիտենից :

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԶ :

### Ալէլուիա :

Օրհնի՛ր Տէրին ով իմ անձն :
2 Տէրին կօրհնեմ իմ կեանքումս՝ իմ
Աստուծոյն սաղմոս կասեմ՝ քանի որ կամ :
3 Մի՛ յուսաք իշխաններին՝ կամ մարդ-
կանց որդոյն որ նորանց մօտն փրկութիւն
չըկայ :
4 Նորա հոգին դուրս կըգայ՝ և նա

դէպի հողն կըդառնայ · էն օրումն կըկորչին նորա խորհուրդները :

5 Երանի՛ նորան՝ որ Յակոբի Աստուածն օգնական է նորան · որ նորա յոյսն իրան Տէր Աստուածն վերայ է :

6 Որ նա արաւ երկինքըն և երկիրըս · ծովըն և էն ամէնըն որ նորանցում կայ · որ ճշմարտութիւն է պահում յաւիտեան :

7 Նա իրաւունք է անում զըկվածներին՝ և հաց է տալիս սովածներին · Տէրն արձակում կապվածներըն :

8 Տէրն բանում կուրերի աչքերըն · Տէրն կանգնացնում վէրընկածներըն · Տէրն սիրում արդարներըն :

9 Տէրն պահում պանդուխտներըն · նա ընդունում որբերըն և որբևէրիներըն · բայց ամպարիշտների ճանապարհըն ծըռացնում :

10 Տէրն կըթագաւորէ յաւիտեան , քո Աստուածդ ով Սիոն ազգից մինչև ազգ · ալէլուիա :

## ՍԱՂՄՈՍ · ՃԽԷ :

Օրհնեցէք Տէրին · ինչուոր՝ բարի ա մեր Աստուծոյն սաղմոս ասելն՝ ինչուոր՝ քաղցր և գեղեցիկ է օրհնաբանութիւնն :

2 Տէրն շինում երուսաղէմին՝ և Իսրայէլի ցրվածներին ժողովում :

3 Նա բժշկում է սրտով կոտրվածներըն՝ և նորանց խոցերըն պատում է :
4 Նա համարում է աստղների թիւըն՝ և նորանց ամէնին անունով կանչում է :
5 Մեծ է մեր Տէրն և շատ զօրութեանով . և նորա իմաստութեան չափ չկայ :
6 Տէրն հաստատում է խեղճերըն՝ և ամպարիշտներըն խոնարհացնում մինչև հողն :
7 Երգեցէ՛ք Տէրին գոհութենով . մեր Աստուծոյն սաղմոս ասացէ՛ք քնարով :
8 Որ նա երկնքին ծածկում է ամպերով՝ անձրև է պատրաստում երկրիս համար՝ և խոտ է բուսացնում սարերին վերայ :
9 Որ նա անասուններին տալիս է իրանց կերակուրըն՝ ագռաւի ձագերին՝ որ կանչումեն :
10 Նա չի կամենում ձիոյ զօրութիւնըն՝ և զօրեղ մարդոյ երանքին հաւան չի կենում :
11 Տէրն հաւան է կենում նորանց՝ որ իրանից վախենումեն , որ իրան ողորմութեանն են յուսացած :

## ՍԱՂՄՈՍ · ՃԽԷ :

Երուսաղէմ գովի՛ր Տէրին . օրհնի՛ր քո Աստուծոյն ով սիոն :
2 Պատճառնոր՝ նա պնտացնում է . քո

դռների նիգերը (փակերը·) և քո որդիքը օրհնումէ քեզանում :
3 Նա քո սահմաններին խաղաղութիւն է տալիս՝ և կշտացնումէ քեզ պարարտ ցորենով :
4 Նա ուղարկումէ իրան խօսքըն երկրի մէջն · և նորա խօսքն վազումէ շուտ շուտ :
5 Նա ձիւն տալիս է ինչպէս բուրդ · և եղեամն ցանումէ ինչպէս փոշի մոխիր :
6 Իրան սառուցըն թափումէ ինչպէս պատառներ · Եւ նորա ցրտի առաջին ով կըկենայ :
7 Նա ուղարկումէ իրան խօսքըն և հալումէ նորանց · իրան քամին փչել է տալիս՝ և ջրեր են վազում :
8 Նա պատմումէ իրան խօսքըն յակոբին՝ իրան հրամաններըն և իրաւունքներըն իսրայէլին :
9 Իսկի մին ազգին էլ էսպէս չի արած · և նորանք չեն ճանաչում նորա դատաստաններըն · ալէլուիա :

## ՍԱՂՄՈՍ · ՃԽԸ :

### Ալէլուիա :

Օրհնեցէ՛ք Տէրին երկնքիցն · օրհնեցէք նորան բարձր տեղերումն :
2 Օրհնեցէ՛ք նորան ով ամէն հրեշտակներ՝ օրհնեցէ՛ք նորան՝ ով նորա ամէն զօրքեր :

3 Օրհնեցէ՛ք նորան ով արեգակն և լուսին՝ օրհնեցէ՛ք նորան ամէն լուսաւոր աստղներ :

4 Օրհնեցէ՛ք նորան ով երկնքի երկինք՝ և ջրեր որ երկնքի վերայ էք :

5 Թող Տէրի անունըն օրհնեն · ինչու որ՝ նա հրամայեց՝ և նորանք ստեղծվեցան :

6 Եւ նորանց կանգնացրուց մինչև յաւիտեանս յաւիտենից · հրաման տուաւ և նորանով չեն անցկենում :

7 Օրհնեցէ՛ք Տէրին երկրիցս՝ ով վիշապ ձկներ և ամէն խոր տեղեր :

8 Կրակ և կարկուտ, ձիւն և ծուխ և մրրիկ (փոթորիկ) քամի՝ որ նորա խօսքըն կատարումէք :

9 Սարեր և ամէն դարեր՝ պտղաբեր ծառեր և ամէն մայրի (շամի) ծառեր :

10 Կենդանի՛ք և ամէն անասուններ սողացօնե՛ր և թեւաւոր թռչուններ :

11 Երկրի թագաւորներ և ամէն ազգեր · իշխաններ և երկրի՛ ամէն դատաւորներ :

12 Երիտասարդնե՛ր և աղջիկներ · ծերեր տղաներին հետ :

13 Թող Տէրի անունըն օրհնեն · ինչու որ՝ մէնակ նորա անունըն բարձր է · նորա փառքըն երկնքի և երկրի վերայ է :

14 Եւ նա բարձրացրուց իրան ժողովրդի եղջիւրըն՝ իրան ամէն սրբերի՝ իս-

րայէլի որդոց. էն ժողովուրդի օրհնութիւ-
նըն որ մօտիկ է նորան. Ալէլուիա ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԹ։

### Ալէլուիա ։

1 Երգեցէ՛ք Տէրին նոր երգ՝ նորա օրհնու-
թիւնըն սրբերի եկեղեցումն ։
2 Թող իսրայէլն ուրախ լինի իրան
ստեղծողումն. սիօնի որդիքն ցնծան իրանց
թագաւորումն ։
3 Թող նորա անունըն օրհնեն ցնծու-
թեննով՝ դափով և քնարով սաղմոս ասեն
նորան ։
4 Պատճառնոր՝ Տէր իրան ժողովուրդին
հաւան է կենում. խեղճերըն փառաւորու-
մէ փրկութեննով ։
5 Թող սրբերն ուրախանան փառքով՝
և իրանց անդաշորումն ցնծան ։
6 Աստուծոյ գովասանքն նորանց բերա-
նումն լինի՛ և երկու բերանի սուր նորանց
ձեռքումն .
7 Որ վրէժխնդրութիւն անեն հեթա-
նոսներումն՝ և պատիժ՝ ազգերի միջումն ։
8 Որ նորանց թագաւորներին կապեն
շղթաներով (զնջիլներով). և նորանց
իշխաններին երկաթի ոտնակապերով ։
9 Որ նորանց վերայ անեն էն դատաս-

*տանըն որ գրված է . էս փառքս նորա ամէն սրբերին ըլլէնէ · Ալէլուիա :*

## ՍԱՂՄՈՍ · ՃԾ ·

### Ալէլուիա :

*Օրհնեցէ՛ք Աստուծոյն իրան սրբութեան տեղուն . օրհնեցէ՛ք նորան իրան զօրութեան հաստատութենուն :*

*2 Օրհնեցէ՛ք նորան իրան զօրութենովն՝ օրհնեցէ՛ք նորան իրան մեծ փառաւորութենովն :*

*3 Օրհնեցէ՛ք նորան փողի ձայնով . օրհնեցէ՛ք նորան սաղմոսարանով և քնարով :*

*4 Օրհնեցէ՛ք նորան դափով և պարով . օրհնեցէ՛ք նորան թելաւոր և եղեգէ (զուռնէ) նուագարաններով (տաւիղով) :*

*5 Օրհնեցէ՛ք նորան լսելի ծնծղաններով՝ օրհնեցէ՛ք նորան մեծաձայն ծնծղաններով :*

*6 Ամէն ինչոր շունչ ունի՝ թող օրհնէ Տէրին · Ալէլուիա :*

ՎԵՐՋ :